

6003-6004

U - F here on up

082

4-77

1938

1939

2010

2001

Ա. Յ. ԳՕՆՍԻԻԼԵԱՆ

ՀԱԶԱՐՈՒՄԷԿ
ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Բ. ՀԱՏՈՐ



1939

ՏՊԱՐԱՆ ՍԵԻԱՆ

ԳԱՀԻՐԷ

ունեցող գէպքերու համար ծայրաստիճան գաղտնապահութիւն գործածելու է:

Մի՛ մոռնար տալ սպասաւորաց սովորական նըլէրն, մեկնելու ատեն:

Մի՛ երթար այցելութեան՝ առանց այցաքարտ ունենալու հետդ: Բնականաբար այցաքարտ կը ձգէ մարդ երբ չի գտներ այն անձը որուն այցելութեան ելած է: Մարդ պէտք է միշտ իր վրայ պատրաստ ունենայ իր այցաքարտը:

Մի՛ գործածեր գունաւոր կամ ձեռագիր այցաքարտեր: Ազնիւ թուղթի վրայ ընթեռնլի տառերով գեղեցիկ պէտք է սպուած ըլլան անոնք: Այր մարդոց քարտերն պէտք է ըլլան միջին մեծութեամբ և կարելի եղածին չափ պարզ, իսկ տիկիններունը կրնայ ըլլալ աւելի մեծ և աւելի գեղեցիկ:

Մի՛ գործածեր այցաքարտ եթէ օրիորդ մըն ես: Դեռատի օրիորդներ չեն կրնար ունենալ իրենց համար մասնաւոր այցաքարտ: Եթէ իրենց ծնողաց ընկերակցութեամբ այցելեն, ներելի է այն ատեն իրենց հօր կամ մօր այցաքարտին վրայ իրենց անունն աւելցնել:

Մի՛ տար այցաքարտդ սպասաւորին, եթէ տունն է տան ատեն կամ տան տիրուհին. միմիայն անունն տալ բաւ է այդ պարագային:

Մի՛ մոռնար թէ միեւնոյն թաղին մէջ թղթատարութեան միջոցաւ շնորհաւորական քարտ ղրկել միմիայն նոր տարւոյ առթիւ ներելի է: Սակայն այդ քարտն սպասաւորի մը ձեռօք ղրկելն աւելի քաղաքավարական է:

Մի՛ ուշացներ այցաքարտդ երբ կ'ընդունիս նըլչանտուութեան, ծննդեան կամ մահու ծանօթագիր մը և ի մօտոյ չես կարենար այցելել այդ ընտանիքին. ի նշան ընդունելութեան այցաքարտդ ղրկէ անմիջապէս:

Դ Ա Ս Ը Ն Թ Ա Ց Ք Ե Լ Ե Ք Տ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Գ Լ ՈՒ Կ Ե Ե.

Ե Լ Ե Ք Տ Ր Ա Կ Ա Ն Շ Տ Ե Մ Ա Ր Ա Ն - Բ Ա Ր Դ Ե Ր

Շտեմարան - բարդերն կը գործածուին նաեւ կառուարումներու, ընդծովեաներու, ինչպէս և լուսաւորութեան, ճամբորդութեան ու հրաշեկութեան սխթէմներու համար:

Շտեմարան կը կոչուի այս բարդն պարզ այն պատճառաւ որ բոլորովին սպառելէ վերջ կրնայ վերստին լեցուիլ:

Շ Տ Ե Մ Ա Ր Ա Ն - Բ Ա Ր Դ Ի Տ Ի Պ Ե Ր (TYPE)

Շտեմարան - խորշի երկու տիպեր կան. առաջինը և ամենէն կարեւորն կը կոչուի կապարաքսուի խոր (lead - acid cell) իսկ երկրորդն՝ Գիֆելալֆալի խոր (nickel - alkali cell): Վերջինը աւելի նոր է և շատ գործածական դարձած վերջին տարիներս: Երկու տիպերն ալ ունին առանձնայատուկ առաւելութիւններ, որոնք կը գերազանցեն զիրար կարգ մը գործերու մէջ:

Կապարաթթուի բարդն (lead - acid battery) պիտի ըլլայ մեր այս դասին նիւթը:

Կ Ա Պ Ա Ր Ա Թ Թ Ո Ւ Ի Խ Ո Ր Շ Ե Ր (LEAD - ACID CELLS)

Նախ քան զամենայն հարկ է ցուցնել ձեզի խորշի (cell) մը և բարդի (battery) մը միջեւ եղած տարբերութիւնը:

ԴԵՌԱՅԱՍՆԵՐՈՒՆ ՈՍԿԵՂԷՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ՊԱՐՏԱՃԱՆՍԸ ԸՂԼԱԼ

Երջանիկ ըլլալու մի՛ ջանար, քանզի երջանկու-
թիւնը երկչոտ մըն է: Եթէ ետեւէն վազես՝ կը
փախչի: Բայց մեղմիւ և խաղաղութեամբ յառաջ
գնա՛, կտորերէլով քու հանապազօրեայ պարտքդ, նա
ինքնին կուգայ քեզի:

ՇԱՏԱԽՕՍՈՒԹԵՆԷ ԶԳՈՒՇԱՆԱԼ

Զինոն փիլիսոփան շատախօս տղայ մը տեսնելով,
ըսաւ.—

«Մենք 2 ականջ և 1 բերան ունինք որ շատ
լսենք ու քիչ խօսինք: Բայց քու ականջներդ ալ
լեզու եղած են:»

ՏՆՏԵՍԱԳԷՏ ԸՂԼԱԼ

Փոքրիկ քաղաքի մը քանի մը քաղաքացիք կա-
րօտելոց համար դրամ հանգանակելու կարգուած ըլ-
լալով քաղաքագետին կողմէ, առաւօտ մը երբ գեղե-
ցիկ տան մը բակը կը մտնէին, լսեցին որ տանուտէ-
րը դառնապէս կը կշտամբէր իր սպասաւորներէն մէ-
կը, որ բոլոր գիշերն անձրեւի տակ դրուած ձիերուն
սպասները (թագըմ) ներս առնել մոռցած էր:

— Հոս բան մը պիտի շտամանք, ըսաւ հանգա-
նակիչներէն մին իր ընկերներուն: Մենք ազահի մը
տունը կը գտնուիք:

— Ի՞նչ կը կորսնցնենք, եթէ փորձենք անգամ
մը, պատասխանեց ուրիշ մը:

Այս վայրկեանին տանտէրը անոնց դէմը ելաւ
և քաղաքավարութեամբ ընդունեց զանոնք: Երբ

տեղեկացաւ անոնց այցելութեան նպատակին, հրամ-
ցուց զանոնք իր սենեակը, և մինձ գուժար մը տուաւ
անոնց: Հանգանակող մարդիկ զարմանքով և երախ-
տագիտութեամբ լեցուն, խոտովանեցան անոր թէ՛
սպասաւորի մը հետ իր վէճը լսած ըլլալով, խիստ
շահուաէր կարծած էին զինք և չէին յուսար բան մը
առնել:

Տանտէրը պատասխանեց անոնց:

«Սոսոյգ է որ ետ անտեսագէտ մարդ մըն եմ,
բայց իմ այս անտեսագիտութեանս շնորհիւ աղքատ-
տաց առատութեամբ օգնելու վիճակին մէջ կը գըտ-
նուիմ:»

ՕՐԻՆԱՊՍԷ ԸՂԼԱԼ

Շամմաի կ'ըսէ.— «Թող օրէնքի ուսումը կեան-
քիդ կանոնը ըլլայ:»

Հիլէլ կ'ըսէ.— «Օրէնքի ուսումը կեանքի՛ և
գլորոցները իմաստութեան կ'առաջնորդեն զմարդ:»

Դարձեալ. «Պատուէ՛ հայրդ ու մայրդ, ողորմու-
թիւն տո՛ւր, խաղաղ տպրի՛ր մարդոց հետ, և ասոնց
ամենէն աւելին՝ փնտռէ՛ օրէնքին ուսումը:»

ԱՆԴԱՌՆԱԼԻ ԵՐԵՔ ԲԱՆԵՐ Ի ՄՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Արձակուած գնդակը

Խօսուած խօսքը

Կորսուած ժամանակը:

ՊԱՐԶՍՄԷՐ ԸՂԼԱԼ

Զարդ վարդին է պարզ տերեւ,

Սիրէ՛ դու զպարզութիւն

Երբ վարդ ետ արդարեւ:

ԱՌԱՔԻՆԻ ԸՂԼԱԼ

Դիողինէս երբ տեսաւ որ պատանի մը չար բան
մը ընելէ յետոյ կարմրած է, ուրախութեամբ ըսաւ
անոր. «Քաջալերուէ՛ տղաս, առաքինութեան գոյնը
կը տեսնեմ դէմքիդ վրայ:» (Շար.)

ՏԱՆՏԻԿՆՈՋ ԲԱՐԵԿԱՄԸ

ԽՈՂԱՆՈՑԷՆ ՆԵՐՍ

ԱՊՈՒՐԻ ՏԵՄԱԿՆԵՐ

1. ՄԱՖԱՐՕՆԻԷ ԱՊՈՒՐ.— Մաքարօնին պըզտիկ կտորներու վերածելով ջուրի մէջ խաշեցէք, ջուրը լաւ մը քամեցէք, ապա 380 կրամ միսի ջուրով եփեցէք ու վրան ջարդուած պանիր ցանեցէք։ Պատրաստ է։

2. ՀԱՅԷ ԵՒ ՍՏԵՊՂԻՆԷ ԱՊՈՒՐ.— Տաք հաստ ստեպղինը (հավուճ) հատր բէստէյէ մը անցնելէ վերջ դի՛ր 12 չերեփ մսի ջուրի մէջ ու եփէ՛. ապա պարզուտէ անցուր, նորէն կրակին վրայ դի՛ր, մի քիչ եռացնելէ վերջ աղը դի՛ր, ապուրի ամանին մէջ պարպելէ վերջ վրան աւելցուր կարագ իւղի մէջ կարմրցուած քառակուսի հացի կտորներ։

Կ Ե Ր Ա Կ Ո Ւ Ր Ն Ե Ր

1.— ԶԷՕՄԻԷԿ ՔԷՊԱՊԸ.— Առանց սսկորի միւր հաւկիթի մեծութեամբ կտրէ, պղինձէ երկայն պտուկի մը մէջ լեցուր, առանց սալցայի աղ և համեմ դիր, շիչ մը ձերմակ գինի լեցուր, պտուկին բերանը գոցէ և խմորէ, ու կամաց կրակի մէջ թաղէ, ականջ տուր եթէ ճգայ կրակէն վար առ և վրան միայն մածուն անցնելով և կամ առանց մածունի կեր։

2. ՆԱՊԱՍՏԱԿԻ ՔՐՕՔԷԹ.— Նապաստակին միւր իւղին մէջ լաւ մը կարմրցնելէ յետոյ մեքենայէ անցուր։ Միւս կողմէ սանի մը մէջ քիչ մը իւղ, 2 դգալ ալիւր և կէս գաւաթ կաթով թանձր խմոր մը ըրէ եփելով։ Վերջը այդ գըյման ալ վրան լեցուր և

աղուր մը խառնէ, աղ, պղպեղ դիր, և ընկոյղի խոշորութեամբ կլորակներ շինէ, փոշի կալէթան թաթխէ և առատ իւղի մէջ տապկէ։

3. ՊԷՅԻՆ ՍՕԹԷ.— Ուղեղին մաշկը հանէ և ընկոյղի մեծութեամբ մասերու բաժնէ ու սանի մը մէջ կարագ իւղով տապկէ։ ջուրի մէկ գաւաթ ձերմակ գինի անցուր և քիչ բան մը եռացուր։

4. ՊԷՕՎՐԷԿ ՍՕԹԷ.— Պէօվրէկը մանրէ և սանի մը մէջ տապկէ առանց սալցայի քիչ մ'ալ սոխ միսսին, աղ, համեմ և գաւաթ մը ձերմակ գինի դիր եփէ։

ԽՄՈՐԵՂԷՆ - ԱՆՈՒՇԵՂԷՆՆԵՐ

1. ԱԶԳԱՅԻՆ ԿԱԹՕ.— Փուռի մէջ կամ մոխրի ներքեւ եփած 500 կրամ թաթաթէս կեղպէ, սանդի մը մէջ ճգմէ, աւելցուր 200 կրամ թարմ կարագ ու միւրամի կերցուր 12 հաւկիթի դեղնուց։ Այս խմորը պտուկի մը մէջ առ և անոր վրան աւելցուր 500 կրամ փոշի շաքար ու 5 կրամ փոշի վանիլիա։ Խմորն եթէ կակուղ է ամբողջ հաւկիթ մը եւս զարկ։ Յետոյ 12 հաւկիթին ձերմկուցը զարկ և կերցուր ու ձինովիական կաղապարի մը մէջ թխելէ յետոյ հանէ, խիստ բարակ սովորական տերեւով փաթթէ։ քիչ տաքութիւնով փուռը դիր եփէ. յետոյ զանոնք վանելիայով օծուած շաքարի մէջ թաթխէ։

2. ՅՐԻՊՈՒՐԿԻ ԿԱԹՕ.— 4 հաւկիթի դեղնուցին հետ զարկ 145 կրամ փոշի շաքար. հեղուտ աւելցուր նարնջածաղկի ջրով օծու՛ն 65 կրամ խիստ նուրը ձեծուած կաղին, 2 կր. փոշի վանիլիա ինչպէս և փրփրցուած 4 ձերմկուցներն ու 30 կր. ալիւր, խառնէ, կաղապարները լեցուր, մեղմ փուռը եփէ։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ԳՍՐՇԱՀՈՏԵԱԼ ԱՆՕԹՆԵՐԸ ՄԱՔՐԵԼ

Ամէն տեսակ անօթներէ և գործիքներէ որեւէ գարչահոտութիւն բոլորովին ջնջելու միակ դարմանն է՝ զանոնք նախ ածուխի փոշիով և ապա ուսազով չփել:

Առանց այս միջոցին գիմելու եթէ օճառով մաքրելու ելլենք՝ թէ ուշ կը մաքրուի և թէ բաւական օճառ կը վասնուի:

ԿՏԱԻԵՂԷՆՆԵՐՈՒ ՎՐԱՅԷՆ ԳԻՆԻԻ ԲԻԾԵՐՆ

ԱՆՀԵՏԱՅՆԵԼ

Շատ անգամ անուշադրութեամբ կտաւեղէններու վրայ գինի կը թափի. ասոր բիծն անհետացնելու համար նոյն բժաւոր տեղն եռացող կաթին մէջ բռնէ. արդիւնքը կտատարեալ է:

ՃԵՐՄԱԿԵՂԷՆՆԵՐԸ ԴՐՈՇՄԵԼՈՒ

ՏԱՐՐԱԲԱՆՍԱԿԱՆ ԿԵՐՊ ՄԸ

Նախ՝ քանդակուած պէտք է ունենաս անուշիկ կամ թիւզ երկաթի վրայ. այս երկաթը լաւ մը տաքցնելու է, բայց ոչ այնչափ որ կարմրնայ, շաքարի բարակ փոշիով ծածկելու է ճերմակեղէնին այն մասն՝ ուր կուզես դրոշմել. ուժգին դի՛ր դրոշմդ ճերմակեղէնին վրայ և կոխէ՛. երան դրոշմն անջնջելի կը մնայ:

ԳԼԽՈՒ ՎՐՁԻՆՆԵՐԸ ՄԱՔՐԵԼ

Գլխու վրձինները ցորենի թեփով չփելու է, որ իւղոտ նիւթերը կը մաքրէ. պէտք չէ երբէք լուսնալ զանոնք:

Եթէ վրձինին մազերը թուլցած են, զանոնք ամօճեալի մէջ թաթիէ և թող որ չորնան. այս կերպով իրենց նախկին կարծրութիւնը կը վերստանան:

ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱԺԱՐԻՄՔ Ի ՄԵՂԿՈՒԹԵՆԷ

Շատ մեծ է թիւը այն մայրերուն որոնք գիտակցարար թէ անգիտակցարար կը մեղկացնեն և կամ թուլամորթութեան կ'առաջնորդեն իրենց զաւակները, մայրական սուսերազանց հոգածութեան և գուրգուրանքի տաւրկայ ընելով զանոնք: Դեռահասներու մտաւորական և ֆիզիքական ոյժերու զարգացման համար այնքան անհրաժեշտ եղող գործերէ հեռու պահելուն մէջ կը տեսնեն իրենց մայրական սիրոյն բարձրակէտը:

Իրենց նուիրական կոչումին գիտակից մայրեր, ստկայն, քաջ ըմբռնած են սա իրողութիւնը թէ ֆիզիքական շարժումը անբաժանելի մէկ մասը կը կազմէ տղայոց անթերի դաստիարակութեան: Իրենց մկանները զարգացնելու, աչքի տեսողութիւնը սրելու, մատերը ճկունցնելու ինչպէս և աշխատութեան նուիրականութիւնն ու վեհութիւնը կարենալ ըմբռնելու համար պէտք ունին տղայք ֆիզիքական շարժումներու: Ինչպէս երկաթը աշխատելով կը փայլի, նոյնպէս ալ մեր զգայարանքները գործածուելով կը նրբանան ու կը զօրանան: Որքա՛ն սուր են աչքերը նաւազներու և բնախոյզներու: Որքա՛ն նուրբ և զգայուն է շօշափելիքը կոյրերու կամ որոշ արհեստաւորներու: Հետեւապէս, խիստ կարեւոր է սուսնին գործերու մասնակից ընել տղայք: Իրենց կարողութիւններուն համապատասխան պարտականութիւններ ցոյց տրուելու է անոնց: Մի՛ վախնաք ձեր զաւակները յոգնեցնելէ և անոնց ուժերը գործածելէ եթէ կ'ուզէք աւելցնել անոնց տոկունութիւնը. սո-

կուսութիւն՝ որուն պէտք պիտի ունենան իրենց ապագայ կեանքին մէջ: Ամէն աղայ անհրաժեշտօրէն պէտք ունի շարժելու և գործօն կեանք մը վարելու, քանզի շարժումը իր կեանքն իսկ է: Հարկ կա՞յ աւելցնելու թէ, մայրեր պէտք է աչալուրջ հսկեն որ աղայք ծայրայեղութեան երթալով չի վնասեն իրենց առողջութեան:

Մայրեր պէտք է նաև քաջութիւնն ունենան արտօնելու իրենց զաւակները, նամանաւանդ մանչ զաւակները, որ վտանգի ենթարկեն ինքզինքնին: Մանչերու մէջ տիրական է վտանգաւոր բան մ'ընելու մարմաջը՝ կամ լաւ եւս է ըսել բնագոյր: Փոխանակ կաշկանդելու՝ զօրացնել և միաժամանակ ուղղել պէտք է այս բնագոյր, որպէս զի տղան արկածախնդիր մը չըլլայ ապագային: Ամէն բան արգիւրելու չէ տղոց. ընդհակառակը, արտօնելու է որ սորվին անոնք լողալ, ձի հեծնել, լեռ մագլցիլ և այլ համանրման գործողութիւններ որոնց այնքան պէտք ունին՝ ապագային քաջարի այրեր և կիներ դառնալու համար: Անհրաժեշտ զգուշութիւններն ընել սորվեցնելէ վերջ, թոյլ տալու է որ ազատօրէն ի հանդէս բերեն իրենց քաջութիւնը, ուժն ու հերոսութիւնը: Պուարիկներու պէս եթէ մեծցնէք ձեր զաւակները, կըրնաք վստահ ըլլալ թէ իրենց ապագայ կեանքին մէջ պիտի ըլլան մեղկ և թուլամորթ մարդեր, բոլորովին անատակ կեանքի անողոք պայքարը յաջողութեամբ մղելու:

Ուստի, մայրեր պէտք է այժմէն իրենց զաւակները վարժեցնեն քաջասրտութեան, առնականութեան և դժուարութիւններու յաղթելու վճռակամութեան:

ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ԱՌՈՂՋ, ԵՐՁԱՆԻԿ ԵՒ ԵՐԿԱՐ ԿԵԱՆՔԻ

1. Արթնցած իդ պէս անկողինէն ելիր:
2. Ճաշելէ վերջ բերանդ ցողուէ:
3. Օրը գոնէ երկու ժամ բաց օդի մէջ անցուր:
4. Առանց ճաշի մի՛ պառկիր:
5. Աշխատութիւն, ժուժկալութիւն և հանգիստ երեք լաւագոյն բժիշկներ են:
6. Փափուկ անկողինները վնասակար են:
7. Շատ մի՛ ծածկուիր:
8. Բարձր շատ բարձր չըլլայ:
9. Ննջարանին օդը մաքուր ըլլայ:
10. Օդ և լոյս հիւանդութիւններն կը վաննեն:
11. Սեղմող հագուստ չհագնիլ:
12. Կօշիկներն ձիշդ ոտքիդ յարմարելու են:
13. Գլուխ և վիզ միշտ զով պահել:
14. Ամառ չեկած անմիջապէս հագուստներդ մի՛ թեթեւցներ:
15. Ուքերը միշտ տաք պահել:
16. Չափազանց մի՛ ուտեր, լաւ ծամէ:
17. Որոշեալ ժամերուն միայն ճաշել:
18. Շատ տաք և շատ պաղ ըմպելիք վնասակար են:
19. Հոժմ կերակուր, տհաս պտուղ վնասակար են:
20. Պտուղները լաւ ստըկէ:
21. Պտուղներուն կուտերը մի՛ կլլեր:
22. Ասեղ, կոճակ, գամ եւայլն բերանդ մի՛ դնիր:
23. Ուրիշին գործածած գաւաթներէն մի՛ խմեր լաւ մը չի լուացած:
24. Ապականած ջուրերէն զգուշացիր:

- 25. Համաճարակ հիւանդութեանց ժամանակ եռուցած ջուրի մէջ լեմոնի հիւթ դիր:
- 26. Մարմինդ տաք եղած ատեն պաղ ջուր մի՛ խմեր:
- 27. Ճաշի ատեն քիչ խմէ:
- 28. Թէյ և սուրճ զօրաւոր չըլլան:
- 29. Կեր և խմէ չափաւորութեամբ, առողջ կը մընաս և խոր ծերութեան կը հասնիս:
- 30. Ոչ շատ կակուղ և ոչ ալ շատ կարծր վրձինով ակռաներդ խնամով լուս:
- 31. Կարծր բաներ կոտրելու և պատուելու համար ակռաներդ չարաչար մի՛ գործածեր:
- 32. Քիթով չնչէ և ոչ բերանով.
- 33. Խորունկ չնչէ կուրծքդ լայնցնելու համար:
- 34. Ապականած օդ և փոշի բնաւ մի՛ չնչեր:
- 35. Տախտակամածին վրայ մի՛ թքներ:
- 36. Տուն մտած ատենդ կօշիկներդ մաքրէ:
- 37. Քրանած ատենդ օդի հոսանքի մէջ կամ զով տեղ մի՛ նստիր:
- 38. Ճաշէն գոնէ երկու ժամ ետքը լոգանք ըրէ, 11 աստիճան ջրով 10-15 վայրկեան միայն:
- 39. Լոգանքէ վերջ քալէ որ աաքնաս:
- 40. Փորհարութիւն, հազ եւայլն ունեցած ատենդ մի՛ լոգնար:
- 41. Պառկելէ առաջ գաղջ ջուրով և օճառով ձեռքերդ, վիզդ և երեսդ լուս:
- 42. Առանց ակնարութին ակնոց մի՛ գործածեր:
- 43. Երբ ողջ միջատ մը մտնէ ականջդ, քանի մը կաթիլ ձէթ կաթեցուր մէջը:
- 44. Գիրք կամ տետր թղթատած ատենդ մատդ մի՛ թքոտեր:
- 45. Ուրիշին թաշկինակը մի՛ գործածեր:
- 46. Անձանօթները մի՛ համբուրեր:

- 47. Հաղացողներէն հեռու կեցիր:
- 48. Անասունները մի՛ շոյեր:
- 49. Մատներդ վէրքիդ մէջ մի՛ խոթեր:
- 50. Եղունգներդ կարճ պահէ և բնաւ մի՛ կրծեր:
- 51. Սակաւապետ եղիր:
- 52. Մարմնով, մտքով մաքուր եղիր:
- 53. Միշտ ուրախ, գուարթ:
- 54. Ոյժերդ խնայէ յերիտասարդութեան:
- 55. Նախանձ, վիշտ, ձանձրոյթ, փառասիրութիւն մերժել:
- 56. Կանուխ պառկիր և կանուխ կելիր.
- 57. Յաճախակի լողանքներով, մորթը՝ այօինքն մարմինը առողջ պահել:
- 58. Վիշտը հառաչանքով չի կրել:
- 59. Մածուն կեր երկար կ'ապրիս:
- 60. Երիտասարդութեանդ ծաղիկը մոլութեանց խորշակէն պահէ մեծ խնամով, որ երբ ծերութեան աշունը հասնի քաղցր պտուղի փոխուի այդ ծաղիկը:
- 61. Անկողինդ պտտին պէտք չէ հպի:
- 62. Անկողնարանիդ պատուհանները բոլոր գիշերը բաց թող ըլլան, եթէ կարելի է:
- 63. Նախաճաշէ առաջ շարժում ըրէ:
- 64. Քիչ միտ կեր, ան ալ խիտ լուս եփած:
- 65. Շատ իւղ — կարագ — կեր:
- 66. Արբեցուցիչ ըմպելիներէ հեռու կեցիր:
- 67. Բնակարանիդ մէջ անասուն մի՛ ունենար, առնք հիւանդութեան սերմեր կը բերեն:
- 68. Աշխատանքիդ մէջ փոփոխութիւն ըրէ:
- 69. Յաճախ կարճ արձակուրդներ ըրէ:
- 70. Լաւազոյն է խնամել առողջութիւնը քան դարմանել հիւանդութիւնը:



7646-56

ՄԱՐԶԱՆՔ ԵՒ ՍԲՈՐ

ՇՆՉԱՌՈՒԹԵԱՆ ՄԱՐԶՈՒՄԸ

Մեր մանկութենէն գիտենք, վաղք խաղացած տաննիս, երկար հետապնդումէ ետք՝ արագաչարժ բայց գիւրաւ հեւացող մեր ընկերոջ շնչառութեան կենալը: Այսպէս ուրեմն հակառակ տեղական սպասարկութիւններու (մկան և յօդաւորում) գերազանցութեան չարքաչ երիտասարդ մը կրնայ պարտուիլ աւելի տկար հակառակորդէ մը՝ որուն ընդհանուր սպասարկութիւնները (սիրտ և թոքեր) լաւագոյն են: Իբր եղբակացութիւն՝ մարզանքը շնչասպառութեանէն կը բեկանուի: Իսկ շնչառութեան մարզումը կոչուած է շնչասպառութիւնը կանխարգիլել:

Շ Ն Չ Ա Ս Պ Ա Ռ ՈՒ Թ Ի Ի Ն

Բժշկականօրէն շնչասպառութիւնը՝ սրտին վրայ արձագանգուած շնչառական անկարգութեան նշան մըն է: Անշուշտ շնչառութեան մէջ սրտին վերագրելի մաս մը կայ. բայց սրտային ազդակը, աւելի յաճախ, շնչառական անկանոնութեան նկատմամբ երկրորդական է: Շնչառական շարժումները փոխանակ մեթոտիկ կերպով իրարու յաջորդելու, կը խառնակուին ու կ'աւրուին, որուն հետեւանքը կ'ըլլայ սրտային սպառումը, ուրեմն պէտք է կանոնաւոր չափը պահելու ճգնիլ:

Փորձառութիւնը և կազմախօսութիւնը ցոյց կուտան որ ամէն գործարան կանոնաւոր և բնականն պաշտօնավարութեան մէջ կը գտնէ երաշխիքը հաւանական խանգարումներու և վրդովումներու հանդէպ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

3. Ա.Ի.Ա.Գ. ՈՒՐԲԱԹ

Աւագ Ուրբաթը չարչարանաց խաչելութեան և թաղման նուիրուած՝ և ասիկա մեծ հանդիսութեանց տեղի տուած է: Եկեղեցիներու սեւ վարագոյրները, վեց աւետարաններուն ընթերցումը 12 մոմերով և ասոնց զոյգ զոյգ շրջումը մէն մի աւետարանի ընթերցումէն ետքն շատ հին չեն. բայց Աւագ Ուրբաթ գիշերն, որ Այգլաց կամ Եգլաս կ'ըսուի, պաշտամունքէն ետքը, առտուան դէմ վառ մոմերով գերեզմանատուներ երթալ, եկեղեցւոյ վաղեմի սովորութիւններէն է: Ոսկեբերան յիշատակութիւններ ունի այս մասին:

Իսկ «քաղում», Փրկչին գերեզմանին նմանութեամբ փայտակերտ դամբարաններ շինել, Հայց. եկեղեցւոյ համար եկամուտ է և հետեւողութիւն եղած պիտի ըլլայ երուսաղէմի եկեղեցւոյն, ուր Փրկչին գերեզմանին շուրջ կը ստրքեն թափօր: Հայոց մէջ, տեղ տեղ, Փրկչին պատանուքը և թաղումը կերպարանել, եկեղեցական զգեստներով, արդէն վերջացած սովորութիւն մըն է: Լատին եկեղեցին իրական արձաններով և պատկերներով կը ներկայացնէ Յիսուսի վերջին Շարաթը իր հաւատացեալներուն:

Անշուշտ այս բոլոր նիւթական և շատ անգամ անյարմար ներկայացումներուն համար է, որ Հայց. եկեղեցւոյ տօնացոյցը կը պատուիրէ Փրկչին պատանումը ու թաղումը խորհրդանշելու համար, խաչ մը գնել սպիտակ վարչամակի մէջ:

4. ՃՐԱԳԱՆՈՅՑ

Իսկ Զատիի գիշեր, այսինքն ճրագալոյցին, հը-

բախտութեան սովորութիւնը հին է քրիստոնէական եկեղեցիներու մէջ, և անշուշտ կապ ունի հին հաւատքի և հաւատալիքներու հետ: Զորօրինակ, Իսլամնաացիք Զ. րդ դարէն սկսեալ, ճրագալոյցին մեծ կրակ կը վառէին և այս կրակը յառաջ կը բերէին ոսպնեակներով: Այս սովորութիւնը ցամաքային եւրոպայ ալ անցաւ:

Հայց. եկեղեցւոյ մէջ, հիմա, ճրագալոյցի ստուան մեկ կանքեղ վառ կը պահուի Աւագ խորանի վրայ, իսկ երեկոյին՝ երեք կանքեղ, և երբ կը կարգացուի « Լուսաւորեաց, լուսաւորեաց Երուսաղէմ » գիրքէն, բոլոր եկեղեցին կը լուսաւորուի, ժողովուրդն ալ իր « Լուսաւորեա՛ » ի մոմերը կը վառէ: Ասիկա անշուշտ Երուսաղէմի եկեղեցւոյն սովորութեան հետեւողութիւն մըն է, բայց մեծ նմանութիւն և հանգիստութիւն ունի Իտալիոյ եկեղեցիներու հնագոյն սովորութեանց հետ: Ըստ Գ. Տաթևացւոյն՝ Սուրբ Գ. Լուսաւորչէն հաստատուած սովորութիւններ են ասոնք:

5. ԶԱՏԿԱԿԱՆ ԳԱՌ

Ինչպէս Լատին եկեղեցւոյ, նոյնպէս Հայց. եկեղեցւոյ մէջ կար Զատիկական Գառ կամ ոչխար մորթելու սովորութիւնը, որ մասաղ ընել կամ մասաղ կտրել ժողովրդական բացատրութեամբ մնացած է: Եկեղեցւոյ մէջ կար այս սովորութիւնը, բայց ե՛րբ վերածուեցաւ պարզ մատաղի սովորութեան, յայնտի չէ:

Ըստ Շնորհալուոյն, զատիկական դառին մատաղը Ս. Գ. Լուսաւորիչ « ի հռովմայեցւոց եկեղեցւոյն ընկալաւ եւ աւանդեաց », և դիտել կուտայ, թէ դեռ հիմա փռանկները իրենց եկեղեցիներուն մէջ հայերէ աւելի զգուշութեամբ կ'ընեն այս մատաղը:

ԶՈՒԱՐԹ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

ԱՂՈՒՈՐ ԲԱԺԱՆՈՒՄ ՄԸ

Հայագործ մը իր յաճախորդներէն մէկուն.

— Ներեցէք պարո՛ն, հարցնել ձեզ թէ, ինչո՞ւ համար օրը Յոսի կ'առնէք, քանի որ տանը մէջ ընդամէնը երեք հոգի էք.

— Հացերէն մին կը պահեմ, մէկը կը նետեմ, երկուքը ետ կուտամ, մնացեալ երկուքն ալ փոխ կուտամ:

— Ես այս բաժանումէն բան մը չի հասկցայ:

— Մտիկ ըրէ որ հասկնաս. « կը պահեմ » ըսածս՝ կուտեմ, « կը նետեմ » ըսածս՝ զոքանչիս, « ետ կուտամ » ըսածս՝ հօրս մօրս կը յանձնեմ. « փոխ կուտամ » ըսածս ալ որդւոյս կը կերցնեմ:

— Արդարեւ, աղու՛ր բաժանում:

ԵՂԵՒՄՏԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

— Ներեցէք բարեկամ, բացէ՛ն սա մեր քսան դահեկանը կը վճարէ՞ք:

— Ի՞նչ ... Ի՞նչպէս:

— Եթէ մեզմէ փոխ սուած քսան դահեկանին պայմանաժամը եկաւ՝ հաճեցէք վճարել:

— Աւա՛ղ, պարոն, ըսածնիդ չեմ լսեր:

— Չես լսեր մի՛...

— Անցեալները բաղնիք դացի, ուր մսեցուցե՞ր եմ ի՞նչ եմ ըրեր, ականջներս գոցուեցան:

— Բան մը չէ, կ'անցնի. առ այժմ եկէք սա մօտակայ ճաշարանը մտնենք ճաշենք, որուն կերակուրները ամէն մարդ կը գովէ:

— Ողջ ըլլաս բարեկամ, Աստուած զաւակներդ

պահէ, ևս ալ սուսաւտուընէ ի վեր բերանս բան մը
դըած չէի:

— Ա՛, աղէկ միաքս եկաւ, գիտէ՞ք, տանը պույ-
մանաժամն ալ երկու ամիս անցաւ, և տակաւին
դուք...:

— Աւա՛ղ բարեկամդ իմ, չեմ լսեր, չեմ հասկը-
նար, ո՛հ, այս ի՞նչ փորձանք էր որ գլուխս եկաւ:

— Մեր խանութներէն մէկն ալ մատվածառի մը
վարձու տուինք, չորս ամիս է ամսական չի վճարեր
ու տեղը միս առէք կ'ըսէ. միջոցաւ ևս այնչափ միսի
պէտք չունիմ. արդ կը մտածեմ բարեկամներէս մէ-
կուն յանձնարարել որ գոնէ միսը մեր խանութէն
տանէ:

— Ո՛հ, եթէ այդպիսի բարիք մը ընէք ինձ,
անհունս երախտապարտ կը մնամ ձեզ:

— Բայց, պարո՛ն, դուք իմ մօրուքի՛ս կը խըն-
դաք ի՞նչ կ'ընէք:

— Քաւլիցի, այդ ի՞նչ խուսք է:

— Ուրեմն այդ ի՞նչ տարօրինակ խլուրթիւն է.
մերթ կը լսէք մերթ չէք լսեր:

— Մի՛ բարկանաք, կ'աղաչեմ, բժիշկները ասոր
« Մալաի սը Տուաք Ավուառ » անունը կուտան, որ
ըսել է՝ երեւմուտքի հիւանդութիւն:

ՄՏՔԻ ԾԱՂԻԿՆԵՐ

Աւելի դիւրին է վիճ մը լեցնել քան թէ գեղեցիկ
կնոջ մը իլձերը:

* * Աւիստիս մեջ ամենադժուարին բանը մարդուս
իմեզին՛ք նանչնալն է. իսկ ամենադիւրին բանը ու-
րիճներու խրատ սալն է:

* * Ի՞նչ է յոյս:
— Մարդոց սանձը:

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն
L U S H

Ի՞նչ սոսկալի քաղաք մըն է Լոնտոն, իր բիւրա-
ւոր բնակիչներով, հարուստներու և աղքատներու,
գործի և հաճոյքներու, զարգացման և աղիտութեան
իր տարօրինակ հակապատկերներովը:

Շատ սոսկալի տեղ մը երեւաց խեղճ կնկանը երբ
ան մուրեցաւ փողոցներուն և հրապարակներուն,
զրօսավայրերուն ու ծառուղիներուն մէջ, նոյեմբերի
այդ առաուն, շլմորած և ընդարմացած, բոլորովին
անկարող՝ իրեն համար սեւէ ծրագիր մը շինելու փա-
փաքելով միմիայն անհետանալ, որպէսզի մի գուցէ
ամօթ պատճառէ իր գաւկին:

Չէր մեղադրեր իր որդին. միթէ ընական չէ՞ր
որ այդպէս վարուէր իրեն հետ, քանի որ քաղաքա-
կըրթուած էր ան, իսկ ինքը՝ գեղջուկ կնիկ մը:

Տկար և յոգնած կ'զգար ինքզինքն, և միջոց մը
այնպէս եկաւ իրեն թէ պիտի մեռնի: « Տխուր բան
է առանձին մեռնիլը, կը խորհէր, պիտի նախընարէի
անկողնիս մէջ հանգիստ մեռնիլ. բայց հոգ չէ, աս
ալ կ'անցնի և վերջը բարի կ'ըլլայ հարկաւ: » Սա-
կայն խեղճ կինը իսկոյն ինքզինքին գալով խորհեցաւ
թէ ի՞նչ պիտի մտածէր ամէն մարդ, երբ իմանար
թէ Լատիի մայրը մեռած գտնուած էր փողոցին մէջ:
Ի՞նչ ամօթ տղուն համար:

Ի՞նչ ցուրտ կ'ընէր: Չէք կինը կը դողդղար ու
խոնաւցած շալին մէջ կը փաթթուէր, և ի՞նչ անձ-
կութեամբ կը փնտռէր իր անակը, կրակարանը և հի-
նուկ բազմոցը: Ո՛հ, որքան երջանիկ է, կը խոր-
հէր, իր ամուսինը որ գերեզմանին մէջ կը հանգչէր

ամէն հոգէ զերծ, զոնէ զաւարթ մը թէյ ըլլա՛ր և խմէր իր ճաթած թէյամանին մէջէն:

Նոյեմբերի մթնշաղը մօտեցած էր արդէն, երբ վերստին ճամբայ ելաւ: Մուտը ա՛լ աւելի կանուխ կը կոխէ Լոնտոնի մէջ, մառախուղին և մուխին պատճառաւ: Առանց գիտնալու թէ որ կողմ կ'ուղղուէր, դէպի արեւելք դարձաւ, դէպի Լոնտոնի կեդրոնը: Փողոցները ա՛լ աւելի ժխորուած էին այդ ժամուն քան առտուն: Լուսաւորուած խանութները, արմուկը, և իր յոգնութիւնը հետզհետէ կ'աւելցնէին խեղճ կնկանը շփոթութիւնը:

Գ Լ Ո Ւ Խ Գ .

Մեր պատմութեան սկիզբէն ի վեր տասնըութը ամիսներ անցեր են: Փոխանակ ախուր և միգապատ Նոյեմբերին, Մայիս ամսուն մէջն ենք հիմա, որ Լոնտոնի մէջ իսկ գեղեցիկ է:

Ինչպէս ըսյսերը կը ծաղկին, ճիշդ այնպէս մարդու սիրան ալ կը փթթի այս եղանակին. և նոյն իսկ ամենէն մտահոգ մարդիկ զուարթութիւն կ'զգան իրենց մէջ, նման վանդակներու մէջ բանտարկուած թռչուններու որոնք իրենց երգած պահուն կը մոռնան իրենց դժբախտութիւնը:

Տր. Գարդըր ալ զուարթ էր այդ օրը. թէպէտ Լոնտոնի հիւանդանոցի մը մէջ իր խնամքները կը թաշխէր հիւանդներուն և անկարներուն: Շուշանի փունջ մը ունէր վրան, զոր Մանիչակ, իր նշանածուհին, ձեռքովը դրած էր, մինչ ինք ցած ձայնով ըսած էր անոր. « Ա՛լ չարաթ մը մնաց, Մանիչա՛կ: »



ՈՒՂԵՑՈՅՑ ԿԵՆՑԱՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Մ Ի' ...

Չ.

ՆԱՄԱԿ ԳՐԵԼՈՒ ԱՏԵՆ

Մի՛ մտնա՛ր թէ կանոնաւոր գրուած նամակ մը երեք մասերէ կը բաղկանայ. — յառաջաբան, նիւթն եւ վերջաբան: Յառաջաբանը պէտք է գրութեան պատճառը կամ քաղաքավարական տեսցուածք մը պարունակէ, ընթերցողը՝ նամակին պարունակութեան պատրաստէ և անոր ուշադրութիւնը գրաւէ յետագայ սողերուն վրայ. յառաջաբանը պէտք չէ շատ երկար ըլլայ: Յառաջաբանին վերջին պարբերութիւնը նամակին իսկական պատունակութեան կամ նիւթին հետ լաւ համաձայնեցնելէ վերջ՝ պէտք է յառաջանալ առաջարկութեանց կարգաւ և վերջացնել երբ պէտք եղածն ըսուած է: Ինչպէս այցելութեանց ատեն նոյնպէս և նամակաց մէջ պէտք է քաղցրութեամբ, խոնարհութեամբ և սիրով հրաժեշտ տալ, ընական դարձուածքով մը մեր մեծարանքը, անձուիրութիւնն ու բարեկամութիւնը ապահովցնելով:

Մի՛ լինիր երկարաբան. նամակագրութեան մէջ համառօտութիւնը լաւ կը թութեան նշան է. քիչ բան մի՛ հասկցներ շատ բառերով այլ շատ բան հասկցուր քիչ բառերով: Երկար բացատրութիւններ բարեկամական նամակաց միայն կը պատկանին:

Մի՛ դրեր անընթեռնիլ և դժուարամբռնիլ նամակներ: Գեղազրութիւն պահանջելի չէ յամենայն, բայց պէտք է որ ըստ կարելոյն յստակ և որոշ կերպով գրուի: Ինչպէս խօսակցութեան նոյնպէս և նամակագրութեան մէջ զգուշանալ պէտք է օտար ֆրազներ գործածելէ:

Մի՛ թղթակցիր բոսթ - քարտով: Բայ նամա-
կով անձնական հաղորդագրութիւն մը աւելի քան
նախատական է նամակն ընդունողին համար: Առեւ-
տրական և այլ կարճ պատգամներ միայն թոյլատրելի
են բոսթ - քարտի վրայ:

Մի՛ գործածեր անամաքուր թուղթ և պահարան.
Նամակագրութեան մէջ մաքրութիւն և կոկիկութիւն
խիստ հաճելի ազդեցութիւն մը կը գործեն ընթեր-
ցողին վրայ:

Մի՛ անցնիր կրթութեանդ սահմանը եթէ կ'ու-
զես ծիծաղելի չի դառնալ ընթերցողիդ առջև. նա-
մակիդ մէջ գործածէ սոսկ պարզ եղանակ մը, որ
խօսակցութեան մը լեզուին կը մօտենայ. խորհուրդ-
ներդ արտայայտէ անպաճոճ և անուսոյց կերպով:

Մի՛ գրեր նամակներդ անձկութեամբ կամ յակա-
մայս: Ոյլ որ հաճութեամբ կը գրէ, լաւ կը գրէ:

Մի՛ մոռնար թէ հարկադրուած ես կշռել երեք
անգամ քու խօսքերդ և եօթն անգամ երբոր կը գրես:

Մի՛ փակցներ պահարանը՝ լզելով անոր խէժը.
Փակցնելու լաւագոյն կերպն է թրջել մաքր և քը-
սել խէժին:

Մի՛ թողուր անպատասխանի քեզի գրուած
ոճէ նամակ:

Մի՛ գրեր «սիրելի օրիորդ» կամ «սիրելի սիկին»
երբ կը թղթակցիս մանկամարդուհի մը հետ: Օրիորդ
կամ Տիկին բառերու գործածութիւնը, առանց մակա-
նունի, նշան է գռեհկութեան:

Մի՛ մոռնար թէ Յես Գրուքիւն մը միմիայն սա
բարեկամս կամ առ աստիճանակիցս ուղղեալ նամա-
կաց մէջ ներելի է:

7647-56



Դ Ա Ս Ը Ն Թ Ա Ց Ք Ե Լ Ե Ք Տ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Ե Ա Ն

Գ. ԱՌԻՆ Ե.

Կ Ա Պ Ա Ր Ա Թ Թ ՈՒ Ի Խ ՈՐ Շ Ե Ր

(Lead-Acid Cells)

Խորշն առանձին միութիւն մըն է, բարդը սա-
կայն շարք մըն է խորշերու: Բարդը, ուստի, կը
նշանակէ մէկէ աւելի: Խորշի և բարդի տարբերու-
թիւնը լաւագոյնս կարենալ ըմբռնելու համար՝ կըր-
նաք երեւակայել միայն մեկ զէնքի և մեկէ աւելի
զէնքերու համադրութեան միջեւ եղած տարբերու-
թիւնը: Իւրաքանչիւր խորշ — փոյթ չէ թէ ինչ է իր մե-
ծութիւնը — կրնայ տրտադրել 2 վոլթիոց ճնշում մը:

Կ Ա Պ Ա Ր Ա Թ Թ ՈՒ Ի Բ Ա Ր Դ

Այս բարդն ունի միւլտիպլ մետաղէն (կապար)
շինուած սկաւառակներ որոնք յարեւմտան չեն իրա-
րու. մին՝ բաղադրութիւն մըն է կապարի և թթուա-
ծինի, իսկ միւրը՝ զուտ կապար է: Ելեքտրական հո-
սանք արտադրուելուն պատճառը սա է որ, ելեք-
տրալոյժը ստուի է հարուածելու մէկ սկաւառակն
աւելի քան զմիւսն: Հոսանքը երբոր կը հոսի
մէկ խորշէն, տեղի կ'ունենան քիմիական որոշ փո-
փոխութիւններ և այդ պատճառաւ սլ կը պարպուի
խորշը. բայց երբ խորշը գործի կը մղուի՝ հոսանքը
իսկոյն ետ կը դառնայ անոր մէջէն և այս կերպով
սկաւառակները կը վերստանան իրենց լեցուած վիճակը:

Ք Ի Մ Ի Ա Կ Ա Ն Գ ՈՐ Ծ Ո Ղ ՈՒ Թ Ի Ի Ն

Փլանք՝ շտեմարան բարդի դիւան ընելու ատեն

գործածեց հետեւեալ կերպը որուն քաջ ծանօթ ենք մենք այսօր: Կապարի երկու կտորներ կը մխրձուին ծծմբաթթուի (sulphuric acid) ջրախառն լուծոյթի մը մէջ: Հոսանք մը երբոր կ'անցնի խորշին մէջ, լուծոյթին ջուրը խկոյն կը բաժնուի ջրածինի և թրթուածինի, որոնցմէ կը բաղկանայ ան: Թթուածինը միախառնուելով սկաւառակներէն միոյն հետ կը կազմէ կապարի բաղադրութիւն մը, կապարագերաթրթուիտ կամ կապարագերօքսիտ (lead peroxide) կոչուած, որ գոց թուի է գոյնով: Զրածինը, սակայն, չի զուգախառնուիր միւս սկաւառակին հետ այլ ամբողջապէս կ'անհետանայ իբր կազ մը: Զրածինը սկաւառակներէն միոյն վրայ փոփոխութիւն մը յառաջ կը բերէ հետեւեալ կերպով. — հարթ և հաստատ կապարեայ սկաւառակ մը կը վերածէ անհարթ և ծակոտէն սկաւառակի մը, և այդ կերպով թոյլ կուտայ որ ելեքտրալոյժին (electrolyte) և սկաւառակին միջև հազորդակցութեան մակերեսն աւելնայ: Այս սկաւառակը գունափոխութեան չենթարկուիր, այլ կը պահէ իր գորշ գոյնը:

Այս գործողութիւնը կատարուելէ վերջ, սկաւառակները լեցուն վիճակի մը մէջ կը գտնուին որովհետեւ ելեքտրալոյժը կը հարուածէ կապարագերօքսիտով ծածկուած սկաւառակը (դրական սկաւառակ) աւելի քան ծակոտէն կապարեայ սկաւառակը (ժխտական սկաւառակ): Քանի որ կայ տարբերութիւն մը քիմիական գործողութեան մէջ, յայտնի է թէ ելեքտրական ճնշում մըն ալ կայ անոնց միջեւ, եւ, շքրջան մը եթէ կազմուի սկաւառակներուն միջեւ, հոսանքը պիտի հոսի իսկոյն:

Երբոր խորշը կը պարպուի, այն ատեն երկու սկաւառակներն ալ կը հարուածուին ելեքտրալոյժէն և այդ կերպով կը կազմուի կապարածծմբատը թէ՛ (lead sulphate) գրական և թէ՛ ժխտական սկաւառակներուն վրայ:

ԴԱՍԸՆԹԱՅՔ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ՊԵՐՃԱԽՕՍՈՒԹԵԱՆ

ԳԼՈՒԽ Ը.

Հ Ա Ն Ճ Ա Ր Ը

«Միտքը կ'ազդէ միտքին. ուրեմն մեր ամբողջ բնելիքը, մտածամբ խօսիլը առվիլն է...»

Հանձարը, մահկանացու աչքերը շլացնող այս ոյժը, ինքզինք նուազ բախտաւոր նկատողները շատ խարհիլ աուտոյ նիւթ մը կզած է միշտ: Երբ մարդ մը իր արուեստին կամ արհեստին մէջ փայլուն այջողութիւն մը ձեռք կը բերէ, աշխարհ զայն հանձար կը կոչէ: Քիչեր կը հասկնան բառին նշանակութիւնը, և աւելի պզտիկ է տաղանդին կամ այնքան փայլփայլ նշանաւորութեան արժանացող այս ոյժին ուրկից գալը հասկցողներուն թիւը: Գիտնականներ կը յայտարարեն թէ հանձար մը ո'ւրէ աշխատութեան մը կամ արուեստի մը համար տարականոն կարողութիւն ունեցող անձ մ'է: Ան կրնայ շատ լաւ ըլլալ մեծ հոնտոր մը, երաժիշտ մը, բանաստեղծ մը, արուեստագէտ մը, երգիչ մը, գրագէտ մը, ելեքտրագէտ մը եւ այլն: Ստոյգ է թէ իր կազմին մէջ իմացականութեան տարականոն զարգացում մը կայ, ուրիշներու տեսնել չի կարողացած իրողութիւնները ըմբռնելու կարողութիւնը:

Հանձարը իբր խօսող կամ հոնտոր ճարտար վարպետ մ'է ստեղծագործող խորհուրդի և մազնիսացնող խօսքի, և իբր այդ ի վիճակի է փորձառութեան աննշան հիման մը վրայ կառուցանելու մեծագոյնը և գեղեցկագոյնը իր առաջագրած որեւէ մէկ բանին: Ան՝ վարժուած է երեւակայութեան սուր աչքերով

տեսնելու իր խորհուրդի և խօսքի սուարկան և հազ-
ցնելու անոր խօսքերու տարազը ամենայն ճարտա-
րութեամբ: Ան՝ ի բաց կը թօթափէ ասղակայի սո-
վորոյթներու կապանքները և չի յօժարիր իբրև յե-
նարան գործածել այլոց կողմէ արտայայտուած կարգ
մը խորհուրդներ, խօսքեր և խօսքի դարձուած-
քներ: Ան ինքնատիպ է բառին ամենասեղմ իմաս-
տով և կարող՝ կենդանի գոյներով պատկերացնելու և
կամ արտայայտելու իր էութեան խորախորհուրդ ալ-
քերուն մէջ իր զգացած բոլոր բաները:

Մեր պատասխանելիք հարցումը սա է. — ո՞ր կէ-
կ'ընդունի հանձարը այս մասնաւոր գիտութիւնը, և
ի՞նչպէս:

Փորձառութիւնը մեզի ապացուցած է թէ ամէն
արդիւնք պատճառ մը ունի, գիտենք հետեւաբար թէ
մտային այս մեծ յայտնութիւններն ալ պատճառ մը
պէտք է ունենան և ունին անտարակոյս: Այս պատ-
ճառը կամ պատճառները մանրամասնօրէն և հանդա-
մանօրէն ձեզի բացատրելէ առաջ կ'ուզեմ անջնջելի
կերպով դրոշմել ձեր մտաց վրայ սա տիեզերական
իրողութիւնը թէ, « ԱՄԷՆ ՄԱՐԴ ԶԻ ԶԱՐԴԱՅԱՆԾ
ՀԱՆՃԱՐ Մ'Է ԵՒ ԻՐ ԱՌՋԵՒԸ ՈՒՆԻ ԱՆՍԱՀՄԱՆ
ԱՍՊԱՐԷՉ ՄԸ »: Այս անկիւնէն երբ կը գիտենք
հարցը, այն ատեն ո՛չ միայն ապշութեամբ և հիաց-
մամբ չենք նայիր հանձար կոչուած մարդոց վրայ
այլևս կը համադրենք իսկոյն մեր ընտուր ոյժերը
և համբերատարօրէն կը ջանանք որ մենք եւս ըլլանք
հանձար մը և կամ մեծ միտք մը:

ՄՏՔԻ ԾԱՂԻԿՆԵՐ

Վնասակար ընկերք աւրուած usainofai կը նմանի,
որ ինչ որ ընդունի՝ անմիջապէս կ'աւրէ եւ շատ
պատուական կերակուրն ալ գեռ եւ վնասակար նիւ-
թերու կը փոխարկէ:

ԴԵՌԱՀԱՍՆԵՐՈՒՆ ՈՍԿԵՂԷՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ՅԱՐԳԵԼ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԸ

Տարածամ ծերութեան սերմերը պատանե-
կութեան մէջ կը ցանուին. — ուշ անկողին մտնել,
գրգռիչ կերակուր, ոգելից ըմպելիներ, չափազանց
աշխատութիւն մտաւոր և մարմնաւոր, կանուխ ա-
մուսնութիւն (մանուսնագ աղջիկներու), հոգեր, յու-
զուսներ, վախեր, մտատանջութիւններ, քնատու-
թիւններ, ասոնք և ասոնց նման կարգ մը յուսի ունա-
կութիւններ շուտով կը սպառեն կեանքի ոյժը, կը
կարծրանան և զիւրարեկ կ'ըլլան մարմինի անօթները
և երակները: Ասոնք պիտի ցամքեցնեն մարմինը և
շուտ թառամեցնեն:

Մնունդիդ պէտք է մեծ կարեւորութիւն տաս:
Խորհած ես երբէք թէ շուկան եփուած խորտիլը կամ
տունի փիլլան զոր կ'ուտես, քիչ վերջ պիտի ըլլան
մկան, սակոր և սիրտ որ պիտի բարախէ, ջիլ՝ որ
պիտի զգայ, ուղեղ՝ որ ծնունդ պիտի տայ օրինակի
համար, բարձր խորհուրդի մը կամ ազնիւ զգացումի
մը, — այդ միտի եփուած կտորը զոր կ'ուտես: Արդ,
մեծ կարեւորութիւն ունի թէ ի՞նչ տեսակ կերա-
կուրներով ամենէն աղէկ կրնանք սնանիլ:

5—15 տարեկան աղայ մը պէտք է որ 4 անգամ
ճաշէ օրը. չորս ճաշ՝ աւելի արամաբանական եղանա-
կով մը, որչափ անոնք չեն սովորաբար: Շատ ըն-
տանիքներու մէջ իրիկուան ճաշն է որ ամենէն առա-
տը կ'ըլլայ: Ապահովաբար գէշ սովորութիւն: Տղայ
մը որ կ'երթայ պառկիլ՝ իր ընթրիքի վերջին պա-
տառէն անմիջապէս յետոյ, պէտք է որ իր ստամոք-
սին մէջ ունենայ թեթեւ սնունդներ միայն — հաւ-

կիթ, բանջարեղէններ և կաթեղէններ, որոնք զինք պարարտացնելու յառկուածիւնն ունին, առանց խոնգարելու իր քունը:

Առաւօտուն շատեր դպրոց կ'երթան հազիւ կըշտանալով կտոր մը շոքուայով, քիչ մը ապուրով, դաւած մը թէյով կամ պատառ մը հացով: Եւ կ'ուզեն որ ստով, դիշերուան անսուտուածեան երկար ժամերէն յետոյ, մինչեւ կէսօր, անթուլանալի ուշագրուածիւն մը ընծայեն իրենց ուսուցիչներուն, իրենց անարիւնութեամբ տկարացած, կծկտած և տրիւնով գէշ ոռոգուած ուղեղի բջիջները հասկնան և ըմբռնեն հարիւրաւոր ձանձրալի և դժուարին բաներ: Անհետեւ է ասիկա պարզապէս: Այս մեթոտով առտուընէ մինչեւ կէսօր միտքը կէս-ձգտուածի կէս-արթնութեան մէջ միայն կ'ըլլայ: Երբ կէսօրուան ճաշն համնի, ախորժակները շատ սաստիկ կ'ըլլան: Մարտողութիւնը կը կրէ անոր հետեւանքը, և ամբողջ օրը վտանգուած կը մնայ:

Դպրոցականի մը նախաճաշը պէտք է որ բաղկանայ 2 հաւկիթէ, շերտ մը հացէ՝ վրան լաւ տեսակ կարագ քսուած, և աման մը կաթէ որուն մէջ մի քիչ սուրճ խառնուած ըլլայ: Այսպէս կշտանալով, առտուն պիտի կրնայ ընծայել նուազ մտացիր ուղեղէ մը աւելի գործունեայ աշխատութիւն մը՝ նուազ յոգնութիւնով:

Ժամը 4ին՝ երկարատեւ դասէ մը ելլելէ վերջ ու երկար սերտողութիւն մը սկսելու տուն, աշակերտը պէտք է որ առնէ հանգստաւէտ սնունդներ ու ձմեռը խմէ սոսք ըմպելիք մը: Կէսօրուան ճաշը պէտք է որ գլխաւորն ըլլայ. այս միջոցին պէտք է որ ուտէ միսի առատ պաշար մը, որ ճշմարտապէս նորոգիչ միակ սնունդն է:

(Շար.)

ՏԱՆՏԻԿՆՈՋ ԲԱՐԵԿԱՄԸ ԽՈՂԱՆՈՑԷՆ ՆԵՐՍ

Ա Պ Ո Ւ Ր Ի Տ Ե Ս Ա Կ Ն Ե Ր

1. ՉՄՐՈՒԽՏԱՍՊՈՒՐ.— Կէս օխս չոր կամ թարմ պէղիլիային խաշուած հատիկները և էնկինարի մը մէջի մասը դի'ր 12 շերեփ մսի ջուրի մէջ և եփէ՝ խառնելով. եփ ելլելէ վերջ աւելցուր մէկ շերեփ սպաննագի ջուր, մէկ դգալ չ'աղուած կարագ իւղ, աղ և պղպեղ. խառնելով քանի մը եփ ալ բերելէ վերջ, իջեցուցէք:

2. ԻՄՐԻԿՈՎ ԵՒ ԿՍՄՊՍՐԻՈՎ ԳՊՈՒՐ.— Կարմիր ոսպը ապուրի պէս եփէ՝. մէջը իմրիկ դի'ր ու դարձեալ եփէ, նախապէս խաշուած կամպարիները մէջը ձգէ. քանի մը եփ ալ բեր, իջեցուր կրակին վրայէն: Պատրաստ է:

Կ Ե Ր Ա Կ Ո Ւ Ր Ն Ե Ր

1. ԹԷՆՃԵՐԷ ՔԷՊԱՊԸ ԵՉԱՆ ՄԻՍԷ (boeuf en miroton).— Քէպապցու կտոր մը կովու կամ եզան միսը ջարդէ, սանին (թէնձերէ) մէջ դիր և խորովելէ վերջ վար առ կրակէն: Յետոյ սանին մէջ երկու ընկոյզի մեծութեամբ կարագ իւղ հալեցուր, խաշոր դգալ մը ալիւր աւելցուր և խառնէ մինչեւ որ կարմըրի, աւելցուր նաեւ մէկ երկու գաւաթ սովորական ջուր կամ մսի ջուր, պէտք եղածին չափ աղ, պղպեղ, մանրուած մի քանի հոտ սոխ և փաթաթէս, մի քիչ քէքիք և քիչ մըն ալ մալթանոս. գոցէ կափարիչը և թող որ աղէկ մը եփի: Յետոյ, նախապէս խորովուած միսը դիր մէջը և եփէ 15 վայրկ. չափ եւս:

2. ԳԼՅՄԱ ՔԷՊԱՊԸ ԵՉԱՆ ՄՍԷ (boeuf en hachis).—

Կոփու կամ եզան միսը մաքրէ իր ոսկորներէն, իւզերէն, մորթանման կարծր մասերէն և մեքենայէն անցուր մէկ-երկու սոխի, մի քիչ մայտանոսի և մէկ հատիկ սխտորի հետ միասին. սանին մէջ հաւկիթի մեծութեամբ կարագ իւզ դիր և լաւ մը հալեցնելէ վերջ վրան աւելցուր քաշուած միսը (գըյմա) և խորովէ: Այդ միջոցին աւելցուր մի քիչ ալ ալիւր և նայէ որ քաշուած մսին հետ աղէկ մը միախառնուի: Յետոյ մէկ-երկու շերտի մսի ջուր նսեւ աղը, պըղպըղ դիր: Մի քանի երկրելէ վերջ՝ ամանին մէջ շարուած բարակ հացի կտորուանքներուն վրայ թափէ: Այս կերակուրը աւելի համեղ կ'ըլլայ, եթէ քաշուած միսը խորովելու ատեն աւելցուի մի քիչ կաթ և մի քիչ ալ թրջուած հաց: Այս գըյմա քէպապին վրայ շտափ սովոր են դնել կարծր խաշուած հաւկիթ երկու կամ չորս մասի լաժնուած:

ԽՄՈՐԵՂԷՆ - ԱՆՈՒՇԵՂԷՆՆԵՐ

1. ՉԱՄԻՉՈՂ ԳԷՅՔ.— 6 ապուրի դգալ կարագ

լաւ մը զարնել. աւելցնել մէկուկէս գաւաթ փոշի շաքար աստիճանաբար. յետոյ 4 հաւկիթի դեղնուց խառնելէ և զարնելէ վերջ աւելցնել մէկուկէս գաւաթ կաթ և մէկ թէյի դգալ վանիլիա. դարեձալ խառնելէ յետոյ աւելցնել 4 գաւաթ ալիւր և երկուքուկէս թէյի դգալ քարպօնստ ատմօնեաք աստիճանաբար. խառնելէ վերջ խմորին մէջ աւելցնել 4 հատ լաւ զարնուած հաւկիթի ձերմկուց. մեղմօրէն խառնելէ վերջ մէջը դնել երեք քառորդ գաւաթ մանր չամիչ ալիւրով չփելէ վերջ. իւզոտուած ամաններու մէջ պարպել և փուռը դնել:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ՋԵՌԻԵՐԸ ՃԵՐՄԿՑՆԵԼ ԵՒ ՓՂՓՂԱՑՆԵԼ

Ջեռքերը մաքուր պահելը առողջապահիկ միջոց մըն է: Սովորաբար այնպէս կը կարծուի թէ՛ ձեռքերու ձերմկութիւնը գաղտնիք մ'է. մենք պիտի բացատրենք մի քանի միջոցներ որոնցմէ կրնաք ընտրել ուզածնիդ:

Քիչ մը գաղջ ջուրի մէջ լեցուցէք անուշատր (նիշատըր) կամ ոսկերտրակ (թէնէքեար) և լուացէք ձեռքերնիդ, թէ՛ կը մաքրէ և թէ՛ կը կակղցնէ: Իսկ եթէ ձերմկոցնել կ'ուզէք, քիչ մը վարսակի ալիւր (եուլաֆ) խառնեցէք ջուրին մէջ և լուացուցէք: Իսկ եթէ վարսակի ալիւր չգտնուի, լուանալիք ջրոյն մէջ մի քիչ ամոնեաք խառնելու է:

Շտափեր պառկած ատեննին իւզաշիճով (կլիսէրին) ձեռքերնին կը մալակոնեն. ասիկա փոխանակ մօրթը կակղցնելու, աւելի կոշտութիւն և կարմրութիւն կուտայ: Աւելի աղէկ է գործածել վարսակի ալիւր, կամ հաւկիթի ձերմկուցը, քիչ մըն ալ պաղլիզ (շապ) իրար խառնելով քսել:

Ամենէն կոշտ և բիրտ ձեռքերն անգամ մէկ ամսուան մէջ կարելի է ձերմկոցնել և փոփկացնել, եթէ շարունակ պառկելու ատեն խնամք տարուի:

Ուրիշ միջոց մըն ալ: Առէ՛ք

ձերմակ քոցախ	10	տրամ
Ալբօլ	5	»
Վարդեջուր	5	»
Լեմոնի հիւթ	3	»

իրար խառնեցէք, և թեթեւապէս քսեցէք ձեռքերնուդ:

ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԲ ՀԱՅՐԻԿԸ ԳԱՅ...

«Կեցի՛ր դուն, կեցի՛ր. երբ հայրիկը գայ, պիտի կտորէ քու ոսկորներդ և պիտի ստակեցնէ քեզ...»: Որքա՛ն մեծ է թիւը այն մայրերուն որոնք այս և համանման խօսքերով տան հայրիկը կը ներկայացնեն իրենց զաւակներուն որպէս ի պաշտօնէ պատահաւիչ կամ սարսափ ազդող մէկը: Հարկ կա՞յ ըսելու թէ շատ մը մայրերու համար խիստ սովորական դարձած սպառնական այս բացագոնչութիւնը պատասխանատու է անհաշուելի չարիքներու տղայոց կեանքին ու կենցաղին մէջ:

Մանկավարժական տեսակէտէ ամէն մասամբ դատաւարտելի է այս մեթոտը տղայոց դաստիարակութեան գործին մէջ:

Թէ ինչպէս:

Նախ՝ այսօրինակ սպառնալիքներով աներեւակոյն լիօրէն կը տկարացնէ մայր մը իր հեղինակութիւնը և բնականօրէն կը դառնայ տկար և անզօր էակ մը յայտ իր զաւակին: Մայր մը պէտք է իր իսկ ձեռքով պատժէ իր անառակ զաւակը. պէտք է ցոյց տայ իր զաւակին թէ ինք ալ բան մըն է և թէ ինք ալ կարող է պատժելու այնպէս ինչպէս պիտի պատժէր հայրը:

Տղոց անառակութիւններն ու անկարգութիւնները սանձահարելու դիտումով արտասանուած այսօրինակ սպառնական խօսքերով շատ դիւրաւ կը չըքանայ ծնողաց և զաւակաց միջեւ վստահութիւնը: Հայր մը չպէտք է ներկայացուի իբրև ոտակա՛ն և դատաւոր և ոչ ալ մայր մը կատարելու է մատնիչի կամ ամբաստանողի դերը:

Դաստիարակութեան այս մեղադրելի մեթոտին պատճառած ուրիշ մէկ չարիքն ալ այն է որ՝ տղայք ամբողջ օրուան ընթացքին կը կորսնցնեն իրենց բնական զուարթութիւնը, շարունակ աչքի առջեւ ունենալով երեկոյեան իրենց ուսուցիչ փառաւոր ծեծը: Փոխանակ ուրախութեամբ իրենց հայրն դիմաւորելու, ծակէ ծակ կը մտնեն երբ կ'իմանան անոր գալը և կամ կը լսեն անոր ձայնը: Մտահոն ընելու չէ սա իրողութիւնը թէ արևը ինչ որ է ծաղկանց համար, զուարթութիւնը նոյնն է տղոց համար:

Պատիժը՝ որպէսզի ըլլայ ազդու և լիովին ծառայէ իր նպատակին՝ պէտք է ի գործ դրուի ամենայն արդարութեամբ: Հարկ կա՞յ ըսելու թէ հայրեր շատ քիչ անգամ արդարութեամբ կը պատժեն իրենց զաւակները, և այս՝ բոլորովին հասկնալի պատճառներով: Հայր մը երբ օրուան իր աշխատութենէն տուն կը վերադառնայ բոլորովին յոգնած և յաճախ մտահոգութիւններով ծանրաբեռնուած, կ'ուզէ, ընտանիքէ, մի քիչ հանգիստ վայելել, և սչ թէ դատեր տեսնելու և դատաստաններ ընելու հարկադրանքին տակ գտնուիլ: Եւ այս իսկ պատճառաւ՝ կը քաշէ գաւազանը և անխնայօրէն կը հարուածէ պզտիկը, ժամ առաջ լուծած ըլլալու համար իր հանգիստը խանգարող խնդիրները: Այս կերպ գործադրուած պատիժներու արդիւնքը՝ կ'ըլլայ առաւելապէս ժխտական քան թէ դրական:

(Շար.)

ՄՏԻԻ ԾԱՂԻԿՆԵՐ

Անհոգութիւնը երկու անգամ վնաս կը պատճառէ մարդուս, պարծենկոտութիւնը երեք անգամ, իսկ անխոհեմութիւնը չորս անգամ:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆ

ԿԱՐՃ ԽՐԱՏՆԵՐ

1. Ծոմը կամ պահեցողութիւնը մոլութեան մահըն է, առաքինութեան ձայնը, կորովի աղբիւրը և ըստը հիւանդութեանց դարմանը:

2. Թոքերով և մորթով է որ գլխաւորաբար կը ծերանանք. հակենք անոնց առողջութեան:

ՊՈՒՂԱՐՏԱ.

3. Օգտուեցէք դարնան առաւօտեան մաքուր օդէն և ծծեցէք կուշտ ու կուռ. դեղերուն ամենէն զօրաւորն է:

4. Օդը շնչառութեան հացն է: Այս հացը ուտելու աեղ կը շնչուի. ահա՛ տարբերութիւնը:

ՄԱՔՍ ՍԻՄՈՆ

5. Ծնչուած մաքուր օդը աւելի օգտակար է քան սպառուած կերակուրը:

6. Զուարթ մարդոց հետ ճաշեցէք բնաւ անմարտողութիւն պիտի չունենաք:

ԹԻԻՐԼԷՐ

7. Մէկ հաւկիթը բաւական է, երկուքը օգտակար, երեքը չափազանցութիւն:

8. Սակաւակեր եղէք և ջուր խմեցէ՛ք:

ՀՈՅՄԱՆՆ

9. Կ'ուզէ՞ք 80 տարեկան ապրիլ, առէք քիչ կերակուր և ըրէք շատ շարժում:

10. Սեղմիրանը (գորտէ) հազուատեղէններու ամենէն վնասակար և ամենէն աղետարեր մասն է:

ՏՈՒԹ. ՖՈՒԱ.

11. Մանկանց հազուատի առողջապահութիւնը կը կայանայ երեք բառի մէջ. — մաքուր, պարզ և ազատ: ՏՈՒԹ. ՌԻՎԷՅԼԷ ԲԱՌԻՉ

12. Մարմնամարդ ըրէք. ձեր երիտասարդութիւնը պիտի երկարէք: ԼՕԲ

13. Մաքուր կեցողը իր առողջութեան տէրն է: ՏՈՒԹ. ՖՈՇՈՆ

14. Նա որ լաւ չճամեր, ուշ կամ կանուխ ըստամօքսի հիւանդութեան ենթակայ պիտի ըլլայ:

15. Մարդ կերած կամ մարսած ատեն պէտք չէ մտաւոր աշխատանք ունենայ: ԱՆԱՄ ԿՕԹԻԷ

16. Լաւ եփած հացը, չոր միսը, դիւրամարս բանջարեղէնները լաւ կը յարմարին բանաստեղծներուն և գիտուններուն: ՄՈՒԼԵՇՕԹ

17. Զախաւորութիւն, կանոնաւոր աշխատութիւն, պարզութիւն, ահա՛ երկար ապրելու գաղափարներ: ՖԼՈՌԷՆԱ

18. Նա որ շատ զօրաւոր սնունդ կ'առնէ, չառապելու համար պարտի մեծ շարժումներ ընել:

19. Պէտք է քթով շնչել, թոքերուն մէջ գացած օդը տաքցնելու համար: ԲԱՆԴ

20. Ամէն ճաշ առաջ ձեռքերնիդ լաւ մը լուացէք:

21. Առողջութիւնը կարելի չէ ձեռք բերել ծուլութեամբ և անգործութեամբ:

ՊԼՈՒՏԱՐԿՈՍ

22. Գիշերուան ճաշը հետեւեալ օրուան նախաճաշին վնասելու չէ: ՏՈՒԹ. ՊԱՊԻՆԷ

23. Լոգանքէ մը վերջ ամենաօգտակարն է ու-
րով պտոյտ մը: ՏՈՔԹ. ՎԻԼԷՆ

24. Պաղպաղակը ճաշի ժամանակ, շատ քիչ սն-
դամ կը վնասէ, բայց ճաշերէ դուրս, միշտ կը վնասէ:
ՏՈՔԹ. ՏՕՆԷ

25. Չափաւոր կերակուրը շատ հիւանդութիւն-
ներ կը վանէ:

26. Շատ ախորժակով կերակուրին կը յաջորդէ
գէշ գիշեր մը:

27. Տունին ամենէն վերի յարկը բնակեցէք:
ՏՈՔԹ. ՅԼԷՕՌԻ

28. Տղոց սենեակներուն մէջ ո՛չ վարագոյր գէր
և ոչ ալ գորգ:

29. Ստամոքսէ տառապողները միայն եփած պը-
տուղ ուտելու են: ՏՈՔԹ. ՄՍՈՒԹԻՆԷ

30. Լաւ քնանալու համար պէտք է ֆիզիքական
շարժում և գաղջ ջուրով լոգանք մը:

31. Եթէ մարդ քիչ ուտէ և քիչ խմէ երբէք
հիւանդ չըլլար:
ՀԵՖՈԿՐՍ

ՄՏՔԻ ԾԱՂԻԿՆԵՐ

Ի՞նչ է օրացոյցը.

— Անիւ ու զանկ չունեցող սեսակ մը ժամացոյց՝
որու վրայ տղան յուսով կը նայի իսկ ձերն լալով
երկիւղով:

* * Հանճարն ու ազնուութիւնը ո՞ւսկից կը նանչ-
ցուի, հասակի՞ն քէ սեսակէն:

— Ըստ արդի դրամաբանութեան՝ ոչ հասակէն է
ոչ ալ սեսակէն, այլ միմիայն քաակէն:

ՄԱՐԶԱՆՔ ԵՒ ՍԲՈՐ

ՇՆՉԱՌՈՒԹԵԱՆ ՄԱՐԶՈՒՄԸ

ՇՆՉԱՍՊԱՌՈՒԹԻՒՆ

Նոյնպէս կազմախօսութիւնը մեզի կը սովորեցնէ
որ գործարանները այնքան աւելի լաւ կ'աճին՝ որքան
որ իրենց պաշտօնը շատ ու բնական օրէնքի համա-
ձայն կը կիրառեն: Այս կերպով կրնանք եզրակա-
ցնել, որ շնչասպառութեան կանխարգելումը էպէս
կը կայանայ շնչառական կազմածին կանոնաւոր շար-
ժումին մէջ և հետեւաբար նախքան ամէն մարդանք
պէտք է շնչառութեան մարդում կատարել:

Թոքը պէտք է պաշտօնավարէ բնական օրէնքի
համեմատ, եթէ պակաս պաշտօն կատարէ՝ շնչահեղձա-
կան վիճակ կայ, արեան մէջ թթուածինի պակասէն՝
քրոնիկ անթթուածնարիւնութիւն. եթէ շատ պաշ-
տօն կատարէ՝ ենթական պիտի ունենայ օդի անմար-
սութիւն՝ հաւասարապէս ողբալի: Բաղդատեցէք ըս-
տամոքսը և թոքը: Թոքի մննդականոն (րէժիմ) մը
գոյութիւն ունի, ինչպէս ստամոքսի համար սննդա-
կանոն մը: Ստամոքսին պէտք է մաքուր և լաւ
պատրաստուած սնունդի որոշեալ քանակ մը, ո՛չ ա-
ւելի, ո՛չ պակաս: Առողջութիւնը կը կայանայ գոր-
ծարաններուն բնականոն պաշտօնավարութեան մէջ և
ոչ թէ անոնց պաշտօնավարութեան չափազանցու-
թեան:

Շնչառական շարժումը պէտք է ըլլայ քթային,
բաւականաչափ, կատարեալ, կշռուած և հաստատուն:
Նախքան ամէն մարմնակրթական աշխատանք. նախ-
քան ամէն մարդական աշխատանք, ենթական պէտք է
ենթարկուի բժշկական քննութեան, որ պիտի ստուգէ
թէ շնչառութիւնը ունի՞ այն ամէն հանդամանքը զորս

պիտի թուենք: Հասկնալի է որ եթէ այս քննութիւնը նպատաւոր է, ենթակային կը թոյլատրուի մարզանքը, ապա թէ ոչ՝ մարզանքը կը յետաձգուի և ան պէտք է ենթարկուի շնչառութեան մարզումի, ինչ որ աւելի յետոյ զայն պիտի դարձնէ մարզանքի յարմար:

ՇՆՉԱՌՈՒԹԵԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Շնչառութեան մը քթային ըլլալը ստուգելու համար կարելի է օգտագործել մետաղէ բլաքներ, որոնք կը գրուին քթին տակ և որոնք կը հաւաքեն արտաշնչութեան գոլորշին: Գոլորշիին մետաղին վրայ թողած բիծին պարզ քննութիւնով, կամ երկու ռուսագերուն առանձինն թողած բիծերուն չափումով կարելի է բազմաթիւ մէկ կամ միւս ռուսագին գոլորշիի քանակը: Կարելի է զգալուն թուղթի մը վրայ առնել արտաշնչութեան գոլորշին և զայն պահել՝ աւելի յետոյ զայն բազմաթիւ համար կրկին նոր գոլորշիներու հետ և հասկնալու համար արտաշնչուած օդին աւելնալը կամ պակսիլը: Բայց այս պարզային ռուսագերու տարածութիւնը և արտաշնչելու համար եղած ճիգը կրնան արդիւքնին վրայ ազդել, որով լաւագոյն է քննութիւնը կատարել հետեւեալ կերպով. ենթական կը կանգնեցնենք և կը պատուիրենք որ ձեռքերնիս բարձրացուցած ատեննիս իր թոքերը լեցնէ և իջեցուցած ատեննիս՝ պարպէ. բայց երբ ըստ երեւոյթին մենք կը ղեկավարենք անոր շնչառութիւնը, իրականին մէջ կ'օգնենք միայն անոր շնչառական մեքենականութեան, դիւրացնելու համար փոփոխումը և չափը վերածելու ուղղուած կերպին: Նոյն ատեն մենք ալ հոգ կը տանինք ենթակային առաջ չափով շնչելու:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԻՆՉՊԻՍ Կ'ԱՆՑՆԻ ՄԵՐ ԿԵԱՆՔԸ

(80 ամեայ ծերուկի մը կեանքին հաշուեցոյցը)

Գերմանիոյ մեծ քաղաքներէն մէկուն մէջ ապրած է ծեր մը, տարօրինակ անձ մը, որ զարմանալի համբերութեամբ մը նօթագրած է իր կեանքը կազմող գրեթէ բոլոր վայրկեանները:

Առաջին ակնարկով խենթութիւն կը թուի ծերուկին այս գործը, բայց անոր վրայ նետուած ուշադիր ակնարկ մը ցոյց կուտայ թէ, մեծ իմաստ մը ունի 80 տարեկան այդ մարդուն կեանքին հաշուետուութիւնը: Ծերուկը ապրած է նիւթական միջակ պայմաններու մէջ, հետեւաբար իր կեանքը կը նմանի ամենուն կեանքին: Հոն որոշակի կը տեսնուի թէ, մեր կեանքի տեւողութեան որքան ժամանակ կը վստահենք կարեւոր կամ երկրորդական գործերու համար: Աչքի չզարնող հազարումէկ անկարեւոր գործեր, ինչպէս, դուռ բանալ, գոցել, ակնոց մաքրել, յորանջել, փռագտալ, սիկառ վառել, փողկապ կապել են. եւն, աներեւակայելի մաս մը կը գրաւեն, սնանկու և կազդուրուելու ժամանակ հազիւ ճգնելով մեզի այս կարճ կեանքին մէջ: Այդ ցուցակին մէջ մարդ ստակումով կը տեսնէ թէ իրարու վրայ երկու օրուան չափ անգամ խնդարու ժամանակ չունինք: Մարդիկ, իրենց կեանքին մէջ, շատ չեն խնդար ընդհանրապէս:

Անա՛ 80 ամեայ այդ ծերուկին կեանքին ինքնագիր և ճշգրիտ վիճակացոյցը. —

Ապրած եմ	80	տարի
որ կ'ընէ	29,220	օր
կամ	701,280	ժամ
կամ	4,207,6800	վայրկեան
կամ	2,524,608,000	երկվայրկեան

7647-56



ԱՅՍ ԿԵԱՆՔԻՍ ՄԷՁ ՕՐԵՐԸ 24 ԺԱՄ ՀԱՇՈՒԵԼՈՎ

	տարի	օր	ժամ	վայրկ.
Քննարկում եմ	26	312	18	22
Աշխատում եմ	21	95	14	40
Հոգ ու նեղութիւն ունեցում եմ	6	116	14	10
Ճաշում եմ	5	346	5	12
Մարդու սպասած եմ	5	302	16	45
Օգտախոսութեան գացում եմ	4	12	15	3
Սիրում եմ	4	39	8	27
Ճամբորդում եմ	3	273	18	24
Լրագիր կարդացում եմ	1	243	7	18
Ածիլուած եմ	-	228	2	52
Անունս դրած եմ	-	42	14	58
Կօչիկնեքս հագում եմ	-	39	19	18
Ժամացոյց նայում եմ	-	30	9	36
Դուռ դռցում եմ	-	29	4	47
Տղաքս ստատում եմ	-	26	14	33
Գրիչս թաթխում եմ	-	21	13	36
Փողկապս կտպում եմ	-	18	12	6
Ներկայացուցնելու գտնուած եմ	-	16	6	20
Քիթս մաքրում եմ	-	13	8	28
Սիկառ վառում եմ	-	12	16	4
Օձիքիս ծակը փնտում եմ	-	6	21	25
Ակնոցիս ապակին մաքրում եմ	-	5	1	48
Յօրանջում եմ	-	4	2	26
Շունս ստատում եմ	-	2	14	20
Խնդացում եմ	-	1	22	3

ՄՏՔԻ ԾԱՂԻԿՆԵՐ

Կանայք երեք բաներ պատահանեն վար կը ցեսեն. ժամանակնին, առողջութիւննին եւ դրամնին:

* * Ժամանակը հրաշքներու հայրն է:

ԶՈՒԱՐԹ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

- Թուարանի մը հարցուեցաւ թէ՛
- Ամուսնութիւնը ինչի՞ կը նմանի.
- Յաւելման:
- Մա՞հը.
- Բարձման:
- Աէ՞րը.
- Բազմապատկուածեան:
- Ժառանգութի՞ւնը.
- Բաժանման:
- Էյ ա՛ճեքիմ թուարան:

ԳԻՆՈՎԱԲԱՆՈՒԹԻՒՆ

- Պր. Թորթիկ տուն կը մտնէ գինով վիճակի մէջ:
- Նորէն խմե՛ր ես, կը արանջայ Տիկ. Մառի:
- Ե՞ս, կ'ըսէ Թորթիկ, բան մը չխմեցի:
- Տիկ. Մառի կաւիճի կտորով մը գիծ մը կը քաշէ գետինը և կ'ըսէ.
- Քանի որ բան մը չես խմած, կրնա՞ս սա գիծին վրայէն շիփշիտակ քալել:
- Պա՛հ, կ'ըսէ Թորթիկ, առ ալ բա՞ն մըն է:
- Քանի մը երկվայրկեան մտածելէ յետոյ, կամաց մը կը հարցնէ կնկանը.
- Մառի՛, երկու գիծերէն ո՞ր մէկուն վրայէն պէտք է քալեմ:

ԲԱՌԵՐՈՒ ՆՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐ

- Ի՞նչ են մեռեալները.
- Վճարելու համար պայմանաժամին սպասող բալիցաներ:
- Գերեզմանը ի՞նչ է.

- Միշտ փոխառութիւն ընող պանքս մը :
Ի՞նչ է նոր տարին .
- Պզտիկ աղայ մը , որ միշտ կը սիրուի :
Ի՞նչ է ոսկին .
- Ճարտասանութեան առաջին դաստուռն :
Ի՞նչ է հարսանիքը .
- Տրամութեան հովտին ծաղկաւէտ կիրճը :
Ի՞նչ է դրամը .
- Հաղուագիւտ բարեկամ մը որ իր հասցէն մէ-
կու մը չի յանձներ և երբեմն դիպուածով կը դանուի :
Ի՞նչ է օղին .
- Վարպետ խոստովանահայր :

ԻՆՉՈ՞Ւ ԱՊՍԾԽԱՐԱՆԻ ՉԻ ՍԱՀՄԱՆԵՑ

Ամուսնանալու պատրաստուող երիտասարդ մը քահանային ներկայացած՝ մեղքերը խոստովանելէն ետքը տեսնելով որ քահանան ապաշխարանք չի ստանաներ՝ պատճառը հարցնելուն, սա պատասխանը կ'ընդունի :

— Միթէ չպիտի՞ ամուսնանաք . անկէ քոչելիք ապաշխարանքնիդ ձեր մեղաց քաւութեանը համար բաւական է :

ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

Որդեա՛կ իմ, «կուիւր» թուաբանական չորս գործողութեանց ո՞ր կանոնին համեմատ գրելու ենք .

- Յաւերման :
- Օրինա՞կ .
- «Այսպէս կ'ըլլայ» + «Այսպէս չըլլայ» = կը-
ուիւ կ'ըլլայ :
- Ապրի՛ս զուակս :

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

L U S H

Իրենց ամուսնութիւնը յաջորդ շաբթուան համար որոշուած , — միթէ այս անուշ գաղափարը լաւ չէ՞ր համաձայներ գեղեցիկ Մայիս ամսուն հետ : — Երկար տանէ ի վեր յետաձգուած էր այլ և այլ պատճառներով , սակայն մասնաւորապէս որովհետեւ ծերուկ մայրիկը տակաւին չէին կրցած գտնել , հակառակ ոստիկանութեան ջանքերուն :

— Նախ մայրիկը գտնե՛նք , ըսած էր Մանիշակ , յետոյ կ'ամուսնանանք , Լա՛տի :

Այս հին անունը սիրով ընդունած էր մայրիկին նախասիրած անունը ըլլալուն համար :

Սակայն օրերը , շաբաթները և ամիսները իրարու կը յաջորդէին . տարի մը անցած էր արդէն անոր անհետանալէն ի վեր , և դեռ տաանց կորսնցնելու դա՛ն գտնելու յոյսերնին , որոշեր էին ամուսնանալ :

Բժիշկները խումբ մը ուսանողներով շրջապատուած կը շրջէին հիւանդանոցին մէջ : Արկածեայնե-րու խնամակալութեան բաժնին մէջ շատ շահեկան պարագայ մը ներկայացնող կին մը կար որուն մասնաւոր խնամքներ կը նուիրէին :

Պէտք է բժիշկ ըլլալ բացատրելու համար թէ ունեցածը ինչ էր , սակայն սա կրնամ ըսել թէ շահեկան պարագայ մըն էր թէ՛ բժիշկներուն թէ՛ հիւանդապահուիչներուն տեսակէտով , ինչ որ կը նշանակէ թէ կեանք ու մահ իրարու հետ կը մրցէին այդ անկողնին վրայ :

Միւս բժիշկները իրենց գործը աւարտելէ յետոյ , Տր . Բարդըր առանձին թիւ 20



Այդ հիւանդին վիճակը կը հետաքրքրէր զինքը, և անոր մասին բան մը ըսելու եկած էր հիւանդապահունհիին: Հիւանդապահունհիները շատ կ'ստորժէին անկէ, անոր բարեկիրթ ձեւըն համար. այնպէս որ դժգոհ չմնացին երբ եկաւ մասնաւոր յանձնարարութիւն մը ընել իրենց:

Վիրակապը աղէկ դրուած չըլլալուն, ինք իր ձեռքովը ուղած էր փոխել զայն, երբ վերադարձած միջոցին նշմարեց որ ծաղիկները ինկեր էին վրայէն: Եթէ ծաղիկները Մանիշակը տուած չըլլար, հոգ չի պիտի ընէր, սակայն որովհետեւ անոր նուէրն էին, սկսաւ ասդին անդին խուզարկել: Կ'երեւայ թէ ուէ չարժուժով մը քովի անկողնին վրայ ինկեր էին, մանամերձ պտուաւի մը անկողին վրայ: Խեղճ կնիկը թեւերը վերմակէն դուրս հաներ ու իր խորշոմած ձեռքովը ակամայ յափշտակեր էր այդ ծաղիկները:

— Ահա հոս է ձեր փունջը, պարո՛ն, ըսաւ հիւանդապահունհիին. կ'երեւայ թէ անդին դարձած ատեննիդ վար ինկեր է:

Եւ սկսաւ զսնունք քաշել պտուաւին ձեռքէն. սակայն ի գո՛ւր քանի կը քաշէր, ան հետզհետէ աւելի ուժով կը բռնէր զանոնք:

— Ըրածը չի գիտեր խեղճը, ըսաւ հիւանդապահունհիին, ձգէ՛ սա ծաղիկները, պարոնը կ'ուզէ կոր զանոնք, մրմնջեց յուշիկ անոր ակամջին:

Սակայն պտուաւին ձեռքը սեղմուած կը մնար միշտ:

— Է՛հ, վնաս չունի, ըսաւ Տր. Քարղըր, իրեն թո՛ղ ըլլայ. արդէն եթէ ձեռքէն քաշես, կը թառամին:

— Հոս բերուած ատենը արդէն ինքզինքէն ելած էր խեղճը, յարնց հիւանդապահունհիին, փողոցի արկած մը պատահած է իրեն: Հանրակառքի մը տակ մնացած ըլլալու է: Չենք գիտեր թէ ուրկէ կուգայ, անունը անգամ անձանօթ է մեզի:

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒԻ Ի ՄԵՌԵԼՈՑ

«Օրհնեա՛լ և Յարութիւն Քրիստոսի» կը պատասխանենք մենք, այս անձառելի յաղթանակին հրճուանքովն արբշիւ:

Մահուան պարտութեան և կեանքի յաղթանակի ողջոյնն է այս որ դարերէ ի վեր կրկնուած է և դարերով պիտի կրկնուի: Պիտի կրկնուի բուսական աշխարհի վերկենցադումին հետ, անտառին ու պուրակներուն մէջ ճլուրլող թռչնիկներուն դարձին հետ, և համեստ մանիշակին, ձիւնտփայլ շուշանին ու դունազեղ ծաղիկներու բուրումներուն հետ:

Մահուան ամօթալի պարտութենէն և կեանքի փառայեղ յաղթանակէն շուրջ 2000 տարիներ վերջ, ի՛նչ տխրատեսիլ ամայութիւն է որ կը պարզէ մարդկային աշխարհը մեր աչաց առջեւ, Աստուած իմ: Փամանակիս տարօրինակութիւններէն՝ լաւ եւս է ըսել հեզնութիւններէն մին ալ այն է որ մարդիկ մէկ կողմէն մեծ մեռելաատանի մը կամ մահանոտ հովտի մը կը վերածեն զաշխարհ իրենց չարութեամբ, անգթութեամբ, անարդարութեամբ, նախանձով և այլ հաստեա բարոյական ախտերով, իսկ միւս կողմէն սրբապալարերու բեմերէն խորհրդաւոր հօժիւններով կը հռչակեն Ս. Զատիկի հրաշափառ դէպքը որ յիբականին ոչ այլ ինչ է բայց եթէ կեանքի յաղթանակը մահուան վրայ, բարութեան յաղթանակը անարդարութեան վրայ: Աշխարհի խաղաղութեան և մարդկային ցեղին բարօրութեան սպառնացող ամբարտաւանութեան խորոխ ոգին իցի՛ւ թէ տապալէր որպէս տապալեցաւ մահը: Այն ատեն, այո՛, այն ատեն միայն մեր սահմաններէն ներս պիտի սաւառնէր Յարուցեալին պար-

գեւած կեանքը իր գարնանաբայր թարմութեամբ, և մենք պիտի կարենայինք ցնծութեամբ տօնել ծագումը Ազատութեան արևին:

«Քրիստոս յարեալ ի մեռելոց»: — Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»:

Հաւատքի և յոյսի կենսունակութեան ողջոյնն ալ է այս՝ որ Արիմատացիին պարտէզէն հաղորդուած է հէք մարդկութեան:

Մարդկութեան յոյսն էր որ պատանքուեցաւ ու կնքուեցաւ ցուրտ գերեզմանին վէմերուն մէջ: Մարդկութեան հաւատքն էր որ յոյսին քով հսկեց՝ թէեւ տկարութեամբ և վարանուամով՝ մինչեւ որ վէմին կնիքը անդիմադրելի ձեռքով մը քակուեցաւ և կեանքը յաղթական դուրս եկաւ գերեզմանէն: Եւ անա յոյսը կրկին կ'ապրի ու կ'ապրեցնէ: Եւ անա հաւատքը կ'ապրի ու կը զօրացնէ:

Ս. Զատիկի առաջին տէրունականն օրէն ի վեր՝ անհատներու ինչպէս և ժողովուրդներու մտքին մէջ մահն ու յարութիւնը անբաժանելի կերպով իրարու հետ զուգորդուած են, և ծայրագոյն յաղթանակը մարդուն յոյսն ու ներշնչումը եղած է: Եթէ ոչ ազգեր ու մարդեր ի՞նչպէս պիտի կարենային տակալ զրկանքներու, անիրաւութեանց և չարին նախնական յաջողութիւններուն:

Ի՞նչու ոչ իր անզգայ նիւթը Գողգոթային վրայ և Արիմատացիին պարտէզին մէջ կրեցին իրենց պարտութիւնն և, ճշմարտութիւնն ու արդարութիւնը դուրս եկան յաղթական: Արդարութեան և անարդարութեան միջեւ մղուած ամեհի պայքարին մէջ կռուողներ, անհատ կամ ժողովուրդ, յոգնած և յուսարեկ՝ հիմա ալ կը կարօտին յարութեան պատգամին, յարութեան յոյսին:

Փառք Յարութեան:

ՈՒՂԵՑՈՅՑ ԿԵՆՑԱՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Մ Ի ...

է.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՉ

«Երկնախալալ բնակավայր՝ տունն է»

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ.— Մի՛ ամչնար հոչակել սէրդ, զոր ունիս ամուսնոյդ հանդէպ: Յաճախ յայտնէ անոր սէրդ և պատասխան պահանջէ: Ատով ամուսինդ սիրոյդ վրայ խորհելու կը մղուի: Անկեղծ եղի՛ր սիրոյդ մէջ: Ղի ան որ կը սիրէ զօրաւոր է, արդար է, զգաստ է: Ճշմարտապէս սիրող կնոջ մը հոգին սուրբ ստամար մ'է, հոն խուճկն անդադար կը ծխայ, հոն ամէն յոյս անմահութեան է ուղղուալ: Կինն ս'ընդուն համար է ծնած. սէրը կը յաղթանակէ կնոջ շնորհք մէջ:

Մի՛ ունենար նախանձ ամուսնոյդ համար. չես կրնար նախանձով գրաւել անոր սէրը:

Մի՛ բարկանար եթէ երբէք անիրաւ ալ ըլլայ ամուսինդ. համբերութեամբ լռէ՛, և երբ հանդարտի՛ պատշաճ լեզուաւ հասկցուր ճշմարտութիւնը:

Մի՛ շատսխօսեր. ո՛չ ոք բամբասէ:

Մի՛ յատկացներ երեկոյեան ճաշի ժամը ընտանեկան նեղութեանց նկարագրութեան: Այրդ ունէր օրն ի բուն իր նեղութիւնները, որոնց մէկն ալ դուն կրնաս եղած ըլլալ:

Մի՛ եփեր այն կերակուրը, զոր լաւ չես կրնար պատրաստել: Երբ ամուսնոյդ ախորժակը փախչի, տան խաղաղութիւնն ալ խոյս կուտայ:

Մի՛ խնդրեր դրամ ամուսինէդ: Անպէս կար-
գադրէ որ ինքնաբերաբար և յօժարակամ ինք դրամ
տալ առաջարկէ:

Մի՛ ըլլար անհոգ արտաքին երեւոյթիդ մասին:

Մի՛ լինիր անտարբեր ամուսնոյդ աշխատու-
թեան և ջանքերուն:

Մի՛ ջանար աւելի բարձր երեւնալ ամուսնոյդ
բարեկամներէն և ազգականներէն. միշտ բարեկամ
եղի՛ր անոնց:

Մի՛ զանգատիր տոյն փոքր ճախորդութեանց
համար, զորս կեանքը իր հետ կը բերէ միշտ, այլ
արիւթեամբ և համբերտտարութեամբ հանդուրժէ՛
անոնց:

Մի՛ մնար անփոյթ ամուսնոյդ համար, շարու-
նակ միտոյն զաւակներդ սիրելով. անոր ալ հաւա-
սար կերպով հոգ տա՛ր:

Մի՛ մոռնար թէ պէտք է որ իբր անտազիւտ
ամուսին կամ մայր դուն միտոյն անթերի ըլլաս քու
պարտաւորութեանցդ մէջ: Ամուսնոյդ և ընտանիքիդ
միւս անդամներուն թերութիւնները չտեսնելու զարկ:

Մի՛ լինիր անմաքուր. մաքրութիւնը առաքի-
նութիւն է. «ամէն մաքրասէր կին բարի չէ, բայց
ամէն բարի կին մաքրասէր է», կ'ըսէ ոսկեղենիկ
ասացուած մը:

Մի՛ թերանար ճանչնալու և հռչակելու մէջ
ամուսնոյդ արժանիքը: Այր մարդիկ կ'ախորժին զո-
վասանքէ ինչպէս կ'ինները՝ շողոքորթութիւնէ:

Մի՛ ինչպէր ո՛րեւէ ջանք ամուսնոյդ բնաւորու-
թիւնն հասկնալու և անոր համեմատ շարժելու, փա-
փուկ զգուշութեամբ իր ամենէն փոքրիկ ճաշակներն
անգամ իմանալու և գոհացնելու: Ասանկ կին մը ար-
ժանի է որ ծողիկի մը պէս բացուի իր էրկանը սըր-
տին վրայ:

ԴԵՌԱՅԱՍՆԵՐՈՒՆ

Զ Ա Տ Ի Կ

Անա՛ Զասիկ
Բերաւ բարիք,
Համով խորված.

Անոյ՛ց հացիկ,

Շնորհաւո՛ր ձեզ ո՛վ որդիք:

Հաւանցում

Հաւ ի ցնծում,

Ընծայ բերին

Մանուկներին

Շնորհաւոր հաւկիթ կլորիկ:

Ծրնողք առան

Հաւի ընծան,

Կարմրցուցին

Ու սօնեցին

Շնորհաւոր Սուրբն Զասիկ:

Կարմիրն ազնիւ

Համեստ գոյն է,

Սուրբ արիւնիւ

Որ մեզ շնորհ ցօլէ հեզիկ:

Դուք էլ, որդի՛ք,

Թէ հեզ լինիք

Ուսեալ համեստ,

Առաքինիք,

Վարդի գոյնով պէտք է կարմրիք:

ՀԱՅՐԻԿԻՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Խթումին իրիկունն էր. մայրը հագուեցուցած էր
Զարեհն և համբոյրմը գրոշմելով անոր թարմ այտե-
րուն, եկեղեցի ճամբած էր ըսելով.

— Գնա՛ զաւազս, վաղն Զասիկ է. աղօթէ որ Աստուած քեզի շնորհ տայ:

Ինքն ալ՝ գացած էր: Գասին կողմնակի դրանք կրթնած՝ Զարեհ կը դիտէր եկեղեցւոյ ամբողջ շէնքէն ներս սաւառնող նոր կեանքը, զարթունամը, շէն բազմութիւնը:

Յանկարծ սիրաը ճմլուեցաւ. յիշեց անցած տարին. հայրիկը իրեն ռակեղօժ հաւկիթ մը բերած էր, և շատ տտակ տուած: Հիմա հայրիկը չկար, անիկա մեռած էր, սեւ սնտուկի մը մէջ դրած էին ու անգամ մըն ալ չէր եկած: Աչքին առջեւ պարզուեցաւ անոր բարի, անուշ դիմագիծը, կարծես անոր չրթունքները կը ծռէին զինքը համբուրելու համար...:

Այս պահուն ներսէն օրհնութեան ձայն մը եկաւ և վարագոյրը սկսաւ շքաշքալով բացուիլ իր օղակներուն վրայ: Խորանը ամբողջ լոյսերու մէջ կը լողար, և անա՛ խումը մը պզտիկներ՝ փոլիլուն հագուստներ հալած՝ սկսան հրեշտակներու ձայնով մը երգել:

— Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց...:

Զարեհի աչքերը փայլեցան, սիրտը սկսաւ բարսխել, ի՛նչ, Քրիստոս մեռնելէ ետք ողջնցած էր... ուրե՛մն, ուրե՛մն...:

Ա՛լ չկեցաւ, ճեղքեց բազմութիւնը, ելաւ եկեղեցիէն, շխաակ վազեց տուն և դուռնէն մանելուն պէս գոչեց.

— Մայրի՛կ, մայրի՛կ, հայրիկս եկա՞ւ...:

— Ի՞նչ կ'ըսես տղաս...:

— Հայրիկը չեկա՞ւ կ'ըսես մա՛յր... այսօր Քրիստոս Յարութիւն չառա՞ւ... այսօր մեռելները չե՞ն ողջնար... հայրիկը մեռած չէ՞ր...:

Խեղճ մօրը սիրտը կարծես նշդրակ մը մխեցին. զայն հանդարտեցնել աշխատեցաւ, հարցուց թէ ո՞վ պատմած էր իրեն յարութեան ինդիրը: Զարեհ, զարմացած՝ աւելցուց.

— Չե՞ս գիտեր մա՛յր. Հայրիկին մեռած օրը տէր հայրը քեզի ըսաւ. «Աղջիկս մի՛ լար. Քրիստոս ալ մեռաւ, բայց յարութիւն տուաւ. անանկ ալ բոլոր մեռելները յարութիւն պիտի առնեն»: Օր մը օրիորդիս հարցուցի թէ յարութիւն ի՞նչ ըսել է. ան ալ ըսաւ. «Մեռելի մը ողջնալուն կ'ըսեն յարութիւն առնել»: Այսօր ժամուռն մէջ «Քրիստոս յարեա՛ւ» պուստիկն. Քրիստոսի հետ հայրիկն ալ չպիտի՞ ողջըննայ մայրիկ...:

— Այո՛, գաւազս... անպատճառ հիմա չի գար... կրնայ ըլլալ որ գիշերը հասնի, գացած տեղը շա՛տ հեռու է... և կուր հիմա ճաշե՛ք:

Ճաշէն ետքը, Զարեհ մայրիկին գիրկը հայրիկին կը սպասէր: Անա՛ զգաց որ հայրիկը կուգայ... անա՛ կը տեսէ՛ր... «Հայրի՛կ, հայրի՛կ, գոչեց ուժգին և խեղոյն ցատկեց անոր վիզը: Հայրիկն ալ համբուրեց, բարի խրատներ տուաւ Զարեհի և աներոււոյթ եղաւ: Զարեհ սկսաւ լոյլ. «Հայրի՛կ, հայրի՛կ, մի երթա՛ր, քիչ մըն ալ կեցիր...»

Մայրը հասկեցաւ թէ ազան երազի մը ենթակայ եղած էր:

— Պիտի գայ գաւա՛կս, պիտի գայ, ըսաւ մայրը և դարձեալ քնացուց գաւազը:

Աստուհ մօրը առաջին գործը եղաւ կարմիր ներկել հաւկիթները, որովհետեւ որոշած էր իբր սգաւոր՝ հաւկիթ չի ներկել:

Եւ Զարեհ ալ ոչ մէկուն չի տուաւ այդ հաւկիթները, զի հայրիկը բերած էր զանոնք, այն հայրիկը որ ուրիշ աշխտորէ մը եկած և դարձեալ հոն գացած էր:

ՏԱՆՏԻԿՆՈՋ ԲԱՐԵԿԱՄԸ

ԽՈՂԱՆՈՑԷՆ ՆԵՐՍ

ԽՄՈՐԵՂԷՆ - ԱՆՈՒՇԵՂԷՆՆԵՐ

1. **ՉԱՏԿԱՔԱՔԱՐ (ՉԵՕՐԷՔ).**— Մէկ դահեկանի թթխմոր (մայա պիրա) մի քիչ ալիւրով և ջուրով շաղուել՝ խմորը շինելէն գրեթէ երկու ժամ առաջ (երկիւրան շինել). մէկ օխա ալիւր, հինգ հաւկիթ, 100 տրամ կարագ, 100 տրամ շաքար, մի քիչ համեմ (մանրուած մահլէպ) և առաջուց շաղուած մայան՝ այս ամէնը միասին խառնել և շաղուել մի քիչ աղով. եթէ պէտք ըլլայ մի քիչ տաք ջուր աւելցնել խմորը յարմարցնելու համար. երբ յարմարի՝ տաքուկ ծածկոցներ դնել վրան և անկիւն մը թողուլ գիշերը: Առաւօտուն կանուխ՝ եթէ խմորը բարձրացած ըլլայ, գանազան ձեւեր շինել և մեծ ափսէներու մէջ շարելէ վերջ փուռ զրկել, ժամ մը մնալէ վերջ: Ամանները իւղոտելու հարկ չկայ: Ըստ փափաքի՝ կարելի է վրաները զարնուած հաւկիթ քսել և նուշ դնել:

2. **ԱՆԲԻԾ ՊԻՍՔՈԹ (խուրապիյէ).**— Մէկ գաւաթ հալած կարագ լաւ մը ձերմկցնել, յետոյ ափ մը փոշի շաքար և 2 ափ ալիւր յաջորդաբար մէջը դնել և շաղուել. այսպէս կրկնել մինչեւ որ կակուղ խմոր մը ձեւանայ. յետոյ զանազան ձեւերու վերածել և ափսէի մէջ շարելէ վերջ՝ մեղմ փուռի մէջ եփել որ ձերմակ մնայ:

3. **ԹԹԽՄՈՐՈՎ ԲՈԿԵՂ (սիմիդ).**— Մէկ դահեկանի թթխմոր (մայա պիրայի) մի քիչ ալիւրով և ջուրով շաղուել՝ պիսքոթը շինելէ մէկ ժամ առաջ: Յետոյ մէջը աւելցնել մէկ օխա ալիւր, 100 տրամ կարագ, մէկ թէյի դգալ աղ, մի քիչ համեմ (մահլէպ)

և մի քիչ սև համեմ (չէրէօթի) — արարելէնը՝ հապպէ սօտա, լաւ մը շաղուել, առածին չափ տաք ջուրով, թողուլ որ բարձրանայ. վրան ծածկելէ վերջ՝ երբ բարձրանայ՝ զանազան ձեւեր շինել բթամատի հաստութեամբ և ափսէի մէջ շարել. քիչ վերջը զարնուած հաւկիթ քսել վրաները. կէս ժամ ձգելէ վերջ՝ փուռ զրկել:

4. **ՊԻՍՔՈԹ «ՉԵՓԻԻՌ».**— 15 հաւկիթ լաւ մը զարնել, մէջը աւելցնել 3 թէյի դգալ քարպոնաթ ա՛ամօնեաք, մի քիչ վանիլեա, 15 փոքր սուրճի գաւաթ փոշի շաքար և լաւ խմոր մը կազմելու չափ ալիւր և 5 ապուրի դգալ հալած կարագ. լաւ մը շաղուել և զանազան ձեւերու վերածելէ վերջ (ձեռքով)՝ իւղոտուած ափսէի մէջ շարել և փուռ դնել: Ալիւրը եթէ շատ դուռի կարծր պիսքոթ կ'ըլլայ: Վրաները հաւկիթ քսել:

5. **ՀՄՄԲՈՅՐՆԵՐ (ՊԷՊԷ).**— Երեք հաւկիթի ձերմակ և երեք չորրորդ գաւաթ փոշի շաքար լաւ մը զարնել միասին շատ մեղմ կրակի վրայ (այնքան մեղմ որ ամանը չի տաքնայ). երբ շատ թանձրանայ մէջը դնել երկու կաթիլ լեմոն. աւելցնել մի քիչ ձեռուած (ըստ փափաքի քիչ մը խորովուած) նուշ. յետոյ դգալով ամփոփ ամփոփ զետեղել կլասէ թուղթի վրայ և և մեղմ փուռ դնել և եփել մինչեւ որ թեթեւ մը թուխնայ: (Բաւական դժուար է յաջողիլ):

6. **ԱՊՏԱԿՆԵՐ (Լալանկի).**— Առնել 3 հաւկիթ և լաւ մը զարնել, աւելցնել 2 գաւաթ ալիւր, 3 թէյի դգալ պէյքինկ բոուլտըր, քառորդ դգալ աղ, երկու թէյի դգալ փոշի շաքար և թեթեւ խմոր մը կազմելու չափ կաթ: Լաւ մը զարնել և դգալ դգալ տապկել կարագի կամ ֆրանսահան ձէթի մէջ: Վրան կամ փոշի շաքար ցանել և կամ թէ խմորները օշարակ շաքարի մէջ թաթխել:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ԹՈՒԱԼԷԹԻ ՍՊՈՒՆԳՆԵՐԸ ՄԱՔՐԵԼ

Թուալէթի սպունգները երբ աղտոտին՝ գէշ հոտ մը կ'արձակեն. զանոնք մաքրելը շատ դիւրին է: Սպունգը ամանի մը մէջ դիր, վրան լեմոն քամէ, նոյն լեմոնին կեղեւները կտրտելով սպունգին վրայ ձգէ. վրան եռացած ջուր լեցուր և այսպէս 24 ժամ թող որ հանդարտ մնայ: Յետոյ նոյն ջուրով մի քանի անգամ սպունգը լուա, որ իր բնական մաքրութիւնը կը ստանայ:

ԱՂՏՈՏԱԾ ԶԵՌՆՈՑՆԵՐԸ ՄԱՔՐԵԼ

Երբ ձեռնոց մը աղտոտի՝ ընդհանրապէս զայն մէկ-դի կը նետենք իբր անգործածելի ինչ. սակայն ատեն մը եւս կրնայ գործածուիլ հետեւեալ եղանակաւ մաքրելով: Ա՛ռ 1000 կրամ կաթ և մէջը լուծէ 5 կրամ քառապոնաթ աը սուտ և լաթով մը ձեռնոցը սրբելով՝ հովին դէմ դիր որ խոնաւութիւնը առնէ:

Երկրորդ կերպ մ'ալ.— Ա՛ռ փոշխացած քիչ մը օճառ, 250 կրամ ամօնեաք, 10 կրամ ժաւելի ջուր և 155 կրամ հասարակ ջուր. խառնէ ամէնը և ֆանելայի կտոր մը թաթխելով սրբէ ձեռնոցը մինչեւ որ մաքրուի:

ԹԻԹԵՂԵԱՅ (ԹԷՆԷՔԷ) ԻՐԵՐԸ ՓԱՅԼՈՒՆ ԵՒ

ԱՆԱՐԱՏ ՊԱՀԵԼ

Այս տեսակ անօթները կրային ջրոյ մէջ թաթխելով կամ այդ ջրով պարզապէս լուալով երկար ժամանակ կը դիմանան առանց ժանդտելու: Մետաղեայ կամ պողպատէ գործիքներն ալ այս գործողութեամբ անարատ կը մնան երկար ատեն:

ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՆՅՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԲ ՀԱՅՐԻԿԸ ԳՄՅ...

Աւերորդ է ըսել թէ դաստիարակութեան այս յոյժ վտանգաւոր մեթոտը յաճախ պատճառ կ'ըլլայ որ խանդարուի սիրալիր յարաբերութիւնը առն և կնոջ միջեւ: Հայր մը ամենայն իրաւամբ կ'ակնկալէ որ մայրը իր իսկ ձեռքով պատժէ իր անառակ զաւակը, երբ պէտք կայ ատոր: Այլեր ամէն յարգանքի արժանի կը նկատեն այն կիները, որոնք վճռական դեր մը կը կատարեն տղոց դաստիարակութեան գործին մէջ: Անշուշտ այս չի նշանակեր թէ հայրեր պէտք է անտեղեակ պահուին տան իրադարձութիւններուն. երբէ՛ք: Հայր և մայր պէտք է անբաժանելի միութիւն մը ըլլան տղոց համար: Հայրեր ալ բնականօրէն կը հետաքրքրուին տղայոց կեանքին ու կենցաղին վերաբերեալ բոլոր բաներով և կ'ուզեն լսել անոնց մասին: Մայրեր պէտք է գոհացում տան անոնց այս հետաքրքրութեան և պատմեն ամենայն ինչ այն ատեն միայն, երբ տղայք անկողին մտած են և կատարեալ հանդարտութիւն կը տիրէ տան մէջ:

Տղոց չափահասութեան շրջանին մէջ կը պատահին յաճախ պարագաներ, յորում հայրը պէտք է կարգադրէ շատ մը բաներ: Մանկութեան շրջանին մէջ սակայն մայր մը պէտք է առանձինն գլուխ ելլէ իր անառակ զաւակին հետ: Սէր և խստութիւն հարկ անհրաժեշտ են. սէրը, սակայն, պէտք է միշտ առաջին պեղը գրաւէ տղոց դաստիարակութեան փափուկ գործին մէջ:

ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Տղայք կ'որակուին յաճախ որպէս ապերախտ ա-
րարածներ: Ճշմարիտ է այս: Թէ՛ ժխտական և թէ՛
գրական կրնայ ըլլալ այս հարցման տրուելիք պա-
տասխանը: Սոչափը սակայն պէտք է ըսել բացորոշ
կերպով, թէ տղայք չեն ըմբռներ և չեն կարող ըմ-
բռնել երախտագիտութիւնը ճիշդ այնպէս ինչպէս
կ'ըմբռնենք մենք չափահասներս: Բնական և սովո-
րական բաներ կը նկատեն անոնք ծնողական ձեռքե-
րու մատակարարած բոլոր բաները: Մեղադրելի չեն
տղաք իրենց այս ըմբռնումին համար, քանի որ մենք
ալ մեր կարգին ճիշդ նոյն կերպով ըմբռնած ենք մեր
ծնողաց բարերարութիւնները: Այս չի նշանակեր թէ
տղայք պէտք է վարժուին երախտագիտութեան:
Ընդհակառակը. տղաք պէտք է «ճնորհակալ եմ» ըսել
սորվին իրենց ստացած անունդին, հազուատին ինչ-
պէս և իրենց վայելած հաճոյքներուն համար: Տղոց
դաստիարակութեան ինչպէս միւս մարդերուն նոյն-
պէս և այս մարդին մէջ կենսական կարեւորութիւն
ունի մօր մը կենդանի օրինակը: Տղայ մը երբ կը
տեսնէ թէ իր մայրը երախտագիտական զգացումներ
կը տածէ իրեն բարերարութիւններ ընող անձերու
հանդէպ, ինք ալ նոյնը պիտի ընէ: Բաց աստի,
յանձնարարելի է որ մայրեր շնորհակալութիւն յայտ-
նեն իրենց զաւակներուն, մատուցուած մեծ կամ փոքր
ծառայութեանց համար: Այս կերպով՝ տղայք թէ՛
կը քաջալերուին և թէ՛ երախտագիտութեան կը
վարժուին միանգամայն:

Երախտամուտացութիւնը դատապարտելի է, և-
րախտագիտութիւնը սակայն գովելի է մանաւանդ
ընտանեկան յարկէն ներս: Երախտագիտութիւնը թա-
գուհին է բոլոր առաքինութեանց և գեղն ու շնորհը
ազնիւ կենանքերու:

ՏՆԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ՀԻՒԱՆԴԱՊԱՀՆԵՐՈՒՆ ՏԱՍՆԱԲԱՆԵՆԱՆ

1. Հիւանդները առանց հոգատար ձեռքերու չեն
կրնար բժշկուել:
2. Այս խնամատարներն են հիւանդապահները,
որոնք ամէն վայրկեան հիւանդին սնարին քով հոկե-
լով բժիշկին հրահանգները անթերի ի գործ կը դնեն:
3. Բժիշկին ճարտարութիւնը բուժական չէ.
հիւանդապահներ մեծ դեր ունին հիւանդին դարմա-
նումին մէջ:
4. Ըիշդ ժամանակին դեղ և սնունդ տալով,
մաքրութեան և այլ պոսոյից հսկողութիւն ընելով է
որ հիւանդը կ'ապաքինի:
5. Աչալուրջ հսկողութիւն. գուրօքն գործածե-
լի դեղը սխալմամբ ներսէն տրուելով ցուալի վիճակ-
ներու և մահուան իսկ տեղի տրուած է:
6. Տան մը մէջ ամենէն յարմարը որոշելու է
հիւանդապահ ըլլալու երբ հիւանդ պատահի: Սա պէտք
է գրի առնէ բժիշկին հրահանգներն և կէտ առ կէտ
ի գործ դնէ զանոնք:
7. Հիւանդին ձեռքին, բերնին, ձերմակեղէննե-
րուն, անկողինին, սենեակին և օդին մաքրութեան
խիստ ուշադիր ըլլալու է:
8. Հիւանդին քով հիւր ընդունելու չէ. շատ
խօսեցնելէ, ցրտառութենէ, դարչոնոտութենէ, աղ-
մուկէ, ծուխէ մուխէ հեռու պահելու է: Նստել բժիշ-
կին պատուիրած անունդէն զատ սւրիչ և ոչ մէկ բան
տալու է:
9. Բժիշկին մեկնումէն ետք բոլոր պատահած-
ներն, առած սնունդին, ատքութեան, քունին,
ընական պէտքերու մասին տեղեկութիւններ գրի առ-
նելով բժիշկին հաղորդելու է երբ նորէն գայ:

10. Հիւանդին սենեակը պէտք է դանուբի ժամացոյց, ջերմոչափի և ուրիշ կարեւոր գործիքներ ըստ յանձնարարութեան բժիշկին: Դեղ և արուած սնունդը չառնող հիւանդը այլեւայլ կերպերով համոզելու է. փոքրերուն մինչև իսկ բռնի տալու է:

ՀԻՒՍՆԴԱՊԱՀԸ

Միայլ է կարծել թէ միմիայն կիներն կրնան և պարտին ըլլալ հիւանդապահ, երբ հիւանդութիւն պատահի տան մէջ: Կան շատ այլեր, մանաւանդ ամուսիններ, որ կնոջ նման փափուկ ձեւեր ունին, և ամենափոքր կարօտութեանց իսկ ուշադիր, քաղցր և խոհեմ են: Այլ մարդուն զօրութիւնը մեծ սուսելութիւն մըն է հիւանդապահութեան մէջ: Հարցուր հիւանդապահութի մը և պիտի պատասխանէ թէ հիւանդը անկողինէն վերցնելը՝ ի՛նչ ծանր գործ է: Հիւանդ կինը ի՛նչ բարերար ազդեցութիւն կը կրէ երբ իր ամուսինին հուժկու բազուկները ղինքը կը վերցնեն և սպանովապէս կը փոխադրեն:

Ստուգել, անուրի մտահոգութիւն է հիւանդին համար երբ իրեն օգնող անձին զօրութեան վրայ վրստահութիւն չունի. վրան սարսուռ մը կը բերէ վարձգուելու վտիւր, որմէ բուժուելու համար օրեր պէտք են:

Հիւանդապահի մը յատկութիւնները չորս են.— մաքրասիրութիւն, հաստատամտութիւն, քաղցրութիւն և համբերութիւն:

Ա. ՄԱՔՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ.— Անձը ինչպէս և հիւանդին սենեակը միշտ մաքուր պահէ: Հիւանդին ախորժակը աննշան համարուած բանով մը կը խանգարուի: Ազտոտ լաթեր, վիբակապեր, եւայլն, սենեակ մի թողուր: Գործածուելուն պէս հեռացուր անօթները: Լաւ մը լուս և մաքուր օդի մէջ դիր

զանոնք: Պտտուհանը յոճախ բա՛ց՝ օգը մաքրելու համար: Յիշէ որ ապականեալ օգը թոյն կը պարուանակէ, և կը թուհաւորէ մարդը, ճիշդ ինչպէս սուրուած կերակուրը կ'ընէ: Հիւանդին աւելցուցած կերակուրը սենեակին մէջ մի՛ թողուր: Խմելու ջուրը միշտ փոխէ: Պէտք է թարմ ըլլայ, քանդի ջուրը սենեակին ամէն սեռակ հոտը կը ծծէ, և երբ հիւանդը այսպիսի մտացած ջուր խմէ, անոր մարմինէն և մարթէն սրտաքոտած թոյնը նորէն ներս առած կ'ըլլայ: Նոր ներկուած սենեակներուն մէջ պէտք է ջուր դնել: Ինչո՞ւ: Քանդի ջուրը ներկին իւղին հոտը կը ծծէ:

Բ. ՀԱՍՏԱՍՄՏՈՒԹԻՒՆ.— Գիտցիր որ կոշտութիւն և կոպտութիւն՝ հաստատամտութիւն չնշանակեր: Մի տինկալեր որ սառապող հիւանդը առողջ ուղեղի տէր մէկու մը նման խորճի և զգայ: Ուստի ի՛նչ որ հիւանդիդ համար պէտք է ընել՝ ըրէ, և աղէկ ըրէ, սիրով ըրէ, բայց ըրէ: Կտտարէ հաստատամտութեամբ և գիտցիր որ հիւանդը եաքը շնորհակալ պիտի ըլլայ քեզի:

(Շար.)

ՄՏՔԻ ԾԱՂԻԿՆԵՐ

Այն որ հարսութիւն չունի՝ վառի ալ չունի, այն որ հնազանդ կիւն մը չունի՝ հանգիստ ալ չունի, այն որ զաւակ չունի՝ զօրութիւն չունի, այն որ ազգական չունի՝ նեցուկ ալ չունի, իսկ այն որ ասոնց եւ ոչ միւս ունի՝ ազատ կեանք մը ունի:

*. Աշխարհիս մեջ չորս բան պահաւոր են ամեն շեւակ կռիւներու.—

Ես, դու, իմս, բուկդ:

*. Ժամանակը հրաճներու հայրն է:

ՄԱՐԶԱՆՔ ԵՒ ՄԲՈՐ

ՇՆՉԱՌՈՒԹԵԱՆ ՄԱՐԶՈՒՄԸ

ՇՆՉԱՌՈՒԹԵԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Փորձարկութիւնը ցոյց տուած է թէ այն որ կրնայ քսան անգամ երկու ունեցող և քսան անգամ իւրաքանչիւր ունեցող (միւսը մտախ սեղմումով գոցելով) չնչել, կրնայ անսահման կերպով պահել իր քթային չնչառութիւնը: Ամէն անոնք որ փորձի ընթացքին բերաննին կը բանտն կամ դէմքի գոյններնին կը փոխեն, քիթով չնչելու անկարողներ են՝ չնչառութեան մարդակազմական արդելք մը ունենալով, կամ բերանով չնչելու գէշ սովորութիւնը ունեցած են:

Բերանով չնչառութիւնը ըլլալով սղբիւր թոքային բորբոքումի հասկնալի կը դառնայ թէ ինչ օգտակարութիւն պիտի ունենայ նախքան մարդանքը զայն բառնալը և քթային չնչառութիւնը վերահաստատելը: Բերանով չնչառութիւնը պահող մը երբ մարդանք կատարէ, վերջ ի վերջոյ կ'ունենայ մկանուտ մարմինի մը մէջ նեղ կուրծք մը:

Բնականոն վիճակի մէջ իւրաքանչիւր ներչնչումի ատեն անհատ մը պէտք է իր կուրծքը ներմուծէ մէկէն մէկուկէս լիդր օդ, իսկ պէտք է կարող ըլլայ անգամ մը իր կուրծքը ընդարձակել ներչնչելու համար երեքէն երեքուկէս լիդր օդ: Իւրաքանչիւր չնչառութեան ատեն ներմուծուած և արտահանուած օդը կ'ըսուի ընթացիկ օդ, կուրծքը առաւելագոյն չափով ընդարձակելէ ու թոքերը օդով լեցնելէ յետոյ ամբողջական արտաչնչումը կուտայ կենսական կարողութեան չափը:

Կարելի է հասարակ երկայնութեան չափով խնայալ չնչառութեան ատեն կուրծքին բնականոն կեր-

պով ընդարձակուելը: Կուրծքի շրջագիծը կը համարուի թիկնոսկրներուն վարի և ստինքներուն վերի կողմէն անցնող գիծը: Չափը կ'առնուի երկու անգամ մէկը ներչնչելէ և միւսը արտաչնչելէ յետոյ: Չափահաս մարդոց երկու չափերուն տարբերութիւնը պէտք է ըլլայ շուրջ տասը սանթիմէթր (իւրաքանչիւր կողմը հինգ): Դիւրին է նկատել որ այս պարզ միջոցով ինչ թերի պատճառներ կը բարձուին, որովհետեւ կը ճշդուին աջ և ձախ կողմի թոքի պոկասութիւնը: Եթէ մէկ կամ միւս կողմի ներչնչման ու արտաչնչման շրջագիծերու տարբերութիւնը ոչինչ է կամ շատ փոքր, պէտք է ենթարկուիլ բժշկական քննութեան: Առողջ մարդոց մօտ մարդանքը կ'աճեցնէ թէ ներչնչման օդի քանակը և թէ կուրծքի շրջագիծերուն տարբերութիւնը:

Կատարեալ չնչառութեան քննութիւնը առաւելապէս բժշկական է. բժիշկն է որ ականջադրութիւնով պիտի որոյնէ թէ թոքերուն բոլոր մասերը իրենց պաշտօնը լաւ կը կատարեն, իսկ բատիօով է որ կարելի կ'ըլլայ տեսնել թոքի ծայրերուն բնականոն ընդարձակուելը և ստոծանիին (կուրծքին և որովայնին մէջտեղի թաղանթը) իւրաքանչիւր չնչառութեան ատեն բարձրանալը ու իջնելը:

Պէտք է նաև որ չնչառութեան յաջորդութիւնները հաւասար տեւողութիւնով ըլլան, վայրկեանը պէտք է չնչել տասներկուքէն տասնընից անգամ և ներչնչումի տեւողութիւնը պէտք է արտաչնչումէն քիչ մը պակաս ըլլայ:

Ի մի բան վերջապէս չնչառութեան տոկունութեան վրայ պէտք է ուշադրութիւն դարձնել: Առողջ մէկը որ մէկ անգամէն երեք լիդր օդ կը ներչնչէ, այս երեք լիդրը պէտք է ներչնչէ քանի մը երկվայրկեան ընդմիջումով կատարուած տասը փորձերուն ալ. այն ատեն է որ տոկուն կղած կ'ըլլայ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՉՍՏԻԿ ԲԱՌԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Յունական «Բասիալիա» և Եւրոպական «Բագ» գատկատօնի անունները յառաջ եկած են «Պասեֆ»էն, որ Եւրոպացիներէն կը նշանակէ «Անցի-Չասիկ», Գառն Չատկական, այսինքն Իսրայէլացոց Կարմիր Ծովէն անցնելու, Եգիպտոսէն զատուելու տօնը: Հայերէն Չատիկը, այս տեսակէտով, ճշգրիտ իմաստ մը կը պարունակէ: Մեր նախնիք այսպէս թարգմանած են բարոյական բարձր դաս մը տալու համար մեր ժողովուրդին: Չասուիլ մեղքէն, այս էր Չասիկ բառին բուն իսկ նշանակութիւնը:

ԿԱՐՄԻՐ ՀԱՒԿԻԹԸ

Չատկի տօնին հետ կապուած են հնուանդ կարգ մը սովորոյթներ, որոնցմէ մին և գլխաւորն է հաւկիթ ներկելը և հաւկիթ նուիրելը:

Արդարեւ հաւկիթը, իր արտաքին ձեւով և ներքին կազմով, կը ներկայացնէ աշխարհը: Հաւկիթի դեղնուցը կը պատկերացնէ երկիրը, սպիտակուցը՝ ջուրը, մաշկը՝ օդը, և կեղեւը՝ երկինքը: Այլ խօսքով հաւկիթը բնութեան սկիզբն է, սերմը և անվախճան պատճառը համազոյացութեան: Հնդկաց Մանու դիցարանական օրինագիրքը կ'ըսէ, թէ քառասյին տիեզերքի ջրերուն մէջ դրուած ոսկեհաւկիթէ մը ծնաւ Պրահման, և յառաջ եկան երկինքը, երկիրն ու բոլոր զատորոյ գոյացութիւնները: Հին Պարսկաստանի ու Եգիպտոսի մէջ, տօն օրերուն, գունաւոր հաւկիթներ կը բաշխուէին: Նաեւ ոսկիէ կամ արծաթէ կարմիր հաւկիթներ կը տարուէին մեծամեծներու իբր նշան խորին յարգանքի: Պարսիկներու արքան՝ Մեծ Շէմշիտ՝ հաւկիթով ընծայաբերութիւնը

որ արդէն կար, պաշտօնականի վերածեց, որ ութը օր շարունակ կը կատարուէր մեծահանդէս: Պարսիկ նախարարներ գիշերահաւասարէն մէկ ժամ առաջ շքեղ հագուած պալատ կ'երթային և Շահէն կը ստանային ոսկեղէն հաւկիթ: Յետոյ ամէն ոք իրարու կը զրկէր նկարուն և կարմիր հաւկիթներ: Եգիպտացիք հաւկիթը կը նկատէին նուիրական խորհրդանշան մը ջրհեղեղէն ետք մարդկային ցեղին վերանորոգութեան: Քրիստոնեայ ժողովուրդներու մէջ եւս կարմիր հաւկիթի նուիրատուութիւններ կ'ըլլան Չատկին, պարզ այն պատճառով որ ի սկզբանէ սնտի ընդունուած է հաւկիթը որպէս մի խորհրդապատկերը Յարութեան:

Չատկի տօնին, հաւկիթը ընդհանրապէս կարմիր գոյնով ներկելու պարագան կրնայ բացատրուել, ի մէջ այլոց, հետեւեալ կերպով: Ըստ քրիստոնէական հաւատի, աշխարհ փրկուեցաւ Քրիստոսի արեամբ: Արիւնը կարմիր է, և գլխաւոր խորհրդանշանը կը կազմէ սիրոյ, զոհաբերութեան:

Միշտ խնդիր եղած է թէ հաւկիթը կարմիր ներկելու սովորութիւնը ամենէն առաջ ո՞ր ազգին մէջ սկսած է, այսինքն ո՞ր ազգին գիւտն է այդ:

Յայտնի է թէ վարդագոյն ներկին հայրենիքը Արեւելքն է, ուր կը գտնուի որդան-կարմիր անուն բոյսը, որմէ կ'արտադրուի կարմիր ներկը: Եւ որովհետեւ Հայոցս մէջ ի հնուց սնտի սովորոյթ եղած է կարմիր գոյնով ներկել մատաղցու եզն ու կովը, աքլորն ու հաւը և դինիով լուալ ամէն նուիրական աւօթներ, կրնանք հաւաստել թէ հաւկիթ ներկելու սովորութիւնը հաւանաբար Հայերէն օրինակուելով տարածուած է ամէն տեղ:

ՀԱՅՈՅ ՉՍՏԻԿԸ

Չատիկը Հայոց մէջ կը տօնուի մեծահանդէս:

Ուրախութիւնները կը սկսին ճրագալոյցի երեկոյին երբ պատարագիչը կ'արտասանէ «Առէք կերէք»:

Զատկի առաւօտն մեր հայրենի բնագաւառին մէջ կար մի շատ հիանալի սովորոյթ: Զատկի գիշերը երբ ժամերգութեան զանգակին առաջին հնչիւնը կը լսուէր, հայ ժողովուրդը ոչ թէ ժամ, այլ նախ գերեզմանատուն կ'երթար: Ամէն ոք իր ննջեցեալին գերեզմանաքարին վրայ մոմ մը կը վառէր, կը ծընրադրէր և կը մրմնջէր ննջեցեալին, աւետելով անոր «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Զատկի առաւօտուն երբ տաներէց քահանան անօրհնէքի կ'երթար. կ'օրհնէր ոչ միայն գինին, այլ և հաւկիթները, աղը, ցորենը, ալիւրը և ջուրը. կ'օրհնէր այս ամէնը, որպէսզի այդ քրիստոնէին տունը շէն ու պայծառ մնար, ի լիուծեան մնայ:

Իսկ հայ մամիկները կը քնացնէին իրենց թոռնիկները սա օրօրով.—

«Գինին է կարմիր, տէրտէրը կ'օրհնէ,
Զատիկն է եկեր, մատաղը կ'օրհնէ:
Մեր մատաղն՝ է մեր աքլորիկ,
Իր մեռնիմ ևս խորոտ կատարին:
Զատիկն է մեր հաւկիթիկ,
Նշխուն է մեր հաւկիթիկ:

Օրօր, իմ դաւակիկ,
Օրօր, աչիս լուսիկ.
Օրօր, լուսաւորչիս,
Օրօր, իմ դաւակիս:»

ՄՏՔԻ ԾԱՂԻԿՆԵՐ

Ան որ իր նմաններուն միջեւ, միայն ինզիմֆին համար կ'ապրի եւ իր նմաններէն ոչ մէկուն օգտակար կ'ըլլայ, ընդհակառակը իր պէտքերուն համար ուրիշներուն կը դիմէ միտ, ընկերային հրէշ մըն է:

ԶՈՒԱՐԹ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

ԵՐԵՒ ՈՒՆՏԱՒՈՐՆԵՐ

Երկու գեղջուկներ Զատկի առթիւ ուխտի կ'երթային Երուսաղէմ: Ուրիշ գիւղացի մըն ալ որ հոն կ'երթար, ճամբան անոնց միացու և սկսան մէկտեղ ճամբորդել, նոյնիոկ պաշարնին ալ միացուցին: Բայց ուխտատեղիին մէկ օր մնացած, ուտելիքը պակսեցաւ. քիչ մը ալիւր մնացած էր, այնքան որ հաղիւ կարելի եղաւ անկէ պզտիկ հաց մը շինել:

Երկու գեղջուկ ընկերները, չարամիտ մարդիկ, միաբանեցան որ հացը իրենց միջեւ բաժնեն և միւսին քան չտան, մտածելով որ, անոր խոպոչ կերպտրանքէն դատելով, դիւրու պիտի կրնան խաբել զայն:

— Ի՞նչպէս պէտք է բաժին ընենք, ըսաւ անոնց մէ մէկը, սա հացը որ հաղիւ մէկ հոգի մը կը այցկշտացնել. ևս կ'առաջարկեմ որ երեքնիս ալ պառկինք, մէյմէկ երազ տեսնենք և որուն երազը որ ամենէն գեղեցիկը ըլլայ՝ անոր տանք հացը, որպէսզի անարդարութեամբ չարժած չըլլանք:

Ընկերը բնական է իսկոյն հուսնեցաւ այս դադափարին, քանի որ սա երրորդը՝ փնթի գիւղացին պիտի խաբէին: Սա ալ իր հաւանութիւնը յայտնեց և անանկ ձեւացուց թէ ծուղակին մէջ պիտի իյնայ:

Երկու ընկերները այնքան յոգնած էին որ ակամայ անմիջապէս քնացան: Միւս գեղջուկը անոնցմէ ուտելի չարամիտ, այս վայրկեանին կը սպասէր: Առանց արժուկի երաւ, քնաց հացը առաւ և պատուականապէս ճաշակելէ ետք եկաւ պառկեցաւ:

Առաւօտան դէմ գիւղացիներէն մէկը արթնցու և պատմեց թէ զինք դժոխք տարած էին իր երազին մէջ: Միւսն ալ պատմեց թէ զինք արքայութիւն տարած էին հրեշտակները:

Հայն ուսող մարդուկը այս պահուն թէեւ կը լսէր ամէն ինչ, բայց քնանալ կը կեղծէր:

Միւսները երբ զինքը արթնցուցին, խոր քունէ յանկարծ արթնցած մարդու մը երեւոյթն առնելով, պատմեց իր երազը:

— Երազիս մէջ տեսայ որ ձենէ մէկը արքայու- թիւն է գացեր և միւսը դժոխք. ևս ալ մտածեցի որ զձեզ յաւէտ կորսնցուցած եմ և անգամ մըն ալ չպիտի տեսնեմ: Այն ատեն, ելայ, և հաւատացէ՛ք, քսմի որ պէտք է ըսել զայն ձեզի, ելայ ու գացի հացը կերայ...:

ԱՊՐԻԼԻ ԶՈՒԿԻՆ ԾԱԳՈՒՄԸ

Ապրիլի առաջին օրը մարդ խաբելու կամ սուս կլլեցնելու սովորութիւնը հայկական չէ, այլ հոռ- մէտական կը կարծուի: Եւրոպացիք Ապրիլ մէկի խաբէութիւններուն Ապրիլի ձուկ կ'ըսեն: Ասոր պատ- ճառը հետազօտիչներ կը տեսնեն հետեւեալ պատմու- թեան մէջ. —

Քրիստոսէ 40-50 տարի առաջ հռոմայեցի Մար- կոս Անտոնինոս եռապետը սիրահարուած էր հին Եգիպ- տոսի Կղէոպատրա թագուհիին որ աշխարհի ամենէն գեղեցիկ կիներէն մէկն եղած է: Անտոնինոս՝ կ'ուզէր հաճելի ըլլալ անոր և որպէսզի ձկնորսութեան մէջ իր ճարպիկութիւնը ցոյց տայ, անկիւն մը ծածկուած սուզակներ՝ անոր կարթին ծայրը խոչոր ձուկեր կ'ան- ցնէին: Կարթը նետելուն պէս անս պատուական ձուկ մը որսացուած էր: Կղէոպատրա կը զարմանար: Վեր- ջապէս կռահեց որ ջուրին մէջ պահուած վարպետ սու- զակներ կը կատարէին այս գործը: Ուստի Կղէոպատ- րա, շատ մը ոսկի տալով վարձեց այդ սուզակները և երբ Անտոնինոս օր մը դարձեալ կ'որսար, անս վեր եկաւ շքեղ ձուկ մը՝ որ արդէն տապկուած էր...: Կինը ժպտելով ըսաւ. — «Դուն աշխարհի ամենէն ճարտար ձկնորսն ես, որովհետեւ ձուկերը կ'որսաս ուսուելու յարմար վիճակի մը մէջ...»

**Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն
L U S H**

Տր. Քարդըր կարեկցութեամբ նայեցաւ անոր: — Գէշ կերպով վիրաւորուած ըլլալու է, ըսաւ: — Վիրարոյժը ըսաւ թէ հաղիւ օր մը կեանք ունի, շարունակեց հիւանդագահունին. այս առտու Կարծեցի թէ մոռամբն էր, ցած ձայնով բաներ մը կը փոփօար: Սկովտացի ըլլալու է. «Լա'տի, Լա'տի» Կ'ըսէր շարունակ:

Այս անունը պառաւին տկանջը հասնելով, սթա- փեցաւ և գլուխը բարձին անդիի կողմը դարձնելով «Լա'տի» մրմնջեց վերատին: Իսկոյն Տր. Քարդըր այն- պիտի ճիչ մը տրձակեց որ օրահին մէջ բոլոր հիւանդ- ները տեղերնուն վեր ցատկեցին հառկնալու համար թէ ի'նչ պատհած էր:

— Մա'յր, կ'ըսէր ան, մա'յր, դո՞ւն ես: Տր. Քարդըր անկողին քով ծունկի եկած անձ- կալից տչքերով մօրը կը նայէր: Խելքը կորսնցու- ցա՞ր էր արդեօք: Յետոյ յարեց. «Մա'յր, մա'յր, խօսէ՛ ինձի հետ, մա'յր»:

— Լաւ եմ, Լատի'ս, ի՞նչ կ'ուզես: Հիւանդագահունին բժիշկին մօտեցաւ ու ըսաւ. — Կը սխալիք, պարո՞ն. սաիկա խեղճ պառաւ մըն է:

Տր. Քարդըր անոր դառնալով հպարտութեամբ պատասխանեց.

— Սխալ չկայ, մայրս է: Եթէ կարելի ըլլայ, անմիջապէս տունս փոխադրել պիտի տամ զինքը:

Երանի թէ գործը ատոր մնացած ըլլար: Հիւան- դագահունին խորհուրդ տուաւ որ խոհմուտիւն չէր զայն տեղէն շարժելը. ուստի Տր. Քարդըր մասնա- լոր սենեակ մը փոխադրել տուաւ մօրը անկողինը:

Մ'լ ամէն ինչ անողուտ էր: Մէկ քանի ժամուան կեանք միայն ունէր խեղճ կիւնը: Մասնաւոր հիւանդագասնուէի մը բերուեցաւ. սակայն անոր ներկայութիւնը բարբառաբան աւելորդ էր, քանի որ Տր. Քարդըր գործ չէր թողաւ անոր: Իր ձեռքովը մօրը բարձը կը շտկէր, գլուխը վեր կը վերցնէր, չրթուէր. ներք կը թրջէր, կը հովածէր գոյն: Ամէն ինչ սղան կ'ընէր վերջին ծայր համբերութեամբ և մեծ գորովով:

Տր. Քարդըր զոյն հիւանդագասնուէիին հակողութեան յանձնելով գնաց կառք մը վարձեց, ու շտապով շխտակ Հարլէյ փողոցը, Մանիչակին տունը վազեց:

Մանիչակ ծողիկի վաճառանոցէն վերադարձած էր ճիշդ այդ պահուն, ու ինք ալ ծողիկի մը պէս կ'ըլլար, իր անուշ դէմքովն ու սիրուն հագուստովը:

— Ձինքը գտայ, ըսաւ Լատի, եկո՛ւր:

Եւ աղջիկը տաանց հարցում մը ուղղելու հետեւեցաւ անոր. միայն սա հասկնալով Լատիի դէմքէն թէ տխրութիւնը ուրախութեան խառնուեր էր զայն գանկուն տաթիւ:

— Մեռնելու վրայ է, ըսաւ, երբ միասին հիւանդանոցին սանդուխներէն վեր կ'ըլլէին, կրնա՞ս տեսնել զինքը այս վիճակին մէջ:

Իրբեւ պատասխան դեռատի աղջիկը կամացուկ մը ընկերոջը թեւը սեղմեց ու հանդարտ սենեակէն ներս մտան: Տարտամ լոյս մը վառուած էր, և հիւանդագասնուէին անկողնին քով կը հակէր:

— Ձեր երթալէն ի վեր չարթնցաւ, պարո՛ն, ըսաւ հիւանդագասնուէին:

Ճիշդ այդ միջոցին, սակայն, պառաւ կինը աչքերը բացաւ. նախ Լատիին նայեցաւ ու յետոյ Մանիչակին:

— Ո՞վ է այս աղջիկը, հարցուց:

ՈՒՂԵՑՈՅՑ ԿԵՆՑԱՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Մ' Ի'...

Է.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ.— Մի' մտնար թէ իբր պետ ընտանիքի պատասխանատու ես տունին և բոլոր պարագայից ընդհանուր բարօրութեան համար: Քեզի կ'իյնայ պատրաստել տունը, և կեանքի ու առողջութեան անհրաժեշտ եղածը հայթայթել ամէնուն համար, որոնք քու երգիքիդ տակ կը գանուին:

Մի' նկատեր ինքզինքդ տունը միայն հաց բերող բեռնակիր մը: Տունին բարոյական մթնոլորտին ինչպէս և անոր բարւոք վարչութեան համար ալ պատասխանատու ես. դուն պէտք է կարգադրես տունին կանոնները և սովորութիւնները, ամէն տեսակ յարգանք ընծայելով հանդերձ կնոջը բողձանքներուն:

Մի' թերանար կնոջը մասին քու սէրդ յարատեւ և քու գգուանքդ խնամոտ պահելու մէջ: Սէրը յաւէտ և ամենուրեք թանկագին բան մը նկատուած է: Ամուսնութենէն առաջ գոյութիւն ունեցող սէրը կը գովաբանուի, կը հռչակուի. ամէն աղգերու գրականութեան մէջ ամենէն ժողովրդական նիւթը կը կազմէ, թողունք նկարչութիւնը, երաժշտութիւնը և երգերը: Սակայն ամուսնութենէն վերջ սիրոյ վրայ շատ քիչ կը խօսուի, նոյնիսկ չյափշտակուի:

Տիպար ամուսինի մը համար այսպէս պէտք չէ ըլլայ: Մի' նկատեր կինդ պճնազարդուած պուպրիկ մը և կամ լոկ հաճոյքի աւարկայ մը, այլ յաւէտ նկատէ'

զայն խորհրդակիան մը, ընկեր մը և օժանդակ մը կեանքի պայքարին մէջ:

Մի՛ լինիր անփոյթ արտաքին երեւոյթդ խնամելու մէջ:

Մի՛ յատկացներ քու բոլոր պարագոյ ժամերդ այնպիսի բաներու, որոնցմով բնաւ չի հետաքրքրուիր կինդ:

Մի՛ համբուրեր կինդ հրապարակաւ: Սիրոյ հըրապարակային ցուցադրումներ նշան են յուրի ճաշակի:

Մի՛ խօսիր միմիայն գործի դժուարութիւններու մասին, երբ տուն կը վերադառնաս գործէդ:

Մի՛ խառնուիր առտնին գործերու, կինդ ապահովաբար աւելի լաւ կը հասկնայ առտնին գործերէ քան թէ գուն:

Մի՛ բարկանար երբ ճաշը պատահմամբ կ'ուշանայ մի քանի վայրկեան: Քեզի անձանօթ բազմաթիւ բանաւոր պատճառներով կրնայ ուշանալ ճաշ մը: Համբերող եղիր:

Մի՛ հուշակեր ինքզինքդ իբրեւ անմեղ և կինդ իբրեւ յանցաւոր յամենայնի: Քեզի իբրեւ յարացոյց թո՛ղ ծառայէ Պուտտայականներուն Ազամը, որ չ'ամբաստաներ եւան, Տիրոջ ալ չըսեր. «Հաճեցէ՛ք ինձ ներել, յանցանքն իմս չէ, այլ կինն է որ զիս գլխէ հանեց:» Ո՛չ, այլ կ'ընդունի թէ յանցաւոր է: Կը հաւատտէ թէ ինք միայն գործեց մեղքը, և թէ ինք պէտք է պատժուի: Պուտտայականներուն այս Ազամը մարդ մըն է. նեկրլմեկ մըն է: Այն ասուն եւա կը միջամտէ: Կ'ընդունի թէ ինքն ալ յանցաւոր է, և նոյնիսկ Ազամէ աւելի յանցաւոր: — Ահա՛ դադարիքը ընտանեկան երջանկութեան:



7648-56

Դ Ա Ս Ը Ն Թ Ա Յ Ք Ե Լ Ե Ք Տ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Գ Լ ՈՒ Խ Ե Ե.

Ք Ի Մ Ի Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն

Պարպուռի ընթացքին՝ թթուն կը մեկուսանայ ելեքտրալոյժէն, միախառնուելու համար սկաւառակներուն հետ: Սկաւառակները երբոր բոլորուին կը ծածկուին կապարածձմբատով, շատ քիչ տարբերութիւն կը տեսնուի անոնց վրայ կատարուող քիմիական գործողութեան մէջ, և բնական է, վտլթածը կը նուազի երբոր խորչն կը պարպուի:

Մեր խորչը երբոր կը պարպուի, հարկ անհրաժեշտ է զրկել լեցնող հոսանք մը անոր մէջ: Այս լեցնող հոսանքը, պէտք է գիտնաք թէ, կ'անցնի խորչին մէջ՝ պարպող հոսանքին հակառակ ուղղութեամբը: Խորչին մէջէն հոսանքը եւ զրկելով, գրական սկաւառակին վրայի կապարածձմբատը կրկին կապարազերօքսիտի կը փոխուի իսկ թթուն կը վերածուի ելեքտրալոյժի: Ժխտական սկաւառակին վրայի կապարածձմբատն ալ կրկին կը գառնայ մաքուր կամ ծակոտէն կապարի իսկ կապարածձմբատին պարունակած թթուն կը վերածուի ելեքտրալոյժի:

Ի վերագոյն բացատրուած խորչը ծանօթ է իբր կազմուած սկաւառակի տիպ: Այսպէս կոչուած է պարզ այն պատճառաւ որ գործօն նիւթը ելեքտրականութիւն կազմող ընթացքով մը կը ղետեղուի սկաւառակներուն վրայ:

Ջ Ր Ա Չ Ա Փ

Ելեքտրալոյժին ծանրութիւնն կշռող գործիքը կը կոչուի ջրաչափ (hydrometer): Ոչ այլ ինչ է ան բայց եթէ լաստափայտ մը որ օժտուած է նժարով մը: Կարգ մը բարդերու ելեքտրալոյժի ծանրութիւնը կ'ըլլայ 1275, իրենց կատարելապէս լեցուած վիճակին մէջ:

Խորշը երբոր կը լեցուի՝ լուծոյթին ծանրութիւնը իսկոյն լուծոյթէն վեր կը բարձրացնէ ջրաչափին նժարը, բայց երբոր ելեքտրալոյժը կը թեթեւնայ իր պարունակած թթուն (acid) սկաւառակներուն միջոցաւ դուրս վանելով՝ այն ատեն ջրաչափը ինքնաբերաբար կ'իջնէ լուծոյթին յատակը: Կ'ըսուի թէ խորշ մը կէս լեցուած է երբոր ելեքտրալոյժին ծանրութիւնը կ'իջնէ 1200ի, և թէ կատարելապէս պարպուած է երբոր ծանրութիւնը կ'իջնէ 1150ի: Միշտ լաւագոյն է լեցնել բարդ մը, անոր ելեքտրալոյժին ծանրութիւնը 1200էն վար իջնելէ առաջ: (*)

*) ԻՍՆՕԹ.— Ներկայ քիւով կը վերջացնենք ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՅԻՐ, մեր ընթերցողներուն ամփոփ գաղափար մը սալէ վերջ ելեքտրականութան գիւտին, զարգացման եւ անոր զանազան գործածութեանց մասին: Ելեքտրականութեան աւելի ընդարձակ եւ աւելի մանրամասն դասընթացքի մը հետեւի ուզողներուն կը յանձնարարենք դիմել առ՝ L. L. COOKE, School of Electricity, Chicago:

ԴԱՍԸՆԹԱՅԻ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԵՐՃԱԽՕՍՈՒԹԵԱՆ

ԳԼՈՒԽ Ը.

Հ Ա Ն Ճ Ա Ր Ը

Հանձար մը կամ մեծ միտք մը լինելու փառասիրութիւնն ունեցողը պէտք է առաջնորդուի հետեւեալ հրահանգներէն:

Նախ պէտք է քաջ ըմբռնել սա իրողութիւնը թէ հանձարը մարդ մըն է որ ճարտարօրէն կ'անեցնէ և կը զարգացնէ իրեն տրուած ոյժերը, կարողութիւնները, ձիրքերը: Մէկէ աւելի հանձարներ բոլորովին անշուք կերպով անցած են կեանքի այս հովտին մէջէն և մատուցած չեն մարդկութեան ո'չ մէկ օգտակար ծառայութիւն պարզ այն պատճառաւ որ չեն գիտցած գործածել իրենց տրուած պատենուութիւնները, ձիրքերը, զիրքերը և զանազան տեսակ տաղանդները: Ո'հեւէ մէկ պատենուութիւն, ո'հեւէ մէկ կարողութիւն, ո'հեւէ մէկ արհեստ կամ հարստութիւն, գիտութիւն, զեղարուեստ, հաւատարմութեամբ և ժրջանութեամբ գործածուելով միայն կ'աճի, կը զօրանայ, կը ճոխանայ, կ'ազնուանայ: Բայց ընդհակառակը, անխնամ թողելով և չգործածուելով կը տկարանայ, կը վատթարանայ և կը կորսուի ուր ուրեմն:

Երկրորդ՝ պէտք է գիտնալ թէ հանձարը մարդ մըն է որ կը զգայ պէտքը առանձնութեան, որուն մէջ միայն կրնայ ընդլայնել իր մտածումները և կազմել իր նկարագիրը: Առանձնութեան արժէքը անգնահատելի է արդարեւ: Բոլոր մեծ գործերը առանձնացումի մէջ ծնունդ առած են, և հոն է որ մեծ նկարագիրները կազմուած են: Ահա թէ ինչո՞ւ գիւղին մենութիւններէն է որ դուրս կուգան աշխարհի մեծ

մարդերէն շատերը: Վտանգի իրենց վարած խաղաղ
և միտջնակ կեանքը անոնց տուած է առաւելութիւն
մը իրենց մտածումները ընդդայնելու և իրենց նկա-
րագիրները կազմելու:

Բոլոր բարի և ազնիւ մղումները կը զարգանան
չափաւոր առանձնացումով մը և մտքի կեդրոնացու-
մով: Դերասան մը իր խաղը կը սորվի իր սենեա-
կին հանդարտութեանը մէջ, ոչ թէ իր Բլիւպին ժխո-
րին մէջ: Առանձնութեան մէջ է որ Պուլթ և Ֆորէսթ
արտայայտութիւն գտած են իրենց մեծ յուզման հա-
մար: Նեւտոն իր թուաբանական խնդիրները սոր-
ված է աւազին վրայ, Ժողովուրդէ հեռու, և հոն է
որ ստացած է այնքան մեծ ներշնչումներ և հմտու-
թիւններ:

Կայ երրորդ և վերջին պարագայ մըն ալ որ
պէտք չէ վրիպի ձեր ուշադրութեանէն. այն է, թէ՞
հանձար կոչուած մարդիկ գերագոյն ճիգեր կ'ընեն յա-
ջողելու համար: Որքան ատեն որ մէկը յաջողելու
համար ճիգ չ'ընէր, անյաջողներուն մտածումները մի-
այն իրեն կը քայէ:

Եթէ ընթանաք հանձար կոչուած մարդոց այս
ճամբէն և եթէ որոշ աստիճանի յաջողութիւն մը
ձեռք բերելէ հաք չի ընդհատէք ձեր ջանքերը, այլ
շարունակէք աշխատիլ դէպի աւելի մեծ զարգացում
մը, ատրակոյս չկայ թէ որ մը ձեզ հանձար պիտի
անուանեն: Թող արիութիւնը, յարատեւութիւնը և
անվեհերութիւնը ձեր նշանաբանը ըլլան: Յիշեցէք
որ աշխարհը ճամբայ կը բանայ հաստատամիտ մար-
դու մը գնացքին առջեւ: (*)

*) ԾԱՆՈԹ.— Տրամաբանութեան եւ Պերճախօ-
տութեան դասընթացք կը վերջացնենք այս գլուխով:
Կը սիրենք յուսալ քի մեր այս պարզ այլ մեթոտիկ
ամփոփումներն անգնահատելի ծառայութիւններ պիտի
մատուցանեն խորհելու եւ խօսելու արուեստին մէջ
յառաջդիմել ուզողներուն:

ԴԵՌԱՅԱՍՆԵՐՈՒՆ ՈՍԿԵՂԷՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԾՈՒՂՈՒԹԵՆԷ ԽՈՅՍ ՏԱԼ

Կը պոտմուլի թէ հարուստ ու յաջող մարդ մը,
որ ամէն տեղ պոտած և ամէն բան տեսած էր և Սո-
լոմոնի նման գտած էր թէ ամէն բան ընդունայն է,
քոլորովին ձանձրանալով կեանքէն, յուսահատու-
թեան պահու մը մէջ գետ մը նետուեցաւ հեղձամահ
ըլլալու նպատակով: Անոր բարեկամները գետին մէջ
խուզարկեցին անյայտացած մարդը, բայց հոտանքն
ապահով տուած տարած էր դայն գիշերուան մթու-
թեան մէջ հակուակ եղերքը: Երբ մարդը հրաշիւք
իմն ազատելով սթափեցաւ, որոշեց բոլորովին նոր
կեանք մը ազրելու փորձ մը ընել: Մեռած կը կար-
ծուէր ան: Ուստի հեռաւոր տեղ մը, անձանօթ,
առանց դրամի մէկուն քով մտաւ իբրեւ հասարակ
մշակ: Մինչև այդ ատեն վարժուած չէր գործել,
հիմա տուտ գործ ունէր: Առաւօտեան զով օդով կը
քշէր իր լուծը արտին մէջ և խոշոր շունչ կ'տունէր
ակօսներուն վրայ մինչև իրիկուն: Կեանքը բոլոր-
ովին նոր և օտարտի բան մը թուեցաւ անոր: Նոր
մտածումներ, նոր հետաքրքրութիւններ, նոր յոյսեր,
նոր իղձեր արթնցան անոր մէջ: Եւ եղաւ որ ամիս-
ներ հաքը մարդուն զգացումները բոլորովին փոխ-
ուեցան, և երբ յետոյ իր նախկին վիճակը վերստա-
ցաւ, իր բարեկամները չկրցան ճանչնալ թէ նոյն
մարդն է ան: Անոր համար կեանքին անէժքը իր
գործը չէր եղած, այլ՝ գործէ զրկումը: Ով որ լըրջ-
օրէն ծուլութիւնն ընարէ իբրեւ իր բաժինը, անէժ-
քը կ'ընարէ: Աշխատութիւնը օրհնութիւն է և կեանք
բաղձալի:

ՀԱՒԱՏԱԼ ԶԱՆՔԻ ԵՒ ՈՉ ԹԷ ԲԱՆՏԻ

Աշխարհի կենսադրութիւններուն մեծ և մշտաբաց գիրքն ուսումնասիրելով «բախտ»ի քիչ հետք կը գտնենք անոր էջերուն մէջ: Կլատտութն պատանեկուծեան ատենն իսկ 11 ժամ կ'աշխատէր: Ֆրանսացի մեծ գիտունն Փասթէօր ամբողջ ցերեկներ և գիշերներ կը մնար աշխատանոցին մէջ: Ակասի գիրք գիրքի ետեւէ կ'ընդօրինակէր երբ պէտք կ'ունենար ու չէր կրնար զնել, և ընդօրինակելու պահուն կը սորվէր զանոնք: Փրէսքոթ պատմիչը, գրեթէ ամբողջովին կոյր, իր ծանօթագրութիւնները կը պատրաստէր անհաւատալի խնամով և աշխատութեամբ: Մէկ գիրքի յօրինման համար 10 տարի նուիրեց, ամէն օր անընդհատ աշխատելով: Լինքըն օրն ի բուն կը գործէր ձեռքի ամենածանր աշխատութեամբ, և ժամերով կ'ուսանէր կրակի լոյսով:

ՄԱՔՈՒՐ ԿԵՆՑԱՂՈՎ ԱՊՐԻՆ

Պարկեշտ և մաքուր կենցաղով չապրողներ անխուսափելիօրէն կ'ունենան ախուր ծերութիւն մը. քանզի ծերութիւնն երիտասարդութեան ապագան է: Կեանքը կը նմանի շէնքի մը: Եթէ կ'ուզէք որ շէնքի մը բոլոր յարկերը հաստատ ըլլան, պէտք է որ շէնքին հիմը սոկուն և զօրեղ ըլլայ:

Այսպէս ալ կեանքը երջանիկ ապրելու և բարեբաասիկ ծերութիւն մը ունենալու համար պարտաւոր ենք պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը կոյս, մաքուր և արտաքին ազդեցութիւններէ զերծ պահել:

(Շար.)

ՏԱՆՏԻԿՆՈՋ ԲԱՐԵԿԱՍԸ

ԽՈՂԱՆՈՑԷՆ ՆԵՐՍ

Ա Պ Ո Ւ Ր Ի Տ Ե Ս Ա Կ Ն Ե Ր

1. ՀԱՒԿԻԹՈՎ ԵՒ ՓԱԹԱԹԷՍՈՎ ԱՊՈՒՐ.— Կէս օխտ փաթաթէսը կեղեւելէ վերջ դիր 12 շերեփ մսի ջուրի մէջ և եփէ մինչև ուր հալի: Յետոյ պարզուտէ անցուր, նորէն կրակին վրայ դիր, աւելցուր զատէն խաշուած չոր լուբիս, պէղէլիս, սիսեռ և երկու հաւկիթի դեղնուց: Պատրաստ է:

2. ԳԱՐՆԱՆ ԱՊՈՒՐ.— Մէկ հատ շողգամ, երկու հատ ստեպղին, երեք հատ փաթաթէս, երկու գլուխ սոխ և քիչ մըն ալ մայտանոս ջարդէ և թեթեւ մը խորովէ խոշոր դգալ մը կարագ իւղի մէջ. վրան աւելցուր տասը շերեփ միսի ջուր և եփէ մէկ ժամի չափ. մէջը խառնէ զատէն միսի ջուրի մէջ խաշուած որոշ քանակութեամբ պէղէլիս և կարագ իւղի մէջ կարմրցուած քառանկիւն հացի կտորուանքներ:

Կ Ե Ր Ա Կ Ո Ւ Ր Ն Ե Ր

1. ԿՈՎԻ ՌՕՍԹՕ.— Միսը լուարով դնել սանին մէջ, ինչպէս նաեւ մի քիչ իւղ, աղ, պղպեղ, սոխ, սխտոր, նարինջի կեղեւ ու թէֆնէի տերև: Նախ պնակով մը գոցել սանին բերանը, ապա կախարիչը ու թեթեւ կրակի վրայ եփել, մինչև ուր միսը իր ջուրը թող տայ: Յետոյ կրակն ուժով ցնել, մինչև ուր պատառաքաղը շատ դիւրութեամբ մտնայ միսին մէջ, որ կը նշանակէ թէ եփած է: Ապա միսը իւղին մէջ կարմրցնելով սեղան բերել:

* Առնել կովու պուտին մէջի կողմէն մէկ օխտ միս, հաստ ու կարճ կտոր մը, և կէս բաթլը (72 արամ)

ուշխարի դմակ: Միսը տեղ տեղ երկայնքին ձեղքելով երկար ու բարակ ջարդուած դմակը դետեղել այդ ձեղքերուն մէջ, հետը դնելով նաեւ սոխ: ձեղքերուն բերանը ծեփել աղով ու սեւ պղպեղով և քանի մը դգալ այրած իւղի մէջ կարմրցնել թեթեւ կրակի վրայ. յետոյ եզերքներէն քիչ առ քիչ սաք ջուր լեցնելով ձգել որ եփի:

2. ՊէՕՅԹԷՒ ՏԸՊՊՕ.— Ուշխարի կողիկները (պրզօլա) կտակարայի վրայ խորովելէ վերջ սանի մը մէջ շարել. գաւաթ մը քացախ, երկու գաւաթ ջուր և քիչ մը սօս (սալցա) լեցնելով թեթեւ կրակի վրայ եփել:

ԽՄՈՐԵՂԷՆ - ԱՆՈՒՇԵՂԷՆՆԵՐ

1. ԿԱԹՕ ՆԷԼՍԸՆ.— Խոշոր սանդի մը մէջ 480 կրամ կեղպուած անուշ նուշ ծեծէ, քիչ առ քիչ աւելցուր 500 կրամ մաղուած չաքար, 15 հաւկիթ, գաւաթ մը ուս ու 5 կրամ վանելիա: Բոլորը միասին ծեծէ մինչեւ որ փրփրի, յետոյ կաղապարները լեցուր, մեղմ փուռի մէջ եփէ: Յետոյ զանոնք զարդարէ երկայնքին զատուած նուշերով ու փոշի չաքար, ալիւր սիւնելով փուռը չորցուր:

2. ԿԱԹՕ ՔԻՅՅԷ.— Շատ քիչ կրակի մը վրայ, ամանի մը մէջ 8 հաւկիթները 500 կրամ չաքարով զարկ, մինչեւ որ խմորը լաւ թրծուի. աւելցուր 400 կրամ ընտիր ալիւր ու շուտով խառնէ նաեւ 200 կրամ հալած կարագ. յետոյ աւելցուր նարնջի քերթուած կեղեւ, ու բոլորը միասին թեթեւօրէն խառնէ, փուռը դիր եփէ:

ԲԱՆՔ ԻՄԱՍՏՆՈՅ

Ի՞նչ է գովեսն.

— Գովեսք գեղեցիկ ծաղիկ մ'է, որոյ քաղցրաբոյր խունկն հանելի է ամենուն:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ՍԵՆԵԱԿԻՆ ԳՈՐԳԵՐԸ

ՄԱՔՐԵԼՈՒ ԼԱԻ ԵՂԱՆԱԿ ՄԸ

Ա՛ռ եզան լեղի (էօս) մը և դիր 10 լիւրը ջուրի մէջ. մէկ քառորդ ժամու չափ լաւ մը խառնելէ դ վերջը, խոզանակով մը խառնուրդը սրակէ գորգին վրայ, այնպէս որ փրփուր մը երեւան ելնէ: Երկրորդ անգամ մաքուր ջրով եթէ խոզանակես՝ թէ փրփուրը կը վերջանայ և թէ աղտեղութիւնք բոլորովին կ'անհետանան: Գորգին գոյնը աւելի փայլեցնելու համար կրնաս նաեւ վերոյիշեալ խոռնուրդին մէջ դնել սօսա, պաղլեղ և ափ մը աղ:

ԽՍՐԴԱԽԵՍԱԼ ԿԱՄ ՎՆԱՍԱԿԱՐ

ԹԷՅԸ ՃԱՆՉՆԱԼ

Շատ դիւրին է թէյը խարդախել. մանաւանդ ձարտար ձեւքերու համար, որք Պէօ սը բրիւս և սիւլֆաք սը ռօ կոշուած նիւթերը կը խառնեն, և այս բաղադրութեամբ թէյն իր բնական գոյնը կ'առնէ: Սակայն այս բաղադրութիւնը ԽԻՍՏ ՎՆԱՍԱԿԱՐ է:

Ուստի, եթէ վստահութեան արժանի խանութէ մը չէք գնիր ձեռ թէյը, լուացէ՛ք զայն ջրոյ մէջ և բարակ լաթով մը քամեցէք. եթէ խարդախեալ է՝ բարակ փոշի մը կը գոյանայ:

ՎԱՐԴԵՆԵԱՅ ԳԵՂԵՅԿՈՒԹԻՒՆ ՏԱԼ

Եթէ ձխանի մրուրը (քուրում) գոց պարկի մը մէջ դրուած ջրով լեցուն աւազանի մը մէջ թողուք և այն ջրով վարդենինները ոռոգէք, վարդատունկերը կը զարգանան և վարդերը փայլուն գոյն մը կը ստանան:

ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏՂԱՅՔ ՊԵՏՔ ԶԷ ԼՍԵՆ ԱՄԷՆ ԲԱՆ

Բազում ընտանիքներու մէջ տղոց ներկայութեան տեղի կ'ունենան խօսակցութիւններ առանց վերապահութեան և զգուշութեան: Կար ժամանակ մը յորում տղայք դուրս կը հանուէին, երբ չափահասներ խօսակցիլ ուզէին տղոց ականջներուն անյարմար նիւթերու շուրջ: Այս մեթոտը այսօրուան համար յանձնարարելի չէ թէև, պէտք է սակայն ըսենք թէ հիները շատ աւելի իմաստուն էին բողբոսամար այժմու մայրերուն հետ, որոնք ամէն բան, յարմար թէ՛ անյարմար, կը խօսին տղայոց ներկայութեան՝ առանց մտածելու թէ այդու կը քոնդեն անոնց առողջ դաստիարակութեան հիմերը: Կա՛մ տղէտ են և կա՛մ անխոհեմ այն մայրերը որոնք կ'արդարացնեն իրենց այս վարմունքը՝ ըսելով.— «Տղան չի հասկնար տակաւին»:

Հարկ կա՛յ ըսելու թէ տղոց այս չի հասկնալը և կամ կէս-կատար հասկնալն է ամենէն վտանգաւորը: Տղայք յաճախ դժուարին կացութիւններու կը մատնեն իրենց մայրերը պարզ այն պատճառաւ որ տակաւին չեն հասկնար անոնց խօսած խօսքերուն իսկական իմաստն ու տարողութիւնը: Օրինակով մը բացատրենք միտքերնիս:

Մայր մը՝ օր մը իր բարեկամուհիներէն միոյն հետ իր դրացիին մասին խօսելու ստեն կ'ըսէ ի մէջ այլոց.— «Անոնք շա՛տ շա՛տ դրամ ունին, հապա թէ ոչ աղջիկնին ի՛նչպէս պիտի կարենար ամէն օր սինեմա երթալ և հագնիլ նոր նոր հագուստներ, այսքան դրամ կարելի չէ վատակիլ պատուաւոր կերպով»:

Այս բամբասող մօր հազիւ չորս տարեկան աղջնակը, որուն մեծ փափաքն էր ունենալ պուզրիկի

կտուք մը, օր մը ըսաւ բամբասող դրացուհիին.— «Մարիամ մօրաքո՛յր, չե՞ս ուզեր ինծի պուզրիկի կտուք մը գնել. իմ մայրիկս դրամ չունի, բայց դուն շա՛տ դրամ ունիս, քանի որ աղջիկդ ամէն օր սինեմա կ'երթայ և կը հագնի գեղեցիկ հագուստներ»:

— Այդ ո՛վ ըսաւ քեզի աղջիկս, կը հարցնէ դրացուհին:

— Մայրիկս կը պատմէր անցեալ օր Տիկ. Լուսիին: Դրացուհին հոսկցաւ ամենայն ինչ, հոսկցաւ թէ քամբասանքի նիւթ եղած էր ինք, իր աղջիկը և իրենց դրամը: Բարի դրացնութիւնը, աւելորդ է ըսել, ինչպէսզուր չքացաւ այդ օրէն սկսեալ:

Մայրե՛ր, ձեր զուտակներուն ներկայութեան մի խօսիք այն՝ ինչ որ պիտի չկարենայիք այլոց ներկայութեան խօսիլ առանց երկիւղի:

Բամբասանքը, որ դժբախտաբար տեսակ մը մոլութիւն եղած է կարգ մը կիներու մօտ, կը սորվին մարդիկ առաւելապէս իրենց մանկութեան շրջանին մէջ: Այլոց մասին աննպատակ կերպով արտայայտուելու տխուր ունակութիւնն օտար և ատելի բան մը պիտի նկատէին տղայք ընդմիջտ, և թէ ի մանկութենէ իրենց ծնողքներէն լսած և անոր վարժուած չըլլային անոնք: Այս անհերքելի իրողութիւնը պարտք կը դնէ մեր վրայ՝ որ մեր զուտակներուն ներկայութեան այլոց մասին խօսիք վերապահութեամբ և յարգանքով միայն:

Այս կապակցութեամբ պէտք է ըսել թէ տղոց ներկայութեան խօսելու չէ նաեւ ընտանեկան անհամաձայնութեանց, ինչպէս և հոգերու և կարօտութիւններու մասին: Տղայք՝ չափահասութեան շրջանին մէջ թեւակոխելէ վերջ՝ կրնան մասնակցիլ մեր խօսակցութիւններուն և յայտնել իրենց գաղափարները ընտանեկան հարցերու շուրջ, մանկութեան և պատանեկութեան շրջանին մէջ սակայն պէտք է անոնք հեռու պահուին այսօրինակ խօսակցութիւններէ:

ՏՆԱԿԱՆ ՀԻՒԱՆԳԱՊԱՅՈՒԹԻՒՆ

ՀԻՒԱՆԳԱՊԱՅՐ

Գ. ՔԱՂՅՐՈՒԹԻՒՆ.— Հիւանդապահի մը չորս յատկութիւններուն գեղեցկագոյնը կարելի է նկատել այս: Ինչ որ պէտք է ընել հիւանդին համար՝ քաղցրութեամբ և սիրով ըրէ: Յօդացաւի, կտորած անդամներուն կապերը փոխել պէտք է: Յաւ պատճառող պարտականութիւններ են ասոնք: Քաղցրութեամբ ըրէ: Անպէտ ցաւ մի՛ պատճառեր հիւանդին: Խնամով, զգուշութեամբ, մեղմով հնար է շատ ցաւեր ամօքել:

Դ. ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ.— Միշտ յիշէ այն մեծ տարբերութիւնը, որ քու և հոգածութեանդ, խնամքիդ յանձնուած անձին մէջ կը գտնուի: Յիշէ որ դուն իսկ քաջառողջ եղած ատենդ շատ անգամ կը յուզուիս, կը դրդուիս, կիրքի կ'ելլես և համբերութիւնդ կը կորսնցնես: Չե՞ն եղած օրեր երբ շատ դիւրագրգիռ եղած ես և դուն քու վրադ կը զարմանայիր: Ա՛լ կրնաս խորհիլ խեղճ հիւանդին վիճակը, որ գործունեայ կեանքէ մը բուռն կերպով կ'անջատուի և տառապագին կը նետուի անկողին, ուր մէկ դիրքի մէջ մնալ դատապարտուած և թերեւս բոլոր մարմնով ցաւի ենթարկուած է: Համբերութիւնդ ընա՛ւ մի կորսնցնէր, որքան ալ դրդուիս: համբերէ և շուտ պիտի վարձատրուի համբերութիւնդ հիւանդին ապաքինումովը:

Այս չորս յատկութեանց տէր հիւանդապահի մը արժանիքը ո՞վ կրնայ գնահատել: Քանի՛ թանկագին կեանքեր ստոյգ մահուանէ աղատուած են լաւ դարմանումով: Ընդհակառակն քանի՛ կեանքեր զոհուած

են և անհնար եղած է ոնոնց ապաքինումը լաւ հիւանդապահներու չգոյութեան պատճառաւ: Բժիշկները կը վկայեն թէ ո՞րքան յուսախար եղած են և վնասած՝ տեսնելով որ իրենց ջանքերը ի դերեւ ելած են հիւանդապահին ագիտութեան և յամառ անհնազանդութեան պատճառով: Բժիշկներ պիտի վկայեն նաև թէ համեստ, հաւատարիմ և խոհուն հիւանդապահին կը պարտին շատ ծանր հիւանդներու աղատումը, իրենց արուած պատուէրներն ու հրահանգները խղճմտօրէն գործադրելով:

Հիւանդապահները կը բաժնուին մէկէ աւելի դասակարգերու:—

Անհարակ հիւանդապահը: Ամէն մարդ հիւանդապահութեան յարմար չէ: Բնական ձիրք և աստուածային տուրք է հիւանդ խնամելու յարմարութիւնը թէ՛ այրերու և թէ՛ կիներու համար երաժշտութեան, նկարչութեան, եւայլն, նման: Կան շատ բարեմիտ անձեր, որոնք, սակայն, անխորհուրդ և անճարակ են, և եթէ ցիւանս կրթուին և դաստիարակուին, նորէն կարող չեն հիւանդապահ ըլլալ: Գաղիական տուած մը կ'ըսէ. «Մարդոցմէ ոմանց տասը մասերն ալ բթամատ են»: Ըսել կ'ուզէ անճարակ մարդիկ, որոնք մէկ սխալէն միւսը կ'իյնան: Չորօրինակ, հիւանդապահը երկու ձեռքերն ալ բեռնուորած սանդուխէն վեր կ'ելլէ: Յանկարծ հոնդերձին քղանցքին վրայ կոխելով ձեռքին մէջ գտնուած բաները մեծ շառաչիւնով կ'իյնան և ինք թաւալբոյր վար կը գլտորի: Հացը սոխ կարած դանակով կը կտրէ, հիւանդին պառկած սենեակը կերակուրի հոտ կը տանի, հիւանդը երբ ջուր կ'ուզէ գաւաթը մինչեւ բերանը կը լեցնէ, նստելու ի վիճակի եղող հիւանդին ծունդերուն վրայ կը դնէ կերակուրի ափսէն և յետոյ կը նստեցնէ զայն և, եթէ կերակուրը չի թափի բախ-

տաւոր է հիւանդը: Ասոնք և ասոնց նման կարգ մը քաներ յուզման կ'ենթարկեն հիւանդին սիրաը, կը բարկացնեն զայն և ապաքինումը կը յետաձգեն: Յիրաւի վատ անձեր չեն ասոնք, բայց վատ հիւանդագահներ են անտարակոյս և ուտոի արժանի անճարակ կոչուելու:

Բժախնդիք հիւանդապահը շատ բարեսիրտ և գլխած անձ մը կրնայ ըլլալ: Սա այնքան կը փափաքի հիւանդին օգտակար ըլլալ, որ չտիէն անդին կ'անցնի: Ամէն վայրկեան ներս ու դուրս կը վազէ, կը յոգնեցնէ իր հիւանդը շարունակ հարցնելով թէ ուտելիք չուզե՞ր որ պատրաստ է բերելու եթէ մղոններ իսկ ճամբորդել հարկ ըլլայ: Կը վերցնէ հիւանդը, անկողինը միշտ կը շակտտէ, վարագոյրը մերթ կը բանայ մերթ կը գոցէ: Կարճ խօսքով, սա անսակ մէկն է որ ընաւ հանդարտ չկրնար նստիլ և համբերութեամբ սպասել, այլ շարունակ կը շարժի: Այս ամէնը իր բարեսրտութեան արդիւնքն է թէեւ, բայց հիւանդին շատ նեղութիւն կը պատճառէ:

Ապա ունինք անհոգ շլիսի հիւանդապահը: Կարելի չէ վտանգ ըլլալ որ իր հիւանդը պէտք եղած քանակութեամբ դեղը ստացած է: Երբ միտքը իյնայ կուտայ դեղը, իսկ երբ մոռցած ըլլայ, յաջորդ ժամուն երկու անգամուանը մէկէն կուտայ: Մաքուր գաւաթ մը չի գտնուիր երբ պէտք ըլլայ: Կերակուրը կը տանի հիւանդին և երբ չուտէ, ժամերով հոն կը մնայ: Անկողնին մէջ փշրանքներ լեցուն են, անսակ որ խեղճ հիւանդը աւագի վրայ պառկած կը կարծէ: Անօթները անկողնին տակ դրուած են և սենեակը զարշահոտութեամբ կը լեցնեն: Հացի և միսի կտորներ գետինը ձգուած են: Ասոր հետեւանքով մուկերը ուզատ անցուղարձ կ'ընեն սենեակին մէջ:

(Շար.)

ՄԱՐԶԱՆՔ ԵՒ ՍԲՈՐ ՇՆՉԱՌՈՒԹԵԱՆ ՄԱՐԶՈՒՄԸ ՇՆՉԱՌՈՒԹԵԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Կարելի է տոկուն ըլլալ քիչ չափով ներշնչումի մէջ ալ, և սա աւելի կ'արժէ քան անտոկուն շնչառութիւնը՝ մեծ ներշնչումի չափով, որ սակայն իւրաքանչիւր չափումի տակն կը նուազի:

Առանց բժշկական մասնագիտութեան մէջ մաներու՝ կարելի է մատնացոյց ընել թէ ի՞նչ առաջնակարգ կարեւորութիւն ունի մարզանք ընողի մը համար հասկնալը թէ մարզական զարգացումը շնչառութեան զարգացման հետ է որ կ'ընթանայ, իսկ շնչառութեան զարգացումն ալ միայն կանոնաւորուած մեքենայով մը կարելի է:

Չստուգուած ինքնաշարժի մը արագաշարժութիւնը պիտի հարցնէի՞ք, կամ անկանոն շարժող ոտքեր ունեցող հեծելանիւով մը մրցումի պիտի ելնէի՞ք: Նոյն կերպով ալ պէտք է ըմբռնել որ վտանգաւոր է միջոտային զարգացումի ձգտիլ՝ թերի կերպով պաշտօնավարող թոքով մը: Ասիկա կը նշանակէ մարզկային մեքենային տարբեր բաժանմունքներուն մէջ — ընդհանուր և տեղական ծառայութիւններուն մէջ — ստեղծել անհամաձայնութիւն մը, որուն հետեւանքը անմիջապէս պիտի զգացուի: Շնչասպառութիւնը, յետոյ թոքային չարշարանք և խոնջէնք: Երիտասարդ մարզիկներու կրծախտէ և ամրացած մարզիկներու ազդախտի (կրիթ) ընթացքին սրտային թալկացումէ մասնը՝ արամաբանական վտանգան է մարզանքի մը՝ որուն մէջ թոքային մեքենականութիւնը զանց եղած է:

ՇՆՉԱՌՈՒԿԱՆ ՄԱՐԶԱՆՔ

Շնչառական մարզանքը կ'արագանայ է և ոչ նեղացուցիչ, որով զայն կարելի է օգտագործել:

76 48-56



Նախքան մարդանքը անհրաժեշտ է բժշկական զննութիւնը, որ երկու մասէ կը բաղկանայ, առաջինը անգամազննական և երկրորդը կազմախօսական: Անգամազննականը կը պարունակէ ենթակային ազդեթափութեան, խոշոր երակայտուց (վարիս) ունենալու, չափազանց աղիւնաշատութեան նման պարազաները, բայց ստոնց կարգին անհրաժեշտ է նաեւ ճշգրէլ մէզին մէջ բնասպիտի (ալպիւմին) և շաքարի բացակայութիւնը, որովայնի զննութիւնը, ինչպէս նաեւ քիթի և խոչարիողին մէջ շնչառութեան արգելքի գոյութիւնը:

Եթէ ենթական շնչառութեան ազատ ճամբաներ ունի, կրնայ օգտակարապէս շնչել սորվիլ: Արդ, երբ շնչառական կրթութիւնը, նախապէս այնքան արդիւնաշատ, յաճախ երկար ու դժուար է նորարոյժներու համար, կողախիթի ստան, արագ աճուճներու մէջ և ամէն անգամ որ թոքախտի վտանգ կը մօտենայ, տարրական է երբ բժշկականօրէն առաջնորդուած է, առողջ անհատներու համար, որոնք կը ցանկան մարդական փորձեր կատարել: Քանի մը ընդմիջեալ նիստ, չաբաթը երկու երեք անգամ, առաւելագոյն եռամսեայի մը ընթացքին, ամսական նիստ մը կրկնութեան և պահպանութեան համար, աճա ինչ որ բանաւոր է պահանջել:

Ի՞նչ պիտի ըլլայ ուրեմն շնչառական մարդանքի նիստ մը: Ան պիտի ըլլայ շուրջ երկու հարիւր շնչառութեան կատարում՝ բաղկացած տասնէն քսան վարժութիւններէ: Ասոնք շուէտական մարդանքի նման են: Բայց մինչ շուէտական դրութեան մէջ շարժումը էական և շնչառութիւնը յարակից է, կենսաբանական շնչառական վարժութիւններու մէջ՝ շարժումը յարակից է և էականն է շնչառութիւնը:



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԿԱՐՄԻՐ ՀԱԿԻԹ (*)

(Յաւելուած)

Ըսինք թէ կարմիր ներկը իր սկզբնական գոյութիւնն ունեցած է Արեւելքի մէջ:

Աւելի որոշ ըլլալու համար պէտք է ըսենք թէ կարմիր ներկին հայրենիքը Արարատայ գաւառն է, ուր կը գտնուի Որդան-կարմիր անուն բերքը, որմէ կ'արտադրուի կարմիր ներկը:

Բաց աստի, կարելի է վստահութեամբ ըսել թէ չկայ ազգ մը որ կարմիրին այնքան սիրահար եղած ըլլայ որքան հայ ազգը: Հայերը արեւն ու լուսինը կը պաշտէին վասնզի կարմիր էին, նոյնիսկ Քրիստոսն էր իրենց մէջ սովոր են իրենց բոլոր նուիրական բաները կարմրով ներկել: Հապա ս'ըր թողունք այն մեծարելի հագուստը, այսինքն ծիրանին՝ որ հայոց ազգին ընտրելագոյն գասակարգը կը գործածէր՝ նուիրական օրերու մէջ:

Գանք այն աւանդութեան թէ ի՞նչպէս հաւկիթ ներկելու սովորութիւնը մուտ գտած է հայոց մէջ: Հայերն ալ ունեցած են իրենց եզովբոսն, որ ծանօթ է խիկար անունով:

Արարատայ կուսակալը 3000 տարի առաջ բոլոր մոգերը և խմատուները կը հաւաքէ և պատասխան

(*) Մեր ընթերցողներէն ոմանք — հետաքրքրուած այս բաժնին մէջ յայտնուած այն կարծիքով քե հաւկիթ ներկելու սովորութիւնը հայ ազգին գիւտն է — կը խնդրեն որ մանրամասն ծանօթութիւններ տանք այդ մասին:

Դժուարինս չէ խնդրուածը բարեբախտաբար:

կ'ուզէ թէ՛ հա՞ւն է հաւկիթէն թէ հաւկիթն է հաւ-
ւէն: Մոգերն ու իմաստունները կը շուարին, չեն
կրնար պատասխանել և կը սպաննուին մէկիկ մէկիկ:

— Տէր իմ, կ'ըսէ օր մը փոխանորդը, այս բոլոր
իմաստուններն ու մոգերը ջարդելու վրայ էք չնչին
խնդրոյ մը պատճառաւ: միթէ դուք տգէտներու և
ապուշներու վրա՞յ պիտի իշխէք:

Կուսակալը — Դուք ալ պէտք է ձեր այդ հար-
ցումին համար սպաննուիք, քանի որ չէք գիտեր թէ
հա՞ւն է հաւկիթէն թէ հաւկիթը հաւէն:

Այս միջոցին Խիկար հոն կը հասնի և իբր իմաս-
տուն կը բռնուի, կը տարուի կուսակալին առջեւ և
պատասխան կը պահանջուի: Խիկարի հոգը չէր, վա-
սնդի գիտէր թէ կուսակալը գեղեցիկ գոյնին այսին-
քըն կարմիրին սիրահարն էր, ուստի գրպանէն կար-
միր հաւկիթ մը հանելով կը պատասխանէ. «Տէր իմ,
հրաման ըրէ որ ամէն տեղ Արամազդայ Վարդավառի
տօնին օրը բոլոր կուռքերուն ականջներէն կախուին
այսպէս Որդան-կարմիրով ներկուած հաւկիթներ,
իբրև օղ, որոնցմէ պիտի ծնի հրեղէն կոյս աղջիկ մը,
բաւական է որ այդ կուռքերուն առջեւ երկրպագու
արդար մը գանուի»: Կուսակալը իսկոյն հրաման կ'ընէ
որ Արամազդայ Վարդավառ տօնին օրը կարմիր հաւ-
կիթներ կախուին կուռքերուն ականջէն, բայց որով-
հետեւ արդար մարդիկ չկային որպէսզի հուրիներ
դուրս ելնէին, ուստի հաւկիթներն տօնին յաջորդ
օրը քուրմերուն փորիկը կ'երթային, գուցէ հոն ծնե-
լու համար հաւը կամ հուրին, եթէ ստոյգ է Խիկա-
րայ այս աւանդական վէպը:

Կ'երեւի թէ ինչպէս ամէն սովորութիւն պատճա-
ռի մը արդիւնք է՝ հաւկիթ ներկելու սովորութիւնն
ալ այն կուսակալին խենթութենէն յառաջ եկած ըլ-
լայ և յետոյ ընդհանրացած ըլլայ բոլոր աշխարհ:

ՋՈՒԱՐԹ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

ՀԱՒԱՏԱՐԻՄ ՊԱՇՏՕՆԵՍԱՅ ՄԸ

— Այո՛, կրնամ քեզի գործ մը տալ խանութիս
մէջ, եթէ խոտոտնաս սրեւէ բան չառնել մէջէն:

— Այդ մասին կրնաք վստահ ըլլալ: Տանեւէինք
տարի բազնիքի մը անօրէնութիւնն ըրի ու լոգանք
մը անգամ չառի:

Ի ՄՈՒՆԵՏԻԿՈՒԹԵՆԷ Ի ՎԱՐԺԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Չուարձախօս մուսնետիկ մը լրագրաց ծանուցում-
ներու սիւնակին մէջ «այսինչ գիւղի վարժարանին
համար կառավարիչ մը կը փնտռուի դոհացուցիչ ամ-
ասկանաւ» խօսքերը կարգալուծն պէս՝ կարծելով թէ
ըստ նախնի դրութեան գիւրաւ պաշտօնի պիտի անց-
նի՝ շունչը ուղղակի նոյն գիւղին թաղական խորհր-
դարանը կ'առնէ և ինքզինքը կառավարչութեան ընտ-
րելի կ'առաջարկէ:

Հոգաբարձու մը ըստ օրինի կը սկսի զինքը հար-
ցաքննել.

- Քերականութիւն գիտե՞ք.
- Ըստ բուսականին.
- Ընտանիք բառը ի՞նչ մասունք բանի է.
- Չայնարկութիւն.
- Ինչէ՞ն.
- Ձի երբ գիշեր մը դատարկ ձեռքով տուն եր-
թանք, մեծ ու պղտիկ կը սկսին ձայնարկել:
- Վարժապետն ի՞նչ մասունք բանի է.
- Առաջ գոյական էր, բայց ետքը հարկեցուցիչ
պատճառներ դայն ածականի վերածեցին.
- Ատանկ բան կ'ըլլա՞յ.
- Ինչո՞ւ չըլլար, ամպագլուխը օր մը անցնելէ
ետքը ամօական չ'առնող վարժապետը մինչևև լոյս
հաւկիթ կ'ածէ:

- Դուք ի՞նչ պաշտօն կրնաք վարել՞
- Կառավարչութիւն.
- Ըմբոստ դանուռղ աշակերտը ի՞նչ դրութեամբ պիտի դգաստացնէք.
- Հրելով ու մշտելով, երբեմն կամոտելով և հայհոյելով, քանի որ հիմա ծեծը վերցած է:
- Օ՛, այդ չեղաւ. ատոնք բարբարոսութեան դարէն մնացած են.
- Աշակերտներո ալ քաղաքավարեալ դուակներ չեն ա՛:
- Հոգաբարձուն ընկերացը հետ ակնորկ մը փոխանակելէ ետքը.
- Վկայական ունի՞ք, որմէ կրնանք հասկնալ ձեր վիճակը...
- Իմ վիճակիս վկան ես եմ, ուրիշին հարցնելու ի՞նչ հարկ կայ:
- Բայց բարեկամ, դուք մեր ըսածը չէք հասկընար. ըստ արդի դրութեան պարտիք ի ձեռին ունենալ...
- Ես ձեզի բան մը ըսե՞մ տեսրք, քանի որ ձեւերը հիմա փոխուեր են, իմ գործիս ամենեւին չի պիտի գայ այս պաշտօնը, զի տակաւին գործի չի սկսած որ այսքան քրանեցայ, պաշտօնի գլուխ անցնելէս ետքը արդեօք որչա՛փ պիտի քրանիմ, նամանաւանդ ամսադրուիներուն. ուստի ծառայ եմ:» Եւ մեկնեցաւ:

ԹՈՒՍԲԱՆԱԿԱՆ ՀԱՇԻԻ

- Թուարան մը իր աշակերտացը.
- Պարոններ, ձեզմէ ութը հոգիին եթէ 48 խընձոր, 32 տանձ, 64 սալոր և 76 շաքանակ բաժնեմ, իւրաքանչիւրիդ ի՞նչ տուած կ'ըլլամ.
- Փորի ցաւ, կը պատասխանէ կայտաւ աշակերտ մը:

**Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն
Լ Ա Տ Ի**

Մանիշակ ծուկն չոքելով ծերուկ կնկանը մօտեցաւ և ականջն ի վտր ըստւ.

- Լատիին խօսեցեալն եմ. մա՛յր:
- Լատիին խօսեցեալը: Իրաւ, ամուսնանալիք տարիքը եկած է. բնաւ միտքէս չէր անցներ: Լատիս լաւ զաւակ մը եղած է, այնպէս պիտի ըլլայ անշուշտ նաեւ իր կնոջը հանդէպ: Դուն ալ լաւ կին մը կ'ըլլաս անոր անտարակոյտ. սիրելի աղջի՛կս, այնպէս չէ՞: Աստուած օրհնէ զձեզ:

Լատի հասկցաւ թէ կը փափաքէր իր ու Մանիշակին ձեռքերը իրեններուն մէջ առնել. ուստի կատարեց անոր կամքը: Երկու առոյգ, բարսխօսն ձեռքեր, կեանքով և սուղջութեամբ լի, դրուեցան անոր կտրծրացած ու խորշամած ձեռքին մէջ, որ հետըզհետէ կը պողէր և սեծաթափ կ'ըլլար, քանի մահը կը մօտենար:

— Ապրի՛ք, զուակնե՛րս, ստկայն ինքզինքս քիչ մը յոգնած կ'զգամ այս պահուս:

Յետոյ դարձեալ մրափի մը մէջ ինկաւ. մինչ երկուքնին քով քովի նստած էին մութ, հանդարտ սենեակին մէջ, ա՛լ աւելի մօտ զգալով ինքզինքնին իրարու, Մանուան Հրեշտակին ներկայութեանը՝ որ այնքան մօտ կը գտնուէր ծերուկ մայրիկին այդ պահուն:

Հեծեծանք մը արձակեց ան, յետոյ քիչ ետքը ա՛լ աւելի երկար հառաչանք մը:

Միջոց մը անշարժ մնաց զեռտտի ամուր, յետոյ Լատի անոր անկողնին վրայ նետուելով կծու ձայնով մը ըստւ.



— Ո՛հ, մա՛յրս, ըսէ՛ թէ ներեցիր ինձի:

Ինչ պէտք կար բռռերով արտայայտելու: Միթէ չէ՞ր գիտեր թէ ներած էր ան իրեն:

Ուշագրուծիւն ըրա՞ծ էք երբեք թէ երբ վարժունքին կուգայ տղաք կանչել պտակեցնելու համար, անոնք խողերնին կը ձգեն իսկոյն, առանց ակնարկ մը դարձնելու այն առարկաներուն վրայ որոնցմով այնքան կը շահագրգռուէին վայրկեան մը առաջ, յոգնած և անկարող նոյն իսկ գիշեր բարի ըսելու կամ յաջորդ օրուան հաճոյքներուն վրայ խօսելու: Ծիշդ միեւնոյն բանն է մեզի համար ալ. երբ Մա՛ր կանչէ զմեզ, քիչ մը յոգնած ենք և գո՛հ մեկնելու համարու ա այնքան քեատ՝ որ կարող չենք բան մը խորհելու կամ հրաժեշտ արձնելու:

.

Սընիպրուքի գերեզմանատան մէջ իր ամուսնին քով թողեցին զայն, ու գիւղին բնակիչները շատ տարիներ յետոյ անոր յուղարկաւորութեան հանդէսին խօսքը կ'ընէին. թէ ինչպէս Տր. Քարդըր, ան զոր Լատի կը կոչէին, ներկայ եղեր էր աղուօրիկ դեռատի աղջկան մը հետ որուն ամուսինը պիտի ըլլար մօտ ատենէն: Որքա՛ն պիտի հպարտանար խեղճ մայրը եթէ կարենար տեսնել զանոնք: Մական ինք աւելի հանգիստ էր հիմա իր եղած տեղը, հոն ուր ոչ սիրտ-հասնում կայ, ոչ ալ պերճանք: (*)



(*) Հոս կը վերջանայ Լատիի պատմութիւնը: Այսուհետեւ մեր ընթերցողներուն պիտի հրահանգեմ կարն ալ խիստ հետաքրքրական եւ հրահանգիչ պատմութիւններ:

ՈՒՂԵՑՈՅՑ ԿԵՆՑԱՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Մ Ի ...

Է.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՅ ՄԷՋ

ՏՂԱՅՈՅ ՀԱՄԱՐ.— Մի՛ խորհիր թէ քաղաքավարութիւն և փափկանկատութիւն նշանակ են մեղկութեան: Կարելի է ըլլալ քաղաքավար և փափկանկատ և միաժամանակ քաջ և համարձակ:

Մի՛ մոռնար բարեւել ընտանիքիդ բոլոր անդամները ամէն առաւօտ, ինչպէս նաեւ ըսել անոնց գիտեր-բարի, անկողին մտնելէ առաջ: Խիստ հաճելի է լսել գիտեր-բարի և բարի-լոյս բռռերը. տղայք պէտք չէ զանց առնեն զանոնք:

Մի՛ մնար նստած երբ գտնուած սենեակդ հիւր մը մտնէ յանկարծ: Պատկանած ընտանիքիդ մասին աննպաստ վկայութիւն մը տուած կ'ըլլաս այդու:

Մի՛ լինիր միջամուխ մեծերու խօսակցութեանց մէջ:

Մի՛ սուրբ մեծերու ներկայութեան, և ոչ ալ թմրկահարէ աթոռի մը կամ սեղանի մը վրայ:

Մի՛ պուար, երբ բան մը ըսել կամ հասկցնել կ'ուզես:

Մի՛ մոռնար այս գիրքին առաջին դիտուն մէջ տրուած պատուէրները սեղանի սովորութեանց մասին:

Մի՛ կռուիր եղբայրներուդ և քոյրերուդ հետ: Կռուասէր տղայք յաճախ կը վրդովեն ընտանեկան միջոյրտը իրենց յուր ընթացքով: Մանչ մը պէտք է քաղաքավարութեամբ և փափկութեամբ վարուի իր քրոջ հետ. կին մըն է նա և ուստի ուրիշ բոլոր կիներու նման արժանի այր մարդու յորգանքին: Աղ-

ջիկ մըն ալ՝ իր եղբոր հետ վարուելու ատեն չպէտք է զանց առնէ քաղաքավարական այն նուրբ ձեւերը զորս հարկ անհրաժեշտ կը նկատէ ուրիշ այր մարդոց հետ ունեցած տեսակցութեանց մէջ: Քաղաքավարական օրէնքներ ուրիշ ոչ մէկ անզայնքան յանկուցիչ կ'երեւին որքան ընտանեկան յարկէն ներս:

Մի՛ ստեր. եղի՛ր միշտ քաջ, պարկեշտ և անկեղծ:

Մի՛ թերանար ինքզինքդ մաքուր և կոկիկ պահելու մէջ: Մաքրասէր աղայք ընտանիքի մը փառքըն ու պարծանքը կը կազմեն:

Մի՛ վարուիր ամբարտաւանութեամբ ընտանիքին ծառաներուն հետ և ոչ ալ հրամայէ անոնց կոշտութեամբ: Յօռի դաստիարակութեան նշան է այդ:

Մի՛ լինիր անձնասէր. քաղաքավարութիւնը հիմնուած է այլոց հանդէպ ունեցած մեր փափուկ զգացումներուն վրայ: Ստուգիւ, ճշմարտապէս քաղաքավար այն մարդն է միայն որ իր հանգիստէն աւելի այլոց հանգիստին մասին կը խորհի:

Մի՛ նստիր ծալապատիկ և ոչ ալ մէկ ոտքդ միւսին վրայ նետած: Բարեկրթութեան հակառակ են այս բաները:

Մի՛ մոռնար չնորհակալութիւն յայտնել երբ բարիք մը կամ ծառայութիւն մը կ'ընդունիս:

Մի՛ լինիր նախանձոտ և բարկացոտ. բարոյական այս երկու ախտերը յաճախ կը խանգարեն ընտանեկան կեանքի ներդաշնակութիւնը:

Մի՛ թերանար հնազանդութեան մէջ՝ հանդէպ ծնողացդ, յարգանքի մէջ՝ հանդէպ մեծերուդ, փափուկանկատութեան մէջ՝ հանդէպ այլոց փափաքներուն և զգացումներուն, ինչպէս եւ պահպանութեան մէջ այն բոլոր կանոններուն որոնց անհրաժեշտօրէն պէտք ունիս բարեկիրթ մարդ մը դառնալու համար:

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Ա.

1. Ամէն ինչ իր վերջն ունի — դա կեանքի ամենամեծ արժանիքն է:

2. Ամէն չարութեանց արմատը արծաթասիրութիւնն է:

3. Այն որ որդւոյն արհեստ չի սորվեցներ՝ զանի գողութեան կը պատրաստէ:

4. Անիրաւը միշտ աւելի բարձր կ'ազաղակէ, քան իրաւունք ունեցողը:

5. Անկարելի է ստրկացնել մի ազգ, որ հաստատ կամք ունի ազատ լինելու:

6. Աչխատէ բարեկամդ մաքուր ձեռքով ցելսէն դուրս հանել:

7. Ամուսնութիւնը ե՞րբ երջանկաւէտ կրնար ըլլալ... երբոր էրիկը խուլ և կինը կոյր ըլլար:

8. Ապրէ քեզ համար, բայց դործէ բոլորին համար:

9. Առաքինի լինելու ցանկութիւնը, առաքինութեան կէսն է:

10. Ատելութիւնը թէ՛ անձանց վրայ ի մասնաւորի և թէ՛ դասուց վրայ ըլլայ՝ միշտ մտքի հիւանդութիւն մ'է և ոչ այլ ինչ:

Բ.

1. Բաժանուածը կը սպաննէ այն սէրը, որ արդէն թոյլ է:

2. Բաղդաւոր լինելու համար՝ պէտք է բարի լինել:

3. Բարիք ըրէ բարեկամիդ՝ աւելի պիտի սիրէ քեզ, բարիք ըրէ թշնամիիդ՝ բարեկամդ պիտի ըլլայ:
4. Բազմաթիւ բարեկամներ ունենալէ աւելի աղէկ է մէկ հոտ ունենալ, բայց ճշմարիտ և մտերիմ:
5. Բազդը միայն անոնց կը ժպտի, որոնք կ'օգնեն իրենք իրենց:
6. Բազդի ժպտին մի՛ հաւատար, նա խարուսիկ է և վտանգաւոր:
7. Բարի մարդիկ կը մեռնին, սակայն իրենց գործերը անմահ են:
8. Բարկանալը մարդկային գործ է, բայց ո՛ր պահելը սոտանայի:
9. Բարի արհեստը ոսկի և անգին քար կ'արծէ:
10. Բարութիւնը մեր կեանքի յաւիտենական և բարձրագոյն նպատակն է:

Գ.

1. Գողը ամէն այցելու ստտիլու՝ կը կարծէ:
2. Գիշերն մութ չէ բարիին, ցերեկն ալ լոյս չէ չարին:
3. Գիտնականը կ'աշխատի թագցնել իր գիտութիւնը, իսկ յիմարը կը պործնեայ անով:
4. Գիտուն ըլլալու ամենէն պարկեշտ և ուղիղ ճամբան իր ագիտութիւնը ճանչնալն է:
5. Գեղեցիկ ու ազեղ կնկան միջեւ տարբերութիւնը քանի մը տարի է միայն:
6. Գործօն կամքն է, որ կարող է ծնել յուսոյ կատարելութիւն:
7. Գովեստը շատ հեռու կը փախչի իրեն արժանի եղողներէն:
8. Գիրքը կարող է բռնել ընկերի աւղը:
9. Գիտութեան համար նոր գիրքերը նախադաս են, գրականութեան համար՝ հիները:
10. Գիտութեանէն յետոյ՝ կը սկսի հաւատը:

ԴԵՌԱՅԱՍՆԵՐՈՒՆ ՈՍԿԵՂԷՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ՆԱԽ ԽՈՐՀԻ՛ ԱՊԱ ԳՈՐԾԵԼ

Թաթարիտանի իմաստուններէն մէկը փողոցներէն և շուկաներէն անցնելով բարձր ձայնով կ'ըսէր — «Ո՛վ որ 100 ոսկի տայ ինձ՝ անոր շատ թանկագին խրատ մը պիտի տամ»: Թագաւորը երբ լսեց իմաստունին այս խօսքը, հրամայեց իր գանձագետին որ 100 ոսկին վճարէ և յետոյ խնդրեց անկէ որ իր թանկագին խրատը տայ: Իմաստունը ըսաւ — «ՆԱԽ ԽՈՐՀԷ՛ ԱՊԱ ԳՈՐԾԵ՛»: Պալատականները խնդացին իմաստունին այս խօսքին վրայ և ըսին թէ ան 100 ոսկի չէր արժեր: Սակայն թագաւորը շատ գոհ մընաց անոր տուած խրատէն և այդ խօսքը գրել յուսու իր սենեակին պատերուն և իր գործածած բոլոր անական առարկաներուն վրայ:

Քիչ վերջ թագաւորին պալատականներէն մէկը գաւաճանութեամբ ուղեց սպաննել զնա, գահ բարձրանալու համար: Ուստի, կանչեց թագաւորին վիրաբոյժը և անոր մեծ գուճար մը տալով և բարձր պաշտօն խոստանալով համոզեց որ թագաւորէն արիւն առած միջոցին թունալի նժգրակով մը զայն մահաւցնէ՝ արեան մէջ թոյն խառնելով: Հին ատեններ մարդիկ արիւն առնելու սովորութիւն ունէին իրենց առողջութեան համար: Երբ թագաւորը կանչեց իր վիրաբոյժը, սա մտադրեց իր չար նպատակը գործադրել. իր ձեռքին մէջ ունէր թունալի գործիքը, այն բոպէին երբ ինք պիտի թունաւորէր իր աչքը իր աչքերուն հանդիպեցաւ պատին վրայ գրուած իմաստունին խրատը — «Նախ խորհէ՛ ապա գործէ», ու վիրաբոյժը սկսաւ խորհիլ. «եթէ ես թոյն ներարկեմ

Թագաւորին արեան մէջ ինք պիտի մեռնի, սակայն իր յանկարծական մահը կատկած պիտի յարուցանէ, ուստի բժշկական քննութեան պիտի ենթարկուի որով պիտի ապացուցուի իր թունաւորուած ըլլալը: Եւ այն ատեն բնականաբար պիտի գիտնան թէ ես ըրած եմ, և ինչ պիտի ըլլայ իմ վերջս... կախողան»:

Այս բուսական խորհրդածութեան տակ վիրաբոյժին գոյնը նետեց, ձեռքերը սկսան դողդղալ և չի համարձակեցաւ թունաւորել իր տէրը: Սակայն թագաւորը տեսնելով վիրաբոյժին շուարուածը և ձեռքերուն դողդղալը, հարցուց պատճառը և խեղճ մարդը անոր օտքերը ինչալով խոստուանեցաւ ամէն բան ու ներողութիւն խնդրեց: Թագաւորը բնականաբար ներեց վիրաբոյժին, սակայն փութով ձերբակալել տալով գաւաճան պաշտօնեան կախողան բարձրացուց: Իմաստունին խրատը թագաւորին կեանքը փրկեց:

Սիրելի ընթերցող, սկեղէն կանոններէդ մէկն ալ այս թող ըլլայ: «ՆԱԽ ԽՈՐՀԻՂ՝ ԱՊԱ ԳՈՐԾԵՆ»:

ԱՌԱԾՔ ՀԱՅԿԱԿԱՆ

Հաչան շունը չի խածներ,
Քար մի նետեր գուր տեղը.
Չար լեզուն քեզ չի կծեր,
Սիրտ մի մաշեր գուր տեղը:

* * * Չեոբը՝ ձեոբ է,
Բուռնցքն է որ ուժեղ է,
Հայր՝ Հայ է,
Միաբան Հայն ուժեղ է:

* * * Որ տեղից որ հաց ես կերել,
Այն տեղը քար չը ձգես.
Որ տեղից որ ջուր ես խմել,
Այն տեղը վայր չի թգես:

**ՏԱՆՏԻԿՆՈՋ ԲԱՐԵԿԱՄԸ
ԽՈՂԱՆՈՑԷՆ ՆԵՐՍ**

ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

1. ԵԶԱՆ ՄՍԷ ԳԸԶԱՐԹՄԱ ԱԼԱ ՄՕՏ (Boesj à la mode).— Պուտի կողմէն երկու բաթլը միս առնել, վրան տեղ տեղ ձեղքեր բանալ դանակով. այդ ձեղքերուն մէջ տեղաւորել դմակի պղտիկ կտորներ և այնուհետեւ դնել սանի մը մէջ և կարմրցնել մի քիչ կարագ իւզով և կամ դմակախառն իւզով: Միւր բաւականաչափ կարմրելէ յետոյ աւելցնել վրան երկու գաւաթ ջուր, մէկ գաւաթ ձերմակ գինի և մէկ ապուրի դգալ օղի. աղին և պղպղին հետ միասին դնել մի քիչ չջարդուած մայտանոս, մի քանի հատ թէֆնէի տերեւ և մի քանի հատ ալ գարանֆիլ, ջարդուած ստեպլին մը, տասը հատի չափ սոխ և թեթեկրակի մը վրայ թողուլ հինգ ժամ: Յետոյ հանել մէջէն մայտանոսը և թէֆնէի տերեւները, առնել աւելորդ իւզը և ճաշակել համով հասով:

Այս կերակուրը եւս աւաւել համեղ ընելու համար սանին բերանը միշտ գոց պահելու է եփելու ստեն:

2. ԻՏԱԼԱԿԱՆ ՄԱՔԱՐՈՆԻ.— 500 տրամ ջուրի մէջ 70 տրամ մաքարոնին խաշեցէք 20 վայրկեանի չափ. լաւ մը քամելով լեցուցէք սանին մէջ և 70 տրամ միսի ջուրով եփեցէք մինչև որ ջուրը քաշէ: 20ական տրամ բարմէճան և կրավիէր պանիրի սաշուկ առէք, կէտը լեցուցէք մաքարոնիին վրայ ու սանը թօթուելով խառնեցէք, միւս մասը կարագով խառնելով դարձեալ լեցուցէք մաքարոնիին վրայ ու թօթուեցէք. եթէ պանիրը մաքարոնիին սաքութե-

նէն հարած չէ, երկու ապուրի դգալ միսի կամ պորզ ջուր դնելով եփ մը բերէք:

3. **ԽԸՅՄԱԼԸ ՄՍԻՍՐՈՆԻ.**— Մաքարոնին խաշելով քամեցէք. իւզով կարմրցուցէք տապակին մէջ, նոյնպէս մեքենայէ քաշուած միսն ալ խորովեցէք աղ ու պղպեղ դնելով. ապա ափսէին մէջ կարգ մը մաքարոնի կարգ մը միս շարելով. գոցեցէք բերանը և դրէք թեթեւ կրակի վրայ:

ԽՄՈՐԵՂԷՆ - ԱՆՈՒՇԵՂԷՆՆԵՐ

1.— **ՄԵՒՍԻՒՅԵԱՆ ԿԱԹՕ.**— Մանրէ 200 կրամ բինեօն ա՛հսքաներ ու պտուկի մը մէջ դիր. 125 կրամ փոշի շաքար խառնէ ու քիչ ծեծուած 8 հաւկիթի ձերմակ և կէս գաւաթ ուտ: Տերեւախմորով շրջանակ մը շինէ ու հոն լեցուր վերինը ու մեղմ ջերմութիւնով փուռը եփէ և փոշի շաքար ծեփելով փուռը չորցուր:

2.— **ԿԱԹՕ ՄՕՆԹԷ ՔՐԻՍԹՕ.**— Մազուած 120 կրամ շաքարը 3 հաւկիթի դեղնուցով ծեծէ ու պտուկի մը մէջ դիր. առանց ծեծելու աւելցուր ձերմկուցը, 130 կրամ ալիւր, 120 կրամ հարած կարագ և 45 կրամ խիստ նուրբ կոօրտած՝ անանաս: Այս բոլորը իրարու հետ լաւ մը խառնէ ու դիր ձեռնովեան կաղապարի մը մէջ, չափաւոր տաքութեամբ փուռը եփէ:

3.— **ՍՍՏԱՆԱՅԱԿԵՐ.**— Կէս գաւաթ կարագ և մէկ գաւաթ շաքար լաւ մը խառնելէ վերջ աւելցնել լաւ մը զարնուած 4 հաւկիթի դեղին. յետոյ 1 գաւաթ կաթ և 3 ապուրի դգալ քաքասօ. յարմարցնելէ վերջ խառնուրդին մէջ աւելցնել երկուքուկէս գաւաթ ալիւր և մէկուկէս թէյի դգալ քարպօնատ ա՛մօնեաք: Խառնելէ վերջ պարպել իւզոտուած ամաններու մէջ և եփել: Եփելէ վերջ ըստ փափաքի կըրնաք վրան զարգարել քէյքի զարդով մը:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ԱՄՆՌ ԱՏԵՆ ԽՈՒՅԵՐԸ ԶՈՎ ՊԱՀԵԼ

Կ'ուզէ՞ք որ խուցերնիդ զով մնայ ամառուան տաքերուն: Պատուհաններուն դրսի կողմէն կախեցէք կտուէ շարժուն վարագոյրներ, զորս օրը մէկ քանի անգամ պարզ ջրոյ մէջ թաթխելու էք առանց ուժով սեղմելու: Օգն այդ խոնաւութեան մէջէն անցնելով, հաճոյական զովութիւն մը կ'ազդէ, մինչև իսկ շատեր վայելչութեան համար անուշաքոյր նիւթերով խառնուած ջուրի մէջ կը թաթխեն հիւրնկալութեան օրեր պատուհաններուն այս վարագոյրները:

ՄՐՁԻՒՆՆԵՐԸ ԶՆՁԵԼՈՒ ՊՍՐԶ ՄԻՋՈՅՆԵՐ

Ա. Գաւաթ մը լեցուն ջուրի մէջ դի՛ր մասնոցի մը չափ մեղր, մըջիւնք մեղրին հոտէն հրապուրուելով, կուգան կը ժողուուին գաւաթին մէջ և կը խեղդուին:

Բ. Եթէ սղոցեալ փայտի փոշի ցանէք մըջիւններուն դուրս ելած ձերպերուն մէջ քիչ ասեռէն կը հեռանան ամէնքն ալ:

Գ. Ինչպէս յայտնի է, մըջիւնք պտղատու ծառերուն վրայ ալ կ'ելլեն. ասոնց ընթացքը արգիլելու համար, ծառերու արմատին բոլորտիքը կաւիճի փոշիով շրջանակ մը ձեւացնելու է. մըջիւնը ընազգմամբ կ'ատէ կոււիճը, եթէ իր ճամբուն վրայ կաւիճ ցանուի՝ ես կը դառնայ, եթէ բոլորտիքը ցանուի՝ բանտարկեալ կը մնայ:

Դ. Եթէ ընկուզենիի տերեւներով եռացեալ ջուրը մըջիւններու բոյնին մէջ թափուի, մէկ հոտ մըջիւն անգամ ողջ չի մնար:

Կամ եթէ անոնց բոյնին մէջ քիչ մը աղ ցանուի և վրան մէկ երկու կաթիլ ջուր թափուի՝ ամէնքն ալ կ'ոչնչանան:

ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԵԾ - ՄԱՅՐԻԿԸ

Առանձնաշնորհում մը պէտք է նկատուի մեծ-մայրիկի մը ներկայութիւնը տան մէջ: Զանազան և զարմանազան փորձառութիւններով ճոխացած իր կեանքով կրնայ անգնահատելի ծառայութիւններ մատուցանել ան ընտանիքին և անոր բոլոր անդամներուն:

Շատ մեծ է սակայն թիւը այն դեռատի կիներուն և մայրերուն որոնց համար աւելի քան զզուելի է մեծ-մայրիկներու ներկայութիւնը տան մէջ:

Կը լսեմ ձայն մը որ կ'ըսէ. — «Այո՛, դուք դա՛ստար անգամ չունիք թէ ի՞նչպիսի արարած մըն է մօր մեծ-մայրիկը: Ամէն բանի մէջ քիթը կը խոթէ, ամէն խօսքի կը խառնուի, ամէն բանի մէջ իրաւունք կ'ուզէ ունենալ, ամէն բան իր կամքին համաձայն պէտք է կատարուի տան մէջ:» Այո՛, ծերուկ կիներ կրնայ առաւել կամ նուազ չափով յանցաւոր ըլլալ կարգ մը բաներու մէջ, պէտք չէ սակայն մտահան ընել սա իրողութիւնը թէ անոր շարժառիթը բարի է յաճախ: Ծայրաստիճան փափկանկատ ըլլալով՝ չկըրնար անգործ մնալ երբ կը տեսնէ դեռատի մօր ծանրաբեռնեալ վիճակը: Յաճախ չկրնար լուռ մնալ երբ կը կարծէ թէ իրաւունք ունի շատ մը բաներու մէջ:

Կը լսեմ ուրիշ ձայն մը որ կ'ըսէ. — «Մեր մեծ-մայրիկը կատարեալ պէպեք մըն է և պէպէքի մը չափ և անկէ աւելի պէտք ունի հազածութեան. այո՛, իրական բեռ մըն է ան ընտանիքին...»: Ծերուկը բեռ մըն է եթէ, քաղցր բեռ մըն է ան ամէն պարագայի: Հարկ է միտք բերել անոր մշտարթուն հսկո-

ղութիւնը և անտրտունջ զօհաբերութիւնը որուն առարկայ եղած ես դուն:

Կը լսեմ ձայն մը եւս որ կ'ըսէ. — «Պէտք եղածին պէս չեմ կրնար կրթել զաւակներս պարզ այն պատճառաւ որ՝ մեր մեծ-մայրիկը միջամուխ կ'ըլլայ և կը չփացնէ զանոնք:» Այս կէտին մէջ կարելի չէ պաշտպանել մեծ-մայրիկները և կամ իրաւունք տալ անոնց: Մեծ-մայրեր՝ իրենց մեղմ բնաւորութեամբ և առաւելագոյնց գորովով չպէտք է խաչաձեւեն ծնողաց դաստիարակչական ծրագիրները: Տիպար մայր մը — որ պատասխանատու է իր զաւակին կրթութեան համար — բնական է չկրնար անտարբեր մնալ երբ կը տեսնէ թէ մեծ-մայրիկը դիտակցաբար թէ՛ անգիտակցաբար կը քանդէ տղոց առողջ դաստիարակութեան հիմերը, չփացնելով և պաշտպանելով զանոնք ի դէպս և յանդէպս:

Այսպիսի պարագաներու մէջ դեռատի մայր մը պէտք է սիրով և քաղցրութեամբ հետեւեալ խօսքերն ուղղէ մեծ-մայրիկին, երբ տղայք կը բացակային տունէն. — «Սիրելի մայր, դիտեմ թէ կը սիրես թոռնիկներդ և այդ պատճառաւ ալ յաճախ պաշտպան կը կանգնիս անոնց: Պէտք է սակայն դիտես թէ ճշմարիտ սէրը իր մէջ առողջ դատողութիւն ալ կը պարունակէ, և թէ տղոց կրթութեան գործին մէջ ոչ մէկ բան այնքան վտանգաւոր է որքան դաստիարակներու անմիաբանութիւնը: Երբ անոնց այնքան շատ երես տաս, բնական է որ քեզի պիտի զան անոնք իրենց տրամաբանական և անտրամաբանական բոլոր փափաքներով և այդ կերպով պիտի ուժանան ինձմէ: Երբ օր մը ընդմիջաւ և առյաւէտ բաժնուխ մեղմէ, ես ի՞նչպէս պիտի կարենամ գլուխ ելլել անկիրթ, յամուռ և չփացած այդ տղոց հետ: Կը խնդրեմ որ թոռնիկներուդ ալ տաս այն առողջ կրթութիւնը, զոր տուած ես քու զաւակներուդ...»:

ՏՆԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՊԱՅՈՒԹԻՒՆ

ՀԻՒԱՆԴԱՊԱՅՐ

Հարկ չէ որ բժիշկին օգնող հիւանդապահը, շատ ուսեալ ըլլայ, սակայն պէտք է որ գոնէ առողջ մտքի տէր ըլլայ և առօրեայ սովորական գործերէն հասկընայ: Պէտք է ձեռագիր կարգալ գիտնայ և գրէ որոշ ու պարզ կերպով: Եթէ ոչ դեղերուն բաշխման տակն չարաչար սխալներու մէջ կ'իյնայ: Պէտք է նաեւ առողջ դիմակի մէջ ըլլան հինգ զգայարանքները. տեսողութիւն, լսողութիւն, շօշափում, հոտառութիւն և ճաշակ:

Ա.Ձ.Ք, որ կարենայ հրահանգները կարգալ, կամ բարձր ձայնով կարգայ հիւանդին, և դէմքին փոփոխութիւնները գիտէ: Շուտ տեսնող հիւանդապահը չսպասէր մինչև որ հիւանդը խնդրէ: Նա կը հասկնայ անոր աչքին, շրթունքներուն և մտաներուն շարժումքէն, իսկոյն կը հասկնայ թէ ի՞նչ կ'ուզէ:

Ա՛ԱՆՁ, որ ամենատկար հառաչն իսկ լսէ, և չստիպէ տկար հիւանդը որ ձայնը բարձրացնել ստիպուի և կրկին կրկին նոյն բանը խնդրէ:

ՇՕՇԱՓՈՒՄ կամ ՁԳԱՅՈՒՄ, որ կարենայ ջերմութեան փոփոխութիւնը և հիւանդին մորթին զօրութիւնը զգալ, և չգործածէ որևէ բան որ անոր մարմինը պիտի այրէ կամ պաղեցնէ:

ՀՈՏԱՌՈՒԹԻՒՆ, որ սենեակին օդին ամենաջընջին սպակոտութիւնը զգայ և դեղ տուած տակնը հոտէն հասկնայ թէ դեղին մէջ սեւէ սխալ կա՛յ թէ ոչ:

ՃԱՇՍԿԵԼԻՔ, որ անյարմար կերակուրները չտայ հիւանդին, և հասկնայ թէ հիւանդը կրնայ մարսել զանոնք:

Եթէ բոլոր այս յատկութիւնները և փոքր ինչ հրահանգութիւն ունենայ հիւանդապահը, բժիշկին լաւ օգնական մը կրնայ ըլլալ: Հոս սակայն մէկ զգուշութիւն պէտք է. պէտք չէ իրեն ձարտարութեան վրայ մեծ համարում ունենայ, որ չի յանդգնի բժիշկին հրահանգներուն հակառակ գործել: Ազատ է թելադրութիւններ ընել: Կրնայ ըսել. «Տօքթոր, արդեօք սա աւելի լաւ չըլլա՞ր, կամ չէ՞ք կարծեր որ անոնց ատոր ալ կրնայ ըլլալ:» Սակայն բժիշկէն պահանջել որ սա և նա ընէ, և երբ իր պահանջը չընդունուի իր միտքը դարձը ընէ, ատոր անկարելի է հանդուրժել: Եթէ բժիշկին վստահած ես հիւանդին կեանքը, պէտք է այլևս չի միջամտել և թողուլ որ ան իր պարտքը կատարէ:

ՀԻՒԱՆԴԻՆ ՍԵՆԵԱԿԸ

1. Մութ, խաւար սենեակի մէջ մի՛ գներ հիւանդը, լուսաւոր և զուարթ թօղ ըլլայ սենեակը:
2. Եթէ հիւանդը ջերմ ունի, կամ աչքի, ուղեղի և ուրիշ հանգիստի կարօտ հիւանդութեամբ կը տառապի, տան աղմուկէ հեռի սենեակ մը յատկացուր հիւանդին, քանզի նա շուրջը դիտելու և խօսելու տրամադիր չէ. այլ հանգիստի է կարօտ:
3. Երբ սակայն արկածէ մը փրատուած է հիւանդը, ընտանիքին մօտ սենեակ մը դիր, որ հնար ըլլայ հետը խօսակցելի, որով նա զուարթութիւնը և մտքի հանգիստը կարենայ պահել և զուարճանալ, դիտելով շուրջի շարժումները, իրենց գործով զբաղողները և լսել անոնց խօսակցութիւնը. դիւրին ալ կ'ըլլայ պէտք եղած ծառայութիւնը մատուցանել անոր:
4. Հիւանդին սենեակը գարշահոտ տեղերէ հեռու պէտք է ըլլայ:

5. Պատուհանները դիւրաւ բացուելու են. շատ կարասի մի՛ դներ հիւանդին սենեակին մէջ, մանուշակաւ երբ փոխանցիկ է հիւանդութիւնը. յիշէ որ բրդեղէնները աւելի երկար կը պահեն սեւէ հոտ քան բամպակեղէնները, ուստի բրդէ վարագոյրներու պէտք չկայ. լուսագոյն է հիւանդին սենեակը բնաւ վարագոյր չդնել, սակայն երբ չես ուզեր սենեակը մերկ, շերկ և անպաճոճ թողուլ՝ բարակ նիւթէ և բամպակէ վարագոյրներ դիր, որք կրնան դիւրաւ լուսացուիլ:

6. Նաեւ բրդէ ծածկոցներով բազմոցներու և աթոռներու պէտք չկայ հիւանդին սենեակին մէջ, փայտէ կահ-կարասիք և խտրէ աթոռներ լուսագոյն են: Մաքուր տախտակամածը աւելի լաւ է քան գորգ. միայն անցքին մասը նեղ գորգ մը կրնաս դնել անցուղարձի ատեն ոտքով աղմուկ չպատճառելու համար:

7. Արկածեալ հիւանդին անկողինը սենեակին այն կողմը պատրաստէ ուր ամենէն աւելի հանդիստ կրնայ ընել. ընտրէ է՛ն լուսաւոր կողմը վէրքը լաւ քննելու, դարմանելու և կապելու համար:

ԲԱՆՔ ԻՄԱՍՏՆՈՅ

Ճշմարիտ համեստութիւնը տերեւախիտ ծառ մ'է որ տերեւներուն տակ կը ծածկէ իր պտուղները:

- *. Կենաց վայելքներուն մէջ ամենէն մեծն ու գեղեցիկը ո՞րն է.
- Օգնութեան ձեռք կարկառել դժբախտներուն:
- *. Աղքատին հարստութիւնը ի՞նչ է.
- Իր պարկեշտութիւնը:
- *. Կ'ուզե՞ս գիտնալ թէ ինչպէս պէտք է տալ.
- ինքզինքդ ընդունողին տեղը դիր:

**ՄԱՐԶԱՆՔ ԵՒ ՄԲՈՐ
ՇՆՉԱՌՈՒԹԵԱՆ ՄԱՐԶՈՒՍԸ**

Նիստերը պիտի բաժնուին չորս դասակարգի վարժութիւններու, որոնք պիտի օգտագործուին այնպէս ու այն չափով որ ենթական կարենայ լաւագոյն կերպով չնչել: Չենք ըսեր աւելի չնչէ, որովհետեւ էականը միշտ բնական օրէնքը նկատի ունենալն է: Ասոնք են հիմնական սահմաններու մէջ, բռժիշկին կողմէ արուած կրաւորական շարժումներու ընկերացած շնչառութիւններ, ենթակային կողմէ եզած ներգործական շարժումներու ընկերացած շնչառութիւններ, կեանքի մէջ եղած գործերու ընկերացած շնչառութիւններ — ընթերցում, երգ, քայլ, խօսակցութիւն և այլն:

Ենթակային մերկ, ոտքի, նստած, ծուռկի, կամ կռնակի վրայ պառկած անսխալ կեցուածք մը առնել տալը առաջին սկզբունքն է, յետոյ քսան անգամ շնչել պիտի տրուի: Պէտք է որ իւրաքանչիւր շնչառութեան՝ ամէն ուղղութիւններով ընդարձակէ կուրծքը: Ակիզբը օգտակար է ենթակային կատարել տալ մերթ վերի կուրծքի և մերթ որովայնային շնչառութիւն, այսինքն մերթ կուրծքին վերի մասը մերթ վարի մասը:

Վերի կուրծքի շնչառութեան ձեւին մէջ ներշնչումի տտեն ենթական կ'ընդլայնէ իր կուրծքի վանդակին վերը մասը, փորը կը սեղմէ և ամբողջ ներշնչումի տեւողութեան սեղմուած կը մնայ: Այս սեղմումը երեւութական է, որովհետեւ հետեւանք է կողերուն բարձրացումին և որովայնի երկայնութեան զգալի կերպով մեծնալուն:

Որովայնային ձեւով շնչառութեան մէջ ներշնչու-
չումի տառն ենթական կ'ուռեցնէ որովայնը, յաճախ
կուրծքի վերին մասը կ'իջնայ: Զանազան անասկէտ-
ներով կարեւոր է այս ստոծանիի կրթութիւնը,
որովհետեւ թէ կը ծառայէ որովայնի պնդութեան
զարմանումին և թէ կը նպաստէ երգողներու կըր-
թութեան:

Եթէ այն հեղինակները որ թոքի առողջաբանու-
թիւնը անսեւած են, անչափելի սխալ մը գործած են,
այն մասնագէտները որ կը զտեն ֆիզիքական դաս-
տիարակութիւնը թոքային առողջաբանութենէն,
նոյնչափ կարեւոր սխալ մը կը գործեն:

Երբ թոքը մարդուած է, ամսական մէկ նիստ մը
լայնօրէն բուսական է պաշտօնավարութիւնը լաւ վի-
ճակի մէջ պահելու համար: Այն ստեն է որ կը սկսի
մարդիկ մարդու, մարդական վարժութիւններու մաս-
նագէտի դերը՝ պատրաստելու համար սերունդ մը՝
խիզախ և առողջ, իր կորովին ապահով և վստահ
ինքն իր վրայ:

Ուրեմն շնչառութեան մարդուածը՝ անհրաժեշտ
նախաբանն է բոլոր մարդական դաստիարակութիւն-
ներուն:

ԱՌԱՇԻ ՀԱՅԿԱԿԱՆ

Ճանապարհին
Հացը բեռ չէ,
Կեղծաւորին
Հացը սեր չէ:

** Թէ ամիսը մեկ մի գաս,
Կ'ուսես կաթա, փախալաւ,
Թէ որ օրը մեկ մի գաս,
Կ'ուսես քոթակ փախալաւ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

Օ ՏԷ ԳՈՂՈՅՆ

Օ տը Գոլոյն պատրաստելու համար պէտք է
նկատի ունենալ որ գործածելի ալքոլը պէտք է ըլլայ
գինիի և լաւ զտուած ալքոլ, 80-90 աստիճան: Մին-
չեւ 50-60 աստիճան ալքոլով ալ լաւ, աժանագին օ
տը Գոլոյն կը ստացուի:

Եթէ քիչ շատ ջուր խառնել ուղուի, պէտք չէ
երբէք ջուրը աւելցնել ալքոլին էսանսները դնելէ
վերջ, այլ միշտ՝ նախ ջուրը և վերջը էսանսները:

Անփորձներ լաւ կ'ընեն որ իրենք ջուր չխառնեն
այլ ալքոլը դնեն ուղղակի ինչ աստիճանով որ կ'ու-
զեն: Եթէ գոյն տալ ուղուի, փոքր սանդի մը մէջ
նախ քիչ ալքոլով պէտք է ներկը պատրաստել և յե-
սայ խառնել:

Հետագայ համեմատութիւններով խառնուրդները
կատարելէ վերջ պէտք է անպայման թորիչ թուղթէ
կամ քամոցէ անցնել մէկ կամ աւելի անգամներ:

Եթէ թորիչ թուղթէն անցնելէն վերջ օ տը Գո-
լոյնը եռացող շաքարի նման երեւոյթ մը ունենայ,
պէտք է աւելցնել քիչ մը քաօլին (kaolin) կամ մակ-
նէզիոմի բնածխատ (carbonate de magnesie) և դարձ-
եալ թորիչ թուղթէ անցնել:

Ահաւասիկ պատրաստութեան մէկ քանի եղանակ-
ներ որոնց էսանսները կարելի է փոխանակել ուրիշ
անասկներով, նայելով թէ ինչ հոտեր աւելի հաճելի
կը թուին գործածողին:

1.— Ալֆոլ 95 ⁰	1750 խ. u. մ	
essence de citron		30 կրամ
» » cédrot		12 »
» » bargamotte		23 »

essance de lavande	6 կրամ
teinture » benjoin	45 »

2.— Ալֆոլ 80° 1000 խ. ս. մ.

essence de bergamotte	10 կրամ
» » citron	8 »
» » lavande	2 »
musc artificiel	0.10 »
eau de fleur d'oranger	80 »

3.— Ալֆոլ 90° 1 լիթր

essence de lavande	2 կրամ
» » bergamotte	6 »
» » citron	3 »
» » portugal	3 »
» » néroli	1 »
musc artificiel	0.05 »

4.— Ժան-Մարի-Ֆարինա սեսակ Ալֆոլ 90° 850 կրամ

essance de bergamotte	6 կրամ
» » citron	3 »
» » girofl	1.50 »
» » néroli	0.75 »
» » lavande	1.20 »
» » romarin	0.80 »
teinture d'ambre gris	3 »
eau de fleur d'oranger	1000 խ. ս. մ.
eau de roses	50 կրամ

ԱՌԱՇՐՔ ՀԱՅՎԱԿԱՆ

Մինակ ձեռքը ի՞նչ ունի
 Երկու ձեռքը ձայն ունի.
 Մէկ խելքը ի՞նչ ոյժ ունի
 Երկուքը մեծ ոյժ ունի:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔՆԵՐ

ՍԻՐԱՅԻՆ ԵՐԿԻՄԱՍՏ ՆԱՄԱԿ ՄԸ

(Կարդալ այս նամակը երկու անգամ.— նախ կարդալ ամբողջը, եւ յետոյ, կարդալ միայն շեղագիր տղերքը:)

Հայրս կ'ըսէ ինձ, որ ալ չգրեմ ձեզ այսուհետեւ: Դուք պիտի ուզէք որ մտիկ չընեմ իրեն, բայց պիտի ընեմ: Դուք գիտէք թէ ես կը սիրեմ իմ հայրը: Թեքեւս կարծեցիք թէ ես սիրեցի միայն ձեզ եւ ուրիշ ո՛չ ոք, այս աշխարհի մեջ: Շատ կը սիրալիք: Հայրս պիտի նեղուի եթէ չհնազանդիմ. եւ սուգիւ, իմ սիրքը խորապէս պիտի ցաւի, եթէ ան ինձի բարկանայ: Իմ փոյթս չէ ընաւ. երբ այսուհետեւ երբեք չըրթակցիք ինձ հետ: Ալ մի՛ նեղէք զիս ձեր սիրով ու դիմումներով: Երբ շարունակեք նորէն նամակներ գրել ինձ, կ'ուզեմ անգամ մըն ալ վստահացնել ձեզ որ չը պիտի ընդունիմ զանոնք, առաջուան պէս: Խնդրեմ, պարոն, մոռնա՛նք զիրար այլեւս: Երբ երբեք անկեղծօրէն սիրած եք զիս, կը խնդրեմ որ, այսօրու ընէ սկսեալ, ամէն կապ խզէք ու ա՛լ չը շարունակեք գրել ամէն օր, որովհետեւ ես պիտի չընդունիմ: Դարձուցէք նաեւ նամակներս, որ ես չապ- երջանկանամ: Իմ հայրս, անուշ որ, զմայլելի մարդ է, թէպէտ դուք կը կարծէք թէ դիւրաւ խաբուող շղային ծերուկ մըն է:

ՏԵՍԱՆԵԼԻՆ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ

Վառուած մոմ մը ո՞ւր կ'ընաս դնել որ բոլորը տեսնեն բացի մէկէն:
 Այդ մէկին գլխուն վրայ:

ՀԱՒԿԻԹԸ ՄՏՅՆԵԼ ՇԻՇԻՆ ՄԷՁ

Հաւկիթը շատ զօրաւոր քաջասիւսի մէջ բաւական ատեն մնալէ յետոյ այնքան պիտի կակուղնայ որ առանց կտորելու պիտի երկննայ ուղած ձեւովը: Շիշի մը նեղ բերանին վրայ դիր ու ան ինքնիրեն ներս պիտի մտնէ: Նորէն առջի կարծրութիւնը և ձեւը ստուլ համար վրան պաղ ջուր լեցուր:

ՕՐԻՈՐԴԻ ՄԸ ՏԱՐԻՔԸ ԳՏՆԵԼ

Օրիորդը 2-ով թող բազմապատկէ իր ծնած ամսոյն թիւը, յետոյ աւելցնէ 5 և բազմապատկէ 50 և արդիւնքին վրայ աւելցնէ իր տարիքը և անկէ հանէ 365, մնացորդին վրայ աւելցնէ 115. պատասխանը թող քեզի ըսէ: Աջ կողմի երկու թուանշանները կը ցուցնեն իր տարիքը և մնացածը իր ծնած ամիսը:

ՀԱՒԿԻԹԸ ԿԱՆԳՆԵՅՆԵԼ ՀԱՅԵԼԻՆ ՎՐԱՅ

Հաւկիթը քանի մը անգամ զօրաւոր կերպով ցնցէ մինչեւ որ դեղնուցը պատուի, որմէ յետոյ հաւկիթը հանգարտութեամբ կանգնեցուր իր սուր կողմին վրայ:

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ն Ե Ր

1. Ի՞նչ է ան որ երկու հոգի կը միացնէ բայց միայն մէկուն կը դպչի: (Ամուսնական մասանին):
2. Ի՞նչ պէտք է ընել որ աքաղաղը կիրակի օր չի խօսի: (Շաբաթ իրիկուրնէ մորթել զայն):
3. Ի՞նչ է ան որ արեւին առջեւէն կ'անցնի առանց շուք ձգելու: (Հովր):
4. Երջանկութիւնը ո՞ւր կարելի է գտնել անվրէպ: (Բաւարանին մէջ):

ԶՈՒԱՐԹ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

ԱՆՅԵԱԼ, ՆԵՐԿԱՅ ԵՒ ԱՊԱԳԱՅ

« Անցեալ, ներկայ և ապագայ. կամ ասանկ ըսենք, Երեկ, այսօր և վաղը:»

Ահա այսպէս:

Երեկ մտնչուն մայրն ու քոյրը աղջիկուս կ'երթային. այսօր աղջկան մայրը փեսատես կ'երթայ. վաղն ալ աղջիկը էրիկուս պիտի երթայ:

Երեկ հարսը մունջ կը կենար կեսրոջն ու պարսնատափն առջեւ. այսօր կեսուրն ու պարսնատան մունջ կը կենան հարսերուն առջեւ. վաղն ալ փեսան մունջ պիտի կենայ հարսին առջեւ:

Երեկ հայրը կը հրամայէր տղուն, այսօր աղան կը հրամայէ հօրը. վաղն ալ հաւուն պիտի հրամայէ թուր:

Երեկ բանջարի գլուխ կ'ուտէին. այսօր ոչխարի գլուխ կ'ուտեն. վաղն ալ իշարու գլուխ պիտի ուտեն:

Երեկ երիտասարդները հօրերնուն տունը կը պառկէին. այսօր մինչեւ կէս գիշեր գինետունն ու կապիտան կը նստին. վաղն ալ փողոցը պիտի պառկին:

Երեկ արեւը կը դառնար. այսօր երկիրը կը դառնայ. վաղն ալ մեռ գլուխը պիտի դառնայ:

Երեկ բանելով օրն իրիկուն ըրինք. այսօր պարելով ատեն կ'անցնենք. վաղը քարերով պիտի ծեփուինք:

Երեկ մամիկնիս 14 ծունկ աղօթք կ'ընէր. այսօր մենք «Հայր-մեր» մը կ'ըսենք. վաղը աղաքնին սիրահարական երգեր պիտի ըսեն:

Երեկ կանայք և աղջիկուք ինքուրնին ու արանունունքնին սեւ կը ներկէին. այսօր երեսնին ձերմակ

կարմիր կը ներկեն. վաղն ալ սրտերնին ու մարմինն-
նին սեւով պիտի ծածկեն :

Երեկ հարս գացող աղջիկներուն մնտուկը սակի
ու արծաթ և Ստղմասի գիրք մը կար. այսօր բամպակ
ու մետաքս և խողի տեարակ մը կայ. վաղն ալ նար-
տի և սոմխոյի քարեր ու սաջի սիրելիներուն նա-
մակները պիտի գտնուին (ոմանց) քով :

Երեկ ժողովուրդը լրագրասպետէն կը վախնար-
այսօր ժողովուրդը լրագրասպետին վրայ կը խնդայ .
վաղն ալ լրագրասպետը ժողովուրդէն պիտի վախնայ :

Երեկ ջուր կը խմէինք. այսօր օդի կը խմենք .
վաղն ալ մենք օդիէն պիտի խմուինք :»

ՎՐԷԺԽՆԴԻՐ ՏՂԱՆ

Հայրիկը Արշակին լաւ տիտց մը քաշեր էր : Ար-
շակ արաստուալից աչքերով հեռացաւ հօրը քովէն
ըսելով .

«Երբոր մեծնամ . . .» :

«Ի՞նչ պիտի ընես, երբ մեծնաս, Արշակ» հարցուց
մայրը :

— Հայրիկին անունը սղուս պիտի դնեմ, ու
այնքան պիտի ծեծեմ, այնքան պիտի ծեծեմ որ . . .» :

ԾԵՐՈՒԿ ՄԸ ԵՒ ԻՐ ՀԱՐՍԸ

Զուարճախօս ծերուկ մը տղան ամուսնացնելէ
քանի մը ամիս ետքը առած հարսին բնութիւնը հար-
ցընողներուն կը պատասխանէր այսպէս . —

«Էլէ օդան կէլտի,
Տիրիկի պօզան կէլտի,
Եասարգ ֆըսըլթըսը՝
Թիւքէնմէ՛ղ պաշ աղըըսը» :

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ Ը

Զմեռ էր, գիշերը սկսած ըլլալով վաճառական-
ները իրենց վաճառատուներուն փեղկերը դոցել սկսած
էին, ձիւնը իր սպիտակ սաւանը փռած, տարածած էր
Բերայի մեծ փողոցին սալաչատակին վրայ :

Պագգալ Գօսթի փողոցը կանգնած իր խանութին
փեղկերը գոցելու վրայ էր, երբ տպակիներուն մէջէն
նշմարեց որ իրեն ծանօթ դատարկապորտ Մանօլ խա-
նութին ներսը բաներ մը կ'ընէր : Սեղանին վրայ
դրուած կարագի կէս քաշնոց գունտ մը Մանօլ վեր-
ցնելով գլխուն վրայ զետեղեց և ապա իր հելլենտիան
լայն գլխարկը վրան դնելով լաւ մը տեղաւորեց :

Այս տարօրինակ զոզութեան վրէժն անմիջապէս
լուծելու համար Գօսթի խանութը մտաւ և դուռը
փակեց, յետոյ յանկարծակիի եկած Մանօլի կանակը
փայփայելով և ձիւնը կօշիկներէն թօթուելով ըսաւ .
կեցիր Մանօլ, մի՛ աճապարեր :

Մանօլ աչքերն դէպ ի դուռ ուղղելով ի դուռ տ-
գատ անցք մը կը փնտռէր : Կեցիր, բարեկամս, քի-
չիկ մը տաքնանք, ըսաւ Գօսթի, առանց սեւէ յու-
զում ցոյց տալու, որքան ցուրտ կ'ընէ այս գիշեր .
երաւ որ առանց քեզի տօք բան մը հրամայելու ան-
կարելի է որ երթաս, ծօ՛, ճամբան կը սառիս : Գօս-
թի այսպէս խօսած ատեն վառարանին մինչեւ բերանը
փայտ կը լեցնէր :

Տաքնապալից էր խեղճ Մանօլի կացութիւնը. կա-
րագը պահած էր, և անմահ տեղ մը, որ հարկ էր խա-
կոյն հեռանալ : Տօք բան մը հրամայել — տօի բնու-
գարծին չէր դար : Գօսթի, սակայն, այս խորհուրդ-
ներուն վերջ տուաւ, բանեց Մանօլը և վառարանին

ճիշդ մտախիզը նստարանի մը վրայ նստեցուց: Խեղճ Մանօլ, ո՛չ աջ և ո՛չ ձախ կրնար շարժիլ. իրեն և տին ալ խանութին սեղանը կտր, մինչ Գօսթի առջեւը տնկուեր կեցեր էր, անանկ որ շարժիլ իսկ անհրնար էր եղած:

Մանօլ կը զգար որ կարողը իր մտղերուն վրայ լաւ մը կը տեղաւորուի, ուստի խնդրեց որ արածնէ իրեն տուն երթալ:

Ո՛չ, ո՛չ, գոչեց Գօսթի, բնաւ երբէք, ասանկ անդթութիւն կրնամ ընել ևս, ոչ, բարեկամս, քեզի չեմ թողուր, մինչև որ տաք բան մը չի խմես: Նաև քեզի չձանձրացնելու համար պատմութիւն մը պիտի ընեմ, հա՛ նայիմ նստէ տեղդ. այս ըսաւ և Գօսթի նորէն տեղը հրեց Մանօլը որ երթալու համար ստքի էր ելած:

Օ՛, հոս շատ սաք է, թոթովեց վարպետորդի գողը և նորէն փորձեց տեղէն ելլել:

Ե՛, խնդութիւն չուզեր, գոչեց Գօսթի, տեղդ նստէ, ասանկ ցուրտ դիշեր մը քիչիկ մը տաք խըմելիք քեզի մնաս չի պատճառեր, նստէ Մանօլ, նստէ, այդքան աճապարելու հարկ չկայ, ևս ալ տուն պիտի երթամ, հոս չի պիտի մնամ, զայս ըսաւ և Մանօլի կանակը աթոռին կրթնցուց հռժկու բազուկներովը:

Բայց, ըսաւ Մանօլ, Շիշլի պիտի երթամ, կովերը պիտի կերակրեմ, փայտ կտարեմ, կ'ազաչեմ թողէք որ երթամ:

Պարտոյ խօսքեր պէտք չէ, Մանօլ, թող այս գիշեր ալ կովերը քիչ մը ուշ կերակրուին, կը տեսնեմ որ շատ կը յուզուիս և անհանգիստ կ'ըլլաս: Ի՛նչ կայ, ձօ, ըսաւ վարպետորդի նպարավաճառը, հեզնական ծիծաղով մը:

(Շար.)

ՈՒՂԵՑՈՅՑ ԿԵՆՑԱՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Մ Ի ...

Ը.

ԱՄՈՒՍՆԱՆԱԼԷ ԱՌԱՋ

Մի՛ անգոսներ չէլլերի սա իմաստուն խրատը. — «Քննէ՛, ով դու, որ ցկեանս կը կապուիս մէկու մը հետ, քննէ թէ սիրտ սրտի միացած են. սխալում մէկ վայրկեանի մէջ կրնայ ըլլալ, մինչ զղջում ո՛չ խիստ երկար և տաժանելի կ'ըլլայ»: Եթէ հաստատապէս համոզուած ես թէ կը սիրես և կամ պիտի սիրես այսինչ կամ այնինչ աղջիկը, դեռ ճամբայ չելած՝ կարելի եղածին չափ տեղեկութիւններ քաղէ իր վարքին վրայ, ընտանիքին և ընտանեաց ընկերային և դրամական վիճակին վրայ: Ապահով եղիք թէ քաջառողջ է, և եթէ տեղեկութիւններն աղէկ են ու ազագան այս կնոջ հետ անամպ կ'երեւի, ալ մի՛ վարանիր, որոշումդ տուր: Ամուսնութիւնը վիճակահանութիւն մըն է. թիւդ քաշէ՛, լիննայ երթայ:

Մի՛ թողուր որ վրագ. յարձակի սէր մը, զոր քու անձնական վճիռդ, քու պատուոյ և բարոյականի զգացումդ չկարենար վաւերացնել: Երբ կիրքն ամբողջ հոգւոյդ իշխէ և վար առնէ բանավարութիւնդ իւր գահէն, խորհէ՛ թէ քու խինդդ խաբուսիկ է և թէ կ'առաջնորդուիս. դուն անլուր վիշտերու: Ուստի, փախի՛ր, երբ անվայել կիրք մը զօրացնէ զքեզ, փախի՛ր երբ դեռ նոր որոմն կը ձգէ ի քեզ:

Մի՛ բռնադատեր աղջիկ մը որ քեզ սիրէ և քեզի հետ ամուսնանայ անպատճառ: Պէտք է անոր նախասիրութիւնը, արժանապտուութիւնը նկատի առնել այս պարտադային:

Մի՛ պղծեր սիրտդ և միտքդ, մարմինդ և կեանքըդ որպէսզի երբ զգաս սիրոյ բարախիլը լանջքիդ տակ, կարենաս, առանց կարմրելու զազանի կեանքի մը վերջելումէն, համարձակութեամբ նայիլ աչքերուն մէջ այն ազնիւ աղջկան, որ սիրոյդ և հիացումիդ առարկան է:

Մի՛ նկատեր խաղալիկ՝ կին մը կամ աղջիկ մը, քու անձնական քմահաճոյքիդ համար. ներելի չէ որ ժամանակի մը համար փայփայես և ապա մէկդի ձգես զայն իբրեւ պուպիկ մը և կամ ժամանակաւոր առարկայ մը զբոսանաց: Իրապէս անկեղծ և ազնիւ երիտասարդ մը պէտք է մաքուր զգացումներ տածէ իզական սեռին հանդէպ:

Մի՛ մոռնար Թալմուտի սա համբաւաւոր խօսքը թէ, կին ընտրելու ատեն մարդ պէտք է նայի որ իրմէ աստիճան մը վարը ընտրէ, իսկ բարեկամ մը ընտրելու ատեն՝ աստիճան մը վերը:

Մի՛ ընտրեր կին մը լոկ գեղեցիկ ըլլալուն համար, մանաւանդ երբ ինքն ալ դիտէ թէ գեղեցիկ է, և հազուադէպ է որ չգիտնայ, վտանգի միշտ պիտի ախորժի որ իրեն կրկնեն թէ գեղեցիկ է. նախ՝ դուն, ասոր տարակոյս չկայ, և հաւանաբար ուրիշներն ալ: Գոնէ այս կէտը կասկածելի է: Ուրեմն մի՛ ամուսնանար վարդին հետ, որ փուշեր ունի, այլ նախա՝ մեծար համարէ մանիչակը որ հանդարտ և երկարատեւ սիրոյ նշանաբանն է: Գեղեցիութենէ աւելի պէտք է նկատողութեան առնուի կնոջ մը առաքինութիւնը: Ապաքէն, առանց առաքինութեան տուն մը քառսի կը վերածուի: Փիլիսոփայ մը տուն մը շինեց, բայց հիմը վեր դրաւ, և առատապը վար: Երբ հարցուցին պատճառը, ըսաւ. —

«Աշխարհք պիտի մանեմ, եթէ եկող կինը տունս վեր ու վար ընելու ըլլայ, քան աստիճան կը շտկուի:»



Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Դ.

1. Դժբախտութիւնը այս աշխարհի մէջ դպրոց մըն է. ով որ այս դպրոցը դացած չէ՝ բան մը չէ սորված:
2. Դանդաղ եղիր որոշելու ժամանակ, բայց արագ որոշելէդ յետոյ:
3. Դատարկ մարդիկ սովորաբար երկար կ'ապրին:
4. Դժբաղդութիւնը արագաթուիչ ծիծեռնակ է, բախտաւորութիւնը կաղ կրեայ:
5. Դժուարութեամբ խօսք տուր, բայց երբ տուիր կատարէ:
6. Դու գործերդ առաջ մղէ, որ գործերդ քեզ ետ չի մղեն:
7. Դարեր կ'անցնին մի քանի գիտնականներ ծնելու համար:
8. Դարերը գիտնականներու կեանքի աստիճաններն են:
9. Դրսի տեսքով մի խարուիր, ներսի արժանաւորութիւնն է գովելի:
10. Դատտիարակութիւնը մտքի բարձր դպրոցն է:

Ե.

1. Եթէ իմ սիրտը նեղ է, ինձ ի՞նչ թէ աշխարհս լայն է:
2. Երբ երկու հոգի կը կռուին, միշտ երկուքն ալ մեղաւոր են:
3. Երբէք չէ կարելի գոհացնել նախանձոտներն:
4. Երաժշտութիւնը համաշխարհային լեզու է, զոր ամէն մարդ կը հասկնայ:

5. Եթէ արեգակն ականջներ ունենար, կ'ամաչէր չար մարդկանց խօսքերէն:
6. Երանի անոնց՝ որք օրօրոցին մէջ կը մեռնին, վասնզի մօր մը ժպիտներէն ու համբոյրներէն ի դատ բանի մը ծանօթ չեն:
7. Երկրորդ փորձը շատ հեղ կը յաջողի, երկրորդ խորհուրդը շատ հեղ լուսազոյն է:
8. Երբ հարկաւոր է լսել՝ եղիր առաջինը, իսկ երբ խօսիլ՝ վերջինը:
9. Երբևմն սաղի փետուրը աւելի մեծ փնաս կ'ընէ, քան առիւծի ճիրանը:
10. Երկիրը պաղաքեր ընելու համար, պէտք է մը-չակել:

Զ.

1. Զրկիր քեզ՝ ընկերիդ վիճակը բարւոքելու համար:
2. Զարհուրիր՝ չարագործութեան ձեռնարկելուդ ժամանակ:
3. Զինիլը՝ պէտք է անխղճութեան և բռնութեան դէմ:
4. Զրպարտութիւնը եղած ոճիրներու չարագոյնն է:
5. Զէնքը զինուորի ամենագօրեղ ոյժն ու ընկերն է:
6. Զոհէ կարողութիւնդ հայրենիքի համար, եթէ կատարեալ ես:
7. Զրկանք մի՛ պատճառեր ընկերիդ, որ ծանր բեռի տակ չի մտնես:
8. Զաւակդ կրթէ, նա կը դառնայ բարի քաղաքացի:
9. Զոհը անընդունելի է, եթէ սրտով չես ըներ:
10. Զօրեղ լինելու համար՝ բարի և առաքինի եղիր:

Գ Ր Ա Կ Ա Ն

Ձ Օ Ն Պ Ս Ա Կ Ա Դ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

1. Երբ աշխարհն եկած ձեր աչքեր բացիք, կեանքի լոյսը տեսաք՝ լացիք, ճչացիք, Այնտեղ դուք գտաք խանձարուրի քով, Մի սիրտ լի սիրով, լի գորովանքով, Եւ ան ձեր Մայրն էր:
2. Երբ զարթնեց ձեր մէջ բանականութիւն, Օրօրոցից դուք ձեր շուրջը նայեցիք, Այնտեղ հանդիպեց ձեզ զուարթագին, Մի մարդ, որ ձեզ հետ խօսում, ժպտում էր, Եւ այն ձեր Հայրն էր:
3. Երբ իբր անմեղ մասնակիներ սիրուն, Աճեցաք մեծցաք, եղաք բանիրուն: Տեսաք դուք ձեր շուրջ տղայք, աղջիկներ, Որք էին ձեզի եղբայրներ քոյրեր, Եւ այդ ձեզ բաւ էր:
4. Երբ անցաւ արագ կեանքի կտրձ գարուն, Հեռացաւ ձեզնից մանկութիւն ժպտուն, Բացեց ձեր առաջ սապարէզ փայլուն, Դուք մտաք այն տեղ, այն փշով լի էր, Եւ կեանքը Այն չէր:
5. Այն չէր ինչ որ դուք որոնում էիք, Գոյութեան կուրի այս անեղ դաշտում, կեանքի խորհուրդը փուշ ու տատակ չէ, Այլ փշերի մէջ սոխակն ու վարդն է, Որ Սէր ներշնչէ:

- 6. Տեսաք, իմացաք դուք այդ վեհ դատանիք,
Սիրոյ կայծն ինկաւ վառեց ձեր սրտեր,
Երգեց սոխակն իր երգն սիրալիր,
Գրաւեց վարդի սիրտը ժպտալիր,
Եւ այդ իսկ կեանքն էր:
- 7. Փոխադարձ սիրով կապուած սրտերով,
Սոխակն ու վարդը ուրախ, երջանիկ,
Տօնում են այսօր ի տես մեր աչքին,
Իրենց միութեան հանդէս բերկրալի,
Որ այժմ կատարուի:
- 8. Եւ մենք ջերմագին մաղթանք ի սրտի,
Օրհնում ենք սկիզբն ձեր այս նոր կեանքի,
Թող երկինք սպհէ ձեզ զայդ երջանիկ,
Շնորհելով ձեզ օր բարեբաստիկ,
Այսպէս աղօթէ ձեզ համար հայրիկ:

ԱՐԴԱՐ ԲՈՂՈՔ

ԱՍՏՈՒԾՈՅ մատով լարուած քընարիկ,
Վանդակին մէջ մինչ կ'երգէր քանարիկ,
Մայրն ալ, Զաւէնին, իրիկուն, առտու,
Կ'ըսէր, «իմ թռչնիկ, քանարիկս ես դու»:
Այլ սակայն թռչուն երբ կ'երգէր աղու,
Չէր ուզեր մայրն որ ձայն լըսուի աղու,
Եւ կը սաստէր. — «Լո՛ւռ Զաւէն, կա՛նգ առ, կա՛նգ»:
Այս բան՝ Զաւէնին թուելով զրկանք,
Անցեալ օր շեշտով մ'անմեղ, անուշիկ,
Հարցուց. «ես ի՞նչդ եմ, մայրիկ». — «ի՛մ խուշիկ»:
— «Եթէ խուշիկդ եմ, ինչո՞ւ թող չես տար,
Որ խուշիկին պէս խօսիմ անդադար»:

ՏԱՆՏԻԿՆՈՋ ԲԱՐԵԿԱՄԸ ԽՈՂԱՆՈՑԷՆ ՆԵՐՍ

Ս Ս Լ Ա Դ Ա Ն Ե Ր

- 1. ՃԵՐՄԱԿ ԼՈՒԲԻԱ ԽԱՇՈՒԱԾ. — Բացախ և ձիթաիւղով:
- 2. ԽԱՇՈՒԱԾ ԳԱՐՆԱՊԻԹ. — Լիմօն կամ քաշախ ձիթաիւղով:
- 3. ԽԱՇՈՒԱԾ ՈՒՂԵՂ. — Լիմօնով:
- 4. Վարունգ, տօմաթէս և մայրանոս:
- 5. Չիրօղ, թէրէ օթով սալաթա:
- 6. Ռօքիա ռատիքիա սալաթառ:
- 7. Տապկած միտիաիչի թէրաթուրով:
- 8. Սթրիտիա, միտիա կրակին վրայ խորոված, չէմօն քամէ:

Կ Ե Ր Ա Կ Ո Ւ Ր Ն Ե Ր

- 1. ԻԶՄԻՐ ԲԷՕՅԹԷՍԻ. — Միօր մեքենայէ անցուր, հացին միջուկը ջուրի մէջ նետէ, քիչ մը ետքը առ, ջուրը քամէ և խըյմային վրայ փշրէ: Երկու հաւկիթ կոտրէ, աղ և համեմ միասին մօին հետ չաղուէ, յետոյ տափակ կտորներու վերածելով ուրիշ զարնուած հաւկիթի մէջ թաթխէ և կարագ իւղով տապկէ: Եթէ կ'ուզես լիմօն քամէ:
- 2. ԻԶՄԻՐ ՍՈՒՃՈՒՂԸ. — Մեքենայէ անցած մօին վրայ կէս հացի միջուկ անցուր, մայրանոս, թէրէօտը, աղ, համեմ և ծեծուած սխտոր միասին չաղուէ, մատի երկայնութեամբ կտորներու վերածելով պլորէ և կարագ իւղի մէջ տապկէ, յետոյ աւելցած իւղին մէջ սալցա վարժեցնելով վրան անցուր:
- 3. ՀԱՆԸՄ ՊՈՒՏՈՒ ԲԷՕՅԹԷՍԻ. — Առէք առանց իւղի մէկ ըմպիլը միս, մեքենայէ անցուցէք,

վրան աւելցուցէք լաւ խաշուած երկու տի բրինձ, մէկ հում հաւկիթ, աղ, պղպեղ, համեմունք ու լաւ մը շաղուելէ յետոյ քէօֆթէններ շինելով մէջը սինսպար (լաւագոյն պիստակ) դրէք ու գոցեցէք: Նախ թաթխեցէք հաւկիթի, և ապա լաւ ձեծուած կալէթայի մէջ ու տապկեցէք իւղի մէջ:

ԽՄՈՐԵՂԷՆ - ԱՆՈՒՇԵՂԷՆՆԵՐ

1. ԹԱՎՈՒՔ ԿԷՕՒՄԻ.— Հաւ մը մաքրէ, լուա, խաչէ առանց աղի, կուրծքին ճերմակ միւր ա՛ւ պազեցուր, թել թել իրարմէ գտտէ: Մէկ լիգր կաթ եռացուր, քիչ մը ա՛ւ, թելուած միւր անոր մէջ կամաց կամաց ճզմելով կրակին վրայ եփէ՝ մինչեւ որ բոլորովին թելուտի, յետոյ վար ա՛ւ: Ամանի մը մէջ 100 կրամ բրինձալիւրն կաթով հալեցուր և կրակին վրայ եռացող կաթին մէջ խառնելով լեցուր, աւելցուր հալուած կուրծքը, պէտք եղած քանակութեամբ շաքար ու փայտէ դգալով մը ճզմելով եռացուր մինչեւ որ մաճունի պէս ըլլայ:

Վար առնելէ առաջ, քանի մը կաթիլ վարդեջուր կաթեցուր: Պնակները քաշելէ վերջ եթէ կ՛ուզես թարչին ալ ցանէ:

2. ԶՈՒՐՈՎ, ԳՕԼԱՅՈՎ ՄԱԾԻՏ (ԲԻԼԹԷ).— Հինգ գաւաթ ջուր մէկուկէս գաւաթ շաքար՝ խառնել և եռացնել. յետոյ 3 ապուրի դգալ նշայ քիչ մը ջուրով հալեցնել և մէջը դնել աստիճանաբար միշտ խառնելով. եռացնել միշտ խառնելով մինչեւ որ թանձրանայ: Ըստ փափաքի կրնայ մէջը կտոր կտոր նարինջ դրուել. տափակ ամանի մէջ պաղեցնել վրան կասիա ցանելով:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ՀԱԻԿԻԹԸ ՌԱՅԱՏԱՆ ԵՓԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Լաւ մը եռացող ջրոյն մէջ դիր հաւկիթը և 1 վայրկեանէն հանէ ու փոխանակ պաղ ջուրը ձգելու՝ լաթի մը մէջ փաթթէ. յետոյ կտորէ գործածէ: Աւելորդ է ըսել թէ հաւկիթը եթէ մէկ վայրկեանէ աւելի մնայ նոյն եռացող ջրոյն մէջ, կը կարծրանայ, որուն գործածութիւնը փաստակար է ըստ առողջաբանութեան:

ԱՊԱԿԻՆԵՐ ՄԱՔՐԵԼ

Պատուհանի ապակիներն փայլուն և թափանցիկ ընելու համար նախ լուա բարկ (քէսքին) քացալով և սրբէ պարզ ջուրով:

ՍԵՆՏԱԿԻՆ ՎԱՐԱԿԻՉ ՆԻԻԹԵՐՆ ԶՆՁԵԼ

Սենեակդ եղեւինի անտառի հոտով կրնաս լեցնել եթէ հողէ ամանի մը մէջ եռացած ջուր լեցնելէ յետոյ վրան փոքր դգալ մը քիրեմէնքիլի իւղ աւելցնես: Օրը երկու անգամ կրկնելով կրնաս սենեակէդ վարակիչ նիւթերն ջնջել. կուրծքի հիւանդութեանց համար ալ շատ օգտակար է այս:

ՄԺԵՂՆԵՐԷ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԻՋՈՑ ՄԸ

Ննջասենեակիդ մթեղներէն կրնաս ազատիլ եթէ լապտեր մը (Ֆէնէր) վառելով անոր ապակիներուն մեղր կամ կլիսէրին քսես. մթեղները անոր վրայ կը հաւաքուին:

ԱԿՈՒՅԻ ՓՈՇԻ ՊԱՏՐԱՍՏԵԼ

Դուն ինքդ պատրաստէ ակուայի փոշին: 8 տրամ ամուխի բարակ փոշին խառնէ 8 տրամ բարակ շաքարի: Կաթիլ մըն ալ զարեմքիլ բուհը դիր մէջը: Բոլորը լաւ մը խառնէ: Լեցուր տուփի մը մէջ և վերջինով չփէ ակուաներդ:

ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐԷՆ ԱՂՋԻԿ . . .

Շփինալըր անուն ընտանիքին չորրորդ աղջիկ գաւակն աշխարհ եկած էր: Նորածին մանկան ծընունդը հեռի էր բարեբաստիկ դէպք մը ըլլալէ այս ընտանիքին համար: Հայրը կը ձեռքէր սենեակին մէջ արտում ախուր, իսկ մայրը պառկած էր մանձակաւին մէջ դալկահար դէմքով և ընկճուած սրտով: Ծընընդագրերութենէն առաջ քանի՛ քանի՛ անգամներ ըսած էր Պ. Շփինալըր իր կնոջ, թէ կշտացած է այլեւս աղջիկ գաւակէ և թէ այս անգամ կ'ուզէ մանչուկ մը ունենալ: Տիկ. Շփինալըր ալ՝ իր կարգին՝ մէկէ աւելի անգամներ աղօթքի կեցած և խնդրած էր Աստուծոյն որ մանչ գաւակ մը պարգևէ իրեն այս անգամ:

Արարչին կամքը սակայն տարբեր եղաւ:

Ծննդագրերութենէն անմիջապէս յետոյ սենեակ կը մտնէ Պ. Շփինալըր և կը գոչէ զգածուած շէշտով — «Նորէ՛ն աղջիկ. տարէ՛ք, տարէ՛ք, չոսնեմ երեսը» Գուրս կ'ելլէ առանց սիրոյ և շնորհակալութեան արտայայտութիւն մ'ունենալու, և օրերով ոտք չի կոխեր ան իր կնոջ սենեակը:

Աւելորդ է ըսել թէ Պ. Շփինալըր միակը չէ և թէ շատ մեծ է թիւը այն այր մարդոց որոնք անհարկի նեղութիւններ կը պատճառեն իրենց կիներուն երբ մանչ գաւակի ծնունդ չեն տար անոնք: Կիներուն ձեռքն է միթէ սեռը որոշել: Եւ չէ՞ որ դիտութիւնն անգամ անճրկած կը մնայ սեռերը որոշելու իր անկարողութեան առջեւ:

Արդ, կիներ պէտք է հարց տան իրենք իրենց թէ

ինչո՞ւ իգական սեռը այս աստիճան կ'արհամարհուի: Անհերքելի իրողութիւն մըն է թէ կիներ իրենք իսկ են պատասխանատու այս ախուր երեւոյթին համար: Մեր ծանօթութեան շրջանակին մէջ կան բազում և անհամար կիներ որոնք իրենց մանչ գաւակները շատ աւելի արժէքաւոր կը նկատեն քան իրենց աղջիկ գաւակները, և որոնք այս կամ այն կերպով ի հանդէս կը բերեն իրենց այս մոլար ըմբռնումը դաստիարակութեան գործին մէջ ալ: Մանչեր որոշ առանձնակուցներ կը վայելին շատ ատեներու մէջ, ուր կը լսուի յաճախ սա խօսքերը. — «Մա՛նչ է ան. պէտք չունի ընելու ան այս կամ այն բանը. աղջիկներու գործն է այդ...»:

Սիրելի մայրն'ր, դուք որ կը տառապիք թեւեւ ձեր ամուսնոց կոշտութեան պատճառաւ, պէտք է գիտնաք թէ ձեր որդիներն ալ բացարձակապէս անկարող պիտի ըլլան երջանկացնելու իրենց կիները, եթէ այժմէն չկրթէք զանոնք ուղիղ կերպով: Զգուշացէք ձեր մանչ գաւակներուն տալէ այն տպաւորութիւնը թէ իրենք աւելի արժէքաւոր են քան իրենց քոյրերը: Այսու՝ հիմը դրած կ'ըլլաք իգական սեռին հանդէպ տածուած արհամարհանքին: Ի աղայ տիոց սորվելու են մանչեր թէ յարգանք միայն պէտք է ունենան աղջիկներու հանդէպ: Զեր որդիներն կըրթելու ատեն միշտ ոչաց առջեւ ունեցէք սա իրողութիւնը թէ տարիներու հոլովմամբ պզտիկ մանչերը պիտի դառնան այրեր, ամուսիններ և հայրեր, ուստի արթնացուցէք անոնց մէջ, ինչպէս և աղջիկներուն մէջ, փոխադարձ ծառայութեան ու յարգանքի ոգին: Վստահ եղէք թէ ձեր ապագայ հարսերը, թոռներն ու թոռնորդիները պիտի օրհնեն զձեզ երախտագէտ սըրտով:

Տ Ն Ա Կ Ա Ն Դ Ե Ղ Ա Ր Ա Ն

(Յաւելուած)

Ամերիկայի և Եւրոպայի զարգացած ընտանիքներուն մէջ սովորութիւն է ընտանեկան դեղաբան մը ունենալ: Այս դեղարանը կը պահուի՝ մանուկներու հասողութենէն բարձր կը պուստ գարակի մը մէջ: Հոն կը գտնուին անակնկալ և ստիպողական պարագաներու տակ գործածուելիք դեղեր:

Կ'արժէ ընդօրինակել այս սովորութիւնը և ներմուծել հայ շրջանակներու մէջ:

Թուենք առանին դեղարանի կարգ մը դեղերն ու անոնց գործածութեան եղանակները, և ջանանք ապա շիտակ և ուղիղ գաղափար մը առանին դարմանումներու մասին:

Հ Ն Դ Կ Ա Ւ Ի Ղ

Հնդկախելին բաց-դեղին և թանձր հեղուկ մըն է՝ անախորժ համով: Թարմը նուազ անախորժ է, քան թէ հինցածը: Վեց ամիսէ աւելի մնացած հնդկախելը գործածել անյարմար է:

Հնդկախելը լաւագոյն լուծողականն է, որոշ անհանգստութիւններու ժամանակ: Երբ մանուկներ կամ չափահասներ, պաղառութեամբ կամ շատակերութեան հետեւանքով ստամոքսի և աղիքներու խանգարում ունենան, լաւագոյն է, որ հնդկախել առնեն: Կուրաղիքի (էփիէնտիսայթիս) բորբոքման ատեն ունէ լուծողական փոսակար է: Նոյնիսկ՝ հնդկախելն:

Մինչև մէկ տարեկան մանուկներ պէտք է առնեն՝ կէսէն մինչև մէկ թէյի դգալ. մէկ տարեկանէ աւելի մանուկներ՝ մէկէն երկու թէյի դգալ. չափահասներ՝ մէկէն երկու ազուրի դգալ:

Չ Ի Թ Ա Ի Ի Ղ

Հայերու ծանօթ իւզն է: Վառած մորթի համար՝ կէս աւ կէս ձիթախել և կրաջուր գոհացուցիչ ապեղանի մըն է: Աղիքներու անկանոնութենէն և կամ շարունակ թաց մնալէն՝ մանուկներու յետոյքի կարմըրութիւններու և բորբոքումներու ատեն, լաւագոյն դարմանն է ձիթախելով օձումը: Գրեթի ատեն մէկ քանի դգալ ձիթախել աւելցնել՝ խելացութիւն է: Տկարակողմ մանկիկներու համար ձիթախելը օգտակար է՝ իր պարունակած կենսանիւթերով:

Փ Ը Բ Ա Ք Ս Ս Յ Տ

Ջուրի նմանող հեղուկ մըն է, որ երբ փտած նիւթերու հետ շփման գայ, անմիջապէս Ջուրի և թըթւած ինի կը վերածուի, իսկ թթուածինը՝ լաւագոյն մանրէտապան դեղն է: Հոտած վէրքերու, թարախտած ուռերու և արիւնող ձեղքուածքներու համար լաւագոյն հականեխականն է: Մէկ մաս փըրաքսայա և չորս մաս Ջուր՝ լու է կարկարայի համար ալ: Փըրաքսայի շիշին բերանը ամուր գոցելու է, որովհետեւ եթէ բաց մնայ, շուտ կ'աւրուի:

Պ Օ Ր Ի Բ Ա Ս Ի Տ

Ճերմակ փոշի մըն է. տաք Ջուրին մէջ 40° կը լուծուի: Անշուտ հականեխական մըն է: Գաւաթ մը եռացած Ջուրի մէջ՝ թէյի դգալ մը այս փոշիէն հալեցնելու և գործածելու է՝ ականջ ու աչք լուտու, քիթ ու բերան մաքրելու համար. կաթ տուող մայրերու ստինքները ևս պէտք է հականեխական ասով:

Այս փոշին կարելի է գործածել՝ մորթային ունէ ջրոտած բորբոքումի համար ալ:

ՀԱՍՍՐԱԿ ԱՂ

Հասարակ մաքուր աղը՝ մէկ առ հարիւր համեմատութեամբ, կամ մէկ փայնիթ (մէկ բաթլը կամ երկու ջուրի գաւաթ) ջուրի մէջ՝ մէկ թէյի դգալ համեմատութեամբ, սքանչելի հականեխական է: Կը գործածուի՝ կարկարայի և սկանջ ու վէրքեր լուսլու համար:

ՉԿԱՆ ԻԻՂ

Այժմ հաստատուած է որ ձկան իւղը, իսկականը և անխարդախը, կը պարուենակէ շատ անհրաժեշտ կենսանիւթեր (վիթամին): Հէնց այդ սրտածառով ալ կը գործածուի՝ սսկրաթեքութիւն ունեցող մանուկներու, մօր կաթէ զրկուած նորածիններու և սկարակաղմներու ու թոքախտաւորներու համար:

ՊԵՅՔԻՆԿ ՍՕՏՍ

(Bicarbonate of Sodium)

ձերմակ փոշի մըն է. դիւրութեամբ կը լուծուի ջուրի մէջ: (Այս փոշին պէտք չէ չիթել Պէյլինկ Փաուսքի) հետ: Ստամոքսի և աղիքներու խանգարմանց ատեն, հետեւեալ խառնուրդը օգտակար է — Կէս լիմօնի հիւթը խառնէ կէս գաւաթ շաքար-ջուրի մէջ. աւելցուր մէկ թէյի դգալ պէյքինկ սօտա. երբ սկսի փրփրել, խմէ անմիջապէս: Լուացուելիք ջուրի մէջ՝ բուռ մը այս փոշիէն. քերուըտուքի համար հանդատացուցիչ է:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԻՏՈՅՔՆԵՐ

Ամէն տուն՝ իր կահ-կարասիին վրայ պէտք է աւելցնէ հետեւեալ առողջապահական անհրաժեշտ պիտոյքները. — Գրեխ (օրրընկա), պզիկ գրեխ, պէսֆաման, սառոյցի տպրակ, սալ ջուրի տպրակ, հակա-նեխուած բամպակ եւ վիրակապեր: Մէկ եզ. սսկիով գնուելիք այս առարկաներն, որոշ պարագաներու տակ, քսան սակիի դործ կը տեսնեն:

ՄԱՐԶԱՆՔ ԵՒ ՍԲՈՐ

ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆՔԻ ԿԱՆՈՆԵՏ

ԵՒ

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1.— Իր առողջութեան յարգը զիտցող մարդ մը, մտրմնակրթութեան համար իր ժամերէն չնչին մաս մը զոհել չի խնայեր:

2.— Եթէ տանը մէջ մարդոնք ընողը, մաքուր օդին օգուտը վայելել կ'ուզէ, պէտք եղած զգուշութեամբ, առանց հոսանքին ենթարկուելու, սենեակին պտուղանը կամ գուռը կրնայ բանալ:

3.— Որպէսզի կարելի ըլլայ սխայները ուղղել, և աշխատութեան մղուած դնդերներուն կերպ կերպ շարժումները անձամբ նշմարելով հետաքրքրութիւնը վառ պահել, կարելի եղած փորձերը հայելիի մը առջեւ կեցած ընելու է:

4.— Մարզանքի փորձերը գործադրելէ առաջ, քիթը մտքերով կէս գաւաթ ջուր խմելու է:

5.— Միաքը շարժումներու վրայ կեդրոնացնելով անոնք եռանդով կատարելու է, եթէ փորձերը ամէն օր միեւնոյն ժամուն կանոնաւորաբար կատարուին, մեզի սովորութիւն կը դառնան:

6.— Մարմինը ազատ փորձերով կրթելու ամենայարմար ժամանակն է առաւօտուն կանուխ՝ նախաճաշէն առաջ:

7.— Նախապէս պէտք է հանել այն հազուատները, որոնք վզին, բազուկներուն, կուրծքին, մէջքին և սրունքներուն անհանգստութիւն տալով, անոնց ազատ շարժմանց արգելք կ'ըլլան:

8.— Եթէ ամառ է, կարճ տարատ մը կը կրեն, իսկ եթէ ձմեռ՝ անոր վրայ բարդէ ֆլանելով հողաթափ մըն ալ կրնան աւելցնել:

9.— Մարզանքը վերջացնելուց պէս պաղ լու-
գանք(*) մը առ և մարմինդ չորցնելով մասնաւոր
ձեռնոցով կամ սրիւնով աղէկ մը շիւէ (friction) մին-
չեւ որ կարմրի: Բայց այս գործողութիւնները կա-
տարելէ վերջ, գոնէ քառորդ ժամ մը նստելով կամ
քովնտի պառկելով պէտք է հանգչիլ որպէսզի մկան-
ները յոգնութիւն անեն:

10.— Ինչ ինչ պատճառաւ սրարդ լոգանքէն զըր-
կուածները, մարզանքէ ետք պէտք է միայն չիւսմով
մը գոհանան, որ արեան շրջանի բնականոն գործու-
նէութեան շատ կը նպաստէ:

11. Դժուար շարժումէ մը առաջ եկած յոգնու-
թիւնը բոլորովին դադրելէ վերջ պէտք է յաջորդը
սկսիլ:

11. Չափազանցութիւններէ զգուշանալու է, և
պէտք չէ միեւնոյն ջիղերու խումբը երկար ժամանակ
շարժման մէջ դնելով յոգնեցնել, որովհետեւ երբ
անոնք չափէն աւելի կծկուին կամ թուլնան, իրենց
առանձգութիւնը կորսնցնելով կը տկարանան:

13.— Յոգնեցուցիչ փորձերէ վերջ, ձախ կամ աջ
ստքը առջեւ կոխելով վայրկեան մը հանգչելու է-
(կռնակի վրայ պառկելով ալ կարելի է հանգչիլ):

14.— Բացի շնչառութեան յատուկ փորձերէ,
միւս բոլոր վարժութեանց ատեն շունչ առնուլ ու
տալը ներդաշնակօրէն քիթով ընելու է:

(*) Մարզիկներն ու քաջակազմ անձերը կրնան
ամեն եղանակի մէջ պաղ լոգանք առնուլ. որ երբ
իմաստութեամբ գործադրուի, սուղիւ առողջութեան
ես նպաստուր է: Այսուհանդերձ, ՄԱՀԱԲՆԻ անբիւ
հետեւաններ առաջ եկած են անկէ, ԱՆՆՈՂՆԵՄՈՒ-
ԹԵԱՆ պատճառաւ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԵՕԹՆ

Արարչագործութեան մէջ կօթը օր կայ, կօթը օր
շարժութեան մէջ, կօթը բաժանում Տէրունական ա-
ղօթքին մէջ: Մարդուն տարիքը կօթը շրջան ունի,
լուսինը կօթը երեւոյթ: Հրէական կօթը տարւոյն
մէկը շարժութ էր, կօթն անգամ կօթը Յորելեան կը
բերէր, իւրաքանչիւր տօն կօթը օր կը տեւէր: Ասիոյ
մէջ կար կօթը եկեղեցի: Յովհաննէս իր տեսիլքին
մէջ տեսաւ կօթը աշտանակ, կօթը ասղտ, կօթը հը-
րեշտակ, կօթը փող, կօթը հարուած, կօթը եղջիւր:
Փարաւոն երազեց միշտ կօթը. սով և առատութիւն
տեւեցին կօթը տարի:

Եօթն էին հրաշալիք աշխարհի.— Եգիպտական
Բուրդերը, Բարեկունի առկախ պարտէզները, Արտե-
միսի Տաճարը Եփեսոսի մէջ, Լուսնթափ արձանը
յՈՂԻՄԱՊՈՍ, Մոսղոսի շիրիմը Գարիոյ մէջ, Հասդոսի
վիթխարի Անդրին, Աղեքսանդրիոյ Փարոսը:

Եօթն էին Յոյն իմաստունք.— Թաղէս Աթենա-
ցի, որոյ նշանաբանն էր «Ծանիր զեզ»։ Սողոն
Սպարտացի— «Վախճանը մտածե»։ Շիլլօ Միլիտէցի
— «Երաշխաւորութիւնը ասողը ապահով կ'ըլլայ»։
Պիտա Փիէնցի — «Մարդոց շատ չար է»։ Կղէոպոլոս
Լինտոսցի — «Ոսկեղէն միջինը» կամ «Փախի՛ր ճարա-
հեղուքեն»։ Փիտագորս Միտիլէնցի — «Ժամանակը
բռնէ նակասին վարսեն»։ Փէրիանտէր Կորնթացի —
«Ոչինչ անկարելի է աշխատուիլ»:

Եօթն էին գործք բարի — Հիւանդը խնամել,
Անօթին կերակրել, Ծարաւին խնայել, Մերկը հազ-
ուեցնել, Տնանկը պատասպարել, Որբին և արքայի
այցելել, Մեռեալը թաղել:

55-6497



Եօթն էին մեղք մահացու — Հպարտութիւն, Բարկութիւն, Նախանձ, Յանկութիւն, Որկրամոլութիւն, Ազահութիւն, Ծուլութիւն:

Եօթն են առաքինութիւնք — Հաւատք, Յոյս Սէր, Խոնկամութիւն, Արդարութիւն, Քաջութիւն, Ժուժկալութիւն: Առաջին երեքը կը կոչուին նաեւ Սրբազան առաքինութիւնք:

ԾԱԾԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ծեծած անուշատըրը (նշատըր) պող ջրոյ մէջ լուծելով՝ գրէ. եւ թուղթը հովին չորցուր. եթէ կ'ուզես գրածդ կարդալ՝ թուղթը կրակին վրայ բռնէ:

Ուրիշ կերպ մ'ալ.

Եթէ ջրով լուծուած պաղլեղով (չապ) գրես եւ չորցնես՝ կարդացած ատենդ թուղթը ջրով թրջելու եւ որ գրերը տեսնես:

ԹԻԹԵՂԻ ՎՐԱՅ ԳՐԵԼՈՒ ՄԵԼԱՆ

Տարրաբանք հետեւեալ մելանը կը գործածեն թիթեղի վրայ գրելու համար.—

10 մաս բորական թթու (ասիտ պօռիք):

10 մաս ջուր եւ 1 մաս պղինձ: Պղինձը բորական թթուի մէջ լուծելէդ ետքը վերոյիշեալ 10 մաս ջուրը վրան աւելցուր. իսկ գրելու համար սովորական գրիչ մը բաւական է: Եթէ թիթեղը իւղային նիւթերով աղտոտած է՝ կաւիճի փոշիով պէտք է մաքրել:

ԲԱՆՔ ԻՄԱՍՏՆՈՅ

Պեճ է որ խիղճն մարդկային գործոց բեւեռային աստղն լինի:

* * * Յոյսն կը զարգարէ ապագան հազար գեղեցկութեամբ:

* * * Ազան հօր շուալ ուղի կը վայլէ:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔՆԵՐ

ԲԱՌԵՐՈՒ ՆՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐ

Շատախօս

Թախանձանք

Փախաք

Անկարողութիւն

Ժառանգորդ

Անցեալ

Ներկայ

Ապառնի

Բանգէտ

Գլխու ցաւ

Այցելութիւն

Բանաստեղծ

Հոգէտա

Մեծաբանութիւն

Ճշմարտախօսութիւն

Խօսի շաղպֆ

Լուծիչ դժուարութեանց

Դիմակաւորեալ տփանֆ

Նախանձ

Յուսացող

Անգործածելի հին հազուս

Քիչ գործածուած հազուս

Տակաւին դերձակի ձեռք շանցած սեսակ սեսակ կերպասներ

Խնդիրներու տպրակ

Թոյլ բերան բնկեր

Գլխու ցաւութիւն

Խօսի գող

Խօսի չհասկցող մարդ

Գրամագուլխ սօլանսրնոց

է բոյս ինչ ասելի

ԵՐԵՔ ՊՆԱԿՆԵՐ

Երեք փոքր պնակներէն մէկը լեցուր մաքուր ջուրով, միւսը ցեխոտ ջուրով եւ երրորդը պարապ ձգէ: Մէկուն աչքերը կապելով առաջնորդէ դէպի պնակները: Եթէ իր ձեռքը առաջին անգամ դպցնէ մաքուր ջուր պարունակող պնակին, պիտի ամուսնանայ օրիորդի մը հետ, եթէ ցեխոտ ջուրին, որքեւայրիի մը հետ, իսկ եթէ պարապ պնակին, պիտի մեռնի ամուրի:

ԱԳՍՐԱԿԻ ԿՆԵԴԱՆԻՆԵՐ

Խաղին առաջնորդը բոլոր ներկաներուն կուտայ մէյմէկ կենդանիի անուն, իր նախապէս ընտրածին

տալով էջը: Յետոյ կ'երթայ իւրաքանչիւրին ականջին փափաւով որ բոլորովին լուռ կենան, երբ կարգը կուգայ էջը առնողին, անոր կ'ըսէ. «Երբոր թաշկինակս գետինը ձգեմ, բարձրաձայն պիտի դուստ»: Երբ ամէնը պատրաստ են, առաջնորդը մէջտեղը կը կանգնի և բարձրաձայն կ'ըսէ ամէնուն. «Բոլորդ ալ յիշեցէք թէ թաշկինակը գետինը ձգածիս պէս ի՞նչ ընելու էք և որքան բարձր այնքան լաւ»: Ու անա թաշկինակը ինկածին պէս ամէնը կատարեալ լուռ թիւն կը պահեն մինչդեռ ընտրուածը բոլոր ուժով կը գուայ, քրքիջներ խելով ներկաներէն:

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ն Ե ր

5. Մարդ մը հանդիպեցաւ օրիորդի մը որ խուճիք մը սագեր կը քչէր: «Ի՞նչպէս էք օրիորդ, ո՞ւր կը տանիք այս երեսուն սագերը», հարցուց: «Ո՛չ, պարոն, երեսուն սագ չունիմ, բայց եթէ ունեցածիս չափ ալ ունենամ ու անոր կէսին չափ ալ ու հինգ աւելի, այն ստեն երեսուն կ'ունենամ» ըսաւ օրիորդը: Քանի՞ սագ ունէր: (Տար)

6. Ման եմ գալիս հաւ չեմ.

Լոյս եմ տալիս ճրագ չեմ: (Փոստուոյ)

7. Կնոջ մը տարիքը հարցուեցաւ. կինը պատասխանեց. «Ինը դաւակ ունիմ, իւրաքանչիւրին մէջտեղ երեք տարի տարբերութիւն կայ և ամենամեծը ծնաւ երբ ես 19 տարեկան էի, ինչ որ հիմա ամենափոքրիս տարիքն է»: Ի՞նչ էր կնոջ տարիքը: (62)

8. Անթել մանած, անձեռք հինած,
Եօթը գոյնով ներկուած: (Ծիրանի գօտի)

9. Ինքս մէկ՝ աչքս հազար: (Մաղ)

10. Թեւեր ունիմ թռչուն չեմ
Հաւկիթ կ'ածեմ հաւ չեմ: (Ձուկ)

Զ Ո Ւ Ա Ր Թ Պ Ա Տ Մ Ո Ւ Ա Ծ Ք Ն Ե Ր

Թ Ռ Զ Ո Ղ Ս Տ Ն Տ Ո Ւ Ն

Հետաքրքիր փոքրիկ մը հարցուց իր մօրը:

— Մայրի՛կ, հրեշտակ ըսուած բանը արդեօք ի՞նչ է:

— Զաւակս, հրեշտակները քեզ նման գեղեցիկ աղջիկներու պէս արարածներ են, միայն թէ անոնք թեւեր ունին, կը թռչտին:

— Իրա՞ւ կ'ըսես, մայր իմ:

— Այո՛, զաւակս:

— Ուրեմն, երէկ իրիկուն հայրս իմ ստնտուխ «հրեշտակի իմ» կ'ըսէր կոր. արդեօք ան ալ կը թռչի՞:

— Անտարակոյս, սիրելի աղջիկս, պատասխանեց մայրը, զգացած զայրոյթը զսպելով, վաղն առաւօտ կանուխ պիտի թռչի երթա՛յ:

Հ Ա Ն Ո Ւ Մ Ի Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ը

Ղաղարո՛ս, 10էն 10ը հանես նէ, ի՞նչ կը մնայ:

— . . .

— Ըսէ, տեսեմ, շո՛ւտ:

— . . .

— Մի՛ շուտիր, պատասխանէ՛, զոր օրինակ, ենթադրենք թէ հայրիկդ քեզի տասը զուրուշ տուած ըլլայ, դուն ալ ամէնը մէկէն ձգած կորսնցուցած ըլլաս, այն ստեն գրպանիդ մէջ ի՞նչ կը մնայ:

— Ծակ մը:

Ա Ր Ժ Է Ք Ա Ի Ո Ր Գ Լ Ո Ւ Ն Մ Ը

Բոլոնիոյ վերջին թաղաւորին դէմ դաւաձանուած թիւն մը նիւթուելով՝ դաւաձանաց մին թաղաւորին գլուխը իրեն բերողին 2000՞ ոսկի խոստացաւ, եւ

ասի ալ թագաւորին գրով իմացուց զայն երկիւղի մէջ ձգելու համար: Թագաւորը պաղ արեամբ սա պատասխանը գրեց. «Նամակնիդ կարդացի, ուրախ եմ որ գլխաւ ձեր քով այդքան մեծ արժէք ունի, ինչու որ ես ձեր գլխուն համար ստակ մը անգամ չեմ տար»:

Ի՞նչ ընի . . .

Միլտովնի կը հարցնեն թէ «ամէն երկրի օրէնք կը ներկն 14 տարեկան տղու արքայական գահը բազմելուն, բայց ի՞նչու այդ տարիքն ունեցող տղոց ամուսնանալուն չեն թոյլատրեր:

— Որովհետեւ, երկիր մը կառավարելը կին մը կառավարելէն շատ դիւրին է. կը պատասխանէ:

ԶՈՒԱՐՃԱԼԻ ՏԱՊԱՆԱԳԻՐԻՔ

1

«Աստ հանգչի Մեծն Աղեքսանդրի պէս պերճ, յաղթող, Աշխարհաստատ մի մարդ.— Ե՛ս. այսինքն՝ ա՛փ մի հող:»

2

«Այս ձերմակ քարին ներքեւ կը հանգչին Անպէտ սսկորներն՝ ազահ մի մարդու Որ՝ դիտմամբ՝ մեռաւ տարւոյն օրն Վերջին Որպէս զի պարգեւ չըստիպուի՛ տալու...»:

3

«Այն որ սատ դընի՛ յաւէտ կ'առնուըր փոխ. Չէր գիտեր առածն ես տալ յաւիտեան. Օրհանն եկաւ զինքն ընել ստնակօխ... Իւր առածն հատոյց միայն... Բընութեան:»

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ Ը

Տաք ըմպելին հիմակ պատրաստ էր, նպարավաճառը երկու գաւաթ լեցուց և դրաւ սեղանին վրայ, շոգիի ամպերը վեր կ'ելլէին, եւ եթէ այս անիծեալ կարագը չ'ըլլար, Մանօլ հոգի պիտի տար այս ըմպելին համար:

Մանօլ, քեզի քիչ մ'ալ քըթըր հաց պատրաստեմ պայմանով որ վրայի կարագը դուն քսես, ըսաւ Գօսթի, այնպիսի անտարբերութեամբ որ Մանօլ կը կարծէր թէ ըրածը անձանօթ էր նպարավաճառին: Տապկած սազ ալ կայ. եթէ կ'ուզես անկէ ալ կրնաս ճաշակել, շարունակեց նպարավաճառը:

Խեղճ Մանօլ, ներսէն և դուրսէն տաքնալով անտանելի կացութեան էր մասնուած, գլխարկին տակ պահուած կարագին հալիլը կ'զգար արդէն, և թաշկինակը բոլորովին իւզոտած էր կաթիլ կաթիլ երեսնի վար հոսող կարագի քրահնքները սրբելով: Գօսթի, իբր թէ բոլորովին անտեղեակ Մանօլի կացութեան, շարունակ փայտ կը նետէր վառարանին մէջ, որոյ առջին յօտած էր Մանօլ ոտքերը կրակարանին հպած:

Սարսափելի ցուրտ կ'ընէ այս գիշեր, ըսաւ Գօսթի, ցնցուելով և սարսուղ կեղծելով, բայց սա ի՞նչ է ծօ, Մանօլ, դուն կը քրտնիս կոր չէ՛, կ'երեւի թէ մտաւր մինակ ես եմ, ծօ, գլխարկդ ինչս'ու չես հաներ, կեցիք հանեմ ես և սեղանին վրայ դնեմ:

Ո՛չ, ո՛չ, դոչեց Մանօլ, երկու ձեռքերով գլխարկը կոխելով, ձգէ զիս որ երթամ, անհանդիստ կը զգամ, հիւանդ եմ, կ'աղաչեմ թող որ երթամ, այլեւս չեմ կրնար հոս կենալ:

Հալած կարագին հոսանքը Մանօլի



երեսն և վիզն ի վար վագել, հետեւանք երկու ձեռքով գլխարկը կոխելուն, բոլոր հանդերձները իւղտանցան, վիզն ի վար մարմինն վրայէն հոսեցաւ հալած կարագը և կօշիկներուն վրայ իսկ տարածուեցաւ, խեղճ Մանօլ կարծես իւղով լեցուած տակաւի մը մէջ ինկած և ելած էր:

Է՛, պիտի երթաս հէ՛, լաւ, գիշեր բարի Մանօլ, գոչեց Գօսթի անվերջանալի քրքիջներով, կամքը քուկդ է, կրնաս երթալ: Միայն թէ — պտուց Գօսթի Մանօլի հտեւէն, երբ այս փողոց էր ելած — գիտցած ըլլաս որ այս գիշերուն ինձ պատճառած զուարճութիւնդ տասն քաշ կարագի հետ չեմ փոխեր:

ԻՄԱՍՏՈՒՆ ԴԱՏԱԻՈՐԸ

Ատենօք դատաւոր մը կար որ իր դատական նստրք արարքներով հուշակաւոր էր եղած և ամէն կողմ տարածած իր համբաւը:

Չին հեծած դէպի դատաւորին քաղաքը կ'երթար կրօնաւոր մը, որ ստուգէ թէ արդեօք բոլոր լսածները ստո՞յգ էին այդ դատաւորին նկատմամբ:

Ճամբան ծերուկի մը պատահեցաւ. տէր իմ, ըսաւ սա, աղերսական ձայնով, գթա ինձ, յոգնած եմ, սա դիմացի քաղաքը կ'ուզեմ երթալ, զիս ձիուդ ետին նստեցուր:

Կրօնաւորը հաւանութիւն տուաւ, ծերուկը ձին հեծաւ: Երբ սակայն քաղաքին դրան առջև հասան ծերուկը ձիէն վար իջնել կը մերժէր:

Ինչո՞ւ ձիէն չես իջներ, հարցուց կրօնաւորը ծերուկին:

Դու պէտք է իջնես և ոչ թէ ես, ըսաւ ծերուկը անպատկառ ձայնով:

Բայց ձին իմս է, անիրաւ մարդ, պատասխանեց կրօնաւորը յուզմամբ:

(Շար՝)

ՈՒՂԵՑՈՅՑ ԿԵՆՑԱՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Մ Ի'...

Թ .

ՎԱՐՄՈՒՆԲ՝ ԾԱՌԱՅԻՑ ՀԵՏ

Մի՛ մոռնար թէ ծառայից դասուն հետ վարուելու եղանակովդ կը չափուի ընդհանրական կըրթութեանդ աստիճանը:

Մի՛ խօսիր ծառաներու հետ անքաղաքավարութեամբ. ծառայ մը՝ ամէն բանէ առաջ պէտք է քաղաքավարութիւն սորվի իր ախրջմէն կամ ախրուհիէն: Առանց պատշաճից դէմ գործած լինելու, կրնաս ըսել ծառայիդ «տո՛ւր ինձ դայդ» կամ «ինձ բե՛ր դայդ». մի՛նչեւս բարեկամիդ ծառային պարտիս ըսել, «կ'ուզէ՞ք դայդ ինձ բերել կամ տալ» եւ ուզուածը երբ բերուի յարել անմիջապէս «չնորհակալ եմ»:

Մի՛ ըսեր ծառայիդ կշտամբական կամ խիստ բաւ մը բարձրաձայն: Լսողաց միշտ անհաճոյ կը լինի այդ: Բաց աստի, ծառայք խիստ վարմունքով չեն բարեօքիր, ընդհակառակն կրնայ ըսուիլ թէ աւելի բիրտ և անիոյթ կը լինին: Յաճախ՝ քաջալերական և գնահատական բաւ մը աւելի մեծ գործ կը տեսնէ:

Մի՛ վարժեցներ ծառայդ, որ բանայ սենեակիդ դուռը, առանց կանխաւ դայն բաղխելու:

Մի՛ լինիր անփոյթ մերթ ընդ մերթ ծառայիդ հաճոյք տալու մասին. սակայն մեծ հող տանելու ես որ վտանգաւոր վայրեր չայցելէ կամ գէշ ընկերակցութեամբ չեղծանի:

Մի՛ մոռնար թէ արդար պէտք է լինի ի՛նչ որ ծառաներէ կը պահանջուի. պարտ է համբերել ակամայ սխալմանց:

Մի՛ լինիր ազան կերակրոյ համար, զի այդու տեղի կուտաս որ ծառադ սպորէն կերպով ձեռք բերէ իրեն ստիպողական պտոյքն:

Մի՛ զլանար ծառայիդ քու փորձառական վերակացու թիւնդ: Վարժ տանտիկիներ պէտք է վարժեցնեն դեռատի, դեռուս և անփորձ ծառաներն, վասընզի ինքնին կամ դպրոցի մէջ չեն կրնար ուսանիլ ամենայն ինչ:

Մի՛ յանդիմաներ ծառադ այլոց առջև: Ի ներկայութեան հիւրոց, սխալմունք մը ի տես բերին ո՛չ միայն անդէպ է յաչս ներկայից, այլ վնասարեր է սպասաւորաց, մանաւանդ՝ երբ տէր են զօրաւոր անձնատիրութեան:

Մի՛ մտնար թէ պէտք է սպասաւորները ժամանակին հրահանգել, որ ինչպէս իրենց տեարց և տիրուհեաց, նոյնպէս և անոնց բարեկամաց և հիւրոց հետ ուշադրութեամբ և քաղաքավարութեամբ վարուին:

Մի՛ արհամարհեր ծառադ. յիշէ՛, թէ անակառավարական բարելու և բարգաւաճ վիճակդ անոր կը պարտիս մասամբ:

ԱՌԱՄՔ ՀԱՅԿԱԿԱՆ

Մէկ անխոհեմ խօսքն ի՞նչ է
Աշխարհս իրար կը խառնէ.
Ճանձն ի՞նչ է, ոչի՛նչ է,
Բայց մարդու սիրտ կը խառնէ:

* *

Ազջիկը մօրը վրան
Ինչ որ տեսնէ ան կ'ընէ,
Մանչը հօրը վրան
Ինչ որ տեսնէ ան կ'ընէ:

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

է.

1. Էղած ազուրն լաւ է, քան չեղած փիլաւը:
2. Էրիկ մարդու մը կամ կնոջ մը սիրտը նմոյշ մըն է բոլոր մարդկային սեռին:
3. Է՛ն աննշան համարուած բաներն մեզի լաւ դաս կուտան:
4. Էրկու եղին մի հմուտ հերկավար է պէտք:
5. Էրկու ոչը՝ բնաւ մի այո՛ չարժեր:
6. Էրկու ընկերի մէջ եղած խորհուրդը գաղանիք չէ...:
7. Էթալը կրկին վերադառնալու համար է:
8. Էրկաթի ամրութիւնը մարդու կազմութեանէն թոյլ է:
9. Էփած գարի հացը լաւ է, քան անեփ ցորեն ալիւրը:
10. Է՛ն գեղեցիկ դէմքը, ժանտ և կրքոտ բնաւորութեամբ կ'աւրուի:

Ը.

1. Ըմբոստութիւնը անհաւատարմութեան առաջին քայլն է:
2. Ըմբռնէ ուղեղով, ոչ թէ ձեռքերով:
3. Ընկածին ձեռք կարկատէ, որ պարտքի տակ չմնաս:
4. Ընկերը հարկաւոր դէպքում, բերդէն աւելի ամուր պատնէջ է:
5. Ընդունակութիւնը մարդու մը անսպառ հարստութիւնն է:
6. Ընտանիք կառավարելը, թագաւորութեան չափ դժուար է:

7. Ընչաքաղցը լախող գողանից խիստ վատթարագոյն է:
8. Ընտրելը մեծ ընդունակութիւն կը պահանջէ մտքոցմէ:
9. Ընտիր փոքրը գերազանց է, քան մեծ անպէտը:
10. Ընտրէ՛ հաւատարիմ ամուսին, ոչ թէ գեղեցիկ:

Թ.

1. Թագաւորն իր պետութեան առաջին ծառան և առաջին պաշտօնատար անձն է:
2. Թագի արժանաւոր գլուխը, ժողովուրդի տէրն ու սիրելին է:
3. Թշնամանք վանելու ամենէն ապահով և արագ միջոցը՝ մոռացումն է:
4. Թշնամանել անտեղի, փոքրոգութիւն ցոյց տալ կը նշանակէ:
5. Թշնամուղ նախապէս իմաց տուր, ապա յարձակէ:
6. Թշուառ է այն անձը որ ինքզինքը կառավարել չի գիտեր:
7. Թող հղօրն իր զօրութեամբ և մեծն իր մեծութեամբ չպարծենայ:
8. Թողութիւն տուր հակառակորդիդ, որ քու առջևդ սարուկ լինի:
9. Թող յոյս ըլլայ մեր ծառան և հաւատք մեր գաւազան:
10. Թոյլ չարժող մարդը՝ կտարած մեքենայի նմանութիւն ունի:

Թ.

1. Ժամանակը խնայելով գործածէ, որ օրերդ ապարդիւն չանցնին:

2. Ժամանակն անխնայ վատնողը, քաղցածութեան գուռը կը բողբէ:
3. Ժանգոտած իրը, որքան ալ թանկագին ըլլայ, իր խկական տրժէքը չունենար:
4. Ժանգը մետաղներու տղակտնիչ ցեցն է:
5. Ժառանգը ծնողներու խոշոր դրամազլուխն է:
6. Ժառանգութիւնը ստուերի է նման, մէյ մ'ալ տեսար թուա գնաց:
7. Ժլատը անսիրտ և անհոգի կը շրջի աշխարհի մէջ:
8. Ժլտաի հոգևով տպրողը, թառամած ծաղիկի է նման:
9. Ժուժկալութիւնը մտքրակեցութեան նախաաիպն է:
10. Ժողովուրդը անդուօզ հեղեղ է, ինչ որ առջևն իյնայ կը քչէ կը տանի:

Ի.

1. Իմաստունը նա է, որ ամէն բանէ բան կը սորվի:
2. Իմաստունի գանկը՝ գիտութեանց բավանդակիչ բովն է:
3. Իմաստութիւնը՝ մտաւոր գոհարեղէններու թանկագինն է:
4. Իմաստունները կը ստեղծեն, իսկ յիմարները կը տարածեն:
5. Ինչ բան որ քեզի վնաս է, ընկերիդ մի կամիր:
6. Ինչո՞վ կարելի է վրէժ առնել... շատ բարիք ընելով:
7. Իր պակասութիւնները ճանաչելով՝ մարդ կը դառնայ կատարեալ:
8. Իշխանութիւնը ձեռք կը բերուի աշխատանքով:
9. Ինքնագոհ մարդը՝ ամենաերջանիկն է աշխարհի մէջ:

10. Իր վիճակէն դժգոհ անձը՝ թշուառներուն թըշուառն է:

լ .

1. Լաւ է խելօք թշնամի ունենալ, քան յիմար բարեկամ:
2. Լաւ սկիզբը գործի մը կէսն է:
3. Լաւ օրէնքը թագաւորութեան պատիւն է, լաւ մարդը՝ հասարակութեան:
4. Լինել մարդու բարեկամ, կը նշանակէ իրապէս ապրիլ:
5. Լրջութիւն և չափաւորութիւն.— ահա՛ սկըզբունքս:
6. Լուրջ մարդիկ ամենամեծ յողթանակները կը ստաննն:
7. Լուսութիւն պահել՝ կատարեալ յողթանակ տանիլ է.
8. Լուսաւորութիւնը սղգերու կատարելութեան ջերմաչափն է:
9. Լաւ անունը թո՛ղ, քան լաւ հարստութիւն — ժառանգութեան համար:
10. Լսել իմաստուններուն, կը նշանակէ մեծամեծ գանձեր շահիլ:

կ .

1. Խաղաղութիւն սիրողը՝ երկար ապրելու ձրգտում կ'ունենայ:
2. Խաղաղութիւնն ու հանգստութիւնը գերեզմանին մէջ միայն կը վայելենք:
3. Խելացի մարդը կ'ամչնայ իւր պակասութիւններէն:
4. Խեղճութեան զարդը՝ մաքրութիւնն է:

5. Խելացի մարդը սրտին վրայ ունի զլեզուն իսկ անխելքը լեզուն վրայ ունի զսիրան:
6. Խիղճը թէև ստամներ չունի՝ բայց կը կծէ:
7. Խիղճը Աստուծոյ ձայնն է մարդու սրտին մէջ:
8. Խնայէ ժամանակը, որ ի զուր չերթայ:
9. Խորամտնկութիւնը մանր դրամ է, անով մեծ բան չես կարող գնել:
10. Խիղճ մը հանդարտ և անգործ է տօն մը մըշարն ջենական:

Մ .

1. Ծովու ձուկերէն ու երկնից աստղերէն շատ են մարդկանց չարիքներն աշխարհիս երեսը:
2. Ծածկամիտ եղիբ, որ մի օր յանցանքի չմատնուիս:
3. Ծածուկ գործուած յանցանքը, մի օր լոյս աշխարհ կուգայ:
4. Ծողիկները դաշտերու զարդն են, իսկ մանուկները՝ տան:
5. Ծանր բեռ տանելը՝ ծանր յանցանք տանելէն շատ հեշտ է:
6. Ծուլութիւնը ողջ մարդուն գերեզմանն է:
7. Ծեր կանայք սիրոյ քաղաքականութեան մէջ պաշտօնադուրկ նախարարներ են:
8. Ծովի ծփանքը վրդոված սրտի ճշգրիտ պատկերն է:
9. Ծովը աւելի քիչ խաբուսիկ է, քան կնոջ խօսքը:
10. Ծեծ տուէք իշուն, էչն է միեւնոյն:

ԲԱՆՔ ԻՄԱՍՏՆՈՑ

Այն որ իր որդւոյն արհեստ չի սորվեցներ՝ զանի գողութեան կը պատրաստէ:

Գ Ր Ա Կ Ա Ն

Ե Ր Ե Ի Ո Յ Թ Ն Ե Ր

Ամառուան մէջ երբոր ամպերը հանեն շըշուկ,
 Հորիզոնը երբոր ձեղքեն շանթն ու փայլակ,
 Հանդարտ եղէ՛ք, յորդ անձրեւներն են վաղանցուկ,
 Ամպերէն ետք, երկինք կ'ըլլայ ջինջ ու յտակ.
 Շատ աղմուկին մի՛ հաւատարք:

Մրրիկէն վերջ, երբոր տեսնէք ծովը հանդարտ,
 Ինչպէս կոյսին այերանիւթ քողն սպիտակ,
 Անոր ներքեւ կոհակներ կան լարած թակարդ,
 Եւ կը դիզուին խուլ դայրուցքնիր կուտակ կուտակ.
 Դուք այդ տեսքին մի՛ հաւատարք:

Երբ նըշենին ձմեռուան մէջ բանայ ծաղիկ,
 Երբ Յունիսին ձիւնը տեղայ բամպակ բամպակ,
 Խաղ մըն է այդ, քմոյշ մը լսկ. մի՛ ստրստիք,
 Բնութեան պէս անփոփոխ են մարդիկ համակ.
 Երեւոյթին մի՛ հաւատարք:

Երբոր տեսնէք բարեպաշտիկ տիկին մ'ազնիւ,
 Որ ամէն օր ժամ կը վազէ եռանդով տաք,
 Եռանդին խորն ո՞վ գիտէ ի՞նչ ունի հաշիւ,
 Մարդոց պարկեշտ երեւոյթին արժէք մի՛ տաք.
 Կեղծ վարմունքի մի՛ հաւատարք:

Երբոր օրիորդ մ'ուզէ համեստ ձեզ երեւալ,
 Վար առնելով ակնարկները սեւ կամ խաժակ,
 Բիբերուն մէջ արդեօք ի՞նչ կայ անակնկալ,
 Աչքէն անմեղ կրնան նայիլ ձեզի շիտակ.
 Սուտ ձեւերու մի՛ հաւատարք:

Ո՛վ որ շատ սուրբ կը ձեւանայ մեղքին հանդէպ,
 Ո՛վ որ անսենդ, անքէն մարդու կ'առնէ դիմակ,
 Վախցէ՛ք անկէ, ծաղկին ներքեւ թոյն կայ ստէպ,
 Փայլուն նիւթերն ոսկի չեն միշտ զուտ և յտակ.
 Խօսքի, փայլի մի՛ հաւատարք:

Դիտեցէք թէ գործը մարդուն ունի՞ արժէք,
 Թէ իր փառքը չի՞ քարոզեր մուսնեակով.
 Թէ չունի՞ ձայն, ո՛չ աղաղակ, գանգատ երբէք,
 Թէ իր պարտքին կը զոհէ՞ շահն իր հաճոյքով.
 Հաւատացէ՛ք, գացէք իր քով:

Ի Ժ Ն ՈՒ ՏՁՐՈՒԿԸ

Իժը ազրուկին կ'ըսէր անցեալ օր.
 — «Քոյրի՛կ, երկուքս ալ ունինք խայթ հատու,
 «Այլ գիտե՞ս արդեօք, պատճառն ի՞նչ է որ
 «Ես կը հալածուիմ, կը փնտրուուիս դու»:
 Յարեց միւսը — «պատճառն այն է պարզապէս,
 «Որ ես կը բուժեմ, մինչ կ'ապաննես դու»:

Բ Ա Ն Ք Ի Մ Ա Ս Տ Ն Ո Յ

Բաղդն սովորաբար պարկեշտ անձանց նպաստաւոր չէ. ծովերու փրփուրն մակերեւոյթին վրայ կը բարձրանայ, իսկ մարդարիաները խորը կը մնան:

* * Ի՞նչ է նորաձեւութիւնը.
 — Հոսանք մը, որ շատ ընտանիքներու նստերն աղքատութեան ժայռին դէմ մղելով, խորտակած և խորասոյզ ըրած է կենաց ծովուն մէջ:

ՏԱՆՏԻԿՆՈՋ ԲԱՐԵԿԱՄԸ ԽՈՂԱՆՈՑԷՆ ՆԵՐՍ

Ս Ս Լ Ա Դ Ա Ն Ե Ր

9. ԿԱՆԱՆՉ ԼՈՒԲԻՍՅԻ ԵՒ ՈՒՈՒՆԻ ՍԱԼՍՏ.—

Կէսական բաթլը լուբիան և սլոանը (պէղէլիտ) զատ զատ խաշելէ յետոյ պարզուած անցուցէք: Պազելէ վերջ լուբիան ջարդեցէք, վրան աւելցուցէք երկու պճեղ սխտոր ու պէղէլիտան, քիչ մը լիժօն, ալ ու պղպեղ և դրէք ստլատի տափակ պնակի մը մէջ: Վըրան զարգարեցէք պղտիկ կապոց մը կանանչ ճակընդեղով (բանճար), երկու կարծր խաշած և կլոր կլոր ջարդուած հաւկիթով ու մանր ջարդուած ազատքեղով:

Կ Ե Ր Ա Կ Ո Ւ Ր Ն Ե Ր

1. ՕՄԼԷԹ.— Երեք հաւկիթ զարնել 3 տպուրի դգալ կաթով. աւելցնել կէս թէյի դգալ ալ, մէկ ութերորդ թէյի դգալ պղպեղ և խտանել. տապակին մէջ մի քիչ կարագ հալեցնել, զարնուած հաւկիթները մէջը թափել: Եթէ յատակը քիչ մը թուխնայ՝ միւս կողմը դարձնել, եփելէն վերջ վրան ցանել մի քիչ կարտուած ազատքեղ:

2. ԳԵՏՆԱԽՆՉՈՐԻ ՕՄԼԷԹ.— Երկու տպուրի դգալ մանրուած սոխ կարմրցնել 2 տպուրի դգալ կարագով: Ուրիչ ամանի մէջ 3 հատ խոշոր խաշուած գետնախնձոր ճզմել, վրան աւելցնելով կէս դաւաթ տաք կաթ. մէջը դնել 4 զարնուած հաւկիթ. աւելցնել մի քիչ ալ և պղպեղ և մանրուած ազատքեղ. բոլորն դնել սոխով կարագին մէջ և եփել մինչև որ օմլէթի վիճակը ստանայ:

3. ՍՄԲՈՒԿՈՎ ՕՄԼԷԹ.— Ըստ սովորականի սըմբուկները ջարդել և թեթեւ մը տապակել կարագի մէջ. լաւ մը իւղոտուած տապակի մէջ դնել և վրան աւելցնել քանի մը հատ զարնուած հաւկիթ աղով և պղպեղով. քիչ մը վերջ դարձնել և երբ միւս կողմն ալ թուխնալ սկսի՝ եղած է:

ԽՄՈՐԵՂԷՆ - ԱՆՈՒՇԵՂԷՆՆԵՐ

1. ՍՈՒ ՐԷՎԱՆԻՍԻ.— Ութը հաւկիթին ձերմակն ու դեղնուցը առանձին զարկ ու իրար խառնէ. վրան լեցուր 100 կրամ փոշի շաքար, կրկին զարկ: Յետոյ, 300 կրամ հասա իրմիկը քիչ քիչ կերցուր, ախէն պարպէ և փուռը դիր: Քանի երեսը կարմրի դուրս քաշէ, վրան շաքար ջուր քսէ՝ մինչև որ եփի: Յետոյ խլամ շաքարը կերցուր, պաղեցուր, կտրէ՝, պնակը քաշէ:

2. ԲԻՐԻՆՃ ՈՒՆԸ ՐԷՎԱՆԻՍԻ.— Ճիշդ վերինին պէս կը պատրաստուի՝ իմրիկի տեղ բրինձի ալիւր դորձածելով:

3. ՍԻՏԼԻԻ ՐԷՎԱՆԻ.— Մէկ լիւր ընտիր կաթը եփէ վար սա, 200 կրամ հասա իրմիկը կերցուր, բաց կրակին վրայ դիր թող ջուրը քաշէ. յետոյ եղբք ունեցող ախաէ մը լեցուր, փուռը դիր եփէ, որմէ յետոյ թանձր շուրուպը անցուր, պաղեցուր, կտրէ և պնակը քաշէ:

ԱՌԱՎՔ ՀԱՅՎԱԿԱՆ

Քիչ բարձիր,
Շուտ դարձիր.
Քիչ խօսիր,
Շատ լսիր...

ՇՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ՄԺԵՂՆԵՐԸ ԶՆՁԵԼ

Առէ՛ք բուարը էնսէքթիսիա և փոքր դգալ մը սենեակին մէջ ծխեցէք (թխւթսիւ) պատուհանները գոց մուխն անուշ հոտ մը կը բուրէ և մթեղները կ'անհետանան. իսկ եթէ սոյն փորձն անյաջող ելնէ՝ պէտք է գիտնալ թէ սխալմամբ ուրիշ փոշի մը առնուած է:

Մթեղներուն խայթէն ուլ որ վերծ մնալ կ'ուզէ, դեղին հանդերձ պէտք է հազնի. ամենէն աւելի կարմիրին վրայ կը յարձակին: Գիշերն ալ նոյնը կը պատահի:

ՊԱՂ ԶՈՒՐԻ ՍԻՐԱՀԱՐՆԵՐՈՒՆ

Ամառուան եղանակին մէջ ամենէն անհրաժեշտ բանն է պող ջուրը: Եւրոպական թերթերը ամառը պող ջուր խմել ուղղորդներուն սա եղանակը կը յանձնարարեն. — Զուրով լեցուն շիշը պէտք է հաստ ու թրջուած լաթով փաթթել և արևին մէջ թողուլ: Լաթին ջուրը շոգիանալով, շիշին պարունակած ջուրին ջերմութիւնը մեծապէս կը նուազեցնէ, որով մէկ քանի վայրկեանէն ջուրը սառի պէս կը պողի:

ԼՈՂԱՆՔ

Լողանքի ատեն եթէ ջուրին մէջ մի քիչ անուշադր դրուի, նոյն ջուրին մէջ լողացողին յոգնած մարմինը կը կազդուրուի վերստին, և միան ալ մարմարիտնի պէս յղկուն ու ամուր, անհոտ ու մաքուր վիճակ մը կ'առնէ:

ՃԱՆՃԵՐԸ ԶՆՁԵԼ

Թշուառական ճանճերէն ազատելու համար նախ առաուն սենեակիդ դուռն ու պատուհանները բաց քանդի օդի հոսանքէ չեն ախորժիր ու կը փախչին: Դեզ — քալումէլ և մեղր խառնէ և պնակի վրայ քսէ կը մեռնին:

ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԲ ՄԱՅՐԻԿՆ ՀԻՒԱՆԴ Է

Մայրիկին հիւանդութիւնը՝ շատ մը ընտանիքներու համար՝ գրեթէ համազօր է աղէտի մը:

Մայրիկը — որ անխոնջ ձեռքերով և մեղուաջան աշխատութեամբ կ'եփէր ու կը թափէր. կը հոկէր ու կը խնամէր — հիւանդ է այժմ և կարօտ հոգածութեան: Մայրիկին այս հիւանդութեան հետեւանքով անհանդուրժելի անկարգապահութիւն մը՝ լաւ եւս է ըսել տակնուվրայութիւն մըն է կը սկսի առանին անտեսագիտութեան մէջ: Ապաքէն, կարծես տեսակ մը շուտրումի մասնուած են ընտանիքին բոլոր անդամները: Տղոց անառակութիւնը կ'անցնի իր չափն ու սահմանը, դուռները կը բացուին ու կը գոցուին մեծ շուռաչիւնով մը, ճաշի սեղանին վրայ չտեսնուիր այլեւս համով հոտով կերակուր մը, տան մէջ կարելի չէ գտնել մաքուր թաշկինակ մը, գոգնոց մը կամ անձեռոց մը, և ի լրումն ամենայն չարեաց՝ կը շրջի ամէն ոք ծակ գուլպաներով և պատուած հագուստներով:

Բաց աստի, ամէն ոք, մեծէն ճինչեւ պզտիկը, ամէն հինգ վայրկեանը անգամ մը հիւանդ մայրիկին կը վազէ իր անվերջանալի հարցումներովը: Խեղճ մայրիկը՝ որ կը տառապի ջերմէ և դիստոպաէ և թերեւս աւելի լուրջ հիւանդութիւններէ ալ՝ հարկադրուած է գոհացում տալ ամէնուն ամէն բանի մէջ: Աւելորդ է ըսել թէ իրաց այս կացութեան մէջ հիւանդին վիճակը փոխանակ բարելաւուելով՝ կը վատթարանայ օր քան զօր: Փրկութեան մէկ ճամբայ կայ միայն — հիւանդանոց փոխադրել մայրիկը: Հարկ

կա՞յ ըսելու թէ մայրիկին բացակայութեամբ եւս առաւել անհանդուրժելի կը դառնայ տիրող անկարգադահութիւնը տան մէջ :

Մայրե՛ր, անկախութեան պէտք է վարժեցնէք ձեր ամուսինները ընդհանրապէս և ձեր գաւաթները մասնաւորապէս, եթէ չէք ուզեր որ շուարսումի մասնունին անոնք ձեր հիւանդութեան օրերուն մէջ : Անկախութեան վարժութիւնը՝ դեռահասներու կրթութեան անհրաժեշտ մէկ մասն է : Այն ճարպիկ և գործունեայ մայրերը, որոնք ամէն բանի հոգն ու ծանրութիւնը իրենք կը ստանձնեն իրենց սուղջութեան օրերուն մէջ, պիտի անտարակոյս ունենան խիստ դառն զգացումներ իրենց հիւանդութեան օրերուն : Չեր զաւակները, նոյնիսկ ամենափոքրերը, պէտք է կանուխէն վարժուին անկախօրէն հոգալու իրենց առօրեայ կեանքին համար անհրաժեշտ եղող բոլոր պիտոյքներն : Առանց դժուարութեան պէտք է գտնեն իրենց թաշկինակները, գուլպաները, ձերմակեղէնները, հագուստները, վիրակապերը, առանին դեղերը, կարկառուքի ծրարը եւայլն, եւայլն : Աւելին կայ : Անոնք շատ կանուխէն ի վիճակի ըլլալու են եփելու նաեւ կաթ, սուրճ, թէյ, սպուր եւայլն : Առանին անտեսագիտութեան միւս մարդերուն մէջ ալ պարտին ստաւել կամ նուազ չափով փորձառութիւն ունենալ, որպէսզի ընտանեկան կեանքի ներդաշնակութիւնը չի խանգարի՝ երբ մայրիկն հիւանդ ըլլայ :

ԲԱՆՔ ԻՄԱՍՏՆՈՅ

- Ի՞նչ է ջանքը .
- Գործին հոգին :
- * * * Ռ՞է կը շահի միշտ .
- Իր գործին ԱՆՉԱՄԲ հոգ ամենողը :

ՏՆԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ

Ի՞նչ է ԳՐԵՆ ԸՆՆԷԼ

Գնդութեան, փսրի ցաւի և աղիքներու մէջ հաւատարմութեամբ կապերու արտաքսման համար գրեխ (չըքրնկա) ընել՝ յաճախ լու արդիւնք կուտայ, և հիւանդը կ'ազատէ լուծողական տանելու մղձաւանջէն : Գրեխի համար լուազոյն հեղուկներն են՝ օձառջուր և ձիթաիւղ, աղիջուր կամ հասարակ ջուր : Կարեւոր է գրեխի ջուրին քանակը, որովհետեւ շատ մը արկածներ կրնան պատահիլ չափէն աւելի հեղուկ գործածելէն :

Չափահասներու համար հետեւեալ պատրաստութիւնը նպատակայարմար է — մէկ լիար եռացած և զաղջացած ջուրի մէջ քիչ մը օձառ զարնել, մինչև որ ջուրը փրփրի. ասոր աւելցնել՝ չորս-հինգ դգալ ձիթաիւղ. այս խառնուրդը լեցնել գրեխին մէջ. երբ գրեխին խողովակէն հոսող ջուրը գիճանալու չափ զաղջացած է, ձախ կողմին վրայ պտակեցնել հիւանդը և գրեխը 2-3 օտք բարձրութեամբ բռնելով թող տալ, որ ջուրը հասի աղիքներուն մէջ՝ կամաց կամաց : Չուրը ներս ընդունելէ յետոյ, ջանալու է, որ աղիքները 5-6 վայրկեան վերջ պարպուին :

Հինգ տարեկանէն մինչև ամսերճինգ տարեկաններու համար՝ մէկ ջուրի գաւաթէն մինչև երկու ջուրի գաւաթ կը բաւէ. հինգ տարեկանէն վար եղողներուն համար մեծ գրեխ գործածելու չէ : Անոնց համար կայ պզտիկ գրեխ : Օձառի ջուրէն գատ մէկ լիար ջուրի մէջ երկու երեք թէյի դգալ աղ հալեցնելով կարելի է մեծ գրեխ ընել :

Փոքր մանկանց համար քիչ մը օձառի ջուր և

ձիթաիւղ, ութէն տասնըվեց ասպուրի դգալ, պղտիկ գրեխով, կը բոււէ:

Գրեխէն վերջ, երբ սեւէ պատճառաւ աղիքները չպարպուին, ներս արուած ջուրը գոնէ, պէտք է պարպուի՝ մէջը պարապ յատուկ խողովակի մը (լասթիկէ շինուած) միջոցաւ. հակառակ պարագային հաստ աղիքներու մէջ բորբոքում յառաջ կուգայ:

ՊԵՏԲԱՄԱՆ

Արատասովոր կերպով արիւն կորանցնող կիներ, տղամեզաններ և ուրիշ շատ մը հիւանդներ, որոնք ստիպուած են անկողին մնալ երկար ատեն, պէտք ունին այս շատ հասարակ ու շատ կարեւոր աւարկային: Պէտքամանի տեսակները շատ են. ամենէն նպատակայարմարն է ասփակ տեսակը: Կիներու մաքրութեան համար ալ պէտքամանը նպատակայարմար է: Առանց հիւանդը տեղէն շարժելու, կարելի է պէտքամանը հիւանդին տակը սահեցնել: Քիչ մը վարժութիւն հիւանդին և հիւանդապահին կողմէ՝ բաւական է:

ՍՍՈՒՅՅԻ ՏՈՊՐԱԿ

Ստասիկ գլխացաւի, ջերմի, կուրաղիքի ու արգանդի բորբոքմանց, ինչպէս և քարացած ստինքներու համար սքանչելի գործ կը տեսնէ այս տոպրակը: Սառուցի տոպրակը սեղանին վրայ դնելու և լուս մը ասփակցնելու է, օդը պարպելու և ապա գոցելու համար զայն: Փորի ցաւերու ատեն, մինչեւ որ կուրաղիքի բորբոքումի հաւանականութիւնը ստուգապէս չի ժխտուի, տաք ջուրի տոպրակէն աւելի՝ սառուցի տոպրակ գործածելու է, որովհետեւ եթէ կուրաղիքը բորբոքած է, տաք ջուրի տոպրակը կրնայ աղետաբեր լինել:

ՏԱՒ ԶՈՒՐԻ ՏՈՊՐԱԿ

Ասիկա հնարողը շատ օրհնութիւններ առած ըլլալու է, որովհետեւ այս տոպրակը թէ՛ օգտակար է և թէ՛ դիւրաւ գործածելի: Տաքցուած երկաթներու և կղմինտրներու տեղը առած է լասթիկէ տաք ջուրի տոպրակը: Չհասունցած վէրքերու, դաշտանի ցաւերու, պաղ ոտքերու, արկածի և կամ արիւնահոսութեան ատեն պատահած նուազումներու, (կուրաղիքի բորբոքումէ դուրս) փորի ցաւերու ատեն, հըրաչքներ կը գործէ այս պղտիկ գործիքը: Այս տոպրակը՝ կիսով մը տաք ջուրով լեցնելէ և մէջի օդը ձեռքի պրկուածով պարպելէ վերջ, լուս մը գոցելու, լաթի մէջ փաթթելու և անկէ յետոյ միայն գործածելու է: Վէրքերու վրայ գրուած լափսները չպահեցնելու համար, տաք ջուրի տոպրակը լուս միջոց է:

ՀԱԿԱՆԵՆՈՒՍԾ ԲԱՄՊԱԿ

ԵՒ ՎԻՐԱԿԱՊԵՐ

Պատահած վէրքի մը վրայ ժամանակին դրուած մաքուր վիրակապ մը՝ յաճախ, օրերով դարմանուածի և երբեմն ալ, հաւանական թուշուորման առաջը կ'առնէ: Ձեռքերէ և սրունքներէ հոսող արիւնը կարելի է անմիջապէս դադարեցնել՝ վէրքէն քիչ մը հեռու ամուր վիրակապ մը կապելով:

ԲԱՆՔ ԻՄԱՍՏՆՈՅ

- Քանի՞ տեսակ տգիտութիւն կայ.
- Երեք: Ա. Բան մը չգիտցող, Բ. Գիտցածն լուս չգիտնող, Գ. Հաւատալ թէ բան մը գիտէ:
- * * Մարդ մարդու քահանայ,
- Մարդ մարդու ստատնայ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԱՄՍՌՈՒԱՆ ՎՏԱՆՅԵՐԷՐԷ

ԶԵՐԾ ՄՆԱԼՈՒ 10 ԿԱՆՈՆՆԵՐ

1. Կերակուր և պտուղ թարմ ըլլալու են. սառնարան գնելու է ամէն տուն.

2. Պաղ չ'առնելու պայմանաւ թեթեւ զգեստ գործածել. սաք օգերը երբ ընդհատուին, հաղուստը փոքր ինչ թանձր ըլլալու է կամ հազնիլ վերարկու մը:

3. Կերակուրի քանակը պակսեցնել հարկ է, տեսակն ալ պէտք է կարգադրել:

4. Ոչ միայն նուազ ուտելու ենք ամառը, այլ միտ, ձուկ, հաւկիթ քիչ ուտելու է. իսկ կամանչեղէն և պտուղ աւելի ուտելու ենք:

5. Յորեկը հնար եղածին չափ դով օգի մէջ անցընել պէտք է: Բանալ պատուհանները որ օդ չըջագայէ, գիշերները թեթեւ վերմակ գործածել պաղ չառնելու պայմանաւ:

6. Զուրի միջոցով մարմինը զովացնել և կազդուրել:

7. Երեսը եւ անդամները յաճախ պաղ ջուրով լուալ, նաեւ մարմինը պաղ ջրով սրբել՝ եթէ կրնաք:

8. Զուրի լոգանքը կարճատեւ ըլլալու է փոփուկներու, նիհարներու և մանկիկներու համար:

9. Մտելու սասիճան ջուրին մէջ մտալու չենք. դողալ չի սկսած ջուրէն դուրս ելլ:

10. Ոմանք սուտուն, իսկ ոմանք երեկոյին կը յանձնարարեն լոգանք. երկուքէն մին ընտրէ, բայց ոչ երբէք կերակուրէ վերջ:

ԲԱՆՔ ԻՄԱՍՏՆՈՅ

Ի՞նչ է բարեկամութիւն.

— Փոթորկալից օգի ժամանակ քերս դարձող անձրեւանոց մը:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔՆԵՐ

ՊԱՏԱՍԽԱՆԵՅԷ՛Ք. ԵԹԷ ԿՐՆԱՒ

Կրնա՛ք ցուցնել ինձ՝

Ճշմարտախօս միջնորդ մը,

Նորաձեւութեան չի հետեւող կին մը,

Հալը-վախիթը տեղը վարժապետ մը, յիշեսչիք և զլրագրապետ մը,

Բամբասանք չընող կին մը,

Հայհոյութիւն չընող ձկնորս մը, ընդ նմին և նաւաւար մը,

Սուտ չի խօսող խանութպան մը,

«Բեկ պիտի տանեմ» ըսելով, առ նուագն երկու երեք օրիորդ կամ կին չխարաղ երխոտատարդ մը,

Խղճահար գինեպան մը,

Հարսին հետ սիրով վարճող կեսուր մը, տալ մը կամ պուտախ մը. նոյնպէս փեսին հետ հաշտ ապրող զոքանջ մը, աներ մը կամ չաներ մը:

Ո՛Ր ՕՐՈՒԱՆ ՄԷՁ ՊԻՏԻ ՈՒՋԷՒՐ

ԾՆԱԾ ԸԼԼԱԼ

ԿիրԱԿԻ ծնող պզտիկը պիտի ունենայ երկար կեանք եւ շատ հարստութիւն:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ծնողը պիտի ըլլայ տխրած և շատ թոյլ:

Ան որ ԵՐԵՔՇԱԲԹԻ կը ծնի, աւելի դժբախտ պիտի ըլլայ. թէեւ կորող ըլլայ, արտասաւոր աչալըրջութեամբ, յաղթիլ իր կերքերուն, սակայն ի վերջոյ չարչարալից մահուան պիտի ենթարկուի:

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ծնող պզտիկը պիտի ըլլայ շատ ուսումնասէր և իր աշխատութիւնէն շատ օգուտ պիտի քաղէ:

Հին ԳՇԱԲԹԻի պղտիկը մեծ փառքի ու պատուի պիտի արժանանայ:

ՈՒՐԲԱԹ օրուան մանկիկը պիտի ունենայ զօրուսր Ֆիզիքական կազմուածք և սիրոյ կտուէ պիտի ըլլայ:

ՇԱԲԱԹ չարագուշակ օր է: Այս օրը ծնող պըզտիկը կ'ըլլայ բթամիտ, դանդաղ ու յամառ:

Հ Ա Ն Ե Լ ՈՒ Կ Ն Ե Ր

11. Միշտ կը վազեմ դարու վար
Եղած տեղէս անսպաս
Չարնուելով քարէ քար
Ամիս, տարի, դարէ-դար: (Գեհ)
12. Ազատ գորգ մը ինչո՞ւ չար տղու մը կը նմանի: (Որովհետեւ երկուքն ալ ձեռուիլ կ'ուզեն)
13. Ի՞նչ է ան որ երիտասարդ մը ո՛չ ունի, ո՛չ ալ կրնայ ունենալ բայց կրնայ տալ օրիորդի մը: (Ամուսին)
14. Ի՞նչ է հանելուկներու հանելուկը: (Կեանք)
15. Ի՞նչ է ան որ սչ կ'ուզես ունենալ և սչ ալ կորսնցնել: (Իս)
16. Ձիս լու գործածէ, ու ամէն մարդ կմ, կոնակս քերթէ ու սչ սք կմ: (Հայելի)
17. Կը մեծնայ պտուղ չի տար. ճիւղ կուտայ տերև չի տար: (Եղջերուին եղջիւրներ)
18. Ոտքեր չունի վաղու՞մ է
Ամէն տեսնող վախում է
Չգեսա կը փոխէ մարդ չէ
Հուկիթ կ'ածէ հաւ չէ: (ՕՁ)
19. Տակը քար գլուխը սար
Սոտ կ'ուտէ կող չէ
Հուկիթ կ'ածէ հաւ չէ: (Կրիայ)

ԶՈՒԱՐԹ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

ԲԱՐԵՊԱՇՏ ԶՈՒԱՆՁԸ

Զօքանջ մայրիկ մը սովորութիւն ըրած էր ամէն օր Գլխադիր Ս. Յակոբին երթալ աղօթել և հետեւեալ հարցումները ընել անոր. — Հէ՛յ Գլխադիր... Աղջը-կանս վիճակը ի՞նչ պիտի ըլլայ... Փեսիս վիճակը ի՞նչ պիտի ըլլայ... Իմ վիճակս ի՞նչ պիտի ըլլայ:

Սուրբ Յակոբի եկեղեցիին լուսարարը կը ձանձրանայ այս պտուաւ ջատուկին ամէն օր կրկնուող այս նոյն հարցումներէն, անոր տաղակալի այցելութենէն տղատելու համար, օր մը պատուին այցելութեան ժամուան Գլխադիրին պատկերին կտուը կ'անցնի ու կը սպասէ:

Զօքանջը ըստ սովորութեան դարձեալ կուգայ, կ'անցնի պատկերին առջեւ. երեք անգամ կը խաչակընքէ, ու երեք անգամ կը համբուշէ պատկերին շրջանակը ու կը սկսի իր ամէնօրեայ յանկերգը.

— Հէ՛յ Գլխադիր... Աղջկանս վիճակը ի՞նչ պիտի ըլլայ... Փեսիս վիճակը ի՞նչ պիտի ըլլայ... Իմ վիճակս ի՞նչ պիտի ըլլայ...:

Լուսարարը, Գլխադիրին անունով կը պատասխանէ անոր՝ պատկերին կտուէն.

— Աղջիկդ որբեւայրի պիտի մնայ... Փեսադ յիմարանօցը պիտի մեռնի... Դուն ալ բաղնիքի անս պիտի ըլլաս:

Այս անակնկալ պատասխանը կը կատղեցնէ զօքանջ մաման, որ Գլխադիրին անչարժ պատկերին առջեւ, թեւերը մէջքին դրած, կսկորդը պատուէրու տատիճան կը պտուայ, պարսպ եկեղեցիին կամարները թնթացնելով.

— Նա վայ գլխո՞ւղ... լեզուդ բռնուի հեմէն... թէվէքէլի չէ քի վախսով գլուխդ կարեր են...:

Մ Օ Տ Ա

Զուարճախօսի մը հարցուցին թէ՛ ի՞նչ է ըստ մասանց բանի մօտանս :

— Յաւելունն ծախսերու, բարձունն խաղաղութեան, բազմապատկութիւն կուտոց և բաժանունն այր և կնոջ :

— Ըստ ձեւո՞յն :

— Տղեղ :

— Ըստ տեսակի՞ն :

— Անվախճան :

— Ըստ սեռի՞ն :

— Արական և իգական, բայց իգականը շատ կը

գործածուի :

— Ո՞վ կը ծախէ :

— Ստակ չունեցողները :

— Ո՞վ մը գնէ :

— Ստակ պահելու տեղ չունեցողն և ազեղ երեւ- նալու փափաք ունեցող գեղեցիկը :

— Ո՞վ կը հնարէ :

— Խելացին :

— Ո՞վ կը գործածէ :

— Խենդը :

— Քանի՞ տարի կ'ապրի :

— Տարի չի քշեր, զի առաւօտուն կը ծնի և ի- րիկունը կը մեռնի :

ԱՌԱՄՔ ՀԱՅԿԱԿԱՆ

Հիւր գնա՛ ուր որ կանչեն
Չը կենաս երկար ստեն .
Հիւրը չախորժիր հիւրէն
Տանուաէրն էլ և ոչ մէկէն :

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԻՄԱՍՏՈՒՆ ԴԱՏԱԻՈՐԸ

Է՛ն, ահա քաղաքը հասանք, ըսաւ ծերուկը, կ'եր- թանք դատաւորին և նա անշուշտ ինձ ի նպատակը ճիւղ պիտի արձակէ, երբ տեսնէ քեզ առայգ և յաղ- թոնդամ, իսկ զիս ակարակազմ և ծեր :

Եթէ այդպէս վճռէ, ըսաւ կրօնաւորը, այն ստեն քոյր իմ լսածներս սուտ պէտք է ըլլան, անձամբ պիտի ստուգեմ : Զայս բռելով դատարան հասան, ասկայն հարկ եղաւ սպասել, զի երկու դատ կար արդէն սկսած :

* *

Մտախճառ մը և ձէթավճառ մը դատ ունէին, առաջինը ներկայացած էր արիւնտա հանդերձներով, իսկ միւսը ձէթով աղտոտած :

Մտախճառը պատմեց, այս մարդուն խոնութը քացի ձէթ գնելու, գրդանէս ափ մը դրամ հանեցի որ վճարեմ, դրամս անոր ցանկութիւնը գրգռեց, իսկ այն ձեռքս բռնեց, իբր թէ զինքը կողոպտած ըլ- լայի, և զիս հոս բերաւ ձեր առջին :

Զէթավճառը պատմեց, այս մարդուն շիշը ձէ- թով լեցուցի, ուզեց որ սոկի մը փոխեմ, երբ գրդոցս քացի, ափ մը դրամ կորզեց, և պիտի փախչէր, բայց բռնեցի և հոս բերի : Դրամը իմս է :

Հոս գրէք դրամը և վաղը եկէք, հրամայեց դա- տաւորը :

..

Երկրորդ դատը սկսաւ. գեղջուկ մը և ուտուցիչ մը ներկայացան կնոջ մը հետ միասին : Ուտուցիչը կը

սնդէր թէ գեղջուկը իր կինը առաւ փախաւ, գեղջուկը կը սնդէր թէ կինը իրենն է, և շատ տարիներէ ի վեր հետը ամուսնացած: Կինը համր էր և բառ մ'իսկ չէր խօսեր:

Հոս թողէք կինը, ըսաւ դատաւորը, և վաղը եկէք:

* *

Կարգը եկաւ կրօնաւորին և ձերուկին:

Տէր դատաւոր, ըսաւ կրօնաւորը, ձեր քաղաքը կուգայի վաճառք դնելու համար, ճամբան այդ թըշուառական ձերուկը խնդրեց որ վինքը ձիւս վրայ նստեցնեմ. գութս շարժեցաւ ետիս հեծցուցի ձիւս վրայ, հիմակ կը սնդէ թէ ձին իրենն է:

Դատաւորը մօրուքը ձեռք առաւ և գլուխը քերեց — նշան մտահոգութեան, վաղը հոս եկէք. ձին առ այժմ թող իմ ախոռս պահուի, հրամայեց դատաւորը:

* *

Յաջորդ առաւօտուն տունն բացուեցաւ:

Դուն կը սնդիս, ըսաւ դատաւորը ձէթալաճառին, թէ մսալաճառը դրամդ յախշաակից դգրոցէն, սակայն ես քու ձեռքերէդ անցած դրամը գաւաթ մը ջուրի մէջ դրի, և ձէթի նշոյլ իսկ չգտայ ջուրին երեսը, ուստի կը վճռեմ որ դրամը մսալաճառինն է, և քեզի ալ 30 գաւազանի հարուած:

Ապա ներկայացան գեղջուկ և ուսուցիչ լսելու իրենց վճիռը:

Կինը մէջտեղ կանգնեցուց դատաւորը և ըսաւ. այս երկուքն ալ կինը կը պահանջեն և չին կրնար ապացուցանել իրենց ըլլալն, կինն ալ համր է և չուզեր լուսաբանել խնդիրը: (Շար.)

ՈՒՂԵՅՈՅՑ ԿԵՆՑԱՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Մ Ի ...

ժ.

ՍԲՈՐԻ ՄԷՋ

Մի՛ մոռնար ըլլալ բարոյական անկողմնակալ: Խաղ մը դիտելու տոնն պէտք է ծափահարես խաղի մէջ բախտաւոր եղող սեւէ մէկը, եթէ նոյնիսկ հակառակորդ մ'ըլլայ ան:

Մի՛ ցոյց տար սեւէ դժգոհանք և կամ զղուանք՝ երբ խաղընկերդ անյաջողութիւն մ'ունենայ խաղի մէջ:

Մի՛ բարկանար՝ երբ կը զգաս թէ կը կորսնցնես խաղը: Այդու՛ և՛ս առաւել կը վտանգես խաղդ, կը քաջախիբես հակառակորդդ և ինքզինքդ կը նուաստացնես յաչս հանդիսականներուդ:

Մի՛ մոռնար թէ խաղ մըն է որ կը խաղաս, և թէ սրորի գլխաւոր նպատակն է ուսուցանել յաղթութիւն՝ առանց հպարտութեան, և պարտութիւն՝ վայելչութեամբ: Տարուած անձնական յաղթանակի մը հրճուանքն երբէք ցոյց մի՛ տար արտաքուստ:

Մի՛ վհատիր խաղի մէջ երբէք, այլ յարատեւէ ցլերջ եռանդով ու յոյսով: Բողոք կրնայ դառնալ, և դուն կրնաս վերագտնել ինքզինքդ ու ի վերջոյ հրճուիլ կորսուելու վրայ եղող խաղի մը յաղթանակովը:

Մի՛ լինիր ծայրայեղօրէն ինքնավստահ: Ինքնավրաստանութիւնը լաւ է անտարակոյս, բայց առաւել լազանց ինքնավստահութիւն մը կրնայ վտանգաւոր ըլլալ քեզի: Մի՛ ստորագնահատեր հակառակորդիդ ոյժն ու ճարտարութիւնը: Փորձառութեամբ տեսնը-

Լած է թէ կարծուածին չափ ալ դիւրին բան չէ մե-
տասաներորդ ժամու յաղթանակը:

Մի՛ հրաւիրեր վրադ այլոց ուշադրութիւնը
բարձրադաշակ յայտարարութիւններով, գուհիկ շար-
ժուձեւերով, և անհարկի քննադատութիւններով:

Մի՛ խաղար անօթի փորանց. մի քիչ սնունդ
անհրաժեշտ է:

Մի՛ մոռնար բաւարար քնոյ արժէքը:

Մի՛ քնանար շատ. չափազանցեալ քուսը կը
թուլցնէ մկաններդ:

Մի՛ խօսիր շարունակ խաղընկերիդ և կամ հա-
կառակորդիդ. այդու պատճառ կրնաս ըլլալ անոր
յապաղման:

Մի՛ մոռնար թէ պէտք է շնորհաւորել յաղթողը,
ըլլայ ան խաղընկեր մը կամ հակառակորդ մը:

ԲԱՆՔ ԻՄԱՍՏՆՈՅ

Լեդիէ լեդի ի՞նչ բան կայ.

— Լեզու.

Անուշէ անո՞յժ.

— Լեզու.

Թոյնէ աւելի դա՞ռն.

— Լեզու.

Սուրէ աւելի հասո՞ւ.

— Լեզու.

Գնդակէ աւելի մահացո՞ւ.

— Դարձեալ լեզու:

* *

Հպարտին սեղանին վրայ ի՞նչ կը գտնուի.

— Այսօր առասուրբին, վարդաբուսիկին, միւս
որ խայտաւակութիւն:



7650-56

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Կ.

1. Կամ աշխատիր՝ կամ մեռիր, այս է բնութեան օրէնքը:
2. Կեանքը՝ ամուսնութեամբ կ'ըլլայ կամ արքայու-
թեան նախագաւիթը կամ դժոխքի հալվէք:
3. Կեանքը առանց գիտութեան՝ մահ է:
4. Կեանքը թատրոն մըն է, ուր կը մտնենք, կը
դիտենք և դուրս կ'ելլենք:
5. Կեանքը կը հեշտանայ, և թէ մենք զմեզ մոռնանք:
6. Կեանքը չի խաբեր միայն այն մարդը, որ ոչինչ
կը պահանջէ անկէ:
7. Կեանքը ծաղիկ՝ սէրն անոր մեղրն է:
8. Կտակածոտ մարդուն սէրը՝ տուրութեան է նման:
9. Կնոջ հողին ովկիանոսի նման անքննելի է:
10. Կ'ուզե՞ս չափել Աստուծոյ մեծութիւնը՝ տիե-
զերքը ձեռքդ առ:

Հ.

1. Հասուն ուղեղը՝ ոսկիով լեցուն գանձարանի է
նման:
2. Հալածանքը վախկոտներու փոքրոգի զէնքն է:
3. Համբերութիւնը կեանքի ամենահաստատուն
սիւնն է:
4. Համբոյրները սիրոյ քերականութեան միջակէտ-
ներն են:
5. Հաստատուն հաւատքը՝ սարերն իրենց տեղէն
կը շարժէ:
6. Հանդարտ սիրտը՝ մարմնի կեանքն է, իսկ նա-
խանձոտ սիրտը՝ կեանքի ցեցը:

7. Հին բարեկամութիւնը՝ կեանքի վերջին ծաղիկն է:
8. Հարուստի բարեկամը շատ անգամ աւելի կեղծ է, քան աղքատինը:
9. Հանդերձին համեմատ մէկը մի՛ գատէք. Աստուած ստեղծեց մարդը. իսկ հանդերձը դերձակը կը շինէ:
10. Համեստութեամբ հարստացիր, սուտաձեռնութեամբ հարստութիւնդ գործածէ:

Չ .

1. Ձախորդութիւնը յաջողութեան հարազատ քոյրն է:
2. Ձախորդ օրերու մէջ համբերել պէտք է, և ոչ թէ վհատիլ:
3. Ձախորդ օրերը ձմրան նման կուգան ու կ'երթան:
4. Ձեռքը կամքի ծառան է, ինչ որ հրամայէ՝ ան կը կատարէ:
5. Ձկտումը լաւ յատկութիւն է, եթէ դէպի բարին գործադրուի:
6. Ձկան փուշ մի լինիր, որ ուրիշը խեղդես և յանցաւոր լինես:
7. Ձեր զաւակներուն սորվեցուցէք այն, ինչ որ կեանքի մէջ անհրաժեշտ է:
8. Ձեռք բերուած անդորրութիւնը, կա՛մ ոյժի ապացոյց է, կամ աճող թուլութեան:
9. Ձեռքը ուրիշի վրայ բարձրացնելու մի՛ վարժեցներ:
10. Ձեռք մի՛ զարներ այն բանին, որուն համար չես սնած:

Ղ .

1. Ղատակի յուսով մնացողը, միտի փոխարէն փորոտիք կ'ուտէ:
2. Ղամպարը առանց ձէթի լոյս չտար:

3. Ղատակասնի շներն ու հայրենիք ուրացողները՝ համոնման բաներ են:
4. Ղարիպ մարդը՝ անտէր տաւարի նման բան է:
5. Ղեկավարը երբ ծովու լեզուէն չհասկնայ, նաւը վտանգի մէջ կ'ըլլայ:
6. Ղուշը վանդակին մէջ կը պահեն, և ոչ թէ կարասին:
7. Ղեկավարը պէտք է հմուտ լինի, որ նաւը անվրասնդ մնայ:
8. Ղեկավարել կարենալու համար կեանքիդ նաւակը՝ դիմէ բանականութեան:
9. Ղուզը երբ չի գործեր, ձեռքերն անօգուտ կ'աշխատին:
10. Ղեկը ինչ որ է նաւուն, խիղճը նոյնն է մարդուն:

Ճ .

1. Ճանապարհորդը մի նաւ է, որ անդադար կը տարուբերուի:
2. Ճանաչել կ'ուզե՞ս ընկերդ՝ անձնական շահուն մի քիչ դպիր:
3. Ճշմարիտ առաքինութիւնը երբէք իր փառքին ուշք չի դարձներ:
4. Ճշմարտութիւն, գիտութիւն և կրօն եււորեակ քոյրեր են, սրտնք եթէ անջատուին կը մեռնին:
5. Ճշմարիտ զգացումն ամօթխած է և թաքցող:
6. Ճշմարտութենէ հեռացողը, մարդ լինելէ վաղուց դադրած է:
7. Ճշմարտութիւնը ոչ հուրէն և ոչ սուրէն երես կը դարձնէ:
8. Ճշմարտախօսութիւնը շատերուն տակի է. իսկ քիչերուն սիրելի:
9. Ճշմարտութիւն չգիտնալը՝ չարութեան արմատն է:

10. Ճշմարտութիւնը շատ շուտ կը կորսուի երկար վիճաբանութիւններէ վերջ:

Մ .

1. Մարդ միշտ իր մտլութիւններուն կամ առաքիտութիւններուն նահատակն է:
2. Մարդ բնու չի գլջար, եթէ քունէն շուտ արթննայ և շուտ ամուսնանայ:
3. Մարդիկ ոչինչ այնքան առատ չեն տար, որքան խրատները:
4. Մեռածներու աճիւններէն կը ստեղծուի հայրենիքը:
5. Միայն ուրիշի աչքով կարելի է տեսնել իր պակասութիւնը:
6. Մարդկային շէնքը շարժող շոգին է դրամը:
7. Մժղան ձայնը ուշմին սաղ է, թըմբկինը խըլին նուազ է:
8. Մի՛ ըսեր ինչ որ կը մտածես, այլ մտածէ ինչ որ կ'ըսես:
9. Մի՛ դատէք մէկը իր ընտանեացը համեմատ, կայէն լաւ ընտանիքէ մը սերած էր:
10. Մի՛ դատէք մէկը իր ընակարանին համեմատ, մուկեր և միջատներ պալատներուն մէջ ալ կը գանուին:

Յ .

1. Յանցանքը գործելէ առաջ, մտածէ թէ վերջը ամչնալ կայ:
2. Յաճախել և լսել բարի մարդկանց՝ արդէն բարի գործի սկիզբն է:
3. Յանձնէ նաւակդ ալիքներուն, բայց սիրտդ մի՛ յանձներ գեղեցկուհւոյն:
4. Յիմար է նա, որ միայն կնոջ մէջ կը սրտնէ իր կեանքի դրախար:

5. Յոյսը այն անտեսանելի խարխախն է որ կանգուն կը պահէ զմարդ:
6. Յուսանատութիւնը ամենադաժան թշնամին է երկարակեցութեան:
7. Յուսով ով որ կը մեղանչէ, անյոյս կը կորնչի:
8. Յառաջդիմելու ջանք ըրէ, որնպատակիդ հասնիս:
9. Յուսախարութիւնը տուժելէն աւելի վտանգաւոր է:
10. Յաջողութիւնը եթէ ձեզի հետեւի, գուռողութեան տեղի մի՛ տաք:

Ն .

1. Նա է ամենամեծ մարդը, որուն զօրութիւնը շատ սրտեր կը բարձրացնէ:
2. Նա, որ չէ կարող զոպել իր կիրքերը, անոնց գերին կը լինի:
3. Նախանձոտ մարդիկ կը մեռնին, իսկ նախանձը՝ կրքէք:
4. Նախանձը մարդու սրտի մէջ եղած անհանգչելի հուերն է:
5. Նախանձը կ'եղծանէ դաշնագիր, կը լուծէ ընկերութիւններ, կը քակէ ամուսնութիւններ, կը մատնէ բարեկամներ:
6. Նա, որ դժբախտութիւն չէ կարող տանիլ, իրօք թշուառ է:
7. Նախանձոտ մարդը պատառող դազաններէ վատթարագոյն է:
8. Նախորդ օրերը՝ սպաղայի քաղցր հրճուանքներն են:
9. Ներելու առաջին ատիճանը՝ կրած վիրաւորանքի մասին չխօսին է:
10. Նոյնիսկ հայրենեաց ծուխը քաղցր ու տխրութիւն է մեզ:

Գ Ր Ա Կ Ա Ն

Բ Ա Ր Ե Կ Ա Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ո՛վ քաղցր, և մոգիչ բարեկամութիւն,
 Դո՛ւն ես լոկ այստեղ՝ սիրտիսն ք մարդուն.
 Համաբոյժ գեղթափ, բիւր ցաւերու զէմ,
 Նուազներուս մէջ՝ թող որ քեզ յիշեմ...
 Երկինքի անգին շքնորհն ես և գանձ,
 Բոլոր դարերու հոգին գերազանց.
 Քու անունդ միայն, քու զիւթիչ հրմայք՝
 Կը պատրաստեն մեր հակումն ու քմայք:

Երբ մեր հոգիներ՝ մատղաշ, նորածիլ,
 Հաղիւ սկսան հոս ու հոն յածիլ,
 Ո՛վ չըզգաց մեր մէջ այն ոյժը թաքուն,
 Երկու ըլլալու պէտքը գերագոյն.
 Այո՛, զինաթափ կ'ըլլայ բաղդն իսկոյն,
 Երկու սիրտերու առջեւ սիրամոյն.
 Բարեբար, բարի՛ այս երկու բառեր,
 Սիրոյ գիրքին մէջ են մեռեալ ատուեր:

Բարեկամ, այո՛, իր անունն եւեթ,
 Բազկիս ոյժ կուտայ, մտքիս սեթեւեթ,
 Անոր շքնորհիւ կ'ապրիմ ապահով...
 Այն էր իմ նեցուկս, պաշտպան, ջատաղով...
 Թէ՛ մի արասցէ՝ քայլերս զիւրագայթ,
 Իյնան թըշնամուցն անխիղճ որոգայթ,
 Այն է որ անձամբ օգնել կը փութայ,
 Եթէ հարկ ըլլայ քսակն իսկ կուտայ:

Օր մը միասին մենք դաշտ գընացինք,
 Խաղաղ էր բնութիւնն, պայծառ էր երկինք:

Չիկար հո՛ն կեանքի ժըխորն ու տաղտուկ,
 Մոռցայ անհամար հոգերս աղտաղտուկ...
 Հո՛ն նըշմարեցինք զոյգ մը նուրբ շուշան,
 Այդին դէմ բացուած զերդ վառ ատրուշան,
 Եւ ըսի՛նք. — «Այսպէ՛ս է որ մեր սիրտեր,
 Զիրար սիրեցին՝ երբ փոքր էինք դեռ»:

Տեսնո՞ք օդին մէջ, ժայռին կատարած՝
 Երկու կաղնիներ, որոնք պինդ պլլուած՝
 Կ'արհամարհէին փոթորիկ, թաթառ.
 Տե՛ս, տե՛ս գոչեցինք՝ ո՛ն, հըրճուապարար.
 «Այսպէ՛ս է որ մենք սերտիւ միացած
 Ես պիտի մըղենք լսողքին ժանտ հարուած»:

Մէկտեղ ապրեցանք ձմեռ ու ամառ.
 Մինչեւ ձերութիւն պիտ' սիրենք զիրար.
 Աստուած միացուց մեր զոյգ օրօրան,
 Անշուշտ չանջատէ պիտ' մեր գերեզման:

ԱՌԱՄՔ ՀԱՅԿԱԿԱՆ

Հիւր գնա՛ ուր որ կանչեն
 Չը կենաս երկար տան.
 Հիւրը չախորժիր հիւրէն
 Տանուտէրն էլ և ոչ մէկէն:

Մատանիքդ մատիդ պահիր
 Թէ չեա ուղել որ կորչին.
 Գաղտնիքներդ սրտիդ պահիր
 Մի թողուր բերնէդ թռչին:

Կակուղ լեզու թէ ունես՝
 Օձը ծակից կը հանես,
 Ծակուղ լեզու թէ ունես՝
 Սուրբը տունից կը հանես:

ՏԱՆՏԻԿԱՆՈՋ ԲԱՐԵԿԱՄԸ

ԽՈՂԱՆՈՑԷՆ ՆԵՐՍ

Ս Ա Լ Ա Գ Ա Ն Ե Ր

10. ՍՄԲՈՒԿՈՎ ՍԱԼԱՏ.— Սմբուկը փուռին մէջ եփեցէք (քէպոսպ), կեղեւնիքը մտքընելով պոտառաքաղով դարկէք, սոխ, աղստաքեղ, կոնսաչ պղպեղ մանր ջարդելով վրան աւելցուցէք, ինչպէս նաև ձէթ, լոլիկ, չոր անտնուխ և պղպեղ ու խորոված միսի հետ սեղան բերէք:

11. ԳԵՏՆԱՆՆՁՈՐԻ ՍԱԼԱՏ.— Գետնախնձորը խաշելով մեքենայէն անցուցէք, ձէթով լաւ մը զարկէք, աղ, պղպեղ, քաջախ, քիչ մը մուսթարաի փոշի ու մեքենայէն քաշուած աղստաքեղ աւելցնելով սեղան բերէք:

Կ Ե Ր Ա Կ Ո Ւ Ր Ն Ե Ր

1. ԴԴՈՒՄԷ ՕՄԼԷԹ.— Դդուսները ամբողջապէս խաշելէ յետոյ, պարզուած անցուցէք, քամեցէք, և սմբուկէ օմլէթին յար և նման պատրաստեցէք:

2. ԾԱՂԿԱԿԱՂԱՄԲԻ (ԿԱՌՆԱՊԻԹ) ՕՄԼԷԹ.— Ծաղկակաղամբը խաշել ու քամել, պոտառաքաղով լաւ մը զարնել, աղ ու պղպեղելէ յետոյ վրան հակիթ կտարել ու դարձեալ զարնել լաւ մը և իւղին մէջ տապկել երկու կողմն ալ և սեղան բերել:

3. ԲԱՆՋԱՐԵՂԷՆԻ ՕՄԼԷԹ.— Բանջարեղէնները լաւ մը խաշելով քամէ, յետոյ մանր ջարդուած սոխ լեցնելով վրան, տապակին մէջ իւղով դարձուր ու քաշէ պնակին մէջ: 5-6 հաւկիթ, բաւարար չափով աղ և ալիւրով զարկ, ասոր կէսը օմլէթ շինէ ու պնա-

կին մէջի քիչ տապկուած բանջարեղէնը ասոր վրայ լաւ մը տեղաւորէ ու կտրմրցուր, յետոյ տապակին վրայ կտարիչ մը գնելով, տապակը դարձուր, տապակին մէջ մի քիչ իւղ գնելով, դարձուած հաւկիթին միւս մասը լեցուր մէջը ու օմլէթ շինէ, յետոյ կտարիչին մէջինը տապակին վրայ դարցուր: Պատրաստ է:

ԽՄՈՐԵՂԷՆ - ԱՆՈՒՇԵՂԷՆՆԵՐ

1. ԲՈՒԷՄԱ.— Մէկ բաթլը կաթ առնել և 3 ապուրի դգալ շաքարով եռացնել: Ուրիչ ամանի մէջ զարնել 2 հաւկիթի դեղին: Ուրիչ ամանի մէջ քիչ մը ջուրի մէջ խառնել 2 ապուրի դգալ ալիւր և մէկ ապուրի դգալ նշոյ: Երբ կաթը եռայ՝ այս խառնուրդը և հաւկիթը լաւ մը միտսին խառնելէ վերջ կաթին մէջ շատ կամաց կամաց տատիճանաբար դնել, արագ խառնելով: Երբ թանձրանայ՝ մէկ թէյի դգալ վաշիկա աւելցնել և կրակէն վար առնելով պարպել ամաններու մէջ որ պողի:

2. ՊԻՍՔԻԻԻ.— շինդ հաւկիթ, հինգ սուրճի գաւաթ շաքար, երկու սուրճի գաւաթ իւղ, մէկ գօնեակի գաւաթ գօնեակ, մէկ անուշի դգալ քարպօնաթ սը բօթաս, առածին չափ ալիւր շաղուէ և փուռը սուր:

ԲԱՆՔ ԻՄԱՍՏՆՈՑ

Սերք անանկ մանուկ մ'ե որ խենդ է, կոյր է, փոփոխամիս է, հասսասամիս է, գրասիւրս է, բարբարոս է, շողոփոք է, անաչառ է. հրամմեցե՛ք պարոն մանկավարժներ, դասիարակեցե՛ք ՏԵՆՏԷՄ այս սղան:

* * * Կանայք մեծագոյն ուրախութիւններ ու մեծագոյն վիշտեր զգալ կուսան մարդոց:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ՃԱԹԱԾ ԱՄԱՆՆԵՐԸ ԿՊՑՆԵԼ

Հաւկիթի ճերմակը զարնելէդ ետքը մէջը չմտած կիր խառնէ և ճաթած պնակները կամ քիտսէները փակցնելու գործածէ: Փողոցը շրջելով կտարած ամաններ փակցնողներ այս բաղադրութիւնը կը գործածեն: Պէտք չէ մոռնալ որ փակցուած ամանին մէջ սա նուազն երկու օր բան մը դնելու չէ:

ՃԱՇԻ ԱՏԵՆ ԶԳԵՍՏԻ ՎՐԱՅ ԹԱՓՈՒՄԾ ԻՒՂԸ ԻՍԿՈՅՆ ՄԱՔՐԵԼ

Կերակուրի ատեն եթէ իւզոտ կտոր մը իջնայ կամ կերակուրի ջուր թափի հազուապէս վրայ, եղած թացութիւնը անմիջապէս չփեցէք հացի փորով, և հետզհետէ նոր հացի փորով չփեցէք բիծ եղած տեղը մինչեւ որ անտեսանելի ըլլայ: այս գործողութիւնը առանց ժամանակ կորսնցնելու՝ բիծը պատահած ատեն ընելու է: Բայց եթէ թող տրուի որ բիծին թացութիւնը չորնայ, այն ատեն պէտք է երկու կտոր թուխ կամ ծծուն թուղթի մէջ տեղաւորել բծաւոր տեղն և տաք արդուկով վրայէն անցնիլ: սոյն գործողութիւնը կրկնելու է, թուղթը փոխելով, մինչեւ որ բիծը մաքրուի:

ԿՕՇԻԿՆԵՐԸ ՆՈՐ ԵՒ ՄԱՔՈՒՐ ՊԱՂԵԼ

Եթէ կ'ուզէք նոր և մաքուր պահել այն կօշիկները, զորս երկար ատեն չպիտի գործածէք, կլիտերիսով ձեփեցէք զանոնք, փոխանակ ձէթի կամ այլ իւզերու որոնք ընդհանրապէս կը գործածուին և որոնք շատ անգամ կօշիկները կը ճաթուան:

ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՂԱՀԱՍ ՏՂԱՅԲ

Վաղահաս կը կոչենք ամէն ինչ որ անբնական կերպով կ'աճի ու կը զարգանայ: Վաղահաս աղան էակ մըն է որ ժամանակէն առաջ կը զարգացնէ իր որոշ մէկ կարողութիւնը կամ կարողութիւնները: Բնութիւնը կը սորվեցնէ մեզի. թէ բոյսի մը աճումը փութացնելու ամէն ջանք շատ սուղի կը նստի: Այդու՝ շատ բան կը կորսնցնէ բոյսը իր արժէքէն ինչպէս և իր պտղաբերութենէն: Ուրքա՞ն մեծ է թիւը այն մայրերուն որոնք՝ սնտարծութեամբ և հպարտութեամբ կուրացում՝ այնքան քիչ հասկացողութիւն ունին անհրաժեշտ այս օրէնքին նկատմամբ: Շատ կանուխէն կը վարժեցնեն անոնք իրենց զաւակները՝ այցելութիւններու ատեն՝ այս կամ այն ձեւով ի հանդէս բերելու իրենց կտրողութիւնները և կամ կատարած յառաջդիմութիւնները: Մայրեր, յաճախ, գերերջանիկ կը զգան ինքզինքնին, երբ իրենց զեռ շատ անչափահաս զաւակները ի վիճակի են երգ մը, աղօթք մը կամ ասանաւոր մը արտասանելու՝ հիւրերու ներկայութեան:

Հարկ կ'այ ըսելու թէ աղայք կանխահաս չեն յաճախ, այլ կանխատուութեան կ'առաջնորդուին մայրերու կողմէ: Իր երեք տարու զաւակին 1-20 համբերել ինչպէս նաեւ անոր ազատախօսութիւնը իրեն փութ ու պործանք սեպող մայր մը չէ կարող ըմբռնել թէ ո՞ր աստիճանի կը վեասուի աղան այդ կերպով: Մնապարծութեան, խարերայութեան և պշտախրութեան կ'առաջնորդեն մայրեր իրենց զաւակները, երբ կ'արթնցնեն ու կը մշակեն անոնց մէջ՝ այլոց զարմանքին և հիացումին առարկայ ըլլալու անզուսպ տենչը:

Տ Ն Ա Կ Ա Ն Գ Ե Ղ Ա Ր Ա Ն

ԲԱՂՆԻՔ

Բաղնիքներու տեսակները զանազան են: Յնցուղի տեսակը ամենէն մաքուրն է: Զղային անհասաներ պաղ ջուրով բաղնիքէ մը կը կազդուրուին. անքնութենէ տառապողները՝ գաղջ լոգանքներէ աւելի լուսարդիւնք կը ստանան: Գէրերը պէտք է շատ տաք ջուրով լուացուին, պայմանով որ սրտի հիւսնդութիւնը չուսնան, գլուխին պաղ ջուրով թրջած լաթով մը ծածկեն, և տաք ջուրին մէջ երկար չմնան:

Նիհարակազմ մանուկները պէտք է լոգցնել երկու օրը անգամ մը, իսկ առողջները օրը անգամ մը, անպայման:

Փոխնիփոխ տաք ու պաղ սրսկուցները լաւ են, բայց բաւական դժուար է վարժուիլ: Բաղնիքէ վերջ լաւ մը ցամքուիլ՝ էական է:

ԼԱՓԱՆՆԻՐ

Լափաներու գործածութեան մէջ, յաճախ րժիշկներն ու մամիկները չեն համաձայնիր: Բժիշկները կը պահանջեն, որ լափաները (կտաւտաէ, խմորէ, թեփէ, հացէ, եւն.), երկու լաթի մէջ առնուին. իսկ մամիկները կ'ուզեն զանոնք ուղղակի վէրքին կամ մօին վրայ դնել: Հաստատուած է, որ բոլոր լափաները իրենց տաքութեամբն ու թացութեամբը միայն կը ներգործեն:

Կտաւտը (քէթէն թօխումու) շատ գործածուածն է: Աւելի լաւ է կտաւտոյ ալիւրը: Ասիկա կը խառնուի եւսացած ջուրի մէջ, մինչև որ թանձրանայ, և կարելի ըլլայ երկու լաթի մէջ առնելով գործածել: Պաղելուն պէս, նորոգելու է լափան, կամ, անոր

պաղիլն արգիլելու համար, վրան տաք ջուրի տողքակ դնելու է:

Չստուգնած վէրքերու, վզին վրայ երեւցած խոցերու և ուռոյցներու համար՝ դիմանալու չափ տաք լափաներ օգտակար են՝ բորբոքումը ցրուելու և կամ հասունցնելու համար: Ականջի ցուերուն համար ալ լափաները օգտակար են: Ալիւրէ, հացի փըշուրներէ, անանուխէ, թեփէ և ուրիշ խտտերէ շինուած լափաները նոյն ազդեցութիւնը ունին: Երբ չափան, առանց լաթի, չստուգնած վէրքերուն վրայ գրուի, կրնայ վէրքը վարակել, երբ վէրքը յանկարծ պայթի:

ՇԻՇԷ ԲԱՇԵԼ

Պառաւակոն գարմանումներու լուսադոյնն է ասիկա, երբ ատենին գործածուի և բժշկական հականեխման հոգ տարուի: Երկու տեսակ է — չոր և թաց: Թաց տեսակին ատեն, ամելիով գծուելիք մասը պէտք է լաւ մը լոսացուի և ալքօձով հականեխուի. արիւնը քաշելէն վերջ ալ, մաքուր վիրակապով մը գոցելու է, հետագայ վարակումներ արգիլելու համար:

Թոքատալի (նիւմօնեա), կողտալի, մկանունքային, կուրծքի, կռնակի և մէջքի ցուերու համար օգտակար է:

Տղրուկ փակցնելն ալ տեսակ մը շիշէ քաշել է: Ջոնալու է միայն, որ աղրուկը ցերեկ ատեն փակցուի, որովհետև ասոր արիւնահոսութիւնը, երբեմն, շատ դժուար կը դադրի:

ՓՈՐԻ ՇՓՈՒՄՆԵՐ

Իրաւ որ, յաճախ, օգտակար են ասոնք: Բայց կուրաղիքի բորբոքումին անտեղեակ մէկը՝ այդպէսով կրնայ պայթեցնել կուրաղիքը, և փորամաշկատալ

առաջ բերել: Մեթոս մըն է, որ շատ զգուշութեամբ պէտք է գործածուի:

ԱՐԵԱՆ ԱՐՏԱԽՈՒԺՈՒՄՆԵՐԸ

Շիշէ քաշելու կը նմանի՝ ցաւող յօդուածի մը, կռնակի կամ ստամոքսի վրայ զօրաւոր դեղեր քսել: Շատ մը զօրաւոր հեղուկներ, սպեղանիներ (մէյլէմ), մանանեխի լափաններ (խարտալ), այօսայն, եւն., կը քսուին ցաւող մասերու վրայ, ցաւը ամօքելու համար: Օրինակ՝ մանանեխէ լափա մը՝ փսխուածի համար օգտակար է, երբ ստամոքսի վրայ դրուի, պայմանաւ որ մորթը չայրի: Այս տեսակ դարմանումներ՝ արիւնը մորթին տակ կը քաշեն և ցաւը կը մեղմացնեն, անըմբռնելի եղանակով մը:

ԱՐՏԱՍՈՎՈՐ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒ ՏԱԿ ԵՒ ԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԱՏԵՆ ԻՆՉ ԸՆՆԼՈՒ Է

Մի քանի օրինակներ: Նուաղելով գետինն ինկած մարդը իր տեղը թողուին տւելի օգտակար է, քան զայն վերցնելը կամ նստեցնելը: Կազէ բուճաւորուած մեկը անմիջապէս բացօդեայ տեղ մը տանելու է: Սառուցի կտորներ կլլել՝ կը դադրեցնէ կամ կը մեղմացնէ փսխելը: Ամառ տանն, սասիկ գլխացաւի ասեմ, կտոր մը սառուց ճակաին վրայ քսելը կրնայ ցաւը անհետացնել: Ուեէ բուճաւորման ասեմ՝ հիւսնդը փրսխեցնել, կաթ և հաւկիթի ճերմակ խմցնել անոր մինչեւ բժշկին գալը:

Սառ-ջուրով պէտք է չփել արիւնահոսութենէ կամ սախարուքենէ ուշաթափուողները. ասոնց զով հեղուկներ պէտք է խմցնել: Գիշեր ատեն խոչափողի պրկումով խեղդուելու աստիճանին հասնող մանկիկներուն շոգի շնչել տալու է, արգիւնքը վայրկենական կ'ըլլայ:

Ա . Ֆ . Գ Օ Ն Ս Ի Ի Լ Ե Ա Ն

**Հ Ա Զ Ա Ր Ո Ւ Մ Է Կ
Գ Ի Տ Ե Լ Ի Ք Ն Ե Ր**

Սիրելի ընթերցող,

Հազարումէկ Գիտելիքներու Բ. Հատրն ալ յաշողութեամբ ի կատար կարեւալ ամելու համար պիտի ունիմ Ձեր գործակցութեան:

Լաւագոյն կերպով գործակցած կ'ըլլաք այն ասեմ միայն երբ թելադրեք Ձեր բարեկամին որ ան ալ բաժանորդագրուի կամ նուէր ընէ ուրիշի:

Յանհունս երախսապարտ պիտի կացուցանեք զիս, եթէ անյապաղ զրկեք ինծի հասցէ մը կամ հասցէներ:

Ա . Ֆ . Գ Օ Ն Ս Ի Ի Լ Ե Ա Ն

1939

Տ Պ Ա Ր Ա Ն Ս Ե Ի Ա Ն

Գ Ա Հ Ի Ր Է

ՆԵՐՍԷՍ ԶԱԳԸՃԵԱՆ ՈՐԴԻ ԵՒ ԸՆԿ.

ՄԷԼԻՔԷ ՖԷՐԻՏԷ ՀԻՐՉՆԵՐԱԿԸ (ՆՈՒԿԻՆ ԱԹԱՊԱ ԽՈՑՐԱ)

Փոստակղ 502 ԳԱՀԻՐԷ Հեռաձայն 45302

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ

ՅՈՒՏԵՍԱԿԱՆ ԱՈՍՋՆԱԿԱՐԳ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒ



«ԲՐԻՄԻՒՍ» Կազի վառարաններ, Փուռեր, Լամբարներ
եւ անոնց մասերը



«ԼՈՒՄԱ» Ելեհրակամ լապսեր:


«ՕԲՅԻՄԻՒՍ» Ծեղքեր:

«ՀՈՒՍԳՎԱՌՆԱ» Միտի Պաղպաղակի, Կաւի
եւ Պարեզի մեխաններ:

«ՀԷԼԼԱՔԷՆՉ» Պարարիաներ՝ գրգամի
լապսերներու ճամար:



ՄԵՇՍԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՒՔՐԱՔԱՆԱԿ



115999 - ԱՀ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՄԳԱԿԻՐՆԵՐՈՒՆ

ՄՍԻԿՈՍ ԱՒՐԵՂԻՈՍԻ ԳՐԶԷՆ

Մարդկային կեանքը վաղախոյս ստուեր մըն է այս աշխարհի վրայ, լաւ եւս է ըսել՝ ծաղիկ մըն է ան դիւրաթարշամ ու փշոտ որ հազիւ ծաղկած, կը թառամի այս տրամուրթեան հովտին ծոցը: Այո՛, ուր որ ալ ըլլանք և ինչ վիճակի մէջ ալ ըլլանք՝ մահ ուսն քստմնասարսուռ ձայնը միշտ պիտի փշաքաղէ ուսն սրտերն ու հոգիները: Այն որո՞ւ ինքուզի գիտէ, միջ կըրցած է գերթ մնալ անոր հնձող զերանդիին բերնէն: Ճիշդ այս իսկ պատճառաւ՝ մեզի տեսակ մը պարտք կը սեպենք ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ ՀՍԻԱՏԱՎՈՐ ԵՒ ԱՆԲՍԺԱՆ ԸՆԿԵՐ ՄԸ ԸՆԴՈՒՄԸ ստանալու արտերը այս գերքին մէջ տեղ մը տալու Մարկոս Աւրելիոսի այն թանկարժէք գրութեան, որ, մխիթարութեան երկնային սուրբ ցօղը պիտի ցօղէ, պիտի ամօքէ մեր սգակիր ազգայնոց վշտահար սրտերն խոցոտուած, եթէ կարգան զայն քրիստոնէական կրօնի կենսապարզեւ լոյսովն ու հաւատքովը:

Ահաւասիկ այդ գրութիւնը. —

760597

«Դեռ իմ սիրելի որդւոյս, վերսիմոսի, սուրբ արեսու չէ ելեր. ժամանակը շատ բան մոռցնել կուսայ ինչ որ բանականութիւնն չիրաւ մոռցնել. բայց իմ արիս ցար ժամանակն ալ չի կրցաւ մոռցնել սալ: Եթէ մարդիկ կարեանային իրենց արեւն գգացածը բերանով բացաւել, երկինգ կը հոռաչէր, եւ արեւը անգոնով երկիրը կը քշէր: Եթէ կարելի ըլլար վիրաւորեալ սիրս մը բանալ՝ այն ասեմ կ'իմացուէր որ իմ կաթիլ



մը արիւնը շատ աւելի է քան արցունքի աղբիւրներ գորս աչքը կը բափէ: Ասոնք կ'ըսեն անոր համար որ գաւազիս մահուան վրայ հառաչանքներ չընելու՝ չկարծես թէ սիրս չալիք: Մըսի բոցը աչքերուս արցունքը կը ցամփեցնէ եւ աղիքս կը տոչորի: Ո՛վ իմս, Յաաուլլուս, ասկից կ'իմանաս թէ ի՛նչ ըսել է հօր մը իր առաքինի գաւազը կորսնցնելը. հաւատա՛, սիրելիս, որ կը վախճայի խելքս կորսնցնել պզտիկ տղուս մահուան վրայ, բայց ասով կը մխիթարուիմ որ օր մը նորէն զիրար պիտի տեսնենք: Այս ալ կը մտածեմ որ *չէք ինձի փոխ տուեր էին զինքը չէ թէ իբր պարգեւ, ուսի՞ գաւազս ինձմէ առնելով, իմս չառիմ, ալ ես զինքը իր բուն տերերուն դարձուցի: Իսկ որովհետեւ իրեն հանգիստ տուին, վասնզի բարի էր՝ գոհութիւն կուտամ իրենց որ այսչափ ասեմ քողուցին ինձի վայելել զինքը, ու իր մահուան համար ունեցած համբերութիւնս իրենց կը նուիրեմ»:*

Արդ մենք որ այս հեթանոս իմաստասէրէն 17 դար ետքը կ'ապրինք, մենք որ իբր հայ քրիստոնեաներ գիտենք թէ կեանքը հոս չվերջանար, անոր սկիզբը չէր ասկէ որ վախճանն ալ ըլլայ հոս, արցունքով լծացեալ մեր աչքերը կը վերցնենք դէպի վեր, դէպի կապուտակ եթերը, և կ'ըսենք մեղմօրէն.— Աստուած, դո՛ւն տուիր, դո՛ւն առիր, բու կամեղ օրհնեալ ըլլայ:

ԲԱՆՔ ԻՄԱՍՏՆՈՅ

Սերն ալ ճիշդ գինիի պէս է. եփածն ալ կայ չեփածն ալ, անուշեմ ալ կը գտնուի թրուէն ալ. կայ որ հիննալով աւելի պատուական կ'ըլլայ եւ կայ որ երթալով քացախ կը դառնայ:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔՆԵՐ

ՄԻՄՈՍԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

- Կոսրուիլ.— *Խօսակցութեան Շէքերլամէն:*
- Սեր.— *Երգ մը, որ թէեւ երկու կողմէ ալ մէկ բերան կ'երգուի՝ բայց երբէք միօրինակ ներդաշնակութիւն չունենար:*
- Հաւատարմութիւն.— *Նշանակութիւնը տակաւին չգտնուած բոս մը:*
- Մտերմութիւն.— *Առ երեսս խնդալ:*
- Իգական սեռ.— *Շրջուն լրագիր:*
- Բանս.— *Խղճի հիւանդութիւն ունեցողները դարմանելու համար շինուած հիւանդանոց մը:*
- Տարիք.— *Կանանց պահել կարողացած միակ գաղանիքը:*
- Ականջ.— *Խօսքի քամոց (սիւղիէճ):*
- Բօւսան.— *Տոպրակ մը սուտ:*

ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԸ

ՃԵՐՄԿՑՆԵԼ ՈՒ ՆՈՐԷՆ ԿԱՐՄՐՅՆԵԼ

Լաւ բացուած վարդը եթէ քիչ մը ծծումբի (ֆլուֆլուրս) մուխին (թիւթսիւ) բռնէք՝ անմիջապէս կը ճերմակի. ետքը, քիչ մը ջուրի մէջ քիչ մը ճերմակ քացախ խառնելով՝ վարդը անոր մէջ ընկղմեցէք, որով իր կարմիր գոյնը կը վերստանայ:

Այս խաղին գաղանիքն ալ ծծումբն ու քացախն են:

12-ԻՆ ՄԷՋ ԳՏՆԵԼ 6 ԱՆԳԱՄ 13

Թիւերը շարէ սապէս.—
1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12: Միշտ

առաջին և վերջին թիւերը առնելով կ'ըսես՝

- 1 + 12 = 13
- 2 + 11 = 13
- 3 + 10 = 13
- 4 + 9 = 13
- 5 + 8 = 13
- 6 + 7 = 13

ՄԱՏԱՆԻՆ ԿԱԽԵԼ ԱՅՐՈՒՄԾ ԴԵՐՁԱՆԷՆ

Թեւ մը դերձանը թաթխէ զօրաւոր ազջուրի մէջ և մատանին ծայրը կապելէ յետոյ դերձանը վառէ: Պիտի տեսնես որ դերձանը մոխիր դառնալէ վերջ տակաւին մատանին կախուած կը մնայ անոր վրայ:

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ն Ե Ր

- 20. Մէջքս փշիոչոտ
Ուտելիքս խոտ
Օձի հակառակորդ.
Կը կծկուիմ, կծիկ չեմ
Ոտներ ունիմ մարդ չեմ
Ձու սլ կ'ածեմ ձուկն չեմ: (Ոգնի)
- 21. Բերան չունիմ ջուր կը խմեմ
Տիկ չունիմ ջուր կառնեմ
Մազ չունիմ կը մազեմ
Սար ու ձոր կ'ողողեմ: (Ամպ)
- 22. Բոյր ու եղբայր անբաժան
Միմիանց կը յաջորդեն,
Մինը գաժան, մինն բարի,
Բարիք — չարիք կը գործեն:
(Գիւտեր եւ ցեղեր)

ԶՈՒԱՐԹ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

ԴԵՂԱԳԻՐ ՅԱՆԿԱՐԾ ՀԱՐՍՏԱՆԱԼՈՅ

Մարդիկ ջղային և անհամբեր են ընդհանրապէս: Փոխանակ ժամանակի ընթացքին բնականոն և պատուաւոր կերպով հարստանալու, կ'ուզեն մէկ օրէն միւսը մեծահամբաւ հարուստներ դառնալ: Այսպիսի գոգոզախոտցեալ մը անգամ մը զուտրճախօտի մը կը հարցնէ թէ, ի՞նչ ընելու է յանկարծ հարստանալու հաշմար: Եւ անս' կը տրուի իրեն հետեւեալ դեղագիրը. —

Էսանս սր խոտըղտկան	20	կրամ
Բուսուր սր քօֆախական	20	»
Էլեֆրիլեո հիլլէպագական	30	»
Սիոս ինքիարական	20	«
Ասիք կեղծաւորիք	25	»
Քառպօնար բիշիրիճիական	50	»

Եւ մէկ շիշ Քիմֆին տօլանարճիական.
Եթէ ասոնք իրար խառնելով 90 հատ դեղհատ շինուի և օրը երեք հատ գործածուի՝ (կերակուրին հետ ալ Բինքին տը տօլանարճիականէն մէկ մէկ դաւաթ խմելով) մէկ ամիսէն ԲիրիբՄ:Բ կ'ըլլայ գոգոզախոտցեալն և կը լինի հարուստ, և սակայն, եթէ քառամբար զօրաւոր է, վասնզի առ հասարակ ԱՄԷՆ ՍՏԱՄՈՒՔՄԻ ԳՈՐԾ ՁԷ ԱՅՍ ՀԱՊԵՐԸ ՄԱՐՍԵԼ:

ԶՈՒԱՆՁԻ ՍԷՐ ԹԷ...

Օ՞օ՞օ՞, հրամայեցէք Ոնոփրիսա աղա, սրչափ բարերախտ էք եղեր որ ձաշի վրայ եկաք, զոքանչնիդ գձեզ կը սիրէ եղեր:
— Ներեցէք բարեկամ, ձեր այդ կարծիքը սխալ է. եթէ գոքանչս զիս սիրած ըլլար՝ աղջիկը գլխուս փորձանք չէր հաներ:

ՆՄՈՅՇ ՄԸ

ՏԱՐՕՐԻՆԱԿ ԱՂՕԹԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Երկու աղջիկներ եկեղեցի կ'երթան և կ'աղօթեն և թէ կարող ենք այսպէս ըսել.—

Հայր մեր որ յերկինս սուրբ եղիցի անուն քո. նոր ֆիստանդ շինեցիր լմեցա՞ւ.

— Մօտիսթրան տանա չի բերաւ:

— Եկեցե արձայութիւն քո, եղիցի կառք քո. դա կէնճին շարխան ի՛նչ աղուոր է:

— Քրոջս ադածն ալ անանկ է:

— Որպէս յերկինս եւ յերկրի, զհաց մեր հանապազորդ, ա՞ն ալ տասնկ մեծ թիւշիւ է:

— Քա հապա՞, վեց մէճիտիյէ տուաւ:

— Տուր մեզ այսօր, հայրս մեզի ալ պիտի տունէ, եւ թող մեզ զպարսխս մերը թիւշիւզ պիտի ըլլայ կռօն քորաէլայով:

— Ան հիմա պարիթ է կ'ըսեն կոր. որպէս եւ մենք թողունք մերոց պարսապանաց:

— Ո՞վ ըսաւ.

— Ծօրճիին հարցուցինք նէ, եւ մի սանիր զմեզ ի փորձութիւն, ֆիլէյով շատ աղէկ կ'ըլլայ կոր ըսաւ. այլ փրկեա ի շարհն:

— Ֆիլէին ալ շատ մազ պէտք է.

— Զի քո է արձայութիւն, իմ մազերս բէք շատ է, եւ զօրութիւն եւ փառք.

— Փառք Աստուծոյ իմս ալ քիչ չէ.

— Յաւիտեանս յաւիտեանց ամէն մարդ իմ մազերուս բէք շատ հաւնած է:

ԲԱՆՔ ԻՄԱՍՏՆՈՅ

ձեմարիս հաւասարութիւնը ո՞ւր կը գտնուի.

— Գերեզմանին դուռը:

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԻՄԱՍՏՈՒՆ ԴԱՏԱԻՈՐԸ

Ուստի այս առաւօտ այս կնոջ յանձնեցի իմ գըշտակներս կարգադրութիւնը, գրիչ, թուղթ, կաշամար և գրքեր, նա այնպիսի կանոնաւոր կերպով մաքրեց, զհասեղեց և կարգադրեց որ վստահ եմ թէ գիւղացի գործաւորի մը կին անհնար է որ այսպէս կարենայ, կինը, ուստի, ուսուցիչին տուէք, իսկ գիւղացիին 30 գաւազանի հարուած:

Կարգը եկու կրօնաւորին և ծերուկին:

Դատաւորը ծառան կանչեց և ըսաւ որ այս երկուքը ախոռ տանի: Նախ կրօնաւորը ախոռ տարուեցաւ. սա ձիերուն մէջէն ո՞րն է քուկդ, հարցուց դատաւորը:

Ահաւասիկ այս է իմ ձիս, ըսաւ կրօնաւորը:

Լաւ, դուրս ելիր, և թող ծերուկը ներս մտնէ, ըսաւ դատաւորը:

Ծերուկը ախոռ մտաւ:

Քու ստացուածքդ կը ձօնչնա՞ս, բարեկամ, հարցուց դատաւորը ծերուկին:

Զի՞ս, անշուշտ, հարիւր ձիերու մէջէն իսկ կըրնամ որոշել զանի, անա՞ սա է իմ ձիս, պատասխանեց ծերուկը:

Դատաւորը նորէն իր աթոռը նստաւ, և հրամայեց որ ձին կրօնաւորին տան, իսկ ծերուկին 30 գաւազանի հարուած:

Կրօնաւորը խոնարհութիւն ընելով դատաւորին առջեւ, հարցուց թէ ի՛նչպէս կարող եղաւ գիտնալ թէ ձին իրեն կը վերաբերէր և չէ թէ ծերուկին, մինչ երկուքն ալ ձօնչցած էին միեւնոյն ձին:

Մի՛ նուազեր չափազանց երկար. քու գրացի-
ներդ ջիղերու տէր մարդիկներ են ուստի և պէտք
ունին հանգիստի:

Մի՛ լինիր անձնատէր և անձնակերպոն:

Մի՛ լինիր պահանջկոտ:

Մի՛ հաներ բաղում աղմուկ վանս սնչի:

Մի՛ փոթորկիր երբ ձախող կ'երթան գործերդ:

Մի՛ ըներ մտանան այս գիրքին մէջ գրի առնը-
ւած բոլոր «Մի՛»երը: Թերեւս կը խորհիս թէ պէտք
չունիս դուն կենցաղագիտական կանոններու. անհեր-
քելի իրողութիւն մըն է, սակայն, թէ ամենատուա-
քինի մարդիկն անգամ ձուլուած են տկարութիւն-
ներով և պակասութիւններով:

ԲԱՆԹ ԻՄԱՍՏՆՈՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՇԵԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամենէն մեծ գեան է Ժամանակ:

Ամենէն խոր ովկեանն է Մահ:

Ամենէն բարձր լեռն է Յաջողութիւնը:

Ամենէն քաղաքակիրք երկիրն է Այսօր:

Գաւառը ուր ոչ մէկ մարդ ոտք դրած չէ՝ կը կոչ-
ուի Վաղը:

Գաւառը ուր ոչ մէկ կենդանի բան կը բնակի կը
կոչուի Երէկ:

Ամենէն մեծ անապատը կը կոչուի *կեանք*, եւ շատ
ովասխանեւ ունի: Ասոնք կը կոչուին Յոյս, Փառասի-
րութիւն, Սեր, Մարդասիրութիւն եւ Տուն, եւ ասոնց
վերջինը ամենէն գեղեցիկն է: Ասոնցմէ զան շատ
ուրիշներ, սարածութեամբ փոքրագոյն, որոնցմէ կազ-
դուրում կ'ընդունի ուղեւոր՝ կեանքի յոգնեցուցիչ ու-
ղեւորութեան միջոցին:



7657-56

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Ծ.

1. Շան հաւատարմութիւնը երախտամուտաց մար-
դուն համար միշտ երեսձեծանք է:
2. Շանու հոռւէն վազողը, առաքինութեան ճա-
նապարհէն կը հեռանայ:
3. Շատ զգացումներուն վիշտերն ալ՝ շատ կ'ըլլան:
4. Շատերու քրտինքը հնարաւորութիւն կուտայ
մի քանիններուն՝ ազնուական կեանք վարելու:
5. Շնորհքը մարդու մը անկողոպտելի և անտեսա-
նելի զանձն է:
6. Շինարարները զաշխարհ ծաղկեցնող այգեպան-
ներն են:
7. Շոայլութիւնը օրինաւոր մարդուն համար մեծ
յանցանք է:
8. Շփուիր լաւ մարդկանց հետ, դու ալ անոնց
չարքը կը մտնես:
9. Շատ անգամ մանրէն վիշապի կերպարանքով կը
տեսնէ յուետեար:
10. Շատ տաղանդներ կը ծլին, բայց դեռ չբացուած
կը թառամին, զի միջավայրը նպաստաւոր չէ:

Ո.

1. Ողորմութիւնը իրմէ հեռացնողը, մարդկանց
թշուառագոյնն է:
2. Ոչ մի սուսեր այնքան մարմին չէ սպանած՝ որ-
քան արծաթը:
3. Ոչ թէ խտուրթիւնը, այլ պարտաճանաչութիւ-
նը պիտի պահպանէ կինը:
4. Ոչ թէ սիրող բերնիդ մէջ, այլ բերանդ սրտիդ
մէջն թող ըլլայ:

5. Ոչ մէկ վիշտ այնքան մեծ չէ, որքան վախը՝ այդ վշտէն առաջ:
6. Ով որ կարող է սիրել իր եսին, նա կարող է հրամայել ուրիշներուն:
7. Ով որ չգիտեր անկեղծ սիրոյ համբոյրը, նա չի գիտեր ո՛չ արքայութիւնը, ո՛չ դժոխք:
8. Որպէսզի հասկնանք մեր ունեցածին գէնը, պէտք է կորսնցնենք զայն:
9. որքա՛ն դառն է սիրել՝ և իրաւունք չունենալ սիրելու:
10. Ոսկին աւելի հոգի կը կորսնցնէ, քան սուրը:

Չ.

1. Չամաչող մարդը, անասուններու նախահայրն է:
2. Չարիքը երբէք բարի պատճառէ չի ծնիր:
3. Չարիքը իր հետեւորդները դէպի կորուստ կ'առաջնորդէ:
4. Չարքաշուծիւնը սղքատներու սնմաչելի շապիկն է:
5. Չքաւորութիւնը աղքատին ամենածանր բեռն է:
6. Չկայ մարդ առանց կրօնի, ինչպէս չկայ մարդ առանց սրտի:
7. Չկայ արդիւնք՝ առանց մրցման, վարձատրութիւն առանց գործունէութեան:
8. Չկայ սխալ բան, որ կարելի չլինի ուղղել:
9. Չկայ թակարթ մը, որ աւելի վտանգաւոր լինի, քան գեղեցիկ կինը:
10. Չար կամ բարի ընկերներէ կ'առնեն մարդիկ իրենց բնաւորութիւնը, ինչպէս որ որդանկարմիրի դպչողները կը կարմրին և թանաքի դպչողներն ալ կը սեւանան:

Պ.

1. Պատուէրէ դուրս եկողը, անպատիժ չմնար:
2. Պատուաւոր մարդը այն է, որ երբէք իր խոստումը չժխտեր:
3. Պատմէ քու անցեալդ, որ ապագադ գուշակեմ:
4. Պատիւը նման է աչքին, որ վատ բանին չէ կարող հանդուրժել:
5. Պարը սիրոյ տօնալաճառն է. սիրոյ դաշնադրութիւնները հոն կը կնքուին նախ:
6. Պատմութիւնը անցեալ յիշատակներու անբեկանելի կոթողն է:
7. Պարտաճանաչութիւնը մի ոյժ է, որ քաջ մարդն աւելի կը քաջալերէ:
8. Պղտիկ տղջիկները խաղալիքով կը խաբուին, մեծերն ալ երդումով:
9. Պիտանին յարգելը, իսկ անպիտանին անարգելը՝ պարտք է:
10. Պողպատ ծամելը հեշտ է, քան անարգ խօսք լսելը:

Ջ.

1. Ջանա՛ ամէն բանէ դաս մը առնել:
2. Ջանալը՝ գործ մը իր վախճանին հասցնելու առհաւատչեան է:
3. Ջանացողը իր նպատակներուն կատարումը կը տեսնէ:
4. Ջողացարանի երեսն ու գլուխը ալիւրոտ կը լինի:
5. Ջաւահեր թագ ունենալու համար, խելօք գլուխ ունենալու է:
6. Ջերմեռանդ գործունէութիւնը, լեռներ կը տապալէ:
7. Ջուլհակի համբերութեամբ գործ կատարէ:

8. Զուրն ու հուրը ամէն տեսակ աղտոյութեանց մաքրիչն է :
9. Զնջէ պակասութիւններդ, որ կատարեալ մարդ դառնաս :
10. Զերմութիւնը լաւ բան է՝ բայց ոչ ամէն ժամանակ :

Ռ.

1. Ռաբբի ալ որ լինիս, եթէ վարքդ վատ է՝ արհամարհելի ես :
2. Ռանչպարը հողի հետ գործ ունի, իսկ վաճառականը փողի :
3. Ռանչպարի աղէն լաւ հերկավար կը լինի, իսկ վաճառականինը լաւ խաբեբայ :
4. Ռանչպարութիւնն առաջին արհեստն է, եթէ արդարութեամբ ի գործ դնես :
5. Ռիհանը իր անուշահոտութեան չափով տեսք չունի :
6. Ռանվիրոյ ըլլալու արժանի է այն մարդը միայն, որ օժտուած է կամքի վիթխարի ուժով :
7. Ռամիկ ընկերակցութենէ հետու կեցիր :
8. Ռնգեղջիւրի կաշիէն աւելի հաստ է անամօթ մարդուն երեսի կաշին :
9. Ռումբի դեր կը կատարէ յաճախ, անխոհմտութեամբ խօսուած խօսքը :
10. Ռշտութիւնը կը սմբեցնէ մարդուս բարոյական կեանքն ու կենցաղը :

Ս.

1. Սառնասիրտը գորտի արիւն ունի :
2. Սիրահարը՝ կաթ է, նշանածը՝ իւղ, իսկ կինը՝ թան :
3. Սիրտը աչքերէն աւելի պարզ և հեռու կը տեսնէ :

4. Սէրը այն կրակն է, որ Պրօմէթէոս փախցուց երկինքէն :
5. Սիրելու համար պէտք է անդրդուելի հասուն լինել :
6. Սիրոյ իսկական հիմքը ճշմարտութիւնն է :
7. Սիրոյ առջեւը առելութիւնն ու նախանձը կը ծնրագրեն :
8. Սիրտը թռչուն մըն է, որ շատ տեղեր կը թռչըտի, բայց քիչ տեղ կը թառի :
9. Սէրը՝ սիրտ չըջանակին մէջ առնուած փափուկ ջրաներկ մըն է, որուն գոյները կ'եղծանէ անտարբերութիւնը :
10. Սուր լեզուն պարզեւ է, երկար լեզուն պտախտ :

ԱՌԱՄՔ ՀԱՅԿԱԿԱՆ

Շաս բան րբէ քիչ խօսե.
 Շաս մսմայ՝ շուս քսե.
 Խօսք արժար է կ'ըսեն,
 Լաուքիւնը ոսկի է :

••

Գիրքերդ պակաս ըլլան,
 Բայց լաւին լաւը ըլլան.
 Քարեկամներդ սակաւ ըլլան
 Բայց լաւին լաւն ըլլան :

••

Մի՛ լինիր հացի ընկեր
 Եղիր նաեւ լացի ընկեր.
 Ընկերդ խելօք լինի
 Լինիս խելացի ընկեր :

Գ Ր Ա Կ Ա Ն

Խ Ր Ա Խ Ո Յ Ս

Եթէ սեւ ամպեր դիզուին կոյտ կոյտ,
 Ծածկեն աչքէդ երկնից կապոյտ,
 Ահեղ ամպրոպք, փայլակ, կայծակ
 Ահաբեկեն հոգիդ համակ,
 Մի՛ վըհատիր, արեգն պայծառ
 Շուտ պիտ' ծագի, վանէ խաւար:

Մերթ ալեկոծ երբ կը տեսնես
 Խաղաղ ծովուն ջինջ մտկերես,
 Մըրըրկայոյզ այդ տեսարան
 Թող չազդէ քեզ ան մշտական.
 Փոթորիկներն թէեւ ուժգին՝
 Սակայն ընդհուպ պիտ' հանդարտին:

ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ամէն կողմէն
 Երբ ուժգնորէն վրադ խուժեն,
 Բաղբը երբ քեզ դէմ խոժոռի,
 Խինգըդ փոխէ ողբի, սուգի,
 Մի՛ լքանիր, զի վիշտ, հաճոյք
 Այս կեանքի մէջ կ'ընթանան զոյգ:

ԿԵԱՆՔԻ կըռիւն է դժուարին,
 Դու մի՛ փնտռեր պայքար դիւրին,
 Յաջողութիւն, փառք ու պատիւ
 Ժիր մրցման մէջ կան ստուգիւ.
 Լե՛ր անլեհեր կոչումիդ մէջ,
 Խանդ ու աւիւնդ պահէ անշէջ,
 Դուն քեզ օգնէ, յուսա ի Տէր,
 Տէրն պիտ' օգնէ քեզ, վստահ լեր:

Տ Ա Ն Տ Ի Կ Ն Ո Ջ Բ Ա Ր Ե Կ Ա Մ Ը

Խ Ո Շ Ա Ն Ո Ց Է Ն Ն Ե Ր Ս

Ս Ա Լ Ա Դ Ա Ն Ե Ր

12. ԲՈՒՄԱՆԱԿԱՆ ՍԱԼԱԴ.— Երկու հատ հաղար,
 մէկ հատ մանրուած սոխ, մեղր, քացախ:

Հաղարները մաքրեցէք ու ջուրը քամելէ յետոյ
 պզտիկ կտորներու բաժնեցէք, վրան աւելցուցէք քա-
 ցախը և շատ քիչ քանակութեամբ մեղր, վրան ցա-
 նեցէք մանր ջարդուած սոխն ու բերէք սեղան:

13. ԽՆՉՈՐԻ ԵՒ ՎԱՐՈՒՆԳԻ ՍԱԼԱԴ.— Խոշոր
 վարունգ մը բարակ ու կլոր ջարդելէ յետոյ սակել
 խնձոր մը և նոյնպէս ջարդելով վրան աւելցնել լի-
 մոնի հիւթ, աղ, պղպեղ և զարնուած սերի կամ կա-
 թի մէջ խառնելով սեղան բերել:

Կ Ե Ր Ա Կ Ո Ւ Ր Ն Ե Ր

1. ՏԷՕՆԵՐ ՔԷՊՍՊ.— Ոչխարի կամ գառնուկի
 լոփ միտերը շիշի վրայ անցուր, սղը և համնները
 ցանելէ վերջ, շիշին տակի և վրայի կողմը մէկ մէկ
 խոշոր սոճաթէս անցուր: Կրակին դէմը միշտ դար-
 ձուր, կարմրցածները դանակով հեղահեղ կտրելով
 ա՛ռ: Ատոնց վրայ սոխ, մայրանոսով բիազ անցուր
 կամ քովը դի՛ր. կե՛ր:

2. ՊԷՅԻՆ ՊԷՕՐԷՅԻ.— Ուղեղը լուս մը խաշելէ
 վերջ կը արորես զայն: Տուփի սուենկերէն ամէն մէկը
 կիտելով բաւական մը կը խառնես ուղեղին մէջ, աղ
 և պղպեղ կը դնես ու դգալ դգալ պատրաստ թերթե-
 բուն մէջ դնելով կը փաթթես ու կը տապկես:

3. ԵՕՂՈՒՐՏԼԸ ՔԷՊՍՊ.— Պէտք եղած քանակու-
 թեամբ իւզոտ խոզի միսը առնել և մանրել ընկոյզի

մեծութեամբ, իւրի մէջ կարմրցնել, աղ և համեմ դնելէ վերջ քիչ մը ջուրով եփել: Յետոյ՝ վրան սըխտորով մածսւն անցնել ու ճաշակել:

4. ԱճէՄ ՓԻԼԱԻԸ.— Կէս օխայի չափ կակուղ միսը մանրելով կարմրցուր ընկոյզի մեծութեամբ առանց սալցայի իւղով: Կէս օխանոց քեասէ մը մինչեւ բերանը եռացած ջուր լեցուր և մսին վրայ նըստեցուր: Մաքուր բրինձը գաղջ ջուրով լուա, քամոցէն անցուր, մսին վրայ կլոր մը թափէ, այնպէս մը որ ջուրով քեասէն մէջը մնայ, սանին վրայ ծածկոց մը փռէ, կափարիչը գոցէ և միջակ կրակի վրայ դէր թող եփի, մինչև որ մէջի ջուրը հասնի: Քեասէին ջուրը շոգիանալով լաթը կը թրջէ և ջուր կը ծորէ բրինձին վրայ որ եփելով կ'երկարի:

ԽՄՈՐԵՂԷՆ - ԱՆՈՒՇԵՂԷՆՆԵՐ

1. ՓԱՍԹԱ ՄԱՏԼԷՆ.— 30 հաւկիթի դեղնուցը, 125 կրամ մազուած ալիւր, 60 կրամ հալած կարագ, 150 կրամ փոշի շաքար, բէնտէ եղած կէս լիմոն, սուրճի դգալ մը վարդի ջուր, բոլորը լուա մը զարկ ու մատլէն կաղապարները թխէ ու զանոնք սաճ ափսէի մը մէջ շարէ. փուռը դէր:

Եթէ ուզես՝ եփելէն յետոյ զարդարէ մարմօլաթ կամ ուրիշ անուշեղէնով մը:

2. ՓԱՆՏԻՍԹԱՆԻԱ.— 325 կրամ շաքարը 12 հաւկիթի դեղնուցով զարկ՝ մինչև որ շաքարը հալի և փրփրի: Ասոր մէջ խառնէ 300 կրամ նշասթա և կաղապարները լեցնելով փուռը եփէ:

ԲԱՆՔ ԻՄԱՍՏՆՈՑ

Երշակուրեան հեմարիս աղբիւրը n°րճ է.
— Խելացի աշխատարան:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ԱՂԻՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ

Մեր գործածած առանին, սովորական աղը մէկէ աւելի օգտակարութիւններ ունի.—

1. Կապերաներու և գորգերու վրայ աղ ցանելէ վերջ եթէ աւելէք կարծր աւելով մը, ձեռք պիտի ձգէք երեք տարբեր արդիւնքներ. նախ՝ պիտի կարենաք առանց փոշիի աւելել, երկրորդ՝ մաքրութիւնը աւելի կատարեալ պիտի ըլլայ և երրորդ՝ գորգին կամ կապերաին գոյները աւելի պիտի պայծառանան:

2. Կրակ առած ծխնելոյզ մը մարելու լաւագոյն միջոցն է՝ անոր մէջ նետել մի քանի բուռ աղ:

3. Տակը այրած սաներ, բժաւորուած յախճապակիներ և այլ օնօթներ հրաշալիօրէն կը մաքրուին աղով. խոնու լաթ մը թաթխեցէք աղին մէջ և շփեցէք զանոնք:

4. Ածուխին վրայ եթէ սակաւ ինչ աղ թափելու ըլլաք, պատրաստուած կրակը թէ՛ աւելի պայծառ կ'ըլլայ և թէ՛ աւելի երկար կը տեւէ:

5. Խսիրեղէն կահ-կարտախներն լաւագոյն կերպով մաքրելու համար չկայ ուրիշ միջոց, բացի աղէն. աղջուրով պէտք է սրբել զանոնք. միայն թէ՛ ջուրը փոխելու է պղտորելէ անմիջապէս վերջ: Պարզ ջուրով ալ լուալ անհրաժեշտ է հաքը:

6. Սեղանի ծածկոցին վրայ եթէ պտուղի բիծ ըլլայ, իսկոյն աղ ցանեցէք վրան. այդու առաջը կ'առնէք մնայուն բիծերու:

7. Ամէն տեսակի բժանանութեանց համար ալ աղ կը գործածուի սովորաբար. թրջուած աղը լաթով մը քսեցէք բիծերուն վրայ, մինչև որ անհետանան:

8. Բան մը տապկելէ առաջ եթէ մի քիչ աղ ցա-

նէք տապալին յատակը, զերծ կը մնաք իւզի ցայտուքներէ:

9. Գոռնաւոր հազուստներու դոյները անփոփոխ կը մնան եթէ լուալէ առաջ գաղջ աղի ջուրի մէջ թրջէք զանոնք:

10. Կոթը թթուելու վտանգէն զերծ պահելու համար, սակաւ ինչ աղ դրէք մէջը:

11. Գլխացաւէ տառապողներ թող մի քիչ աղ դնեն իրենց լեզուին վրայ, սպասեն քանի մը վայրկեան, և ապա գաւաթ մը պտղ ջուր խմեն վրան:

12. Եռացած ջուրին մէջ սակաւ ինչ աղ խառնեցէք և անա կ'ունենաք հրաշալիօրէն կազդուրող հեղուկ մը յոգնած աչքերու համար:

13. Կոկորդի բորբոքման դէմ աղ ջուրով կարկառաւ մը յարմարագոյն դեղն է:

14. Մեղուի խայթուածք մը, եթէ զօրաւոր աղջուրով չփռուի, գրեթէ անմիջապէս կը դադրի ցաւը, և առաջըը կ'առնուի ուռնետուր:

15. Այրուածքներու վրայ, (եթէ այրելէ վէրք յառաջ եկած չէ) պէտք է իւզ քսել ու աղ ցանել. այս այսպէս եթէ շարունակուի մինչեւ ցաւերուն անհետանալը, մորթը չի բշտի և ջրալից այտոյցներ առաջ չեն գար:

16. Թունաւորման առեւն ալ աղը լաւ փոխեցուցիչ մըն է (4-5 թէյի դգալ լեցուն աղ, գաւաթ մը տաք ջուրի մէջ խառնելով):

17. Աղը արիւնահոսումն ալ կը դադրեցնէ, մոնաւանդ ակոսայ քաշելու առեւն. օգտակար է աղ դնել ելած ակոսային պատճառած վէրքին վրայ:

18. Կէս գաւաթ ջուրի մէջ եթէ մէկ թէյի դգալ աղ խառնուի ու խմուի իսկոյն, փորի ցաւը (սակեր) կ'անցնի:

19. Եթէ յոգնած են ոտքերդ, աղջուրի մէջ դեր զանոնք:

ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԺՈՒԱՐԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Տասներկու տարեկանէն քսանեւչորս տարիքը կը կազմէ կեանքի այն շրջանը որ պատանեկութիւն կը կոչուի: Մարդու մանկութենէն ի չափահասութիւն փոխանցման շրջանն է այն:

Այդ շրջանին մէջ պատանին առաջին անգամ ըլլալով աշխարհը տեսնել ու գնահատել կը սկսի: Ինչպէս արտաքին աշխարհը, նոյնպէս և ինքզինքը լաւագոյնս հասկնալ կը սկսի. իր ներհող ինքնագիտակցութիւնը կ'արթնայ: Այս տարիքին մէջ շատ մը նոր կարողութիւններ ի յայտ կուգան: Կը գիտակցի իր անհատական կամքին և կ'ուզէ գործածել զայն: Կը կամենայ անկախ վարմունք ունենալ և շարունակել սպառնիլ իր իսկ դատողութեան ու խելքին: Չուզեր սկանջ կախել սուրիշներու կողմէ իրեն արբուած բացատրութեանց և ուղղութեանց: Անհանգարտ ու անհամբեր վարմունք կ'ունենայ պատանին. շուտով կը ձանձրանայ և շարունակ ընկերակցութեան կարօտ կ'զգայ: Իր մէջ կ'զգայ հակամարտ ուժերու պայքարը: Կը փափաքի իր մէջ ամբարուած բոլոր ոյժերը արտայայտել:

Պատանին կեանքի ամենէն փափուկ և վտանգաւոր այս շրջանին մէջ, մայր մը պարտի ըլլալ իր զաւկին մտերիմ ու սրտցաւ բարեկամը: Բարկացայտ խօսքերը, սպառնալիքները, պատիժներն ու խստութիւնները բոլորովին հակառակ արդիւնք կուտան քրիթիքական այս շրջանին մէջ: Պատանին իմաստութեամբ առաջնորդելու համար շատ կարեւոր է անոր հետ փոփոկութեամբ վարուիլ: Մօր մը համբեր-

բուժիչը, քաղցրութիւնը, հեղութիւնն ու խմած-
տութիւնը կրկնապատկուելու և բազմապատկուելու
է այս վտանգաւոր տարիներուն մէջ: Պատանին պէտք
է առաջնորդել թելադրութիւններով, վստահութիւն
և հաւատք ցուցնելով իր կարողութեան և յօժարու-
թեան վրայ, ու նաեւ համբերատար ու ներողամիտ
ըլլալով իր թերութիւններուն և յանցանքներուն:

Քրիթիքական այս շրջանին մէջ անջնջելի տպա-
ւորութիւն մը կը գործէ ծնողաց բարի կամ յոռի
կենցաղավարութիւնը: Հօր և մօր ամէն մէկ արարքը,
ամէն մէկ խօսքը, ամէն մէկ խորհուրդը ճակատա-
գրային նշանակութիւն ունի տղուն տպագայ կեանքին
համար: Կեանքի հիմերը, թէ՛ Ֆիլիքոպէս և թէ՛ բա-
րոյսպէս, այս շրջանին մէջ կը դրուին: Հետեւապէս,
որքան կարեւոր է ծնողաց կենդանի օրինակը:

ԲԱՆՔ ԻՄԱՍՏՆՈՅ

Գեղեցկութիւնը կարծասել բռնակալութիւն կ'ան-
ուանէ Սոկրատ, բնութեան մէկ մեծաւորն էր՝ Պլատոն,
անձայն խաբէութիւն մը՝ Թեոփրաստ, գլխաւոր ճախա-
պաշարում մը՝ Թեոգրիս, Արիստոսէլ գեղեցկութիւնը
կը նկատէ յանձնարարութեանց լաւագոյնը: Հոմերոս
բնութեան մէկ փառաւոր պարգեւը կ'անուանէր գայն,
իսկ Օվիս, երկնային մի շնորհ:

..

Մարդու կեանքն ի՞նչպէս է.
— Արտաւոք ձնիլ, գանգասելով ապրիլ եւ ցաւե-
րով մեռնիլ:

..

Ի՞նչ է սակը.
Գործածել գիտողին համար լաւ ծառայ, չի գիտ-
ցողին համար՝ գէտ սէր մը:

Տ Ն Ա Կ Ա Ն Դ Ե Ղ Ա Ր Ա Ն

ԼԻՄՈՆԸ՝ ՀՐԱՇԱԼԻ ՊՏՈՒՂ

«Ով որ օրական լիմոն մը կ'ուտէ,
Բժիշկը իւրեկ հետու կը պահէ»:

Լու է որ ամէնքս օրական առնուողն երկու ան-
գամ (անգամ մը նախաճաշէն կէս ժամ առաջ, անգամ
մըն ալ երեկոյին անկողին մտնելէ կէս ժամ առաջ)
կէս լիմոնի հիւթ ³/₄ գաւաթ ջուրի մէջ քամելով
խմենք:

Ընդհանրապէս լիմոնը մեծապար թթու մը կը
նկատուի. ստիկա սխալ է: Լիմոնը արիւնը մաքրա-
գործելով՝ մարմինը հիանալիօրէն կ'ոգեւորէ: Նաեւ՝
անոր միջոցաւ մկանները կը զօրանան, ուղեղը աւելի
յստակ կը խորհի, և ամբողջ մարմնոյն բջիջները՝
ստքին տակէն մինչեւ գլխուն գազաթը՝ կը մաք-
րուին: Մինչեւ իսկ աչքերուն տեսողութիւնը մե-
ծապէս կը բարւոքի:

Լիմոնով բուժուող կարգ մը հիւանդութիւններն
են հետեւեալները. —

1. ԼԻՄՈՆԸ ՊՆԴՈՒԹԵԱՆ ԴԱՐՄԱՆ. — Եթէ մէ-
կը կէս լիմոնի հիւթը և այդ հիւթին չափ ալ գաղջ
կամ պող ջուր խառնելով թափանչն ներս առնէ
մանկազրեխով, մի քանի վայրկեանէն պնդութիւնը
կը լուծուի: Անիկա ամենաշուտ կերպով գործող բը-
նական լուծողականն է:

2. ԼԻՄՈՆԸ ԹԱՐԱԽԱԼԻՑ ԼՆՏԱՑԱԻՈՒԹԵԱՆ
ԴԱՐՄԱՆ. — Այս հիւանդութենէն տառապող մէկը
թող լիմոնով լուայ ակունները ամէն առաւօտ և երե-
կոյ, չի մոռնալով նաեւ լիմոնի հիւթ խմելը: Այս-
պէս՝ ներսէն ու դրսէն արիւնը մաքրուելով լինտե-
րու հիւանդութիւնը կը բուժուի:

3. ԼԻՄՈՆԸ ՀԵՐԱԹԱՓՈՒԹԵԱՆ ԴԱՐՄԱՆ. — Եթէ մէկուն գլխուն մազերը կը թափին, բանջարեղէնէ շինուած օճաքով (վէճիթէպըլ սօի) և գաղջ ջուրով մազերը լուսիէ վերջ, թող մէկ լիմոնի զուտ հիւթը գաւառի մը մէջ քամէ և կամաց կամաց մազերուն վրայ թափէ, և մառնեցողը 5-10 վայրկեան լուսի մը չփէ գլխուն մորթը և քաշքշէ մազերը. յետոյ պող կամ գաղջ ջրով լուսայ գլուխը: Այս բնական դարմանը եթէ շաբաթական մէկ կամ երկու անգամ կրկնէ, ո՛չ միայն մազերը թափելէ պիտի դադրին, հապա նաեւ նոր մազեր պիտի բուսնին:

4. ԼԻՄՈՆԸ ԶԳՍՅՈՒՆ ՄՈՐԹԻ ԴԱՐՄԱՆ. — Եթէ մէկուն երեսին մորթը այնքան դգայուն է որ չկըրնար ամէն օր ամիլուելի, թող կէս լիմոնի զուտ հիւթը ամանի մը մէջ քամէ և ամիլուելէ վերջ՝ փոխանակ արուեստական մետաղաբ հեղուկներ գործածելու, թող այդ լիմոնի հիւթով լուսի մը երեսը չփէ: Զարմանալի կերպով մորթը պիտի զօրանայ, և պիտի կրնայ առանց ցաւի ամէն օր ամիլուելի:

5. ԼԻՄՈՆԸ ԴԱՐՄԱՆ ԿՈԿՈՐԴԻ ՅԱԻԵՐՈՒ ԵՒ ՆՇԱԳԵՂՁԵՐՈՒ. — Եթէ մէկը կոկորդի ցաւ կամ նըշագեղձերու բորբոքում ունի, կրնայ սովորական ազէն մէկ թէյի դգալ գաւաթ մը ջուրի մէջ խառնել և մի քանի կաթիլ ալ լիմոնի հիւթ քամել և կոկորդը կարկարա ընել: Նշագեղձերու բորբոքում ունեցողներ, եթէ ամէն առաւօտ և երեկոյ այս կարկառան ընեն, նշագեղձերնին կտրել տալու պէտք պիտի չունենան:

6. ԼԻՄՈՆԸ ՅՕԴԱՑԱԻԻ (ՐՕՄԱԹԻՉՄ) ԴԱՐՄԱՆ. — Այս հիւանդութենէն առաւապողներ թող օրական երեք լիմոն և մէկ րաթիլը կամ 2 ջուրի գաւաթ լոլիկի (թօմաթէս) ջուր իրար խառնելով խմեն. նաեւ՝ պողլեղածինէ (ալիւմինըմ) կերակուրի աման գործածելէ դադրի:

7. ԼԻՄՈՆԸ ՃՃԻԻ ԴԱՐՄԱՆ. — Մեզմէ ամանք ճճի ունին իրենց մարտոզական խոզովակին մէջ: Լիմոնի հիւթ խմելով, շուտով այդ կենդանիները դուրս կ'արտաքսուին աղիքներու մէջէն:

8. ԼԻՄՈՆԸ ԿԸ ՀԱԿԱՆՆԵՆԷ. — Եթէ մէկուն ձեռքը և կամ մարմնոյն ուրէ մէկ մասը կարի կամ վիրուտորուի, թող լիմոնի զուտ հիւթով լուսայ: Լիմոնը ոչ միայն պիտի հականնելէ, այլև պիտի բուժէ վէրքը:

9. ԼԻՄՈՆԸ ԿԸ ԶՕՐԱՅՆԷ ԱՉՔԵՐԸ. — Եթէ մէկուն աչքերը սկարանալ սկսած են, այնպէս որ չի կրնար մանր գիր կարդալ, թող աչքի գաւաթով մաքուր պող ջուրին մէջ չորս կաթիլ լիմոնի հիւթ կաթեցնէ ու տաով աչքերը լուսայ առաւօտ և երեկոյ: Նաեւ՝ թող աչքի մարգանք ընէ (աչքերը վեր և վար, աջ ու ձախ դարձնելով) եւ մի քանի երկվայրկեան արեգակին նայի: Այս բնական մեթոսներով աչքերը զարմանալի կերպով պիտի զօրանան:

10. Լիմոնի հիւթը կը բուժէ նաեւ բուբ (մայասըլ), ուռեցի, ժնչարգելութիւն, կարուած, հարբախ Եւստրախս, սակաւարիւնութիւն, ևւայն:

Արդարեւ, չկայ հիւանդութիւն մը որուն համար օգտակար չըլլայ լիմոնը:

ԲԱՆՔ ԻՄԱՍՏՆՈՅ

Կ'ուզե՞ք հարուս ըլլալ. Հափաւորեցե՛ք ձեր փափակներ, փոխանակ ձեր հարսութիւնն աւելցնելու:

Ի՞նչ են բժիւկի.

— Յոյս ծախսողներ. ասոր համար միշտ կը փնտրուին:

7651-56



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԽՆՁՈՐԻՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ

Ճաշէ առաջ կամ ետքը խնձոր ուտելը շատ օգտակար է մարսողութեան: Հաստատուած է որ առողջութեան համար օգտակար է քիչ միս և շատ պըտուղ ուտել: Երեւելի բժիշկներ հաստատած են թէ խնձորը շատ առողջարար, ստամոքսի կաղզուրիչ և դիւրամարս է: Խնձորին թթուն է որ կը դիւրացնէ մարսողութիւնը: Բայց ասկէ նեղութիւն զգացողը պէտք է կա՛մ քիչ ուտէ և կամ չուտէ: Կարծր խնձորը եփուած ուտելու է: Խնձորը գերազանց անուշդ մ՛ըլլալէ զոտ, երկրիս արտադրած միւս ամէն տունկերէն աւելի փափորային թթու կը պարունակէ: Խնձորը, մանաւանդ, երբ ննջելէ անմիջապէս առաջ ուտուի՝

1. Լաւ ներգործութիւն մը կ'ընէ ուղեղին վրայ:
2. Կը գրգռէ լեարդը:
3. Խաղաղ քուն մը կը պատճառէ, երբ կանոնաւորապէս ննջելէ առաջ ուտուի:
4. Կը մաքրէ բերնի խողովներուն մէջի ապահանած հոտը:
5. Կը չեզոքացնէ ստամոքսին աւելորդ թթուները:
6. Կը խափանէ թուփքի խանգարումները:
7. Գործունէութիւն կուտայ երիկամանց:
8. Քարաժէտութեան ենթարկումէ հետո կը պահէ:
9. Կը պահպանէ ստամոքսը մարսողութեան խանգարումներէ:
10. Կը պահէ զանազան փողացուերէ:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔՆԵՐ

ՍՏՈՒԳՍԱՆԱԿԱՆ ԲՍՈՍՐԱՆ

- Շեհրիյէ չօրպասը. — Քաղաքային ապուր:
- Քիւլպասը. — Մոխիր կոխեց:
- Գրյմա. — Մի՛ խնայեր:
- Գրգարմա. — Աղջիկ մ'աւելնար:
- Եալաներ solմասը. — Ստախօսի լեցուած:
- Տօնանմա. — Վարտիք մի՛ յիշեր:
- Շամսան. — Ի Գամտակոսէ:
- Էզանը. — Ճգմէ լեղի:
- Տէլիգանը. — Խենդ արիւնով:
- Իմամ պալլար. — Կարգացողը մարեցաւ:
- Գանսիլ. — Արիւն լեզու:
- Քիրազ. — Ազա քիչ:

ՄԻՇՏ ԿԸ ՏՈՒԺԷ՝

Մանրուք դրամ չունեցողը:
 Խրլավուզի ձեռքով կարգուողը:
 Հարստանալու յուսով պորտան մանողը:
 Աժնութեանը համար անճարակ սպասուող բըռնողը:
 Դրամօժիտով աղջիկ աւնողը:
 Թեթեւութեամբ ծանրաբեռնեալ Յարիթայից խօսքերուն հաւատացող օրիորդը:
 Ճաշատան կամ գինետան մը մէջ իր պարտապահանջին հանդիպողը ՄԻՇՏ ԿԸ ՏՈՒԺԷ՝...

ԱՇՏԱՆԱԿԻ ԽԱՂԸ

Բոլոր լոյսերը մարելով մոմ մը կը վառէք սենեակին մէջ ու կը դնէք վարագոյրի մը մէկ կողմը

այնպէս որ վարողոյրին առջեւէն անցնողին շուքը անոր վրայ իյնայ: Մէկը կը նստի վարողոյրին միւս կողմը և մնացողները մէկիկ մէկիկ կ'անցնին վարողոյրին առջեւէն ջանալով ձեւերնին ու հասակնին փոխել անձանակելի ըլլալու համար: Ան որ ճանչցուեցաւ, կ'անցնի վարողոյրին միւս կողմը ու կը սկսի գուշակութեան գործը:

ՓԵՏՈՒՐԻ ԽԱՂԸ

Ներկաները կը նստին շրջանակաձեւ իրարու մօտիկ: Խաղին առաջնորդը շատ թեթեւ փետուր մը կը փչէ դէպի վեր սենեակին կեդրոնին ուղղութեամբ: Իւրաքանչիւրը պիտի աշխատի իր շունչով արգիլել զայն իր վրայ իյնալէ:

Հ Ա Ն Ե Լ ՈՒ Կ Ն Ե ր

- 23. Սպիտակ ախոռ դուռ շունի, վրան արծաթ՝ մէջն է ոսկի: (Հաւկիթ)
- 24. Կանանչ կ'ուտէ, փոշի կը թրքէ: (Սիկար)
- 25. Չորս ոտքն ի հող, երկուքն ի շող: (Զին ու ձիաւոր)
- 26. Կարմիր եզը, սեւ եզան փորը կը լզէ: (Բոցը պտուկի սակ եղած ասեղն)
- 27. Հինգ մարդ, հինգ լեզու, չորս հոգի: (Մեռել ու դագաղակիրներ)
- 28. Սեւ ու մութ տուն, Սատանան մէջն է ի քուն: (Հրացան-զնդակ)
- 29. Քար եմ քար չեմ Արծաթ եմ արծաթ չեմ Որ շատ մսիմ քար կը դառնամ Որ տաքանամ ջուր կը դառնամ: (Սառոյց)

ԶՈՒԱՐԹ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

ԿԱՄԱԻ ՄՈՌԱՅԿՈՏՈՒԹԻՒՆ

Գուզում Զէնօիկ ազա, Ֆիստանիս թանթէլան նորէն չի մոռնաս:

- Չեմ մոռնար, իրիկուան կը բերեմ:
- Երէկ ալ ատանկ ըսիր՝ չի բերիր, կայնէ մատը բոն մը կապեմ:
- Կապէ:
- Չօճուխը ոտքի աման չունի. սանկ ածնկէք բան մը առնէիր:
- Կ'առնեմ:
- Կայնէ ասդիի մատդ ալ կապեմ որ չի մոռնաս:
- Ան ալ կապէ:
- Շարաթ մըն է որ Բօնիցային շարխա չիխել պիտի տանք կ'ըսեմ. 60 դուրուչն ալ աս իրիկուն պիտի տաս քի՛ վազն առնենք:
- Կ'առնենք:
- Անտոնիկիս գլուխը բաց է, հետդ տար աէ՛ գլխարկ մը առ:
- Մատս կապէ որ չմոռնամ:
- Մեղա՛յ Տէր, իշթէ չօճուխը հետդ պիտի գայ, ասոր ի՞նչը պիտի մոռնաս:
- Պէլքի չօճուխը ճամբան կը մոռնամ:
- Քա ճանրմ, դուն աստար մոռացկոտ չէիր նէ՛ . . . :
- Մոռացկոտ չէի և չեմ ամա՛ առեւտրոց ընթացքը չի գիտնալէդ՝ քեզի անանկ կուգայ թէ մոռացկոտ եմ:
- Ըսել է որ պիլերէք մոռացկոտ կ'ըլլաս կոր:
- Ի՞նչ ընեմ կնիկ, ուրիշ ճար չկայ:
- Էյ մասներդ կապեցի նէ՛ կէնէ՞ պիտի մոռնաս:

— Հիմակուհիմս ատտնի բաներ սանելու ժամանակ չունենալս դիտցիր տէ՛ կ'ուզես նէ տասը մատս ալ կապէ:

«ԹԱՁԷ՛ ՊԱԼԳԳ...»

Չկնովածառ մը «բազե՛ պալրգ, բազե՛, վայ կիսի լեկրե՛ վայ, արմատերն ետ ազլը եօզ ետ փարսար, իթե մալ իթե շարբ», կը պոռար սուր ձայնիւ: Նոյն միջոցին ձերուկ անցորդ մը կը մօտենայ և ձուկին սկանջին բռն մը փոխապէ կտքը՝ ճամբան կը շարունակէ: Չկնովածառը ծողրածու եղանակաւ ձերուկին ետեւէն կը գոչէ — «Նա՛սըլ, էյի գօզլասը՛ն մը աղա՛, հիչ պեօլէ սերին հա՛վասա պալրգ գօզլանը՛ր մը. սեն պեօլէ պալրգ եէյեմեզսին:»

Ծերուկը — Վագաս սէքիզ կիւնլիւք պոյթաթ պալրգ տա եէնմէզ:

- Պայթ օլտուղունու նէ՞ տէն աննատըն:
- Պալըղըն իֆատէսինտէն:
- Պալըղըն իֆատէսի նէ՞ օլուեօր քի.

Կէչէն հաֆթա գայըգտան չըգարքէն գունտուռամըն թէքի տէնիզէ տիւշտիւ տէ՛ սճապա կէօրմի՞ւշ մի տէյի շիմտի պալըղա սօրտում:

- էյ նէ՞ տէտի:
- «Սէնին գունտուռանըն տէնիզէ տիւշտիւղինտէն տէ իքի կիւն էլէլ պէն տէնիզտէն չըգմըչըմ, խապէրիմ եօզ», տէյօր:

ՄԽԻԹԱՐԱՆԻ

Նոր այրի մնացող կին մը ամուսնոյն գերեզմանին վրայ ինկած մէկ-երկու ժամ լալէ կտքը աչքերը սրբելով ըսաւ. — Ո՛հ, դարձեալ մխիթարութիւն մ'ունիմ, զի այսուհետեւ էրկանս գիշերներն դուրսը ուր մնալը պիտի դիտնամ:

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՎԱՃԱՌԵԱԼ ԱՄՈՒՍԻՆԻ

- Չորս հազարի. գուն քանի՞ տուիր:
- Ութը հազարի:
- Է՛, ի՞նչպէս, գոնէ տուած սաակզ կ'արժէ՞:
- Ոչ, քոյր իմ, ոչ, ևս խարուեցայ, հայրս մայրս զիս այրեցին, բայց զանոնք ալ չեմ մեղադրեր, իրենց ազիսութեամբը՝ անպիտան միջնորդներու ճարտասանօրէն թափած լեզուներէն խարուեցան որք «կ'արժէ» կ'ըսէին, այլ աւա՛ղ, ոչ թէ ութը հազար ոսկի՝ ութը հազար փարս ալ չ'արժեր եղեր. տոհմօք ծնողք այնչափ ստակով աղամանդ կ'առնեն եղեր իրենց աղջկանը, հիմա այն ստակով անպիտան մարդ մը կ'առնեն իրենց զաւկին, որպէսզի անոր գլխուն փորձանք ըլլայ:

— Ո՛հ, արդեօք իմ առածս ալ չորս հազար կ'արժէ՞, ապա թէ ոչ՝ մենք ալ ստակնիս ծովը նետած պիտի ըլլանք:

Աստուած տայ որ խարուած չըլլաս: Անուշը ի՞նչ գրեր:

- Ադ ի՞նչ ըսել է. արդէն անանձն էր որ տնուն զնեմ:
- Միտքս չի հասկցար, կեցիր որ ըսեմ. մենք հիմա զիրենք առջի անունով չենք կանչեր, զորօրինակ, Տիկ. Միջակէտ իր ամուսնոյն անունը 5000 դրամ է. Տիկ. Տողադարձ ալ 7000 կ'ըսէ էրկանը, ևս ալ իմ չըլլալուիս անունը 8000 ոսկի դրամ եմ:
- Տէր ողորմեա, ատանկ անձն կ'ըլլայ:

— Ինչո՞ւ չըլլար, եթէ քուկզ ալ տուած սաակզ կ'արժէ՛ անունը մի՛ փոխեր և հեաը սիրով վարուէ, իսկ եթէ չ'արժեր՝ մեզի պէս քանի՛ որ առիր այն անունովը կանչէ, գուն ալ չորս հազար կանչէ, և ևս

տարակոյս չունիմ թէ քիչ ատենէն պիտի ստիպուիս զինքը այս անունով կոչելու երբ տուած ստակդ հասնի և իր քու վրադ ունեցած սէրը պողի:

— Այո՛, քոյր իմ, մեզի համար ասկէ ուրիշ ի՞նչ միտիթարութիւն կրնայ ըլլալ. ստակը խել խելօք մանաւանդ ոսկի ըլլալով կուտանք մէկ մէկ ամուսին կ'առնենք, վերջը ծախել որ ուզենք՝ կուտ մը տուող չ'ըլլար: Հիմա, ևս որ աս իմինս 8000ի առած եմ, 2000ի աչքս կը գոցեմ կուտամ, բայց առնող ո՞ւր է:

Դրացի տան տղան որ պատուհանին առջեւ այս երկու խօսող տիկիններէն չտեսնուելու կերպով մօրը հետ նստած սոյն խօսակցութեան ունկնդիր կ'ըլլար, մօրը դառնալով ըսաւ.

— Հիմա մայրի՛կ, սա հազար ոսկիով գասած աղջիկդ եթէ առնեմ, ա՞ն ալ ինծի համար արդեօք ասանկ խօսքեր պիտի ընէ, ա՞ն ալ իմ անուշա 1000 պիտի դնէ:

— Խե՛նդ, պատասխանեց մայրը, դուն ստակ առնելդ նայէ. կնիկդ քեզի համար ինչ կ'ուզէ նէ թող ան ըսէ, աչխրքով է հիմա գրամ ուզելը, շատ քիչ կայ չուզող. առաջ՝ քեզի պէսերը կ'ուզէին թէ գլուխնին անցնի պսակ, իսկ հիմա՝ ձեռուներն բացած կը պոռան քսակ...:

ԾԱՆՕԹ.— Վերացական հայեցողութիւններով դրամն արհամարհել սխալ է: Հարկ կա՞յ սակայն քսելու քէ ամուսնական կեանքի մեջ գերազանց եւ գերիվեր է իրական եւ սեւական սերը քան նիւթականը՝ որ կը նիւթականացնէ սիրք քան վեճարդ՝ որ կը կարծացնէ զգացումները:



ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է

ԲՐՕՑ. Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆԻ

ՔԱՌԱՐԱՆ-ԳԱՆՁԱՐԱՆ-Ը ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ՀՈՄԱՆԻՇՆԵՐՈՒ

Այս բառարանը իսկապէս նոյն գանձարան մըն է հայերէն հումանիթեան: Կը պարունակէ ոչ միայն բառերու նշանակութիւնները, այլ եւ անոնց ուրիշ առումներով գործածութիւնը ինչպէս նաեւ հումանիթեան այլեւայլ պոսիանի երանգաւորումները: Իր տեսակին մէջ միակը: Արդիւնք լուրջ աշխատանքի: 543 էջ, մախուր բուրբ, բնիւր սպարութիւն (սպագ. Գալթա): ԳԻՆ՝ եզրագոյնի համար 30 Ե.Գ. փոսի ծախսով 35 Ե.Գ.

Արտասահման՝ 2 տար, փոսի ծախսով միասին

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը Կ Ա Ն Խ Ի Կ

Գնելու համար դիմել՝

ԳԱՀԻՐԷ. - Խ. Յ: ԿԻԶԷԼԻՄԵԱՆ

(Ն. Չագրեան որդի եւ Բնկ.Եան մօս Մեյլեֆէ Ֆերիսէ հրատարակը)

K. H. Guzelimian P. O. B. 425 Cairo

Ինչպէս նաեւ՝

ՎԵՐ. Ս. Յ. ԳՕՆՍԻԼԵԱՆԻ

Ն Ո Ւ Ի Ր Ա Տ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ի Ն

Բարեբար ոմն — Գահիրէ,

կը նուիրէ Հազարումեկ Գիտելիքներու Ա. և Բ. հատորները՝ հինգ կարօտ ընտանիքներու:

Ձեռնագիրն շնորհակալիք

Ե Թ Է...

Եթէ ընթերցումը բարձրագոյն հաճոյքի աղբիւրը կը նկատէք, կարդացէք «ՀԱԶԱՐՈՒՄԷԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ»ը:

Եթէ տալ կ'ուզէք մտքին իր գերագոյն թռիչքը, կարդացէք «ՀԱԶԱՐՈՒՄԷԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ»ը:

Եթէ միօրինակութեան և ասղտուկի շղթաները խզել կ'ուզէք, կարդացէք «ՀԱԶԱՐՈՒՄԷԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ»ը:

Եթէ բուժել կ'ուզէք վշտախոց սրտերնիդ, կարդացէք «ՀԱԶԱՐՈՒՄԷԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ»ը:

Եթէ մահացու հարուած տալ կ'ուզէք բռնաւոր յուսահատութեան, կարդացէք «ՀԱԶԱՐՈՒՄԷԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ»ը:

Եթէ կ'ուզէք որ ձեր հոգին սաւառնի նոր աշխարհներումէջ, կարդացէք «ՀԱԶԱՐՈՒՄԷԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ»ը:

Եթէ տուն (home) շինել կ'ուզէք, դարձեալ կարդացէք «ՀԱԶԱՐՈՒՄԷԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ»ը:

ՀԱԶԱՐՈՒՄԷԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Առայժմ լոյս կը տեսնէ երկու շարաթը անգամ մը

Գինը՝ Պրակը ձեռքէ 1 Ե. Դ:

10 » Եգիպտոս 10 »

Արտասահման 20 Ֆրանք

Ամերիկա 1 Տորար

Վաճառման կեդրոն. Գահիրէ՝ ԶԱՐԴԱՐԱՆ Գրատուն

Հրատարակիչ՝ S. F. CONSULIAN,

Rue Ibn Matrouh No. 15. Choubra, Cairo, (Egypt)

Printed in Egypt by SEVAN Press, Cairo.

Ա. Յ. ԳՕՆՍԻԻԼԵԱՆ

ՀԱԶԱՐՈՒՄԷԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Ա. ԵԻ Բ. ՀԱՏՈՐ

1939

ՏՊԱՐԱՆ ՍԵՒԱՆ

ԳԱՀԻՐԷ

ԿԵՆՑԱՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Կենցաղագիտութեան արմատը կը կայանայ մար-
զուն ընկերականութեան եւ իրարու հետ ունեցած
փոխյարաբերութեան մէջ: Եթէ մարդիկ զուտ ետա-
սէր, կղզիացեալ ըլլային, և կամ Նիչէի ջատագովա-
ծին պէս բացարձակ ինքնակեդրոն և ինքնաբաւ էակ-
ներ ըլլային, այն պտրագային կենցաղագիտութիւնը
անիմաստ և անուստացուցիչ բան մը պիտի ըլլար:
Եւ սակայն երբ իրերու ընական բերումով և արեւ-
զերական իմաստութեան գործադրութեամբ մարդիկ
կը ծնին ընկերական բնազդով և չեն կրնար վարել
զուտ ինքնակեդրոն ու ինքնաբաւ կեանք մը, և ինք-
նաբերաբար կը մղուին վայելելու իրարու ընկերական
ներկայութիւնը, ահաւասիկ այն ատեն ի հանդէս կու-
գայ փոխյարաբերութիւն մը որը ծնունդ կուտայ
այլեւայլ ընկերական երեւոյթներու ինչպէս սովո-
րոյթներու, օրէնքներու և կենցաղավարութեանց:

Կեանքի հոլովոյթին և ազգերու քաղաքակրթու-
թեան հետ զուգընթացաբար կը զարգանայ ու ծուլալ
կը գտնայ կենցաղագիտութիւնը: Անիկա յարաձուն
բան մըն է, ինչպէս նաեւ նուրբ արուեստ մը:

Պատմութեան տուիքը այն է թէ արդի եւրոպա-
կան ազգեր շատ բան սորված և իւրացուցած են
իրենց օրպէս Կոթեր, Վիզիկոթեր և Վանատաներ
երեւումէն ի վեր, այն ատենուան ազգերու մշակոյ-
թէն և քաղաքակրթութիւնէն:

Անոնք մասնաւորաբար, իւրացուցին հին Յունա-
կան և Հռովմէական ճոխ ու նրբացած շարժումներէն,
խօսակցութիւններէն և սովորութիւններէն ու միա-
ձուլեցին զանոնք իրենց տեւտոնական սովորութիւն-
ներուն ու կենցաղագիտութեանց հետ: Եւ այն օրէն

մինչև այսօր եւրոպական ազգեր անհամեմատ կերպով յառաջացած ու զարգացած են, ինչպէս ուրիշ շատ բաներու, նոյնպէս կենցաղագիտութեան մէջ:

Պէտք է քաջութիւնն ունենանք խոստովանելու թէ, մենք հայերս՝ տակաւին պէտք եղած չափով յառաջացած չենք կենցաղագիտութեան մէջ: Անուրանալի է որ հայ ցեղը զօրաւոր է և տոկուն՝ կազմով, ճկուն է և յարմարող՝ բնաւորութիւնով, ուշիմ է և խելացի՝ մտքով, ճարպիկ է և բանիրուն՝ վաճառականութիւնով, և բարի է ու կրօնասէր՝ սրտով և հոգիով: Սակայն եւ այնպէս, ինչպէս կը վկայեն բազմաթիւ հեղինակութիւններ, Հայը ընդհանուր առմամբ, թերի է իր ընկերական բնաւորութեան և կենցաղագիտութեան մէջ:

Ըսելու չենք թէ մեր բնաւորութիւնները գերընտիր են ու մեր կենցաղագիտութիւնը մեզի բաւ է, այլ՝ աչքերնիս բանանք և բարի արամադրութիւնը ունենանք սորվելու: Ահա այն ատեն պիտի յարգուինք, պիտի սիրուինք և պիտի ապրինք ու բարգաւաճինք մեր գանուած երկիրներուն մէջ:


Կենցաղագիտութիւնը նրբացած ու շնորհալի արուեստ մըն է և անոր տիրանալէն կախում ունին մեր բազմաթիւ յաջողութիւնները:

ԲԱՆՔ ԻՄԱՍՏՆՈՑ

Կենաց երջանկութեան համար չորս բան պէտք է. — Ա. Աւողջութիւն, Բ. մտքի հանդարտութիւն, Գ. հարսութիւն, Դ. հաւասարիմ բարեկամ: Առաջինը, երկրորդը եւ երրորդը գտնել քիչ մը դժուարին է, իսկ չորրորդը բոլորովին դժուարին:

*. Մի՛ խաբուիր արհեստակից բարեկամիդ խօսեցուն՝ որք շողոքութիւններ են, զի ընդհանրապէս այն որ քեզ արհեստակից է՝ բնամիտ է:

7.652-50



Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Վ.

1. Վազրը մարդոցմէ՝ մէկ կաշի միայն կը հանէ, իսկ վաշխառուն եօթը:
2. Վարկոտ զինուորը հայրենիքին թշնամին է:
3. Վա՛յ այն ազգին, որուն ըրած բարիքը չի ծագիր առաքինութեան գողտփարէն, այլ ուրիշ հաշիւներէ:
4. Վատ բերան մի՛ բանար այլոց վրայ, որ քեզ չդատապարտեն:
5. Վարժունքը հայելի մըն է, որուն մէջ ամէն մարդ իր պատկերը ցոյց կուտայ:
6. Վիշակերուդ մէջ համբերութիւն ունեցիր, վասնզի փոթորիկին անպատճառ պայծառ օդ՝ արտասուքին ծիծաղ կը յաջորդէ:
7. Վատ է վիճակն այն երկրին և վատթարագոյն կ'ըլլայ ուր լոկ ռսկինեղ գիղուին, բայց երբ մաքր փնտռես չկայ:
8. Վերաւորանք մի՛ տար ուրիշին, եթէ չես ուզեր փոխորէնն ստանալ:
9. Վարդի նման փուշ ունեցիր, բայց անոր հասնալ անպակաս ըլլայ քեզմէ:
10. Վայելք մըն է եթէ կեանքը, հազոր դարեր չեն բաւական. իսկ թէ՛ տանջանքս տառապանք է, շատ է նոյնիսկ կէս չունչն անդամ:

Տ.

1. Տառապանքն ու վիշտերը, նեղ օրերու փորձաքարերն են:

2. Տառապանքը կեանքի աղն է, ինչպէս սէրը հոգիին սնունդը:
3. Տգէտ որդիներ ունենալէ աւելի լաւ է ունենալ մի քանի աւանակ:
4. Տղոց լաւ ապագան, մօր գործունէութիւններէն կախեալ է:
5. Տխուր է այն տունը, ուր աքաղաղը կը լռէ, հաւը կ'երգէ:
6. Տէրութիւնը բարեկիրթ ժողովրդով կարող է յարատեւ կեանք ունենալ:
7. Տունդ ամուր հիմերու վրայ դիր, որ կեանքի փոթորիկները չկործանեն:
8. Տնարար կինը՝ ընտանիքի բարգաւաճման հիմնաքարն է:
9. Տունը փոքրիկ թաղաւորութիւն մըն է, եթէ լաւ չկառավարուի, կը կործանի:
10. Տունը անաէր մնալով, բոլորը աւարի կ'երթայ:

Յ.

1. Յամաքած երկիրը, ծերունիներու կեանքին ճիշդ օրինակն է:
2. Յանկանալը՝ նպատակի հասնելու առաջին աստիճանն է:
3. Յաւակցող սիրտ ունեցիր, որ մարդու կատարելատիպը լինիս:
4. Յածը նստիր, որ բարձրը տեղ ունենաս:
5. Յեցեր կան՝ ծածուկ կը վնասեն, ցեցեր ալ կան՝ յայտնի:
6. Յեցերու տուած վնասները՝ գողերն ու աւազակները չեն կարող տալ:
7. Յեղական յատկութիւնները՝ մարդուն հետ ծընունդ կ'առնեն:

8. Յնձութիւնը մի պարբերական հողմ է, կուգայ ու կերթայ:
9. Յուցամոլներու փառքը՝ աքաղաղներու փառքին հաւասար է:
10. Յրատար բոյսերը՝ ցաւագարներու կատարելատիպն են:

Փ.

1. Փառքը խելօքներու բաժինն է, ու անոնց գըլխուն անթառամ պտակը:
2. Փախի՛ր վատ ընկերներէ, եթէ չես ուզեր մահուան մատնուիլ:
3. Փարթամութիւնը այնքան պտտիւ չէ մարդուն, որքան գիտութիւնը:
4. Փառաւորուիլ կ'ուզե՞ս, արդարատէր եղիր:
5. Փառասիրութիւնն ու առաքինութիւնը՝ երկու անհաշա թշնամիներ են:
6. Փոյթ ունեցիր լաւ սնունդով՝ քան թէ մեծ կարողութեամբ յուսալիմելու:
7. Փրկութիւնը ոչ միայն զէնքով, այլ խոհեմութիւնով պէտք է գտնել:
8. Փօքը չմնալու համար՝ մեծամեծ բարի գործեր կատարէ:
9. Փօքրիկ երկչոտութիւնը կը փճացնէ մեծ գործերը:
10. Փօքրիկ է հոգին, եթէ տեղ չունի պահելու երախտեաց յիշատակը:

Ք.

1. Քաղաքավարութիւնը՝ ունեցողին համար մի ծաղկեփունջ է:

2. Քանդելը ամէն մարդու գործ է, իսկ շինելը քիչերու :
3. Քիչ տոնէն հարկաւոր եղած բաներն ալ ծախելու ստիպուած է այն մարդը, որ աւելորդ բաներ կը գնէ :
4. Քաջութիւնը եթէ տեղին չգործածես՝ անպատուութիւն է :
5. Քաւութիւնը ապաշխարելով կը լինի, և ոչ թէ քնելով :
6. Քնարի ձայնը վաղանցուկ յոյսերով նշանաբանի օրինակն է :
7. Քնած մարդը մեռածի ճիշդ հոմանիշ սրտկերն է :
8. Քննել ուրիշը և ինքզինքը թողուլ՝ յիմարութեան մեծագոյնն է :
9. Քսութիւնը՝ աղտեղի դաւաճանութեան ստորնագոյնն է :
10. Քանի կրնաս՝ բարիք ըրէ, որ անմահանաս մարդոց սրտերուն մէջ :

0.

1. Օգտակար լինել ուրիշին՝ ամէն մարդու գործ չէ :
2. Օտարը սիրէ, բայց արենակիցդ պաշտէ :
3. Օժիտը ժամանակաւոր ցնծութիւն է, իսկ ամօթխածութիւնը յաւիտենական :
4. Օրիորդք դրամօժիտը կը վճարեն իբրև անցազին՝ ամուսնութեան աշխարհը ճանապարհորդելու առթիւ :
5. Օճառն ի՞նչ օգուտ սեւին, յորդորն ի՞նչ օգուտ խեւին :
6. Օտար կ'լիման հեյրենիքի համն ու հոտը չունի :

7. Օտարամուտ սովորութիւնները, ազգային առանձնայատկութեանց վնասակար են :
8. Օրէնքը տկարներու հօրապոյն պաշտպանն է :
9. Օրէնք դնողը այրերն են, իսկ բարքեր հաստատողը կ'իները :
10. Օրինակը աւելի կ'ազդէ մարդուն, քան գեղեցիկ խրատները :

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ն Ե Ր

30. Կաշիէ սանիֆ, մազէ ցուիֆ: (Բիբ—Արտեւանունք)
31. Աման մը ունիմ, երբոք օրջեմ կը լեցուի, երբոր օտկեմ կը պարպուի: (Գլխարկ)
32. Ազի ունի, հոգի չունի: (Տապակ)
33. Ա՛լ ա՛լ իբէկ, մազի լաչակ, օտքէ չիւչիֆ: (Արեւ)
34. Ասուած շարեց, մարդը ֆալեց: (Խաղող)
35. Բան մը կայ որ, ես կը տեսնամ, դուն կը տեսնաս, միայն Ասուած չտեսնար: (Երազ)
36. Ուղսն ախոռ մսաւ, պոչը դուրս մնաց: (Շերեփ)
37. Անդադար խմոր կ'ուտէ: (Փուռ)
38. Խա՛ր, խաքի տ'ուր, խաք խաքի՛
Օ՛ տե Ալլահըն Յիսմէքի: (Կաղամբ)

ԱՐՄԳԱՆՕՍՈՒԹԻՒՆ

Արազ արազ արտասանեցէք հետեւեալը.—

Չուկ սահի, ձուկ ուտեմ
Մուկ սահի, ձուկ ուտեմ
Չուկ սահի, ձուկ ուտեմ
Մուկ սահի, մուկ ուտեմ???:

Գ Ր Ա Կ Ա Ն

Փ Ո Յ Ո Ր Ի Կ Ն Ե Ր Ը

Փոթորիկներ՝ բնութեան անսանձ ու ամեհի տա-
րերքը գող,
Ի՞նչ աւերիչ, անկարեկիր, անագորոյն ընթացք
ունին,
Խուժեն յերկիր, ալեկոծեն ծով ու ովկիան ընդար-
ձակ՝ խոր,
Խորասուզեն վիթխարի նաւն և տապալեն հսկայ
կաղնին:

Փոթորիկներ՝ բուռն կիրքերու, որքա՛ն դառն
են ու մոլեգին,
Ի՞նչ չեն, աւեր անոնք գործեր՝ երբ յարձակին
մարդու վրայ,
Քանդեն մարմին, խանգարեն միտք, ապականեն
անմահ հոգին:
Եւ ի՞նչ կ'ըլլայ, աւա՛ղ, յայնժամ մարդ բանական.—
Կ'անասնանայ:

Փոթորիկներ՝... փորձանքներու, տառապանքի հո-
գեսարսուռ,
Որքա՛ն յաճախ կ'ալեկոծեն կեանքի ծովը մարդ
էակին,
Պառն վիշտերու հոծ ալիքներ, տուայտանքի կո-
հակներ կուռ՝
Կը խըռովեն խաղաղ կեանքը... հոգւոյն վրայ երբ
կուտակին:

Կագ ու կըռիւ, նոխանձ, զայրոյթ, հպարտութիւն,
հեռ, ոխ ու քէն,

Կեանքեր քանդող աղէտալի փոթորիկներ չեն
ապաքէն,
Քանի՛ տուներ, ընկերութիւն, տկուճք, ժողով և
ընտանիք,
Վաստ կիրքերու փոթորիկէն, ո՛հ, կործանած՝ դար-
ձած են չիք:

Ա Ն Ո Ւ Ն Մ Ը Ք Ա Ն Դ Ա Կ Ե Լ

1. Գրեցի անունս աւագի վրայ՝
Յուստով թէ միշտ հոն պիտի մնայ,
Այլ բարէ՛, շուտով ծովըն մակընթաց
Անզօր գըծերըս վըտարեց ի բաց:
2. Քանդակեցի զայն ծառի մը վրայ,
Յետ բողբոսի ամաց երբօր ետ դարձայ,
Ծառն ալ՝ ըստուերն ալ էին կորսուած,
Որոցմով երբեմն դաշտն էր ծածկուած:
3. Քանդակեցի զայն մարմարի մը վրայ,
Սա յուսով թէ հոն յաւէրժ կը մնայ,
Աւա՛ղ, շարժըն զայն ի հիմանց քանդեց,
Սեւ հողերու տակ թաղեց ու ծածկեց:
4. Ի դերեւ ելան ասոնք ամէնքն ալ,
Կ'ըզձայի հոգւով, ա՛հ, անմահանալ,
Եւ անունս ընել մըջտընջենական,
Ի՞նչ ընել.— զրեւ ի սիրքս մարդկան:
5. Լուսաշող, փայլուն, խոշոր տառերով,
Վարուք անարատ, խօսքով և յուսով
Եթէ քանդակեմ ի մարդ զիմ անուն,
Յայնժամ անմահ եմ յաչրս ամենուն:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Գ Ի Տ Է Բ

Թէ կտոր մը շաքարը կը փոխէ ամէնաաղի կերպ-
կուրին համը, առանց շաքարի սեւէ հետք թողելու:

Թէ մուսթարը եթէ մի քիչ կաթով պատրաս-
տուի՝ դգալները պիտի չի սեւցնէ սյնքան:

Թէ պտուղ մը եփելու ատեն եթէ սակաւ ինչ
ֆարսօնաք սօսա դնէք մէջը՝ թթուութիւնը կը նուազի
եւ, բնական է, աւելի քիչ շաքար գործածել հարկ
կ'ըլլայ:

Թէ սոխ մաքրելէ ետքը եթէ աղով չփէք ձեռ-
քերնիդ, հոտը բոլորովին կ'անհետանայ:

Թէ աղը լաւագոյն է ակռաներու համար քան ու-
րիչ որեւէ բան: Թարախալից լնտացաւութենէ տա-
ռապողներու թիւը պակաս պիտի ըլլար, եթէ սովո-
րական աստամնափոշիներէն աւելի աղ գործածուէր
կանոնաւոր կերպով:

Թէ հաւկիթին դեղնուցը (ձերմկուցը եթէ սրոշ
նպատակի մը համար գործածել հարկ ըլլայ) կրնայ մի
քանի օր հրոշալիօրէն պահպանուել, եթէ ձգէք դայն
պող ջուրի մէջ և դնէք գով տեղ մը:

Թէ բրինձը եփելու ատեն ձերմակ կը մնայ, եթէ
մի քիչ լիմոնի հիւթ կամ քացախ աւելցնէք իր ջու-
րին:

Թէ փայլուն կեղեւով հաւկիթներ միշտ օթեկ
(պոյտթ) կ'ըլլան:

Թէ հում գեանախնձորով պէտք է չփէք ձեռքեր-
նիդ, եթէ կ'ուզէք մաքրուել բիծերէ:

Թէ գեանախնձորը տաք կաթով աւելի դիւրու-
թեամբ և աւելի արագ կը ձգմուի քան թէ պող կա-
թով:

Թէ սուրճին համեղութիւնը կ'աւելնայ, եթէ սա-
կաւ ինչ աղ դրուի մէջը:

Տ Ն Ա Կ Ա Ն Դ Ե Ղ Ա Ր Ա Ն

ԱԿՌԱՅԻ ՑԱԻ

Քացախը եռացուցէք, կտոր մը բամպակ մէջը թաթ-
խեցէք և լինտերն շփեցէք անով. ծակած ակռային
մէջ ալ այդ բամպակէն դրէք:

Ցաք ջուրն ալ օգտակար է ակռայի ցաւին: Ցա-
ւած ակռան տաք ջուրի մէջ թաթխուած բամպակով
կամ կտուէ լաթի կտորով մը ծածկեցէք և այս գոր-
ծողութիւնը կրկնեցէք մի քանի անգամներ: Ցաւը
չուտով կը դադրի որչափ տաք ըլլայ ջուրը և որչափ
կարենայ տոկալ մարդ, այնչափ շուտ և լաւ ազդե-
ցութիւն կ'ընէ այդ միջոցը:

Ակռայի ցաւն անցնելու մի այլ միջոց կայ: Ա-
Ֆիոն բուռի և գարանՖիլ իւղի խառնուրդի մէջ բամ-
պակ մը թրջել և անով խցել ծակած ակռան. դաղջ
ջրով բերանը յաճախ լուալ և ծնօսը տաք պահել
պէտք է:

ՓՈՐԻ ՑԱԻ

Որովայնը տաք պահել. փափաթեայի դաղջ ջու-
րով դրելս. տաք նանէի թէյ խմել, երբեմն ալ դօն-
եաղ քիչ մը:

ՓՈՐՀԱՐՈՒԹԻՒՆ

Նարինջին կեղեւը լաւ դարման մըն է փորհո-
րութեան դէմ, եթէ թէյի պէս պատրաստուելով, շա-
քարով, իբր սովորական ըմպելի մը խմուի 2-3 օր:

Ա Յ Ր Ա Ծ

Լաւ մարած կիր՝ 3 կրամ, կլիստին՝ 150 կրամ,
աֆիոն բուռի՝ 3 կրամ խառնէ միասին և փետուրով մը
քտէ վրան:

ՄԵՂՈՒԻ ԽԱՅԹ

Խայթոցն հանել իսկոյն և անզը չփել հեղուկ ամնեաք, որ ամէն խայթուածքի դեղ է: Երբ չունիք, ջուրով թրջած աղ դիր վրան, կամ թրջած ծխախոտ, և կապէ:

ԻՆՖԼՈՒԷՆՑԱ

Դեղ պէտք չէ, ո՛չ դրոշն և ո՛չ ներսէն. անկողին մտնել, շատ լաւ ծածկուել և օխլամուրի թէյ խմել, հսկել որ սաթլըճանի չի փոխուել:

ՓՍԽՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Կէս թէյի դգալ պաղլեղի (alun — շապ) փոշին կէս դաւաթ ջուրի մէջ խառնելով երբ խմուի՝ փըսխում յառաջ կը բերէ թունաւորման պարագային:

ԲԵՐՆԻ ԳԱՐՇԱՀՈՏՈՒԹԻՒՆ

Բերնի գարշահոտութեան համար սա՛ հետեւեալ բաղադրութիւնը գերազանց բերանաջուր մըն է: — 3/4 լիդր դինիի ոգւոյ մէջ, երկու սպուրի դգալ յոյժ բարակ փոշիացեալ քինքինա և մէկ սպուրի դգալ պաղլեղ դնելով 8 օր շարունակ պահելէն յետոյ, լաւ մը սեղմելէն և ջուրը գտելէն յետոյ 5 կաթիլ պըղպեղեալ անանուխ և 5 կաթիլ ալ մեխակի իւղ կաթեցնելու է:

Բերնի գարշահոտութեան դէմ օգտակար է սա ջուրին գործածութիւնն ալ:—

Չմարած քլորակիրի (chlorure de so) վրայ լեցնելու է դտուած ջուր և այդ հեղուկը խառնելու է լաւ տեսակ օղիի հետ: Ապա դաւաթ մը ջուրի մէջ այդ բաղադրութենէն թէյի լեցուն դգալ մը խառնելէ ետքը, օրը քանի մը անգամ կարկառաւ ընելու է ստով, և ամէն անգամ ալ յետոյ բերանը լուալով:

Երեւելի և փորձառու բժիշկի մը թուղթերուն մէջէն գտնուած է հետեւեալ գեղազիրը:—

Բերնի ծանր հոտի դէմ ամենապարզ միջոցն է քիչ մը փայտի ամուխ ծամել ու կլլել:

Ռմանք կ'ըսեն թէ բուռեի ձուկն ալ դարման է բերնի գարշահոտութեան դէմ:

ԿՈԿՈՐԴԻ ՑԱԻ

Քնայի՛ մեղր կը յանձնարարէ կոկորդի ցաւի համար. ամէն օր դգալ մը մեղր եւսացուր դաւաթ մը ջրի մէջ և օրը 2-4 դգալ խմէ. թէյիդ մէջ ալ մեղր դիր:

ԱԿԱՆՁԻ ԽՕՍԻԼ

Ասի կը պատճառի ուղեղին մէջ մեծաքանակ արիւն հաւաքուելէ. ուստի հարկ է արեան ուղղութիւնն փոխել բացօդեայ տեղեր շրջելով, առատ ջուր խմելով, և ոտքերը պող ջուրի մէջ դնելով:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Այս բոլորի հետ, սակայն, մտնալու չէ բժիշկը: Ինչ ալ ըլլայ ընտանիքի մը անդամներուն առողջապահական հասկացողութիւնները, — եւ անոնք, դժբախտաբար, շատ հարեւանցի ու շատ աննշան են մեր մէջ ընդհանրապէս, — հասկցող ու բարեմիտ բժիշկն է որ պիտի կրնայ լաւագոյն ախտաճանաչումն ու յարմարագոյն թերոգրութիւնը ընել: Այլ իսօքով, առանին դեղերու և դարմանումներու ծանօթութիւնը՝ բժիշկին դերը պէտք չէ ժխտէ. ընդհակառակը, անիկա աւելի հասկնալի պիտի ընէ գիտական բժշկութեան կարեւորութիւնը: Մարդկային մարմինը, իր բարդ մեքենայականութեամբ, ո՛չ ոյնքան հասարակ բան մըն է, որով ամէն ոք կարենայ զբաղիլ, ո՛չ ալ ոյնքան անարժէք բան մըն է, որուն լաւագոյն հոգատարութեան համար ներելի ըլլայ անաարբեր ըլլալ:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔՆԵՐ

ԳՏՆԵԼ ՄԷԿՈՒՆ ԱՆՈՒՆԸ

Ա	Բ	Դ	Ը	Ժ	Կ	Մ
Գ	Գ	Ե	Թ	Ի	Հ	Ն
						Յ
Ե	Զ	Զ	Խ	Լ	Ձ	Շ
Է	Է	Է	Ղ	Մ	Ճ	Ո
Թ	Լ	Խ	Ձ	Ղ	Ձ	Պ
Խ	Ն	Ճ	Ս	Ձ	Ձ	Ռ
						Ս
						Վ
Հ	Ձ	Մ	Ռ	Վ	Ց	Տ
Ի	Շ	Պ	Ց	Տ	Փ	Ր
Շ	Պ	Ո	Ք	Ր	Ք	Ի
Ս	Ր	Ձ	Օ	Ց	Օ	Փ
Տ	Ք	Օ		Ի	Ֆ	Ֆ
Ք	Ֆ	Ի		Ք		
Ֆ				Օ		

Մէկուն հարցուր թէ իր անուան առաջին գիրը որ սիւնակներուն մէջ կը գտնուի. եթէ միայն մէկ սիւնակի մէջ գտնուի, այդ սիւնակին ամենէն վերի գիրն է, եթէ մէկէ աւելի սիւնակներու մէջ՝ այն ատեն այդ գիրը կրնաս գտնել այդ սիւնակներուն առաջին գիրերու այբուբենի թուանշանները գումարելով: Անուան իւրաքանչիւր գիրը այսպէս գտնելով անունը դիւրաւ կրնաս ամբողջացնել: Օրինակ.—

Ենթադրենք որ անունս Արփի է: Առաջին գիրը միայն առաջին սիւնակին մէջ կը գտնուի, ուրեմն Ա է: Երկրորդ գիրը կը գտնուի երկրորդ, հինգերորդ և եօթներորդ սիւնակներուն մէջ որոնց առաջին գիրն են, Բ—2րդ, Ժ—10րդ և Մ—20րդ գիրերը ու

որոնց գումարը $2+10+20=32$ ի. և 32րդ տառն է Բ. ուրեմն անունին երկրորդ գիրն է Բ: Երրորդ գիրը կը գտնուի վեցերորդ և եօթերորդ սիւնակներուն մէջ, որոնց առաջին գիրերն են. Կ—15րդ և Մ—20րդ տառերը, ուրեմն, $15+20=35$ րդ տառն է անուան երրորդ գիրը, որ է Փ: Չորրորդ գիրը կը գտնուի առաջին և հինգերորդ սիւնակներուն մէջ որոնց առաջին գիրերն են Ա.—1 և Ժ—10րդ տառերը որոնց գումարն է $1+10=11$: 11րդ տառն ըլլալով Ի, փնտռուած անունը ուրեմն է ԱՐՓԻ:

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԽՈՐՀՐԳԱԻՈՐ ՏԱՊԱՆԱԳԻՐՔ

Հայ առեւտրական մը, որ երբեմն ափական քաղաքներ կ'երթեւեկէր, անգամ մը, քաղաքի մը մերձակայ գերեզմանատանը քովէն կ'անցնի՝ ճամբուն մօտ դրուած գերեզմանաքարի մը վրայ հետեւեալը կը կարդայ:

«Երեք տարեկան հասակին մէջ հոգին աւանդեց իւրացու Սարգիս վարժապետ Գեորգեան»: Զարմանալի բան, կ'ըսէ մտովի. միթէ երեք տարեկան տղայ մը վարժապետ կամ ախրացու կրնայ ըլլալ. թերեւս փորագրիչը սխալած է: Քայլ մը անդին կը կարդայ ուրիշ տապանագիր մ'ալ.

«Աս հանգչի յուսով փառացն յաւիտեանց սպիրիչ կարապետ Վրդանեսեան, որ ննջեաց ի Տեր ի հասակի մեկուկես ամաց»:

«Տէր ողորմեա», կը կրկնէ բարբառովին զարմանքէ պաշարուած, «արդեօք այս քաղաքին քարակոփը չհասկցող մարդ է որ...»: Եւ հինգ-տասը քայլ հեռու երրորդ մըն ալ կը կարդայ.

«Այս է սապան հանգստեան ախսեր Մարտիրոսի որդին բուբուննի Նազարէքի, որ հանգեաւ ի Տեր մեկ տարեկան հայտակին մեջ:»

— Ա՛լ Աստուած շատ քաշել շտայ, կը դոչէ. երեք տարեկան տիրացու Սարգիս վարժապետ, մէկ-ուկէս տարեկան սափրիչ Կարապետ, մէկ տարեկան ալ թիւթիւնճի Նազարէթ... ըսելով՝ քաղաք կը մանէ և ուղղակի սրճարան մը կ'երթայ ուր քանի մը անձինք նստած կը խօսակցէին: Զոնոնք քաղաքավարութեամբ բարեւելէ վերջ, բացատրութիւն կը պահանջէ իր տեսած տապանադրերու մասին:

Մեր քաղաքին գերեզմանատան բոլոր տապանադրերն ալ այսպէս են, կը պատասխանէ ներկաներէն մին, և պատճառն սա է որ՝ մենք աշխարհիս վերայ ուրախ զուարթ քանի՞ օր անցուցած ըլլալին հաշիւ կ'ընենք, այսինքն մեր մէջը մէկը որչափ ժամանակ ուրախ զուարթ եղած է նէ՛ անիկա կեանք հաշուելով՝ գերեզմանաքարին վրայ կը գրենք: Զորօրինակ, կարգացած տապանադրիդ տառջինը կը ցուցնէ թէ տիրացու Սարգիս վարժապետը կեանքին մէջ երեք տարի ուրախ զուարթ օրեր անցուցած է, թիւթիւնճի Նազարէթն ալ տարի մը և սափրիչ Կարապետն ալ տարի ու կէս, մնացեալ տապանադիրք ալ այսօրինակ բաներ են:

Շատ աղէ՛կ, բայց եթէ գտնուի անանկ մէկը որ կեանքին մէջ ամենեւին ուրախ զուարթ օր մը տեսած չ'ըլլայ, անոր համար ի՞նչ պիտի գրէք:

— Անանկին համար «Մօրմէն մեռած ծնաւ», բառերը կը գրենք կ'անցնինք:

Այս բացատրութենէն գոհ և շնորհակալ եղած՝ կը շարունակէ հայ առեւտրականը իր ճամբան:

Վ Ե Ր Զ

Ն Ի Ի Թ Ե Ր Ո Ւ Ց Ա Ն Կ

1. ԵՐԿՈՒ ԽՕՄԲ. էջ 3:
2. ՈՒՂԵՑՈՅՑ ԿԵՆՅԱՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Ճաշի ասեմ 5.— Զգեսաւորման եւ ունակութեանց մէջ 7, 25, 49 եւ 73.— Հիւրասահին մէջ 73, 97 եւ 123.— Հասարակաց վայրերու մէջ 147, 169 եւ 193.— Այցելութիւններ բնելու եւ այցաբարեր ձգելու ասեմ 217 եւ 243.— Նամակ գրելու ասեմ 265.— Ընթացեալ յարաբերութեանց մէջ 291, 313 եւ 337.— Ամուսնանալի առաջ 361.— Վարմունք՝ ծառայից հետ 385.— Սբորի մէջ 409.— Ընդհանրական դիտողութիւն 433.— Կենցաղագիտութիւն 457:
3. ԴԱՍԸՆԹԱՅԲ ԵԼԵԲՏՐՈՒԿԱՆՈՒԹԵԱՆ

էջ 8, 27, 51, 75, 99, 171, 172, 195, 219, 245, 267 եւ 315:
4. ԴԱՍԸՆԹԱՅԲ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԵՐՃԱՆՕՍՈՒԹԵԱՆ

էջ 10, 30, 53, 77, 101, 125, 149, 173, 197, 221, 246, 269 եւ 317:
5. ԴԵՌԱՀԱՍՆԵՐՈՒՆ

էջ 33, 56, 79, 103, 127, 151, 175, 199, 223, 248, 271, 319, 341, 293:
6. ՏԱՆՏԻԿՆՈՋ ԲԱՐԵԿԱՄԸ ԽՈՀԱՆՈՅԷՆ ՆԵՐՍ

Ապուրի տեսակներ

Գերմանական, աւսրիական, գիւլացի աղջրկան ապուր 13.— Կանանչեղեմի ապուր, դրդ-

765-2-56



մանի ապուր, դդմանի ապուր մածուկով 35.—
Զանազան սեսակ հայտի ապուր, հիւնեհարի, բան-
ջարեղենի ապուր 58.— Գուշպաբ չորպա, բը-
րինձե, դդմանի ապուր 81.— Ալիւրի, պրասի,
պեղեղիայի ապուր 105.— Հարսանեկան ապուր,
Շազանակի ապուր 177.— Կլորակի, փալամու-
սե ապուր 201.— Իրմիկե, մախրօնիե, հացե եւ
սեպղինե ապուր 225 եւ 250.— Զմրուխա-
ապուր, իրմիկով եւ կամպարիով ապուր 273.—
Հաւկիթով եւ փաթաթեանով ապուր, գարնան ա-
պուր 321:

Կերակուրներ

Պուկարական փիլաւ, պէյին խաշլամա, բը-
րասայ Ֆուրունը nouso, սալցալը nouso 13-14.
— Փաթըրնան փաշար, ենկինար, բաթաթեսի
սիլինե 35-36.— Արգանակներ (խաշլամա) 58-
59.— Իզմիր ֆեօթթե, եաննիլի ֆեօթթե, միսով
կանկառ 81-82.— Թիւրլիւ, միսով պամեա,
միսով լուբիա 105-106.— Պասիննանով մու-
սագգա, պասիննանով սիլինե, գաբամա 177-
178.— Բրասայե սարմա ձիթաիւղով, բրասա
բավար, բրասա պեօրեյի 201-202.— Բեաղըս
ֆեպապը, Ֆիլթթե սօթթե, գօրըլթ հաւկիթով 225.
— Չեօմլեկ ֆեպապը, նապասակի ֆրօթթը, պէյին
սօթթե, պեօմլեկ սօթթե 250-251.— Թեցներե ֆե-
պապը, գրյմա ֆեպապը 273-274.— Կովի nous-
թօ, պեօթթե սրպպօ 321-322.— Գրգարթմա ա-
լա մօս, իսալական մախրօնի, խըյմալը մա-
խրօնի 343-344.— Իզմիր ֆեօթթեսի, Իզմիր
սուճուղը, հանըմ պուսու ֆեօթթեսի 367.— Օմ-
լեթ, գեհնախնձորի օմլեթ, սմբուկով օմլեթ
394-395.— Դդուսե օմլեթ, ծաղկակաղամբի

օմլեթ, բանջարեղենի օմլեթ 418.— Տեօներ ֆե-
պապ, պէյին պեօրեյի, եօղուրսլը ֆեպապ, ա-
նեմ փիլաւը 441-442:

Խմորեղէն - Անուշեղէններ

Ռուսական կաթօ, պսուղով փասսա, խնձորի
մրգանոյե 14-15.— Սիկարա պազլավար, ու-
մով ձուաղեղ, մեղրաղղումի բանապուր 36-37.
Այ պազլավար 60.— Կաթով սպունգաֆեյթ 82.—
— Հարսի ֆեյթ, սարըլը պուրմա, նեցներե պազ-
լավար 106.— Անուշապուր, կաթով անուշա-
պուր, սիւսլան, պարզ բուսինկ նեշայով, գո-
լորեփացած բուսինկ, հնդկական ֆեյթ 129-
130.— Հնդկընկոյղի պիսօթթ, Շազանակով
պիսօթթ, Շախրապիսօթթ, բրիկօնա, իրմիկով
րեվանի, լօխմա, աղե մասիցներ 153-154.—
Բախլավա, պաթօմ ըալե 173.— Վեցեթիկեան
կաթօ 202.— Գերմանական փաթա, Սրամպօլ
փաթա, բնկոյզով փաթա 226.— Ազգային կա-
թօ, Ֆրիպուրկի կաթօ 251.— Զամիչով ֆեյթ
274.— Զաշկախար, անբիժ պիսօթթ, քրիմո-
րով բոկեղ, պիսօթթ «Զեփիւն», համբոյրներ,
ապսակներ 296-297.— Կաթօ Նեխըն, կաթօ
ֆիլե 322.— Մեխախեան կաթօ, կաթօ Մօնթե
Քրիսթօ, սասանալակեր 344.— Թալուֆ կեօֆի,
չուրով գօլայով մածիս 368.— Սու ըեվանիսի,
բիրինն ունը ըեվանիսի, սիւսլիւ ըեվանի 395.
— Քոնեմա, պիսօթթի 419.— Փաթա մասլեն,
փանսիսթանիա 442:

Սալաղաններ

Էջ 367, 394, 418, 441:

7. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՌԱՐՍՆ

Գիսե՛ֆ 16.— Ձիբախլի գործածութիւնները 37-38 եւ 60-61.— Օրեկ հացը բարձրացնել 61.— Կաքը բարձր պահել, ամառ օրեր կաքը անաղաթ պահել, միսը բարձր պահել, կարմիր բանջար եփելու նոր կերպ մը 83.— Հաւկիթը բարձր պահել, հաւկիթին բարձր ըլլալը հասկնալ 107.— Նարնջի գինի, անխարդախ մեղրը նանչնալ, գոնարեղենի եւ ժամացոյցի ոսկի շղթաները մաքրել 131.— ձերմակեղինաց վրայի ժանգի բիծերը մաքրել, կաքը այրելէ զերծ պահել, աղամանդը փայլեցնել, գունաւոր բուրդը լուսլու կերպ, կարծր միսը կակուղցնել, նաթոսած շուրթներու դարման 155.— Ծաղիկները բարձր պահել, ֆացախ շինել, ի՞նչ ընել երբ կերակուրը աղի է, կաքին անարատութիւնը փորձել, կարագը բարձր պահել, գորգերուն անկիւնները 179.— Քարիւղին լոյս առասացնել, կարծեցեալ խրնայուցութիւն մը, մելանի բիծերը հանել, խառնուրդ բուրդը նանչնալ, սոխը ե՞րբ չարցունճոտե՛ր աչքերը 203.— Ապակեայ իրերը չկոտրելու միջոց մը, կարի մեքենան, մարգարիտներ մաքրել, համեղ ձուկ եփել, բանդակ եփելու կերպ մը 227.— Գարշահոտեալ անօրները մաքրել, գինիի բիծերը անհետացնել. ներմակեղենները դրոշմելու սարքաբանական կերպ մը, զլխու վրձինները մաքրել 252.— Ձեռքերը ներմկցնել եւ փափկացնել 275.— Թուալեքի սպունգները մաքրել, աղտոտած ձեռնոցները մաքրել, բիթեղեայ իրերը փայլուն պահել 298.— Սենեակին գորգերը մաքրելու լաւ եղանակ մը, խարդախեալ քէյր նանչնալ, վարդենեաց գեղեցկութիւն սալ 323.—

Ամառ ասեմ խուցերը զով պահել, մրջիւնները ջնջելու պարզ միջոցներ 345.— Հաւկիթը բաժասան եփելու կերպը, ապակիներ մաքրել, սենեակին վարակիչ նիւթերը ջնջել, մժեղներէ ազատելու միջոց մը, ակուայի փոշի պատրաստել 369.— Մժեղները ջրնջել, պաղ ջուրի սիրամարներուն, լոգնաք, նանները ջնջել 396.— ձաքած ամանները կայցնել, զգեստի վրայի իւղը մաքրել, կօշիկները նոր եւմախուր պահել 420.— Աղին օգուտները 443.— Գիսե՛ֆ 466:

8. ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒՆ

Էջ 39, 62, 84, 108, 132, 156, 180, 204, 228, 253, 276, 299, 324, 346, 370, 397, 421, 445:

9. ՏՆԱԿԱՆ ԴԵՂԱՐՍՆ

Յօդացաւ, պնդութիւն, դժուարամարտութիւն, ականջի ցաւ, կաթուած 17.— Ձիղերէն սառապողները, բունաւորումներու բուժումը, բորնկած հանդերձներ, խոնաւ ոտք, սրտի բարբախում, անկանոն բուն 41-42.— Քրի արիւնահոսութիւն, սկար սսամոխ, պտուղներ, ֆացախ, աչքի խրնամք, մանկանց ուտեստ, փորհարութիւն 64-66.— Հազի դեղ, սաքնալու համար, մասնաշուրթ, այրածի դեղ, ինժուրեկնայի դարման, արիւնահոսութեան դեմ, զլխու քեփ, սաք ջուրին օգուտք, պնդեղութիւն, քիթի խցում, կոկորդի ցաւ 86-88.— Լեմոնի օգուտները, երեսին ջիւրուն դեմ, ֆերուրտաք, օտար նիւթերը հանել ապանջէն, մարածներու համար, մեղուէ, կարիւնէ եւ օձէ բունաւորեալները, ցրտաութեան զերծ մնալու համար սասնաբանեայ, մանանխին օ-

գուսները, գլխացաւ, շիլ աչի 110-112.— Հնդկախիւղ, ձիբախիւղ, փրբաբայս, պօրիփ ապիս, հասարակ աղ, ձկան իւղ, պէյֆինկ սօսա, անհրածեօս պիսոյներ 372-374.— Ի՞նչ է գրեխընել, պէսաման, սառոյցի տոպրակ, սափ ջուրի տոպրակ, հականեխուած բամպակ եւ վիրակապեր 399-401.— Բաղնիփ, լափաներ. շիքէ ֆաշել, փորի շփումներ, արեան արտախուծումները, արկածներու ասեմ 422-424.— Լեմոնը՝ հրաշալի պտուղ 447.— Ակուայի ցաւ, փորի ցաւ, փորհարութիւն, այրած, մեղուի խայթ, ինձլուէնձա, փսխումի համար, բերնի զարշահոտութիւն, կոկորդի ցաւ, ականջի խօսիլ, ուշադրութիւն 467-469:

10. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԲԵՐԱԿԱՆ

Էջ 134, 158, 182, 206, 230, 255, 278:

11. ՏՆԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Էջ 301, 326, 348:

12. ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

Էջ 18, 43, 67, 91, 115, 139, 163, 187, 211, 235, 259, 283, 306, 331, 353, 377, 402, 425, 450:

13. ՄԱՐԶԱՆՔ ԵՒ ՄԲՈՐ

Էջ 89, 113, 137, 161, 185, 209, 233, 258, 281, 304, 329, 351, 375:

14. ԶՈՒԱՐԹ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

Էջ 20, 45, 69, 93, 117, 189, 213, 237,

261, 285, 309, 333, 357, 381, 405, 429, 453:

15. ԸՆԿԵՐԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔՆԵՐ

Էջ 141, 165, 355, 379, 403, 427, 451, 470:

16. ՊԱՏՄԱԿԱՆ

Անկեղծ Ֆեմինիզմը 22 եւ 47.— Լաշի 71, 95, 119, 143, 167, 191, 215, 239, 263, 287, 311, 335.— Նպարավանաոր 359 եւ 383.— Իմաստուն դասաւորը 384 եւ 407 եւ 431.— Վանաւեալ ամուսինք 432 եւ 455.— Խորհրդաւոր սապանագիրք 471:

17. ԾԱՂԿԱՔԱՂ ԳՈՐԾ. ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Էջ 339, 363, 387, 411, 435, 459:

18. ԳՐԱԿԱՆ

Զօն պսակադրութեան 365.— Արգար բողոք 366.— Երեւոյթներ 392.— Իձն ու սգրուկը 393.— Բարեկամութիւն 416.— Խրախոյս 440.— Փոքրիկները 464.— Անուն մը ֆանդակել 465:

19. Նոր տարի 121.— Ամանորը 122.— Բերլինեմի Մանուկը 145.— «Քրիստոս յարեալ ի մեռելոց» 289:



Վ Ր Ի Պ Ա Կ

Էջ	Տող	Միասի	Ուղիղ
424	26	Արիւնահոսութենէ	Արեւահարութենէ
406	15	մը	կը
456	5	տել խելօք	տել եւելօք



Ճ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Պատասխան եմ յայտարարել թէ «ՀԱԶԱՐՈՒՄԷԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ»-ու հրատարակութեամբ լայնօրէն վարձատրուած կը զգամ ինքզինքս:

Թէ ինչպէս:

Նախ՝ այն ջերմ ընդունելութիւնը որ «ՀԱԶԱՐՈՒՄԷԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ» գտաւ իր առաջին իսկ թիւէն, գլեց անցաւ իմ ակնկալութիւններս:

Եւ երկրորդ՝ բացառութիւնները անտեսելով, կրնամ ըսել թէ անպարսանանաչ բաժանորդներու հետ խնդիր չունեցայ:

Այս յաջողութիւնը կը պարտիմ որքան «ՀԱԶԱՐՈՒՄԷԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ»-ու շահեկան բովանդակութեան նոյնքան բարեկամներու անձնուէր գործակցութեան:

Արդ, կը փութամ երախտագիտական ամենաջերմ զգացումներս յայտնել այն բոլոր հեռաւոր եւ մերձաւոր սիրելի բարեկամներուս որոնք իրենց գնահատելի ջանքը շուրջեցին ծանօթացնելու եւ սպառելու համար «ՀԱԶԱՐՈՒՄԷԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ»-ը, բոլոր յարգելի ընթերցողներուս որոնք ջերմօրէն սիրեցին զայն, ինչպէս նաեւ այն բոլոր պատուական նուիրատուներուս որոնք իրենց կարողութեան ներսէն չափովը ջանացին քաջալերել եւ սատար հանդիսանալ ինձ:

Յաւես երախտագիտութեամբ

Ս. Յ. ԳՕՆՍԻԻԼԵԱՆ

1472
գրքաց

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Փափաքողներու համար տրամադրելի է «ՀԱԶԱՐՈՒՄԷԿ
ԳԻՏԵԼԻՔՆԵՐ»-ու 1—20 թիւերը: Փնտուցէք քանի դեռ
ուշ չէ:

Գիմել հրատարակիչն՝

S. F. CONSULIAN,

Rue Ibn Matrouh No. 15

Choubra, Cairo, (Egypt)

0023435

0023436

h1

h2

0003-6004

2013

« Ազգային գրադարան



NL0023436

2013

« Ազգային գրադարան



NL0023435

